# ԹԱՆԳԱՐԱՆ ԽՐԱՏՈՒ

Յօրինեալ ՚ի Պօղոս արք Եպսէ Անդրիանուպօլսեցւոյ, ՚ի նախկին Պատրիարգէ Կոստանդնուպօլսոյ, ՚ի միաբանութենէ սբյ Երուսաղէմի։

## ԲԱԺԱՆԵԱԼ ՅԵՐԿՈՒՍ ՀԱՏՈՐՍ

Յառաջնումն ցուցանէ օգուտն առաքինութեանց ինչ, որք առնեն զմարդն երջանիկ. իսկ յերկրորդումն՝ վնասն մոլութեանց, որք առնեն զմարդն թշուառ։

Եւս և հարկաւոր միջնորդք գտութեան ճշմարիտ երջանկութեան։

՚Ի Հայրապետութեան սրբոյ Էջմիածնի Տեառն և Տեառն Եփրեմ սրբազան Կաթուղիկոսի։

Եւ ՚ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի Տեառն Գաբրիէլի արք Եպիսկոպոսի։

Հրամանաւ Տեառն Կարապետի ծաբան արք Եպսի, և արժանաժառանգ Պատրիարգի Կոստանդնուպօլսոյ։

Հատոր Բ։

Վնասն մոլութեանց։

1077

ՅՕՐԹԱԳԻՒՂ

1824 ՚Ի ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ։

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Որպէս բնական բնութիւն ոչ կարէ պահել զէութիւն իւր և զգոլ, միայն զմասունս նիւթոյ՝ որք համեմատ են և օգտակար գոյութե իւրոյ, յինքն ձգելով կարգաւորական զօրութե. այլև զայնոսիկ մասունս՝ որք ներհակ են և վնասակար ամբողջութե իւրոյ, հալածէ 'ի բաց մերժել կենդանական զօրութեամբ:

Նոյնպէս և բանական բնութիւն ոչ կարէ պահել զսահման մարդկութե կերպարանութե առաքինութեց, որք յարմար են և օգտակար գոլոյ նր, և առնեն երջանիկ, եթէ ոչ խորշեսցի և 'ի մոլութեց, որք ներհակ են և ապականիչ մարդկութեան, և առնեն զնա թշուառ:

Զի ահա և օգտակար ինչ դեղ ոչ բժշկեսցէ զառողջութի, եթէ ոչ արգելցին վնասակար կերակուրք և ըմպելիք. և երկիր ոչ բարգաւաճի պտղովք, եթէ ոչ խլեսցին անպիտան փուշք և խոտք:

Քանզի և մարդս որ պահպանէ առաքինութե, նոյնպէս և ապականէ մոլութե, ոչ միայն բարոյապէս՝ այլև ֆիզիկապէս. որովհետև մոլութիւնք ոչ միայն են չար, այլ հակառակին ուղիղ բանի և մտացին օրինաց. այլ նաև են վնասակար, զի խանգարեն զխառնուածն, և վաղվաղեն զմահ:

Սմին իրի և իշխեն ազգ պատուիրանաց ուսանդեցանց յոյցանցնականն՝ առ 'ի գործել զառաքինութիւն, որով պահպանի մարդս, և լինի երջանիկ. և հրաժարականն՝ առ 'ի խորշել 'ի մոլութե, որով ապականի և թշուառանայ:

Եւ որովհետև յառաջնում համարի գրոց խօսեցաք զառաքինութեց ինչ, որք կարևորք են մեզ հարկին, մանաւանդ հայրենի ազգին իմոյ՝ նկատմամբ վիճակին յարագայն այժմ. յաւէտ բնական բանից յորդորելով առնելով զնա պէտս կրթել առաքինութեց՝ որք ոչ միայն առնեն զմարդն բարի, և անեզրական վարձուց ժառանգորդ, այլև անկարօտ, բարեհամբաւ, և երջանիկ:

Աստ յայսմ յերկրորդ համարի խօսեցաք և զմոլութեանց յաճախեալս առ մեզ, որք ոչ միայն առնեն զմարդն չար. և արժանի յաւիտենական դատապարտութե, այլև աղքատ անարգ, և վաղամեռիկ:

# ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

## Չարութիւն.

### ԳԼ. Ա

ա Իւրաքանչիւրոք կարէ լինել անձին իւրոյ դատաւոր. զի 'ի բարոյականս՝ ունի մատեան զօրէնս բնութե , և 'ի մասին ընկերութե՝ զօրէնս քաղաքական. եթէ օրէնացս այսոցիկ ոչ հնազանդի , լինի անիրաւ դատաւոր. և պարտ է երկնչել յայնմանէ. Օի որ զօրէնս արհամարհէ , ոչ յումեքէ երկնչի. և ոչ թողու չար , յոր ոչ համարձակեսցի առնել. վա՜յ առած է , թէ որ ոչ երկնչի յո՜ք , դու երկեր 'ի նմանէ. Ուստի բարիք պարտին զգուշանալ 'ի չարաց , զի չարք հային միշտ վնասել բարեաց.

բ Որ կամի վնասել այլոց , նախ ինքեան վնասէ. զի անհնար է առանց վնասու անձին՝

վնաս հասուցանել այլոց · քանզի չարն՝ յա-ւէտ խորհողն է չար ։

Գ Չարագործք ատեն զյանդիմանիչս, և սիրեն զնմանիս իւրեանց, և զայն՝ որ ան-տես առնէ զյանցանս նոցա, և ոչ նախատէ. ապա որ սիրելի է չարաց, կամ է չար, կամ ներող չարաց ։

Դ Չարք՝ ոչ համարձակին երևիլ առաջի բարեաց, ոպ̃ գիճակնագոյնք 'ի լոյս արևու ։ Բայց մինչ պակասին բարիք, հետզհետէ գլուխ ամբառնան և չարք · նմանեալ խաւարասէր ջղջիկանց, որք ելանեն 'ի բունոյ իւրեանց զկնի մտանելոյ արեգական ։

Ե Աւելի բեռն է երկրի ծանրու̃ն իւր զոր կրէ, քան զայր չարագործ ։

Զ Ո՛չ երբէք կարեն միաբանիլ չարք ընդ բարիս · զի զոր սիրեն չարք, զայն ատեն բա-րիք · և զոր սիրեն բարիք, զայն ատեն չարք · և երկաքանչիւր սոքա ջանան միշտ զմիմեանս ընդոտնել · և եթէ ոչ անձնապահ լինէին 'ի միմեանց, սպառեալ էին արդեօք կամ չարք կամ բարիք ։ Բայց այժմ չարք բազումք են, և բարիք սակաւ · և եթէ ոչ պահեալ էր այ̃ ըղ բարիս, չարք բառնային զնս̃ յաշխարհէ · քան-զի միշտ յանդիմանէին 'ի նոցանէ ։ Եւ թէպէտ բարիք կրեն վիշտս 'ի չարաց, բայց ոչ մնան առանց վարձուց · ոպ̃ և ոչ չարք առանց պատ-ժոց ։ Բայց չէ պարտ զարմանալ, թէ ընդէ՞ր սակաւաթիւք են առաքինիք քան զմոլիս · զի

ահա հող բազում է ․ այլ պատուական հանք կամ մետաղք որ 'ի նմա՝ սակաւք ։

Է Ընդէ՞ր զայրանան մարդիկ՝ թէ չարք բազմանան օր ըստ օրէ ․ քանզի այս օրէնք է որ զայլոց , ուսանիլ զայն՝ զոր լսէ , և առնել զայն՝ զոր տեսանէ ․ արդ՝ եթէ մարդիկ որք յառաջագոյն ծնան՝ լինէին բարի , ապա և նոքա որք ծնան յետ նոցա՝ լինէին բարի ։ Ուստի եթէ կամին մարդիկ՝ զի չարք եղիցին սակաւ , առաջինքն լինիցին բարի , որպէս զի և յետինքն ուսանիցին 'ի նոցանէ լինել բարի ․ ապա թէ ոչ՝ տեսցեն յետոյ զամենեսին չար՝ և առնել չար ։ Զի բնաւորեալ են մարդիկ մի քան զմի յառաջադէմ գտանիլ յամի ․ ապա և 'ի չարիս յաղթեսցին յետինք առաջնոց ․ և յայն ժամ անուն առն բարւոյ գտանիցի միայն 'ի գիրս ․ և ոչ մի ոք բարի մնասցէ յաշխարհի ։

Ը Որ երկնչի կորուսանել զպատիւ իւր , զյոյս ունի զանձն յանկարգութէ ․ իսկ որ միանգամ կորուսանէ , ստանայ համարձակութի անպատկառ գործել զամ չարիս ։

Թ Չարք միշտ հակառակ են միմեանց ․ և ոչ կամի մինն զիշխանութի միւսոյն ․ զի քաջ գիտելով զչարութի միմեանց , ճնարին կործանել զիրեարս ։ Բայց մինչ բարիք հասանին յիշխանութի , չարք դիւրաւ համաձայնին ․ զի ակն ունին 'ի բարեաց գտանել զներումն անիրաւութեց՝ զոր արարին յառաջագոյն ։ Ուստի չիք ճշմարիտ սէր և միաբանութի 'ի մէջ չարա‿

գործաց . զի յորժամ ըմբռնի մինն 'ի նոցանէ , վաղվաղակի մատնէ զխորհրդակիցն իւր , և նա զընկերն իւր . և միաբանութի̅ն նց̅ լինի պատճառ կորստեան ամենեցուն նց̅ ։

Ժ Չարագործք մինչ անկանին 'ի վտանգս , ո՛չ առնուն 'ի միտ զյանցանս իւրեանց . այլ մեղադիր լինին այ̅ , թէ 'ի զուր ած̅ չարիքս 'ի վր̅ մեր . վյ̅ և կրկին պատժոյ են արժանի . մի՛ վս̅ ապիրատութե̅ցն զորս արարին . և միւս՝ վս̅ անխրատ գանգատանացն զայ̅ ։ Ուր պա՛րտ էր նց̅ գիտել , թէ ո՛չ ոք պատժի յայ̅ , եթէ չիցէ նախ մեղուցեալ առ ած̅ . զի ած̅ վասն անբաւ գթութե̅ իւրոյ՝ սովո՛ր է նո՛ւազ քան զարժանն պատժել զոք , թո՛ղ թէ 'ի զուր ինչ տանջել ։

ԺԱ̅ Իրք ժահահոտք՝ թէև ծածկեսցին ընդ հողով՝ տակաւին բուրեն զգարշահոտութի̅ իւրեանց . բաղձանք չարաց՝ որչափ և ծածկել ջանասցեն , անդէն յայտնի լինի բարեաց . զի սիրտք իւրեանց ապականեալք են ։ Որքան յանդգնին չարք , մինչև քարաձիգ լինել ամ̅ բարեգործաց . բայց 'ի համբերել բարեաց՝ քարինք չարաց անկանին 'ի գլուխս իւրեանց ։

ԺԲ̅ Չարաչար գնացք կենդանեաց՝ անմահացուցանեն զյիշատակ արանց բարեաց որք մեռան , և յաւելուն զկսկիծ նց̅ 'ի սիրտս մարդկան , զի կորուսին զբարիս , և ունին ըզ չարս ։ Այլ 'ի մեռանիլ բարեաց՝ սգան առաքինիք . ո՛չ յայն սակս՝ զի մեռան նոքա ,

այլ զի չարք միայն յաշխարհի, և բարիք պակասեցան։ Կեան չարք՝ զի միշտ մեռցին. մեռանին բարիք՝ զի միշտ կեցցեն։

ԺԴ. Եթէ տերևք ոչ պահպանէին զպտուղս ծառոց, գուցէ ծառք ոչ կրէին զնս 'ի յոստս իւրեանց. և եթէ չարք ոչ էին կրթիչ առաքինեաց, թերևս ոչ տանէր երկիր զայն անպէտ բեռինս։ Եւ արեգակն զլանայր արդեօք զլոյս իւր ծագել 'ի վր չարագործաց, եթէ չէր ազդեալ նմա յայ՝ ծագել 'ի վերայ բարեաց և չարաց։ 'Ի բառնիլ չարագործին՝ ոչ միայն մարդիկ ազատին 'ի վնասուէ նորա, այլև ինքն չարագործն զերծանի 'ի ծանրութենէ պատժոյ, որ յաւելու օր քան զօր 'ի վր իւր՝ ցորչափ մնայ կենդանի. ապա եթէ կեան չարք, այն է՝ կամ 'ի պատիժ մարդկան, կամ ինքեան չարագործին։

ԺԵ. Չարք որչափ առաւել բարձրանան 'ի փառս, այնքան մերձ լինի անկումն նց. զի արդարութիւնն այ երևի համբերել՝ մինչև լցցի չափ մեղաց նց, և կործանեսցէ իսպառ։ Բայց բազում անգամ խնայէ ած տալ չարաց զակն ընտրողական 'ի ճանաչել զառաքինի բարեկամս. զի չեն արժանի խրատու, որք կամին մերժել զխրատ։

ԺԶ. Մի՛ ինչ գայթակղիր՝ յորժամ տեսանես, թէ 'ի գործել ուրուք զմեծ-եղեռն չարիս, մնայ անպատիժ. իսկ 'ի մեղանչելն փոքու յանցանօք, պատժի չարաչար։ Քանզի սովոր է

ած համբերել չարագործաց զի զղջասցին. բայց 'ի յամառիլ նոցա 'ի մեղս, պատճառաւ փոքու յանցանաց նց ծանունս պատուհասէ. որով հատուցանէ զպատիժ մեծամեծ չարեացն, զոր արարեալ էր նց յառաջագոյն:

ԺԶ Անօրէնն յորժամ անկանի յանզերծ վըտանգս, յայնժամ ճանաչէ թէ արդար է տր, և խնդրէ վրէժս 'ի չարաց: Ո՛ է նա որ 'ի յաջողութե իւրում կախուցանէ զաչս իւր զի մի՛ տեսցէ զճշմարտութի, սպասէ ձախողութե և վտանգի մահու՝ բանալ զաչս իւր 'ի ճանաչել զճշմարտութի և զիրաւունս այ. բայց վայրապար, զի ոչ կարէ յայնժամ գտանել զփրկութիւն:

ԺԷ Մոլիք պատճառեն զոկարութի բնութե իւրեանց 'ի գործել զառաքինութի, բայց զանձինս խաբեն. զի ոչ եթէ մոլութիւն է բընական իմն, և առաքինութիւն օտար 'ի բնութենէ. այլ՝ բնութիւն առաւել յարմար է 'ի գործել զառաքինութիւս քան զմոլութիւս. ապա թէ ոչ՝ անողորմ լինէր ած առ մարդիկ. զոր և մտածելն է ամբարշտութիւն: Ասա մի՛ ասիցէ ոք, թէ կամիմ գործել զբարիս՝ բայց ոչ կարեմ. այլ մանաւանդ ասասցէ, թէ կարեմ՝ բայց ոչ կամիմ:

ԺԸ Ոչ մարմնական հիւանդութիւնք 'ի սուղ ժամանակի ախտացուցանեն զմարդ, բայց երկար տաժանմամբ հազիւ ապաքինին. այսպէս և մոլեկան խօթութիւնք հոգւոյ՝ սակաւօրեայ

ներգործութեամբ ունականան, բայց բազմաժամանակեայ ժուժկալութեամբ հազիւ 'ի բաց մեկնին :

ԺԹ. Ո՛ի եթէ ոք ժրաջան աշխատ լինի, կարէ ուղղել զթիւր ունակութիւս արհեստի. ապա և զմոլեկան սովորութիւն բարուց՝ որ վասն տկարութեան բնութեան ունակացեալ է 'ի մարդս՝ կարէ ոք ուղղել, եթէ արիական ոգւով հանապազորդէ 'ի ջանս :

Ի. Հիւանդութիւնք մարմնոյ՝ եթէ ոչ բժշկեսցին դեղովք՝ կամ պահեցողութեամբ, հուսկ ապա վախճան առնուն մահուամբ : Իսկ հիւանդութիւնք հոգւոյ՝ եթէ ոչ ապաքինեսցին ուսմամբ և առաքինական կրթութեամբ, յաւերժական մահուամբ :

Զօր է ախտ մարմնոյ, զի սպանանէ զմարմին . բայց չարաչար է ախտ հոգւոյ, զի զմարմին և զհոգի միանգամայն մահացուցանէ : Ապա յետսամիտ եմք՝ և բիւր բամբասանաց արժանի, զի 'ի հիւանդութեան մարմնոյ զարհուրիմք և դարման խնդրեմք . իսկ 'ի հիւանդութեան հոգւոյ ոչ երկնչիմք ինչ, և ոչ առ բժշկութիւն փութամք :

ԻԱ. Են ոմանք այնքան չար և մոլի, զի առ 'ի մնալ ազատ յերկիւղէ գեհեննին, և անխիղճ արշաւել յամենայն չարիս, ոչ կամին հաւատալ՝ թէ գոյ հատուցումն գործոց մարդկան . սակայն անհաւատութիւն նոցա ոչ կարէ խափանել զճշմարտութիւն, որում և բան մարդոյ վկայէ . և խելագարութիւն է ընդդէմ ճանաչման իւրոյ

մարտնչիլ • Որպէս, * Մ՛ի թէ՝ անհաւատութիւն նց՟ զԱյ՟ հաւատսն խափանիցէ՞ • քաւ լիցի •
|| Հռոմ. Գ. 3.

ԻԵ. Որ հաստատեալ է 'ի միտս, թէ զոր գործէ 'ի ծածուկ՝ յայտնի լինելոց է մարդկան, կամ խորշէր իսպառ 'ի գործոց չարեաց, կամ զգոյշ առնոյր:

ԻԶ. Մ՛արդիկ 'ի սուղ ժամանակի ուսանին զբաղում չարիս, և յերկար ժամանակս հազիւ զմի ինչ բարի • քանզի բարին է իբրև ակն պատուական • իսկ չարն իբրև խիճ անարգ • վս՟ նորա է դժուարագիւտ • և սա՝ ամ՟ ուրեք դիւրապատրաստ • և նա՝ բարին է յամբողջութէ՟ ամ՟ մասանց • և չարն՝ յինչ և իցէ պակասութէ՟ •

ԻԷ. Բարիք և չարիք միաբանին յաշխատանս, բայց տարբերին 'ի կամս • զի բարիք ո՛չ հաւանին ընդ բարին զոր գործեն • վս՟ ջանան առնել զևս բարեգոյնս • և որ ըստ օրէ յառաջացեալ՝ հասանեն 'ի գերակատար աստիճան բարեգործութե՟ : Իսկ չարք՝ հաւանին ընդ չարն զոր գործեն • վս՟ զհետ կրթին այնմ • և որքան զօր լինին առաւել ևս չար : Քանզի բարին վերջանայ, եթէ ոք հաւանեսցի նմին, և զգոյշ առնուցու • և չարն վերջանայ, եթէ ոք ո՛չ հաւանեսցի նմին, և դադարեսցի առնել:

ԻԸ. Եթէ ամ՟ լսօղ միայն լինէր բանից բերանոյ մարդկան, ո՛չ զոք դատապարտէր • զի ամենեքին 'ի խօսիլ իւրեանց ցուցանին ատել զմոլութիւս • բայց գործով հանապազ յաճախեն

՚ի նոյն. սակայն ած ոչ եթէ ՚ի բանս հայի՝ այլ ՚ի գործս, և ըստ այնմ առնէ դատաստան։

իզ. Ո՛չ է արժանի կեալ, որ կեայ վնասուք կենաց անմեղաց։ Տէր է նա կենաց այլոց, մինչ զոհէ զկեանս իւր վասն նոցա։

իէ. Մարդիկ եթէ քաջ ճանաչէին զողորմելի վիճակ մարմնոյ, երանէին զմեռեալս. զի մեռեալք անջատեալք ՚ի մարմնոյ՝ զերծ են ՚ի թշուառութենէ անտի. իսկ կենդանիք տակաւին ՚ի մարմնի գոլով՝ տառապին ՚ի նմին։ Բայց կենդանիք ոչ քաջ ճանաչեն այժմ զտգեղութիւն մեղաց, և զսաստկութիւն պատժոց մեղաւորաց. վասն անզգուշաբար սահին ՚ի մեղս, և անկանին ընդ դատապարտութեամբ։ Իսկ մեռեալք թէպէտև ճանաչեն զա̃մ, բայց ոչ կարեն ապաշխարութեամբ քաւել զմեղսն՝ զոր գործեցին ՚ի կեանս իւրեանց. վասն կան մնան ընդ դատապարտութեամբ։ Աստի պիտոյ է կենդանեաց զմիտս մեռելոյ ունել, զի մի՛ մեղօք դատապարտեսցին։

* Որպէս ագուռ ատամանց՝ վնասակար է՝ և ծուխ աչաց, նոյնպէս և անօրէնութիւն որոց վարեն նովաւ։
|| Առակ. Ժ. 26։

* Հասցեն ՚ի մթերս մեղաց իւրեանց տագնապեալք. և յանդիմանեսցեն զնոսա ընդդէմ անօրէնութիւնք իւրեանց։
|| Իմաստ. Դ. 20։

ԳԼ. Բ

ա. Ճշմարիտ փառքն և պատիւն բովանդակի 'ի վեհանձնի մարդկութ՟ե, և ոչ գտանի արտաքոյ ն՟ր. իսկ որ բարձրամտեալ գեր 'ի վերոյ համարի զինքն քան զա՟մ մարդիկ՝ և խնդրէ զփառս և զպատիւ յատուկ անձին իւրոյ 'ի վեր քան զա՟մ, արտաքոյ ելանէ 'ի կարգէ մարդկութ՟ե. վ՟յ և այնպիսին չէ մարդ բանաւոր, զի ոչ ճանաչէ զպատիւ մարդկութեան. այլ գազան հրէշ և այլանդակ:

բ. Ճշմարիտ փառաց և պատուոյ է արժանի, որ է մարդասէր և բարերար, և ճանաչէ զկարգ մարդկութ՟ես. և անարժան է փառաց, որ նախամեծար համարի զանձն քան զա՟մ մարդիկ, և ցանկայ փառաւորիլ յամենեցունց. ապա կարի իրաւամբ արհամարհի յա՟մ, որ արհամարհեաց զա՟մ մարդ:

գ. Հպարտ ոք և փառամոլ՝ 'ի լսել իւրում զգովութ՟ի 'ի մարդելուզաց՝ փքացեալ գոռոզանայ. և յիմարաբար ցանկայ՝ զի և այլք ամենեքին գովեսցեն զնա. և ոչ ճանաչէ՝ թէ սուտ գովութիք են այնք, զոր տան նմա մարդելոյզք վ՟ն շահաւորու՟ե իւրեանց: Գովութիւնն որ լինի առ երեսս՝ թէև իցէ ճշմարիտ, է սնոտի, և գրգռիչ սնապարծութ՟ե:

դ. Գոռոզք՝ սովոր են լինել ապերախտք. զի մինչ տաղտկանան 'ի միոյ բարեկամաց իւրեանց, ոչ 'ի միտ ածեն զհաւատարմութ՟ի ն՟ր

և զերախտիս , այլ իսկոյն հերքեն զնա . զի կորուսանել զմտերիմ խորհրդակիցս և զերախտաւորս՝ ոչ ինչ ցաւ է նմա . և որ միանգամ անհաճոյ թուեցաւ իւրեանց , ոչ երբէք կամին տեսաւորիլ ընդ նմա ։

Ե Հպարտն նման է արջառաջիլ դաւաղանի . որ մինչ բռնուի թեքի , երկոքին ծայրքն խոնարհին և գան առ միմեանս . և մինչ թողու 'ի ձեռանէ , նոքին իսկ ծայրքն վաղվաղակի գլուխ ամբարձեալ՝ դառնան յոձն առաջին . այսպէս և հպարտք՝ յորժամ 'ի նեղութիս անկանին , ակամայ կորանան և խոնարհին . այլ իբրև ազատին , միւսանգամ մեծամտին . վայ և ատելի են այ և մարդկան .

Զ Բազումք հասանեն բարեբաղդութե , բայց ոչ գիտելով բարւոք վարել , կորուսանեն փութով ։ Ոչ իշխան հպարտ թէպէտև գիտիցէ զտկարութի իւր՝ և զզօրութի թշնամւոյն, բայց վասն ամբարտաւանութե իւրոյ ոչ կամի խոնարհիլ 'ի պայման հաշտութեան , զի մի՛ նուաստացեալ երևեսցի . որով և կորուսանէ իսպառ զպատիւ իւր և զիշխանութի ։

Է Նմանութիւն է անկայուն յաջողութե բարձրամտիլ , և կորուսանել զփառս և զհամբաւ . յաջողուածք են պատրողականք . զի ցուցանեն լինել մշտնջենաւոր և անկորուստ , բայց են փոփոխական և հասանուտ ։

Ը Հպարտ մոլեք՝ լինին յանդուգն 'ի յաջողուածս , և երկչոտ 'ի ձախողակս . զի որք

փոքր մի յառաջ ուսուցեալ էին ամբարտաւանութեան, ՚ի կորուսանել զբարեբաղդութիւն իւրեանց՝ փոփոխակի կորանան և ընկճին. և ՚ի միում վայրկենի անցանեն ՚ի ներհական ծայր։

Թ Սէրն մնափառութեան երբեմն գրգռեալ յամբարհաւաճութենէ՝ այնքան կատաղի, մինչև յերկիր կործանել զմեծատունսն. ապա յայտ է՝ թէ ոչ ամենեքին պահեն զկարգ մեծութեանն զոր ունին, այլ մանաւանդ բազումք յանարգութիւն անձանց իւրեանց դարձուցանեն զնա. զի ոչ գիտեն՝ թէ որպէս արժան է վարել զմեծութիւն։

Ժ Ցանկութիւն աւելորդաց ՚ի պատճառս մնոտի փառամոլութեան առաւել տանջէ զմարդիկ՝ քան զբաղձանս հարկաւորաց ՚ի պէտս կենաց. զի թէ ոք կամի կարևորացն շատանալ, դիւրաւ կարէ զնոսա ՚ի ձեռս բերել՝ և կեալ երջանկաբար։

ԺԱ Ազնուականք յաճախակի լինին փառամոլք. քանզի պատրեալք յանուանէս ազնուական, յամենայն ուրեք խնդրեն ունել զփառս և զպատիւ. այս՝ անմեղադրելի իմն է ըստ արժանեաց խնդրել զփառս. բայց կորուսեալ զչափաւորութիւն, լինի չար և մոլեկան. մինչ զի տայ կորուսանել կամ զանձն և կամ զպատիւ։

ԺԲ Հոգի ազնուականութեան է մեծագործութիւն, խոնարհութիւն, և առաքինութիւն. ապա թէ ոչ՝ մեռեալ համարի ազնուականութիւնն. Ուրեմն մի՝ պանծասցին ազնուականք ՚ի պայ-

ծառութիւն տոհմի իւրեանց , եթէ ոչ ունին գործ արժանի ազնուատոհմութեան . զի ո՛չ 'ի պակասել իւղոյ՝ շիջանի ճրագն . նոյնպէս և 'ի պակասել մեծագործութեան՝ իմաստութեան և առաքինութեան , բառնի յարգ տոհմականութեան նորա :

ԺԳ. Բաղձանքն փառաւորութեան բազում անգամ չափազանց տայ խօսել զգործոց՝ զորս արար , կամ զորոց՝ որք պատահեցան նմա . կարծիս իմն եդեալ 'ի միտ , թէ այնու մեծագունի և պատուոյ արժանի գտանիցի . բայց խաբի , զի զպատիւն զոր ունի՝ զայն ևս կորուսանէ : Այլ պա՛րտ է զճշմարտութիւն իւրացն խօսել չափաւորութեամբ իմն՝ և ո՛չ տարապայմանն . զի մի՛ երևեսցի 'ի նոսա նշան սնոտի պարծանաց . որպէս զի և լսօղք ինքնին յորդորեսցին գովել և պատուել :

ԺԴ. Որ առաւել քան զկար իւր 'ի բարձրագոյնս ձկտի , 'ի վախճանի ամօթապարտ եղեալ խոնարհի . և որ ջանայ կատարել միշտ զկամս իւր , անհանգիստ առնէ զանձն իւր :

ԺԵ. Օ՛ի է՝ զի արք խոհականք երբեմն ո՛չ տեսանեն զյայտնի վտանգս , և 'ի նա խարդաւանին . իսկ պարզամիտք տեսանեն և զգուշանան . և զիա՛րդ տգէտք ստանան զմեծութիւն , և հանճարեղք առ դուրս նոցա դեգերին : Բանզի խոհականք և հանճարեղք բազում անգամ ապաստանին յանձինս , և ո՛չ 'ի յԱստուած . վ̃յ և Աստուած թոյլ տայ նոցա առ ժամանակ մի հեծել



Ա/1077

և յոդւոց ելանել. զի ծանիցեն զտկարութիւն բնութեան իւրեանց, որք կարծէին թէ 'ի ձեռս մարդոյ է երջանկաբար կեալ. իսկ պարզամիտք և ոգէտք ապաւինեալ 'ի յԱստուած՝ զերծ մնան 'ի վտանգէ, և գտանեն զյաջողուածս բարեաց:

ժզ. Ոմանք 'ի մարդկանէ մինչ տեսանեն զոք յաղթահարեալ երբեմն 'ի կրից հոգւոյ՝ անգոսնեն զնա մինչև իսպառ. և հպարտացեալ յանձինս իւրեանց՝ ասեն պանծանօք. զինչ արդեօք իցեն կիրք, բայց եթէ արբանեակք կամաց. որք եթէ ըմբոստասցին երբեք, դիւրին իմն է նուաճել զնոսա անդրէն 'ի հնազանդութիւն. ապա ո՛րչ 'ի մարդկան համարի արժան է ունել զայն, որ վատթար մեղկութեամբ յաղթի 'ի կրից: Բայց մինչ այսպիսի մեծաբանք՝ ոչ պակաս քան զայլսն յաղթահարին 'ի կրից ատելութեան կամ սիրոյ, զիջանին խոստովանիլ զտկարութիւն մարդկեղէն բնութեան. և ուսանին լինել կարեկից և ներող:

ժէ. Այր հպարտ և ամբարհաւաճ ատելի է ամենեցուն. զի որպէս նա անգոսնէ զամենայն մարդիկ, արժան է՝ զի և այլք ամենեքին անգոսնեսցեն զնա: Այս ախտ հպարտութեան առաւել տիրէ 'ի վերայ որդւոց մեծատանց. զի մեծատունք զորդիս իւրեանց գրեթէ յանդըստին յօրօրոցէ՝ ամբարտաւանութեամբ քան կաթամբ սնուցանեն, անթերի կատարելով զհաճոյս կամաց նոցա: Յորս նախ քան զհաստատել անդամոց՝ հաստատի ախտն ամբարտա

ւանութե՛ն . ուստի և համարին զանձինս դիւցազինս , և արհամարհեն զամենեսին , գուցէ և զծնօղս իւրեանց :

Զի որք մինչ էին մանուկ՝ կատարէին ըզհաճոյս նր . նոյնպէս և ՚ի մեծանալ իւրեանց կամին՝ զի կատարեսցեն զկամս իւրեանց . վն և լինին կամապաշտ . ոչ այնու միայն՝ զի ինքեանք պաշտեն զկամս իւրեանց , այլև այնու՝ զի կամին թէ այլք ամենեքին պաշտեսցեն . և եթէ ոք հակառակեսցի ի՛ւիք՝ կամ ոչ կատարեսցէ , վաղվաղակի զայրագնին անշիջանելի բարկութե՛ : Ապա պարտական դատին ծընօղք , եթէ պատճառս տան կամապաշտութե՛ որդւոց իւրեանց :

ժը՛ Հպարտն ոչ կամի հնազանդիլ ումեք ՚ի մարդկանէ՝ բայց միայն դիւաց . զի ոչ կամի ճանաչել զոք գերագոյնս քան զինքն՝ բայց եթէ զդևս , որոց կայ միշտ հնազանդ . և եթէ ոչ էր տուեալ զանձն ՚ի ծառայութի՛ դիւաց , թերևս հնազանդէր մարդկան : Ապաքէն ծառայ նա է , որ միայն տն՛ իւրում հնազանդի , և ոչ այլոյ ումեք . իսկ հպարտն՝ վն՛ զի է ծառայ դիւաց , նմա միայնոյ հնազանդի , և ոչ բնաւ այլոյ :

ժթ Անախտաք՝ թէև երբեմն գործեն զբարին , ոչ առնեն այնու մոգք , թէ վասն զի է բարի՝ հաճելի այ՛ և մարդկան , այլ զի արբանեկէ ամբարտաւանութե՛ իւրեանց . զի նոյն է առ նոսա բարին և չարն . ապա գոր-

ծեն զբարին՝ զի երեւեսցին բարեգործ յաչս մարդկան ։

ի̅ Բազումք ՚ի մարդկանէ զբարին զոր գործեն, ո՛չ վերաբերեն առ Ա̅ծ՝ այլ ՚ի զօրուի̅ անձանց իւրեանց. եւ զի մոռանան նոքա զպարգեւս Ա̅յ, որով կարողացան գործել զբարիս. վ̅յ եւ ո՛չ տայ Ա̅ծ զվարձս ն̅ց ։ Այն է ճշմարիտ բարեգործութ̅ի, որ լինի ՚ի սէր եւ ՚ի պատիւ Ա̅յ, եւ առ Ա̅ծ վերաբերի իբրեւ առ աղբիւր եւ տուիչ ա̅մ բարեաց. զի նա է որ տայ, եւ ընդունի, եւ վարձատրէ ։

ի̅ա Որ սովոր է պանծալ բանիւ, անպիտան է գործով. զի այր գործունեայ՝ գործով քան բանիւ խօսի ։ Պա՛րտ է ամփոփել զձեռըս, յորժամ լեզուն ամբարտաւան խոստանայ տալ ։

ի̅բ Չիք ինչ յաշխարհի ամրակուռ շինուած, զոր ո՛չ եղծանիցէ հնուի̅ ժամանակին. եւ ո՛չ իշխանուի̅ հզօր՝ զոր ո՛չ կործանեսցէ թշնամին. եւ ո՛չ արհեստաւոր ճարտար, զորովք ո՛չ գերազանցիցեն այլք ։ Ապա մի՛ ոք հպարտասցի ընդ կորովամտութ̅ի իւր, թէ ո՛չ ոք կարէ հասանել ՚ի չափ իւր. զի գուցէ այլք լաւագոյն եւս կարիցեն գիտել եւ գործել ։

ի̅գ Զարմանք մի մեծ այս են, զի բազումք են ՚ի մարդկանէ հպարտք, բայց ո՛չ ճանաչեն թէ իցեն. եւ վ̅ս զի հպարտութ̅ին է սէր յատուկ գերազանցութե̅, ո՛չ թողու ճանաչել զմոլորութ̅ի անձին. այսու ախտիւ՛ ախտանան

և բարեգործք ․ զի կամ զբարին զոր ունին՝ կարծեն զօրութեամբ իւրեանց ստացեալ, և կամ վասն արժանաւորութեան իւրեանց տուեալ նոցա յԱստուծոյ ։

իդ. Ունայն հպարտ՝ կամ է տգէտ, կամ յանդուգն ․ տգէտ այնու, զի զբարին զոր չունի՝ կարծէ թէ ունիցի ․ քանզի յատուկ է հպարտից կուրանալ մտօք ․ յանդուգն այնու, զի սակաւ բարեօքն զոր ունի՝ կամի առաւել երևիլ 'ի մէջ ընկերաց իւրոց ․ որով և արհամարհէ զայլս իբրև զուրկս 'ի բարեաց ։ Եւ որովհետև առաւել չար և դժնդակ է այս ախտ, ապա առաւել զգուշութեան պէտս ունի առ 'ի չախտանալ նովաւ ։

իե. Զբարիս աշխարհի և զմեծութիւն այնպէս պարտ է քեզ ունել, որպէս թէ ունիցիս զնոսա յերազի ․ զի յորժամ ստուգիւ ունիլ կարծես, անդէն առ ժամայն լինին անհետ ․ դու հաւատաս՝ թէ 'ի ձեռին քո են, բայց ոչ են ․ զի զփախուստ նոցա 'ի քէն՝ ոչ կարես արգելուլ ։ Ապա անմիտ է՝ որ ընչիւք և մեծութեամբ առօրեայ կենցաղոյս մեծամտի և հպարտանայ ։

իզ. Բազումք 'ի մարդկանէ դիւրաւ ամբարհաւաճին՝ և ելանեն ըստ կարգ բանաւորութեան, եթէ ունիցին զհարստութիւն ընկերակից և ձեռնտու ինքեանց ․ վասն յոլովակի թոյլ տայ նոցա Աստուածային տեսչութիւնն՝ անկանիլ 'ի կարիս աղքատութեան, զի մի՛ խապաւ խելագարեսցին ։

Քանզի կիրք մարդկան է իբրեւ զգազան. որ եթէ գտցէ բազում դարման, քան ճոխութի ընչից, լինի ամեհի յոյժ՝ մինչեւ դժուարին լինել նմա պնդել 'ի շղթայս, եւ հպատակ կալ բանաւոր հրամանի կամաց. իսկ եթէ նուազ գտցէ զկեր, տկարանայ եւ նուաճի. զի աղքատութիւնն է շղթայ ամբարհաւաճ ցանկութե կրից, որ խոնարհեցուցանէ զնա հնազանդիլ ակնարկութե կամաց առաջնորդելոյ 'ի յուղիղ բանէ:

Եւ Հպարտն նման է հրոյ. զի որ հուրն ուր եւ գտանիցի, զգացեալ լինի 'ի բնական յատկութեն. զի է սաստիկ ջերմ եւ այրեցող. այսպէս եւ հպարտն յորում վայրի եւ գտանիցի, ճանաչի 'ի յատկութէ իւրմէ. զի է արհամարհօղ եւ նախատող այլոց. քանզի զանձն միայն գովէ, եւ կամի ընդունիլ զգովութի յամենեցունց:

Այս եւ բազում անգամ անկանի 'ի նախատելի պակասութիս, զի գոնէ խոնարհեսցի. կամ 'ի ձախորդութիւնս, զի ծանիցէ թէեւ ինքն է մարդ սխալական. ապա թէ ոչ՝ ած ուռն համարէր զանձն իւր: Յաղագս որոյ յամ ժամանակս նախատակոծ եւ առակ նշաւակի եղեն հպարտք, եւ լինին միշտ, եւ լինիցին առ յապայն ըստ արդար դատողութեն այ. որոյ փորձն ոչ պակասի՝ եթէ կարասցեն առնուլ 'ի միտ, թէ զինչ էր եւ զինչ եղեւ մեծութի եւ փառքն ամբարտաւանից:

ԻԸ Այր ամբարտաւան՝ եթէ ըստ դիպաց իմն բարւոյ իմիք լինիցի պատճառ, այնքան մեծամտի և պարծի, մինչև կորուսանել ըզյարգ բարւոյն զոր արար. և զվարձսն զոր ունէր ժառանգել. և իբրև հաւ կարկաչան՝ 'ի վ̃ր միոյ ձուոյ զլսելիս խլացուցանէ:

Սա զի ոչ գիտէ կշռել զգործն ըստ չափու ճշմարտութե̃, այլ ըստ կրից իւրոց. ուստի ևս քան զևս բարձրանայ միտք և հպարտանայ. և զոր ինչ պատիւ ունի ստացեալ, անբաւական համարի զայն. և հանապազ նորագունին ըղձանայ. մինչև զմեծականն ունել զպատիւ, և նմանօղ լինել բարձրելոյն փառաց: Իսկ որովհետև զայս ախտ ամենևին չար՝ ընկալան հպարտք 'ի բելիարայ. ապա ընդունին ընդ նմին և զպատիժ պատուհասի նր̃, եթէ մնասցեն անզեղջ:

ԻԹ Հպարտն ոչ ումեք կամի խոնարհիլ. բայց քանզի է պատուասէր, բազում անգամ խոնարհի մարդահաճել առ 'ի ստանալ զյարգանս: Ո է որ յումեքէ մեծարիլ ցանկայ, 'ի հարկէ նմա հաճոյանալ ջանայ. որոյ աղագաւ տանջի 'ի միտս, թէ ո՞րպ̃ մարթասցի հաճոյ լինել. ուստի մեծարէ զայնս, որք չեն արժանի մեծարանաց. որպէս զի զփոխադարձն առցէ 'ի նոցանէ զպատիւ: Քանզի այսպիսիք սովոր են զմիմեանս 'ի պատիւ ելանել կեղծիւք և 'ի շնորհուկս՝ 'ի սնուցանել զհպարտութիւն, և ոչ եթէ 'ի փառս ա̃յ՝ և 'ի սէր

եղբայրութեան, որոյ օրէնքն հրամայեն։

Իսկ եթէ փոքր մի վշտասցէ յեղբօրէ իւր-մէ, և յոյսն պատուոյ անհետասցի ՚ի միջոյ, տես յայնժամ թէ որպիսի նախատական նետս ձգէ առ նա։ Զի որ յառաջագոյն գովութեամբ հռչակէր, ապա անարգանօք վատահամբաւէ. և որ նախ յարգական անուամբ յիշատակէր, այնուհետև նախատական անուամբ ծանակէ. և որ ՚ի տեսանելն ծիծաղադէմ զնովաւ փա-րէր, այժմ խոժոռահայեաց պժգանօք երեսս դարձուցանէ։ Այս խոնարհութիւն ամբար-տաւանից՝ է առերևոյթ և ոչ ճշմարիտ։

Է. Զարմանք են. զի ամենայն ոք ուր ուրեք և գտանիցի, պարսաւէ զհպարտութիւն իբրև չար և վնասակար. և գովէ զխոնարհութիւն իբրև բարի և օգտակար. ապա զի՞նչ է՝ զի միշտ և ամենայն ուրեք հպարտ բազում գտանին, և խո-նարհք սակաւ. Թերևս ոչ ունին սոքա ըզ-ճանաչումն բարւոյ և չարի. քանզի մեծ նա-խատինք է մտաւոր բնութեան ճանաչել զբարի և զչար, և թողեալ զբարին՝ առնել զչար։ Բայց դժպատեհ իմն թուի կարծել, թէ տակաւին ոչ կարասցեն մարդիկ ճանաչել զնոյն անթիւ օրինակաց և փորձոյ աստուածեղէն գրոց, և խրատուց իմաստնոց, որք միաբան ուսու-ցանեն՝ թէ չար է հպարտութիւն, և բարի խոնարհութիւնն։

Բացայայտ ուրեմն է, թէ մարդիկ կամ առ տկարութեան բնութեան, կամ ՚ի բուռն

կրից հոգւոյ, կամ 'ի գրգռումն բանաւորկուբին սաշխին 'ի հպարտութի. և կամ գուցէ յանշուք և ցածուն կերպարանաց խոնարհութե խոր-շին, զի մի՛ նուաստ երևեսցին:

Իսկ արդ՝ վս տկարութե բնութե առաւել պարտի մեզ խոնարհիլ քան հպարտանալ. տկար ասեմ զայն, որ ո՛չ կարէ կշռել զկար անձին. և ո՛չ բարեկարգութե վարել զներգործութիս մտաց և կամաց, զոյժ և զզօրութի մարմնոյ, զիշխանութի և զփարթամութի. քանզի հնար է՝ թէ այլք առաւել ունիցին զայս ամ բարիս բնութե և բարիս բաղդի, քան զոր ինքն ունի: Իսկ նա որ գիտէ՝ թէ այլք բազմօք գերազանցեն քան զինքն, անդէն սկսանի խոնարհիլ 'ի հպարտութէ իւրմէ. զի խելադարութի է ընդ դէմ յատուկ ճանաչմանն իւրոյ յանդգնիլ:

Դարձեալ՝ չէ՛ արժան անգիտանալ ումեք զբռնութե կրից. զի կիրք զգայական բաղձանաց բազում անգամ մթագնեն զլոյս բանին. թիւրեն զուղղութի կամաց. և տան մոռանալ զանձին տկարութի: Նա՛ զի բարիք բընական կամ ստացական՝ պատճառեն երբեմն զհպարտութի: Ուստի եթէ պարահայեաց աչօք նկատեսցէ ոք զանցս՝ որք անցին յառաջագոյն շուրջ զիւրև, և զվիճակն յոր այժմ գտանի, և նոքօք գուշակեսցէ զապագայէն, խոնարհի իսկոյն:

Դարձեալ՝ պարտի անմոռաց ունել 'ի միտ

զչարիմաց ճնարս բանսարկուին, որ առաւել փոյթ է յորդորել զմարդիկ 'ի հպարտութիւն քան յայլ մոլութիւնս, և զգուշանալ 'ի հպարտութենէ։ Զի այս ախտ դիւրաւ 'ի ներքս 'ի հոգին սպրդի, և դժուարաւ ճանաչի, և 'ի բազումս անբժշկելի մնայ. և որ այլ մոլութիւնք մեղաւոր առնեն զմարդն, իսկ սա գլխովին դև կացուցանէ։ Այս մեծի արժանութեան պէտս ունի չանկանիլ 'ի թելադրութիւն դիւին. զի բազմաճնար խորամանկութեամբ՝ զբարիսն զոր ունի ոք, մեծ և չքնաղ և առաւել քան զայլոցն երևեցուցեալ՝ տայ հպարտանալ, և՝ արհամարհել զայլոց բարիս, և զիւրն միայն սիրել, և ընդ այն հաւանիլ։

Դարձեալ՝ պարտի ճանաչել և գիտել ումեք զբարձրութիւն պատուոյ և փառաց պանծալի խոնարհութեան. և ոչ մի նուաստ կերպարանաց խոնարհաց, իբրև արհամարհ ինչ անգոսնել և ատել զբնաշխարհիկ ազնուութիւն իւր. զի թէպէտ խոնարհն առաջի մոլեաց թուի անշուք և անիմաստ, բայց առաջի առաքինեաց է փառաշուք և մեծիմաստ։

Զի ճշմարիտ փառք և իմաստութիւն մարդոյ՝ է ճանաչել զվայելուչն և զօգտակարն, և զայն ստանալ. և զինչ վայելուչ և օգտակար մարդոյ՝ քան լինել սիրելի ամենեցուն, և կեալ ուրախամիտ. և ահա խոնարհն սիրելի է ամենայն բարեաց, և վարէ զկեանս խաղաղ և ուրախ. Այլ որ սիրէ զանձն իւր, և կամի լինել

յորդի և պատուական առաջի այ, և մարդ-կան, լիցի՛ խոնարհամիտ ։

ԼԷ. Չէք մեծագոյն մեղք քան զհպարտութիւնն. զի ընդ ինքեան շղթայեալ ունի զամ մեծամեծ մոլութիս ։ Քանզի հպարտն ոչ կամի՝ թէ այլ ոք քան զինքն գեր 'ի վերոյ գըտանիցի, և յայսմանէ լինի նախանձոտ. և ոչ տանելով յաջողութե այլոց՝ վառի 'ի բարկութի. և ոչ կարացեալ արգելուլ զյաջողուածս նցա՝ լքանի, և անկանի 'ի ծուլութի. և զի ծոյլն ոչ ակն ունի շահիլ և ևս, լինի ագահ. և ագահուէ ստացեալ արծաթն գրգռէ զնա ուտել և ըմպել, և լինի որկրամոլ. և'ի բաղումկերակրոց և ըմպելեաց բորբոքի ախտըն ցանկութե, և լինի բղջախոհ ։

Այս հպարտութին է մայր և դայեակ ամ գլխաւոր մոլութեց, յորմէ յառաջ գան անթուելի ծնունդք մեղաց, յորոց միոյն բաւական է ածել զմարդն 'ի կորուստ. ուստի առաւել պարտ է փախչիլ 'ի հպարտութէ՝ քան 'ի մահաբեր թունոյ ։

ԼԸ. Հպարտն ցանկայ պատուիլ յամէ, բայց անարգի յամենեցունց. զի որ ատելի է այ, ամենեցուն է ատելի. քանզի հպարտն կամի՝ թէ ամ ոք ծառայեսցէ ինքեան. և ոչ ոք կարէ տանիլ այսմ, վսյ ամենեքին ատեն զհպարտն ։

ԼԹ. Հպարտն իրաւամբ կոչի տգէտ և խելագար, զի ոչ ճանաչէ զչափ անձին ըստ օրինակի տգէտ և խելագար անձանց. բայց այս

խոտիր է 'ի միջի . զի խելագարն ոչ միայն է անմեղադրելի, այլև ցաւակցութե՟ արժանի . և ոգէտան՝ թէպէտև մեղադրելի իցէ, զի ոչ ջանացաւ ճանաչել զանձն, բայց տակաւին ունի տեղի ներողութե՟ . զի ոչ ստոյգ չարութե՟՝ այլ անգիտութե՟ գործէ : Իսկ հըպարտն՝ որ կամաւ տգիտանայ և խելագարի, և ամբարտաւան մտօք ոչ կամի ճանաչել ըզչափ անձին, առաւել մեղադրելի է, և արժանի դատապարտութեան :

Եթէ Հպարտն որև ամբարտաւան՝ կազմեալ 'ի բառիցս ամբ՝ արտ՝ վան, յարմարապէս ստուգաբանի յամպն կոյս արտաքս վանեալ յերկրէ . զի ամբարտաւանն հաւատայ զանձն վերացեալ մինչև յամպս՝ ըստ օրինակի հեղինակին իւրոյ սաղմոսելի, որ ասէր . եղից զաթոռն իմ յամպս, և եղէց նմանօղ բարձրելոյն . վա՜յ և անկումն հպարտոյ՝ է սոսկալի . զի որ կարի իմն 'ի բարձանց անկանի, մանր խորտակի :

Ու զի այս ախտ դժնդակ՝ սեպհական է մտաց . զի մտացն գոլով աննիւթ և հոգեղէն, 'ի նիւթականաց միշտ օտարանալ ձգտի . և թէպէտ հոգին բանական 'ի նիւթական մարմնի բնակի, զի է գոյացական տեսակ նորին . բայց միշտ բաղձայ գերազանցել զնովաւ :

Ո՛ ուրեք երբէք այնքան յանդգնին հըպարտք, մինչև կարծել զանձինս 'ի վեր քան զմարդ . զայս վաղու ևս ուխտացաւ սաղմոսել,

մինչ ետես զինքն գոյացութիւն անմարմին և իմացական։ Սակայն մարթ է հպարտաց գերազանց քան զամենեսին լինել, և՛ի բարձրագոյն պատւի վերանալ պահմամբ ճշմարտութեան, ընդ խոնարհութեամբ։ Զի այս է ճշմարտութիւն, յորժամ ճանաչէ ոք զինքն որպէս և էն. իբր զի՝ է ստեղծուած, մահկանացու, տկար, ըստ ինքեան անբաւական գոլոյն իւրոյ. և որ ինչ կարևորք են առ գոլն իւր՝ ունի յայլմէ։

Ապաքէն զայս ամենայն ածեալ զմտաւ, ճանաչէ զինքն, ճանաչէ նաև զԱստուած. և որ ճանաչէ զԱստուած, ձկտի սիրել զնա. զի սէրն ՚ի ծանօթութենէ իւրին ճանաչելոյ ծնանի. և որ սիրէ զԱստուած, միանայ ընդ նմա. զի սէրն է միաւորիչ սիրողին ընդ սիրելւոյն. և որ միանայ ընդ Աստուծոյ, ՚ի գերագոյն պատւի վերանայ։ Եւ ահա որ բաղձայր լինել ՚ի վեր քան զմարդ, և քան զնիւթական գոյացութիւնս, խոնարհութեամբ ուղւոյ հաւանի փափագանաց իւրոց, և լինի որպէս զհրեշտակ Աստուծոյ։ Ապաքէն հպարտքն փոխեսցեն զկարծիս իւրեանց, և լինիցին խոնարհ. սիրեսցեն զԱստուած, և փառաւորեսցին ՚ի նմանէ. ապա թէ ոչ՝ հանդերձեալ են կրել զպատիժ պատուհասի հեղինակին իւրեանց սադայելի ՚ի դժոխս։

Լե Հպարտն ցանկանալով ստանալ զփառս և զգովութիւն յամենայնէ, մինչ զբարի ինչ առնէ յօգուտ հասարակաց, ջանայ առ ամենեսեան հռչակել. և յորժամ ամենեքեան պշուցեալ հային ՚ի նա և գովեն, և նա քաղցրալինդ արութեամբ

մին յօգտակար գործս . որպ՟ զի առաւել ևս տարածեսցի համբաւն, և ինքն ուռուցեալ մեծամտեսցի։ Իսկ մինչ մարդիկ լռեցուցանեն զեզրուս իւրեանց ՚ի գովուէ, անդէն լքեալ թուլանայ ՚ի գործոյն . զի խթան քաջութե՟ նր՟ է գովութիւն ՚ի մարդկանէ . ուստի և ՚ի դադարել գովութե՟, դադարէ և ինքն . վ՟յ մնայ անվարձ առաջի ա՟յ։

ԼԳ. Հպարտութիւն գոլով ախտ դիւական՝ ատելի է ա՟յ և մարդկան . այնքան է գարշելի, մինչ զի նոքին իսկ հպարտք ոչ յանձն առնուն խոստովանիլ թէ իցեն հպարտ։ Իսկ ընդէ՞ր հպարտանան . յայտ է՝ թէ ոչ գիտեն զհպարտանալն իւրեանց, զի կոյր են մտօք . քանզի եթէ ոչ էին կոյր մտօք, ոչ կարէին հպարտանալ կամօք . զի հպարտանալն է գործ կամաց . այնու զի բաղձայ գեր ՚ի վերոյ երևիլ քան զա՟մ մերձաւակիցս իւր . սակայն կամքն պարտի հետևիլ լուսոյ բանին, ո՟ր՝ մտաց։ Արդ եթէ միտքն է կոյր, և ոչ առաջնորդէ կամաց ընթանալ անխոտոր, կամքն սահի յա՟մ վտանգս ՚ի կամիլ իւրում, զի ոչ կարէ ընտրել զարժանն։ Ուստի պարտ է հոգևոր բժշկաց նախ լուսաւորել զմիտս հպարտից, զի կարասցեն ճանաչել զմոլորութի՟ս իւրեանց, և խորշեսցին ՚ի հպարտութէ՟ . ապա թէ ոչ՝ օր ըստ օրէ զօրանայ ախտն՝ մինչև իսպառ կործանել նց՟ . զի այս օրէն է հպարտաց՝ ոչինչ կամ նուաղ վարկանել զպատիւն զոր ունին, և ցանկալ ստանալ

զոր ոչն ունիս, ընդ այնմ. * Ամբարտաւա-նութիւն ատելեաց քոց վերասցի հանապազ։ || Սաղմոս. 74. 23։

Է Հպարտութիւնն է ախտ ինչ մահաբեր, առ որ գրեթէ բնաբոյս բերմամբ ազնուականք և փարթամք ունին զդիւրմոլութի։ Բայց զարմանք են, թէ ընդէ՞ր արդեօք նաև աղքատք և նուաստք անմտաբար ախտանան նովին։ Սիրամարգն անբան՝ հայեցեալ 'ի տգեղութի ոտից իւրոց՝ խոնարհի 'ի փքացմանէն. իսկ սա գոլով մտաւոր, անմիտ քան զանբանն գտանի. զի զօրհանապազ տեսանելով զաղքատութի իւր, տակաւին հպարտանայ և բարձրամտի, որով իբրև հրէշ իմն ծիծաղելի՝ ծանակի յամէ։

Իր Հպարտն՝ եթէ ենթադրէր մօք, թէ ած միայն և ինքն միայն իցէ յաշխարհի, և ոչ այլ ոք, և զաշխարհ և որ 'ի նմա են ած՝ միայն վասն իւր արարեալ իցէ ած, և զին-քենէ միայն հոգայ, և զամ խորհուրդս և զգործս իւր քննէ, ոչ բնաւ մեծամտէր։ Զի յայնժամ յո՞ր վերայ գերազանցել կա-րէր, եթէ ոչ՝ 'ի վերայ այ. զի չէր այլ ոք 'ի վերայ երկրի, զորովք գերազանցել կարծէր։

Բայց անհնարին է ստեղծուածոյ որ ունիցի միտս՝ այնչափ խելագարել, մինչև զանձն գեր 'ի վերոյ քան զած համարել։ Եւ այսու օրինակաւ ոչ միայն 'ի հպարտութե, այլ և յամենայն մոլութեց և 'ի մեղաց հեռի գտա-նէր. ոչ ունէր փառասէր, և ոչ զուրուք

տրտնջէր · զի ոչ ոք բաց ՚ի յին̃ ճանաչէր գոլ յաշխարհի ։

* Ամբարտաւանութե̃ սկիզբն՝ հեռանալ ՚ի Տ̃նէ · զի յարարչէն խոտորեցաւ սիրտ նր̃ ։ Սիրաք. Ժ. 14.
* Ո՛չ ինչ չար եղեւ մեզ հպարտութիւնն, եւ ոչ ինչ մեծութիւն ամբարտաւանութե̃ն եղէ մեզ նպաստաւոր ։ Իմաս. Ե. 8 ։
* Ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեսցի ։ Ղուկ. ԺԴ. 14 ։

## Ագահութիւն

### ԳԼ. Գ

ա̃ Ճշմարիտ փարթամութիւն կայանայ ՚ի բաւականութե̃ հարկաւորաց՝ ՚ի սնունդ եւ ՚ի ծածկոյթ մարմնոյ ։ Են բազումք որք ոչ շատացեալ կարեւորօք՝ վատնեն զինչս իւրեանց ՚ի շինութի̃ մեծամեծ ապարանից, եւ յաւելորդ զարդս ընտանեաց եւ կարասեաց · եւ սպառելով զգանձս իւրեանց յանպիտան վայելչութիւնս, կորուսանեն եւ զպիտանիսն զոր ունէին ՚ի դարման կենաց · եւ անկանին ՚ի յետին չքաւորութի̃ եւ յանարգութի̃ ։

բ̃ Արդիւք յայնժամ ճանաչեն զաւելորդսն, յորժամ կարեւորացն շատանան · զի աւելորդքն ոչ առնեն զոք փարթամ, այլ սնափառ եւ շռայլ ։ Իսկ այր իմաստուն՝ հարկաւոր

պիտոյիւքն բնութե՟ սովոր է շատանալ. փախ-
չի յաւելորդաց՝ զորս հնարեաց սնափառութի՟
մարդկան. կայ միշտ խաղաղ և անվրդով. և
չունի կասկած 'ի թշնամեաց:

Է՟ Ծանրագին և աւելորդ զարդք զգես-
տուց և կարասեաց, և բազմատեսակ համ-
դերձանք կերակրոց և ըմպելեաց՝ կործանեն
զտունս մեծատանց, և պատճառեն զանթիւ
չարիս հասարակաց: Մ՟ զի միջակայինք ցան-
կան և դուն գործեն նմանող լինել մեծա-
տանցն շքեղութե՟, և նուաստք միջակայնոց:
Զ այս տեսեալ մեծատանց՝ սկսանին յաւե-
լուլ և ևս զվայելչութի՟ս իւրեանց, և ան-
կանին 'ի չափազանց ծախս. որպ՟ զի գեր 'ի
վերոյ երևեսցին քան զն՟ս: Եւ միջակայինք
բուռն առնեն նմանիլ նոցա. ոմանք յախտէ
սնափառութե՟ շարժեալ, և կէսք յանարգ
ամօթոյ. և նուաստք խելագարեալ ջանան
հետևիլ ընթացից նոցա.

Եւ այսպէս մեծատունք յաւաւելուլ անդ-
զշքեղութի՟ս, պակասեցուցանեն զհարըս-
տութի՟ս իւրեանց. միջակք յաճախեն սնան-
կանալ. և նուաստք չքաւորին իսպառ, և
անկանին յուսահատութի՟: Եւ առ հասարակ
ամենեքին սկսանին անարժան միջոցօք լնուլ
զպէտս իւրեանց. անիրաւեն, զրկեն, ստեն,
խաբեն, և գործեն զայլ բազում չարիս 'ի
վնաս անձանց և ընկերին: Եւ աղբիւր այս
ամ՟ չարեաց և վնասու, է բաղձանքն սնոտի

փառաւորութեան ։

Եւ արդարև ոմանք յիմաստնոց և յառաքինեաց՝ հաշին և մաշին զօրհանապազ 'ի տեսանել զայս ամ. և կամին բառնալ զվնասակար սովորութիս նց, սահմանելով զօրէնս բարիս 'ի պահել զիւրաքանչիւր անդամս հասարակութե 'ի չափու իւրում։ Բայց ո՛չ համարձակին, զի ընդդէմ է մոլեկան սովորութե, որ 'ի բազում ժամանակաց հետէ արմատացեալ է 'ի նոսա . զի ամենեքին բնաւ որ իմն բերմամբ ցանկան ստանալ զարծաթ՝ 'ի լնուլ զվայրավատին ծախս սնափառութե . և ո՛չ այլ ինչ խորհին՝ քանթէ հարստանալ և փառաւոր քան զայլս երևիլ։

Եւ այս ախտ այնչափ տարրացեալ է 'ի նս, մինչ զի և նոքա որք զուրկ են 'ի կարևորաց, գուն գործեն երևիլ փառաշուք . և'ի փոխ առեալ զարծաթ, ծախեն յաւելորդ զարդս և'ի կերակուրս։ Եւ որ ջանայ ուղղել և չափաւորել յաւելորդ զարդուց և'ի ծախուց բարեկարգ կենցաղավարութե իւրով, արհամարհի յամենեցունց իբրև չքաւոր՝ կամ կծծի։ Ապա առ 'ի բժշկել զայս մահաբեր ժանտախտ վարուց հասարակաց, պա՛րտ է 'ի խնդիր լինել և գտանել զկառավարիչ ոք իմաստուն և հայրենասէր . որ խոհական խրատիւք, և բարեկարգ կանոնադրութե, և օրինակօք կենցաղավարութեան իւրոյ կարասցէ ուղղել և բարեկարգել։

Դ  Դժուարին է յաղթել չար սովորութեան, որ տարրացեալ է վն տկարութեն բնութեն · բայց չէ խոպան անյաղթելի, զի կարէ ոք յաղթել և՚ի բաց տարագրել, եթէ անսայ խրատու իմաստնոց, և արիական ոգւով հանապազորդէ ՚ի ջանս :

Ե  Մեծատուն ոք՝ եթէ ունիցի զամ որք կարեւորք են ՚ի դարման և՚ի դիւրութի կենաց, բայց եթէ ոչ գիտիցէ վայելել ՚ի նս բարեկարգութե, այն ամ բարիք պակասին շռայլութե, և ինքն լինի դսրովելի և թշուառ · զի զինչ օգուտ է նմա ճոխութի, եթէ ոչ գիտիցէ ՚ի կիր առնուլ ըստ արժանւոյն :

Զ  Փառք և մեծութի իշխանին՝ է օգուտն զոր առնէ հասարակաց · բայց են ոմանք՝ որ կարծեն թէ հաստատեալ իցէ այն ՚ի մեծաշուք հանդերձանս համադամ կերակրոց, և ազգի ազգի ըմպելեաց · և ոչ ևս զգան, թէ այնու ոչ միայն դիւրապատրաստ գտանին նոքա անկանիլ ՚ի մեղս, այլև կորուսանեն զոյժ և զառողջութի մարմնոյ, և փութացուցանեն զմահ : Սեղան բազմախորտիկ՝ շտեմարան է հիւանդութեանց և թիւնաւորիչ կենաց : Սեղան պարզ և չափաւոր՝ առնէ համեղ ըզկերակուրն, զօրացուցանէ զմարմինն, և լուսաւորէ զմիտսն :

Է  Որ կարէ չափաւոր աշխատութե ստանալ ՚ի գաւառի իւրում զհարկաւոր պէտսն, անմիտ տանջանք են նմա ճանապարհ հատա‿

նել ընդ հեռաւոր աշխարհս 'ի ստացումն աւելորդաց, և կրել վիշտս յօտարութեան:

Ը. Մարդս տանջին յաւէտ 'ի կրից իւրոց և 'ի ցանկութեանց՝ քան 'ի ստանալոյ զպիտոյս. քանզի ցանկացեալ միոյ իրի, անհանգիստ տառապի՝ մինչև զնա 'ի ձեռս բերէ: Յետ այնորիկ փոխի ցանկութիւն նորա առ ստացումն այլոյ իրի. և մինչ հասանի այնմ, սկսանի ցանկալ այլում. և անդադար փոփոխի յօժարութիւն մարդոյ, և ցանկայ նորոյ իրի. և այսպէս տանջի 'ի կրից իւրոց:

Թ. Ճշմարիտ փառքն և մեծութիւն կայանայ յառաքինութեան և 'ի բարերարութեան. ապա արժան է մեծամեծաց փախչել 'ի սնապանծ շքեղութենէ, և ունել միայն զառաքինութիւն և զբարերարութիւն. զի առաքինական ներգործութիւնք և ազգօգուտ բարերարութիւնք են ճշմարիտ զարդք և փառք իշխանաւորին, և տան և տոհմի նորա. զոր տեսեալ հասարակութեան, զհետ կրթին լինել նմանօղ:

Ժ. Որ կամի կառուցանել զտուն մեծայարկ, լայնեսցէ զսիրտ իւր. զի որոյ սիրտն է լայն, անձուկ բնակարանն լինի նմա ընդարձակ. իսկ նեղասրտին՝ փոքր թուի աշխարհս համօրէն:

ԺԱ. Մարդիկ՝ որք յափշտակեալ 'ի փառասիրութենէ և 'ի սնոտի մեծութենէ, ոչ ախորժին լսել զխրատ և զյանդիմանութիւն, սխալին մեծապէս. զի կամելով ծածկել զմի ինչ

պակասութի զոր ունին, սահին 'ի բազումս. և գործեն զանուղղայս 'ի վնաս անձանց իւրեանց և տոհմականաց:

ԺԵ. Շռայլութիւն՝ բաւական պատիժ լինէր նոցին շռայլաց, թէև ոչ վասն այնորիկ տուեալ լինէր նց պատիժ յայ կամ 'ի մարդկանէ. զի յաւուր միում 'ի հարկէ պակասէր գանձ նց. և ցամաքէր աղբիւրն շռայլութե. և լինէին հեգ և թշուառ, և պատառ միոյ հացի կարօտեալ:

ԺԶ. Շռայլն որքան առաւել վատնէ զդրամ, այնքան առաւել պատուի յառողաց. բայց 'ի սպառել դրամոցն, անդէն չքանայ պատիւն, և անկանի յանարգութի.

ԺԷ. Շռայլութիւն է մայր և դայեակ աղքատութեան, և պատճառ բազմադիմի մոլութե և վնասու. Շռայլ ոք՝ որ նախատինս անձին համարի հարկաւորացն շատանալ, ջանայ ապաքէն գտանել զհնարս 'ի ստանալ զարծաթ, զի վատնել կարասցէ յաւելորդ ծախս 'ի կատարել զմոլեկան բաղձանս իւր. վս որոյ սկսանի խաբել, կողոպտել, զրկել, և անիրաւել:

Ուստի շռայլն՝ ոչ միայն թշնամի է անձին, զի վատնէ յումպէտս զժառանգութիս և զըստացուածս իւր, և անկանի յաղքատութի, այլև թշնամի է այլոց. զի խարդախութբ իւր և առնու 'ի ձեռաց նց զինչս և զդրամս. և ծախեալ 'ի զուր՝ չկարէ անդրէն հատուցա-

նել. և այսու կերպիւ վնաս մեծ հասուցա-նէ բազմաց։ Այս մեծ բարիս առնէ հասա-րակութե՟, որ չափաւորէ և ուղղէ զլեզուն, կամ տարադիր առնէ յընկերութե՟ մարդկան։

* Ո՛րդեակ զհեշտութե՟ ցանկութե՟ մի՛ բաշխեր յանձն քո, և ոտնհար լիցիս թշնամեաց։ Ընդ փափկութե՟ մի՛ ուրախ լինիր, և մի՛ կապեր ընդ նմա։ Ի հանգանակօք և փոխով մի՛ աղքատանար։ || Սիրաք. ԺԸ. 31. 32. 33։

* Վարանեմ զի՞նչ արարից. քակեցից զշտեմարանս իմ՝ և մեծամեծս շինեցից. և անդր ժողովեցից զցորեան և զամ՟ բարութիւնս իմ. և ասացից ցանձն իմ... հանգի՛ր կե՛ր արբ՝ և ուրախ լեր։ || Ղուկ. ԺԲ. 18.

## Նախանձ

### ԳԼ. Դ

ա՟ Որպէս ստուերն յառաջ գոյ 'ի մարմնոյ յարևու արկելոյ, նոյնպէս և նախանձն ծնա-նի 'ի յաջողուածոյ բարեաց առն առաքինւոյ։ Այն որ կամի խորտակել զատամունս նախան-ձոտին, և զնա սրտաթափ և միջաբեկ առնել, փոյթ կալցի յոյժ ևս մեծամեծ առաքինութիւ՟ թևակոխել. և համբաւ բարի առ ամենեսին հռչակ հարկանել. զի համբաւ բարի առա-քինագործ անձին՝ է դահիճ կենաց նա-խանձոտին։

Բ Նախանձոտք չարաչար խածատեն զազգայինս և զերախտաւորս՝ քան զօտարս. զի արք բարիք որք յայլոց ազգաց գովութեամբ հռչակին, 'ի նախանձոտաց ազգին իւրոյ՝ որոց արարեալ են զմեծամեծ բարերարութիւնս, զուր տարապարտուց բամբասին և թշնամանին:

Գ Չէք մեծագործութիւն ինչ արարեալ յօգուտ հասարակաց, որ կարասցէ զերծ մնալ 'ի թունաւոր նետից նախանձոտաց: Զի եթէ գործ իշխանին իցէ մեծարգի և օգտակար, յաջաղկոտն վատաբանէ զգործօղն՝ ասելով. ափսո՜ս զի ոչ արար սա 'ի փառս Աստուծոյ, այլ զի փառս որսասցի 'ի մարդկանէ: Իսկ եթէ գործըն իցէ չափաւոր, անգոսնէ զգործն՝ ասելով. եղո՜ւկ սմա, որոյ անուն մեծ է քան ըզգործ իւր. զի եթէ այլ ոք լինէր 'ի տեղի նորա, մեծամեծս և օգտակարագոյնս քան զայս արարեալ էր արդեօք:

Իսկ եթէ 'ի տարադէպ արկածից ժամանակին՝ կամ 'ի թելադրութենէ թշնամեաց՝ վտանգ ինչ զհետ եկեսցէ, որ սանձ կարասցէ նուաճել զապարասան լեզու նորա. զի զոչ պատճառն առեալ 'ի տեղի պատճառի, զամենայն վնաս կուտէ 'ի գլուխ նորա, և ասէ. այս ամենայն չարեաց սկիզբն և պատճառ սա եղև:

Դ Որ ունի զբարիս բնութեան՝ զգեղեցկութիւն, զկորովամտութիւն, զճարտարախօսութիւն, կամ զբարիս բաղդի՝ զիշխանութիւն, զփարթամութիւն, և զհամբաւ, ոչ երբէք կարէ

զերծուցանել զանձն ՚ի հարուածոց նախան-ձոյն, և անսպի մնալ ՚ի թունաւոր ժանեաց նորա։ Բայց հնա՛ր է կապել զձեռս նր՟ առ-նելով նմա զբարերարութի՟, և փշրել զատա-մունս նր՟ յաւելմամբ ՚ի վր՟ բարեաց բնութե՟ և բարեաց բաղդի, նաև զմեծամեծ բարիս բարոյական առաքինութեանց։

Եւ թէպէտ այսու ամ՟ի կաշկանդին ձեռք նր՟, և փշրին ատամունք. բայց դեռ արձակ կայ լեզուն, որով ո՛չ դադարի ՚ի լեզուագարե-լոյ, գուցէ առաւել քան զառաջինն. և զի չունի ատամունս խածատելոյ, առ զայրոյթ սրտին խօսի զչարիս և վատահամբաւէ։

Բայց այն ամ՟ ՚ի վախճանի դառնան ՚ի պա-տիժ անձին իւրոյ. զի հուր նախանձուն կի-զու զերիկամունս նր՟ և զսիրտ, և կարճի ՚ի կենաց. և հուրն յաւիտենից այրեացէ զհո-գի նր՟ և զմարմին՝ անվախճան կենօք։ Եւ-ահա այս է արժանի հատուցումն ջանից և գործոց նախանձոտին. զի որով մեղանչէ ոք, նովիմբք և պատժի։

Է Նախանձոտն բազում անգամ յայն աս-տիճան յոռութե՟ հասանէ՝ մինչև խափանել զհասարակաց բարին, վս՟ ատելութե՟ն զոր ու-նի առ բարեգործն։ Եւ թէպէտ դիտաւո-րութի՟ իւր ո՛չ է խափանել զհասարակաց բա-րին, այլ միայն զհամբաւ բարերարին. բայց քանզի որ բառնայ զպատճառն, բառնայ և ըզ-գործն. ապա և նախանձոտն կամելով խափա-

նել զփառս և զհամբաւ բարեբարին, խափա-
նէ և զգործն բարի. 'ի դէպ եկեալ բանից
տն̃, թէ * Դուք' ոչ մտանէք, և որ մտանե-
լոցն էն' արգելուք: ‖ Ղուկ. ժա. 52:

Զ̃ Ոչինչ քան զարեգակն լուսաւորի,
բայց ոչ պակասին ամպք 'ի մթագնել զլոյս նր̃.
զինչ քան զառաքինին մեծարգի, բայց ոչ
պակասին յաչաղկոտք 'ի նուաղել զյարգ նր̃:

Որպ̃ գնտակն չունելով զանկիւն' հոլովի
անդադար, այսպէս և նախանձոտն չունելով
զխիղճ' սողոտանէ միշտ զբարիս այլոց:

Է̃ Որ դժկամակի ընդ յաջողուածս այլոց,
երեւի գոլ չարաբարոյ' և կարօտ: Նա ո-
րովհետև նախանձոտն ոչ կամի' զի ունիցի ոք
բարի ինչ, իրաւունք են' զի և ինքն գտցի
կարօտ և զուրկ յա̃մ բարեաց:

Ը̃ Նախանձոտն տանջի առանց տանջողի,
ցորչափ լսէ զյաջողուածս այլոց: Հուրն'
թէև երբեմն ծածկեսցի մոխրով, տակաւին
ոչ դադարէ 'ի լինելոյ հուր. այլ 'ի յուզելն
արձակէ զիւր կայծակունս: Նախանձոտն'
թէև ուրեք երբեք քօղարկեսցէ զժանտու-
թի̃ իւր պատրուակաւ բարեսրտութե̃, տակա-
ւին պահէ 'ի ներքս 'ի հոգին զբոց նախան-
ձուն. քանզի 'ի լսել իւրում' կամ 'ի տեսա-
նել զյաջողուածս ուրուք, գրգռեալ անդէն
շանթահար լինի մախանօք, և վառեալ տո-
չորի անշիջանելի հրով:

Թ̃ Նախանձոտն դուցէ ոչ գիտէ' թէ

քանի՛ չար է տրտմիլն իւր ընդ բարեբաղդութիւնս այլոց , և ուրախանալ ընդ դժբաղդութիս նց ։ Բայց յորժամ այլ ոք նախանձու զնոյն առնէ ինքեան՝ զոր ինքն արար այլոց , յայնժամ ճանաչէ զդառնութի չարեաց զոր սովոր էր առնել ․ զի զոր ինչ առնէ ոք , զնոյն և կրեսցէ ։

Ժ Նախանձոտն մինչ ուրախանայ ընդ ձախորդութիւնս քո , դու մի՛ տրտմեսցիս ․ զի եկեսցէ ժամանակ՝ յորում դու ուրախասցիս , և նա տրտմեսցի ․ զի որով չափով չափէ ոք , նովին չափեսցի նմա ։

ԺԱ Որ անման է 'ի բարեաց , զերծ է 'ի նախանձոտաց ․ իսկ որ վատահի 'ի բարիս , պարտ է համբերել յաչաղանաց նոցին ․ զի եթէ չկամիցի ոք ունել նախանձոտս , անգործ լիցի 'ի բարեաց ։ Բայց ընտրելի է լինել բարի՝ և ունել նախանձոտս , քան լինել զուրկ 'ի բարեաց՝ և ազատ 'ի նախանձոտաց ։

* Խիստ իբրև զդժոխս նախանձ , Թևք նորա իբրև զթևս բոցոյ հրոյ ։ || Երգոց ․ Ը ․ 6 ։

* Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ ։ || Իմաստ ․ Բ ․ 24 ։

* Ո՛չ ինչ չար քան զայն որ նախանձի ընդ անձին իւր , և 'ի վախճանի յայտնեսցի չարութիւն նորա ։ || Սիրաք ․ ԺԴ ․ 7 ։

## ԳԼ. Ե

ա Ապերախտութին է այլանդակ գազանութի ինչ՝ որ առ ոտն կոխէ զբարերարութիւնս այ և մարդկան. և զի ոչ ճանաչէ զընկալեալ խնամսն, ոչ կարէ գտանել զխնամս յումեքէ։

բ Եթէ ոք 'ի վտանգէ նեղութե ազատեալ՝ ոչ ծանիցէ զփրկութի իւր 'ի բարերարութենէ այ, և ոչ երախտագէտ մտօք գոհասցի զնմանէ. այլ միայն անձին զօրութե տայցէ ըզ փրկութին, անշուշտ կրէ զպատիժ ապերախտութեան իւրոյ։ Եւ թէպէտ ած երբեմն թոյլ տայ այսպիսեաց զերծանել 'ի պատուհասէ, բայց մի՛ համարեսցի նա այն 'ի բարի. զի ծանր ևս վրէժխնդրութի պահի նա, զոր կրելոց են յայլում նուագի։

գ Որչափ մեծ է երախտիքն, այնչափ աւել ապաշնորհ է երախտամոռացն. զի ըստ չափու երախտեացն կշռի յանցաւորութիւն ապերախտին։

դ Որ կարօղ է երախտահատոյց լինել բարերարին՝ և զլանայ առնել, անարժան է գթութե. զի որ ոչ հատուցանէ զպարտս իւր՝ յորժամ կարէ, արժանի՛ է պատժոյ՝ յորժամ կամեսցի հատուցանել, բայց չկարիցէ։

ե Որ ոչ գիտէ՝ թէ զինչ է բարերարութիւն, ոչ կարէ լինել երախտահատոյց. և որ ոչ վարէ յօգուտ իւր զբարերարութին, կապէ զձեռս բարերարին։

Զ Ո՜ ինչ քան զայս մեծ ապերախտութի՟,
եթէ ոք զամս բազումս ընկալցի յումեքէ ըզ
պարգեւս բարիս՝ եւ զկրօնս հաճոյից կամաց
իւրոց, եւ 'ի խնդրել նր՟ դոյզն մի ծառայու-
թիւն, տրտնջեսցէ՝ եւ չկամեսցի յանձն առ-
նուլ յօժարութեամբ:

Այսպիսի ոմանք են նոքա, որք 'ի ման-
կութէ՟ իւրեանց վայելեն 'ի պարգեւս այ՟. ըն-
կալեալ ունին յաննախանձ բարերարութէ՟ նր՟
զպիտանիսն միանգամայն, և զվայելչականս 'ի
պէտս կենաց և հաճոյից. բայց մինչ թոյլ տայ
ած՟ սակաւ մի փորձութե՟ գալ առ նս՟, գան-
գատեն զերկնից և զտարերաց. ոպ՟ եթէ ան-
գթութբ՟ վարեալ իցեն առ նոսա. ոչ կամին
համբերել և տանել յօժարութբ՟. ցանկան
վայելել միշտ 'ի բազմապատիկ շնորհս տեառն
իւրեանց, և ոչ մերձենան գոնէ առ ժամա-
նակ մի վշտանալ մինչ խրատէ զնոսա:

Է Որքան 'ի բարձրագոյն արժանապատ-
ւութի՟ հասանիցէ ոք, այնքան պարտաւորի
երախտահատոյց լինել բարերարին իւրոյ այ՟.
զի ըստ չափու պարգեւացն պահանջէ տոկո-
սիս. ըստ այնմ, * Որում շատ տուաւ, շատ
խնդրեսցի 'ի նմանէ: || Ղուկ. ԺԲ. 48:
Այս պարտ է իւրաքանչիւր ումեք ըստ չափոյ
և ըստ աստիճանի պատուոյ և մեծութե՟ իւրոյ
զոր ընկալեալ ունի յայ՟, երախտագէտ մտօք
հատուցանել այ՟ զգործս բարեաց. կամ հրա-
ժեշտ տալ 'ի պատուոյ անտի և 'ի մեծութէ՟:

* Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, ատելութիւն փոխանակ սիրոյ իմոյ։ ‖ Սաղմոս. ՃԸ. 3։

* Որ հատուցանէ զչար փոխանակ բարւոյ, չար՝ ի տանէ նորա մի՛ պակասեսցէ։ ‖ Առակ. ԺԷ. 13։

## Բարկութիւն

### ԳԼ. Զ

ա Աղբիւր ամենայն չարեաց զբարկութիւնն անուանել՝ ոչ է անտեղի. զի չիք չարիք՝ որ յառաջ ոչ գայցէ ՚ի բարկութենէ. հայհոյութիւն, հարուած, սպանութիւն, գերութիւն, կորուստ ընչից, աւերումն քաղաքաց, բարձումն խաղաղութեան եւ սիրոյ՝ եւ ամենայն բարեաց. միով բանիւ ասացից, բարկութիւնն է ժանտախտ ազգի մարդկան՝ եւ դուռն դժոխոց։

բ Բարկութիւնն է կիրք հոգւոյ պատճառեալ յեռացմանէ արեան շուրջ զսրտիւն. եւ յանցանել ընդ չափ՝ գործին ՚ի մարդն մեծամեծ վնասք, մինչեւ պայթիլ երակաց՝ եւ ՚ի վերջ հասանել տարաժամ մահու։ Զի ձայնս բարկ՝ նշանակէ սաստիկ եւ ազդու. ուստի առած է, թէ բարկ քացախ՝ իւր ամանոյն է վնաս։ Այս պատուիրեն բժիշկք, զի ՚ի սաստիկ բարկութենէ զգուշասցին մարդիկ. քանզի յայնմանէ առողջն հիւանդանայ, եւ հիւանդն մեռանի. եւ երբեմն եւս ոչ թողու տեղի եւ

ժամանակ հիւանդանալոյ, այլ անդէն առ նմին երբեմն անողորմ դաշինս 'ի կենաց զրաւէ :

Գ. Բարկացողն՝ ոչ միայն անձին վնասէ, այլ ընկերին որում բարկանայ. զի խախտու որմոյ է նման, որ 'ի կործանիլ իւրում՝ ոչ միայն փշրի ինքն, այլ խորտակէ և փշրէ զայնոսիկ՝ յորոց վերայ անկանի : Եւ բազում անգամ այնքան խելագարի բարկացողն, մինչև յառ-նել 'ի վր̃ իւր՝ և կորուսանել զանձն :

Դ. Ստեղութ̃ի մելեկան բարկութ̃ քաջ ճանաչէ նա՝ որ 'ի նմին ժամանակի նշմարես-ցէ զդէմս իւր 'ի հայելւոջ, և կամ զկերպա-րանս սաստիկ բարկացելոց առաջի արասցէ մ-տաց իւրոց. և յայնժամ գիտասցէ, թէ քանի՜ տգեղ և գարշելի է ախտն բարկութ̃, զգու-շանայ տեղի տալ նմին. լաւ համարի մեռանիլ հեզութ̃, քան ապրիլ բարկութ̃ :

Ե. Բարկութիւնն երբեմն զարբեցութիւն գինւոյ՝ կորուսանէ զբանականութ̃ մար-դոյ, մինչև անգիտանալ բարկացողին՝ թէ զինչ է զոր խօսի, կամ լսէ. և երբեմն դիւահար՝ ոչ ակն ածէ յումեքէ. ոչ խորշի 'ի վնասուէ. արկանէ զանձն 'ի հուր, և 'ի սուր. և կորու-սանէ զմարմին և զհոգի միանգամայն :

Զ. Բարկացողն բարուք՝ ոչ ինչ ընդհատ երևի 'ի կատաղի շանէ. զի որպ̃ նա թողեալ զքարաձիգն, ընդ քարն հաչէ՝ մռմռայ և խա-ծանէ. այսպէս և սա ընդ վայր հայհոյէ, զայ-րանայ, և ընդ ամ̃ կռուի. որով անարգ և

արհամարհ յաչս ամենուն դառնի։ Ո՜ է մեծ-նախատինք են մարդոյ յաղթահարիլ 'ի կրից իւրոց՝ քան 'ի խուռն թշնամեաց. և մեծ պարծանք են յաղթել անձին բարկութեան՝ քան առնել բազում ժողովրդոց։ Չիք ոք ազատ քան զայն՝ որ զերծ է 'ի մոլեկան կրից. և ոչ յաղթօղ՝ որ յաղթէ նմին. զի այնպիսին զերկնային վարէ 'ի յերկրի զկեանս խաղաղ և անվրդով։

Է Բարկութիւն թէպէտ է չար և դժնդակ, բայց յանձն իշխանաւոր է առաւել չար և դժնդակագոյն. զի ստորական ոք բարկացեալ՝ յաւէտ վնասէ անձին՝ քան ընկերին. իսկ իշխանաւորն բարկացեալ՝ առնէ մեծամեծ վընաս առ ամենեսին։ Ապա պարտ է և արժան իշխանաւորաց չտալ տեղի բարկութեան, կամ վաղվաղակի զիջանել 'ի հեզութիւն։

Ը Բարկութիւն է ախտ չար՝ և զգուշալի. զի ոչ միայն զտկարամիտս և զդաժանաբարոյս ախտացուցանէ, այլև զայս խոհականս և ըզբարիս. որք իցեն ծոմապահք ըստ հարկաւորութեան կրօնի, կամ սովոր են 'ի կիր առնուլ զդեղունս, կամ զսուրճ, կամ զծխամորճ, և տակաւին ոչ են 'ի գործ ածեալ։

Ուստի պարտին ամենեքեան կրթել զանձինս 'ի հեզութիւն, զի մի՛ բարկասցին տարապարտուց, կամ վասն փոքու յանցանաց ուրուք։ Քանզի պակասութիւն իմն՝ որ է ըստ ինքեան թեթև, կամ անգիտութեամբ գործեալ, դիւրաւ ուղղի ողոք բանիւք խրատու՝ քան սաս-

տիկ բարկութեամբ ։

Թ Բարկութիւն 'ի սրտի բարկացողին՝ երբեմն ծածկի ոխակալութեամբ որպէս հուր ընդ մոխրով, որպէս զի 'ի դէպ ժամանակի հանցէ զվրէժ քինու խնդրոյ ։ Օ ի են ոմանք՝ որք առ օրին յայտնեն զբարկութիւն իւրեանց . և իբրև ըղծով 'ի դոյզն մի հողմոյ շարժեալ, զմեծամեծալիս յարուցանեն . խռովին ինքեանք, և խըռովեն զայլս . որպիսի են յիմարք՝ կասկածոտք՝ թեթևամիտք՝ և արիւնայինք ։

Բայց են և ոմանք՝ որք 'ի ժամանակս ձիգս անմեռ պահեն զբարկութիւն 'ի սրտի . և ըստ այսմ են ոխակալք , յորոց բազումք մինչև իցեն ծախեալ հրով բարկութեան զատելիս իւրեանց , ինքեանք բոցակեզ եղեալ՝ այրին որպէս զդժնիկ ։

Ժ Բարկութիւն վրդովէ զբանականութիւն . տայ գործել՝ որ ինչ ոչ է արժան . և չթողու գործել՝ որ ինչ է արժան ։ Ապա որ կամի ըղբարկացեալ ոք համոզել 'ի հեզութիւն , թողուցու փոքր մի՝ մինչև թուլասցի 'ի սաստիկ զայրացմանէն . կամ համաձայնեսցի ընդ նմա զառաջինն , և իրաւունս տացէ բարկութեան . և ապա սակաւ առ սակաւ համոզեսցէ զնա , և զիջուսցէ ։ Անյաղթ թշնամիք՝ դիւրաւ յաղթահարին բանիւք ողոքանաց , քան մեծամեծ գնդակօք ահագին ռմբագործաց ։

ԺԱ Օ հուրն վառօդով ջանայ ոք շիջուցանել, որ զբարկացեալն՝ դուն գործէ բար-

կութեամբ զիջուցանել:

ԺԷ Ոչ ոք բարկացօղ կարէ լինել իմաստուն, զի բարկութիւն ընդ իմաստութեան ոչ բնակէ: Իսկ բարկութիւնն Աստուծոյ ոչ միայն է արդար վրէժխնդրութիւն անիրաւաց, այլև պատճառ բարեաց նոցա. զի տանջելովն՝ բազում անգամ առնէ զչարսն բարի, և զանպիտանսն՝ պիտանի:

ԺԸ Բարկութիւնն յաճախ տեսանի 'ի ծերս և 'ի հիւանդս, որք ստէպ տրտնջան զպասահարկութեն ընտանեաց և պաշտօնէից. և բարկանան 'ի վերայ նոցա, և կարծեն՝ թէև այլք տան իրաւունս բարկանալոյ: Բայց սխալին յոյժ, զի ամենեքին որք շուրջ կան զնոքօք, ներելով տկարութեան նոցա՝ ցուցանեն ունել իրաւունս. զի մի՛ գուցէ ծերն հիւանդասցի, կամ հիւանդն մեռանիցի:

Ապաքէն ծերն կորուսեալ զառոյգ հասակն և զկարողութիւն մարմնոյ, իբրև ոչ կարէ վայելել 'ի հաճոյս զոր տեսանէ, տառապի 'ի ներքս 'ի սրտի. վասն զոր ինչ առնեն ինքեան՝ թուի նմա անախորժ, տրտնջէ և զայրանայ: Իսկ հիւանդն մշտացեալ 'ի ցաւոցն, մշտացուցանէ զայնոսիկ՝ որք սպասեն վասն առողջութեան նորա, տարապարտ բարկութեամբն: Բայց պարտ էր նոցա՝ առաւել բարկանալ ընդ անձինս իւրեանց, թէ ընդէ՞ր անկան 'ի ծերութիւն կամ 'ի հիւանդութիւն, քան թէ ընտանեաց և սպասաւորաց: Սակայն ոչ սակաւ ինչ վարձս ունին առնուլ յԱստուծոյ, որք համբերութեամբ դարմանեն զծերն և զհիւանդն.

զի համարին նոքա որպէս մանուկ, որոց տկար են միտք, և չեն բաւական ճանաչել զերախտիս առն՝ և գոհանալ զնմանէ։

ԺԴ. Եթէ ոք կամի զերծ մնալ յախտէ բարկուէ, մի՛ պաշտեսցէ զյատուկ կամս իւր. զի բարկութիւն յաւէտ պատճառի ՚ի կամապաշտութենէ, քան ՚ի յանցաւորութենէ պաշտօնէից։

ԺԵ. Բարկացողն՝ անտանելի վնաս է ընկերակցաց իւրոց. զի զոր այլք խօսին կամ առնեն՝ անարգանք թուի նմա. զի որպէս ցուլք կատաղին ՚ի կարմիր գունոյ, գաւազանք խառնին ՚ի սուսերաց իւրեանց, և գրաստք խրտնուն ՚ի դիւաց անկելոց ՚ի ճանապարհի. սոյնպէս բարկացեալն յունայն և ՚ի սնոտի պատճառաց վրդովի, և յարուցանէ զաղմուկ։

ԺԶ. Բարկութիւն՝ է մշտնջենաւոր տանջանք անձին բարկացելոյ. զի եթէ իցէ նաւաստի՝ կռուի ընդ հողմ. եթէ ջորեպան՝ ընդ գրաստուս. եթէ երկրագործ՝ ընդ եզինս. եթէ պայտար՝ ընդ ձիս և ընդ էշս. և բազում անգամ նախատէ զնոսա և հայհոյէ։

Արդարև պարտ էր նոցա զանբանս և զանզգայս առնել բանական, կամ լինել ինքեանց անբան և անզգայ. ոչ զի համաբնուն և համաբարոյ եղեալ նոցուն, խաղաղութեամբ վարէին ընդ միմեանս։

Եւ յիրաւի ո՛չ ինչ օտար են բարկացողք ՚ի բնութենէ անբանից՝ կամ անզգայ գոյացութեանց, որովհետև կամին՝ զի անբանք և անզգայք իբրև

զբռնաւորս հնազանդեցին ամենայն հաճոյից և այնարկութեան իւրեանց ։

Բայց են ոմանք՝ որք անբանագոյն քան զանբանս , և առաւել անզգայ քան զանզգայս գտանին . զի կռո՛ւին ընդ դրօշակս հանդերձի իւրեանց , թէ արդել գտան ընթացից . և ընդ քարն , թէ խոշընդոտն եղև ։ Այս է ուրեք՝ զի իբրև խելացնոր խօսին ընդ ինքեանց . նախատեն զանձինս՝ և հայհոյեն . և եթէ ոչ զիջանիցին 'ի հեզութիւն , գուցէ մատնեն զանձինս 'ի հարուածս և 'ի մահ ։

ԺԷ Դիւրապատրաստ դեղ ախտին բարկութեան՝ է ճանաչել զտկարութի̃ բնութե̃ մարդոյ . որ առաւել է 'ի մանկունս , 'ի կանայս , յերկչոտս , և 'ի թեթևամիտս . և ներել սխալանաց սպասաւորաց , որք գործին ակամայ՝ վա̃ անգիտութե̃ կամ տկարութե̃ նոցին . զի թէև կամեսցին անթերի լնուլ զպարտաւորութի̃ իւրեանց , բայց տակաւին մարթ է նոցա պակասիլ յինչ ինչ իրս ։

Այս պարտ է տանուտեառն ներողամիտ լինել և համբերող , և ոչ եթէ որպ̃ զվառօդ բոցակիզել զնս̃ . զի մի՛ գուցէ յուսահատեալ կորուսցեն զհաւատարմութի̃ իւրեանց , և խորհեսցին չարիս հատուցանել նմա ։

ԺԸ Իշխանաւոր բարկացօղ՝ վա̃ փոքու պակասութեան սպասաւորին մեծապէս զայրանալով , և առաւել քան զարժանն խօսելով՝ կամ հայհոյելով , զհլու պաշտօնեայն առնէ

յանդուգն, և զհաւատարիմն՝ անհաւատարիմ։ Իսկ հեզաբարոյ իշխան՝ քաղցր խրատիւք և բանաւոր յանդիմանութեամբ զանկիրթն ածէ 'ի զղջումն. և զանզուսպն 'ի հլութիւն. զօտարն՝ որպէս զհարազատ գտանէ. և զազատ պաշտօնեայսն՝ որպէս արժանաւորին ծառայ կամակար ստանայ։

ԺԹ Մարդ՝ որ իրաւամբ բարկանայ. սակայն ոչ զկայ առնել 'ի չափու, հետ զհետէ սաստկացուցանէ զսրտնեղութիւն իւր և զդայրոյթ, մինչև ժամանել 'ի գագաթն սուր բարկութեան։ Նա յայնժամ լոյս բանին խաւարեալ 'ի միգապատ ծխոյ անբան կրից՝ գահավէժ կործանի յանհնարին վտանգս հոգւոյ և մարմնոյ. կորուսանէ զիրաւունս իւր՝ և անկանի ընդ մեղադրանօք։

Ապա լաւ է 'ի սկզբան անդ մեղմօրէն խրատել և յանդիմանել զյանցաւորն, քան թէ տեղի տալ կրից բարկութեան. զի դիւրին է բարկանալ, բայց դժուարին է առանց վնասու հանդարտել. զի ըստ առածին, որ յառնէ բարկութեամբ՝ նստի վնասուք։

Ի Բարկութիւն է կիրք կարևոր բնաւորեալ 'ի բնութեան մարդոյ, և է արդար բաղձանք վրէժխնդիր լինելոյ անիրաւ վնասու. ըստ այնմ, բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. զի չափաւոր բարկութիւն ըստ տեղւոյն՝ ըստ անձին՝ և ըստ այլ ամենայն պարագայից՝ ուղղէ զարդարութիւն, և վանէ զանիրաւութիւն։ Իսկ յորժամ իբրև զբոց վառեալ և բորբոքեալ՝ զկոպարան ան-

ցանէ, կամ ընդդէմ զինի խրատանց և արդարութե՟, յայնժամ է կիրք չար և անպիտան՝ որ կոչի բարկացողութի՟ ։ Կամ թէ ցրտասառոյց թմրութե՟ ոչ ընդդէմ կայ անիրաւութեան, և ոչ լինի վրէժխնդիր չարեաց, յայնժամ է անզգայութիւն ։

Այս գործ է գտանել զմիջասահման կէտն ուղղութե՟ 'ի մէջ երկուց մոլեկան ծայրից, ք՟՝ բոցավառ բարկութե՟, և ցրտասառոյց անզգայութե՟. և այն իսկ է հեզութի՟ն, որ է առաքինութի՟ կայացեալ 'ի միջասահմանութե՟ երկուց այսոցիկ ծայրայեղ մոլութե՟ց ։

Աւստի բարկանալ այնմ որ ընդդիմանայ ա՟յ, ասի բարի նախանձ կամ նախանձաւորութի՟ ։ Բարկանալ այնմ որ ընդդիմանայ ուղիղ բանի, ասի սրտմտութի՟ կամ զայրացումն ։ Բարկանալ այնմ որ ընդդիմանայ իւրոյ ինքեան, ասի ատելութի՟ կամ վրէժխնդրութի՟ ։

Իմ՟ Բարկութի՟ն բանաւոր՝ որ մասնաւոր անուամբ կոչի սրտմտութի՟, է գործ ցասմնականին. և է զէն տուեալ մարդոյ 'ի բնութե՟ արիանալ նովաւ 'ի պաշտպանել զանձն 'ի վընասուէ, և վանել զներհակն բնութե՟ իւրոյ. Բայց յորժամ ապստամբի 'ի բանէն, կոչի անբան բարկութի՟ կամ բարկացողութի՟. և փոխանակ պաշտպանելոյ՝ արկանէ զանձն 'ի վտանգ. ոչ կարէ իբրև զբանական խորհիլ, խօսիլ և գործել, այլ զամենևեան առնէ անկարգաբար 'ի վնաս անձին իւրոյ և ընկերին ։

ԻԲ. Շունն հաճէ ընդ բաղխիլ դրան, ոչ գիտելով զբաղխօղն՝ թէ ընտանի իցէ կամ օտար. բարկացօղն վ̅ն ա̅մի զայրանայ, ոչ ճանաչելով զօգտակարն կամ զվնասակար։ Բայց սակայն սաստիկ բարկութիւն առաւել անձին վնասէ՝ քան այլում. և որպ̅ զպիծակ զայլս խայթելով՝ ինքն մեռանի։

ԻԳ. Բարկացօղն՝ անարգագոյն քան զխելագարս և զդիւահարս գտանի. զի նոքա իբրև ակամայ կամօք, իսկ սա կամաւ բերի յանարգութ̅ի. նոքա բազում անգամ երկուցեալ զգաստանան, իսկ սա ոչ երկնչի բնաւ. ապա նոքա կարեկցութեան են արժանի, իսկ սա վրիժուց և պատժոց։

ԻԴ. Մայրենի գազանք ո՛րչափ և կատաղեսցին, առ ծնունդս իւրեանց ոչ բերին 'ի վնաս. իսկ բարկացօղն՝ ոչ ևս խնայէ յորդիս իւր և յընտանիս, ապա վատթարագոյն է քան զգազանս կատաղիս։

ԻԵ. Բարկութ̅ին յայտ տեսանի 'ի հպարտս՝ քան յայլ ո՛ և իցէ մոլիս. զի հպարտն կամի՝ թէ ա̅մ ոք հետևեսցի կամաց իւրոց։ Ուստի յորժամ առնէ ոք զեր ինչ ընդդէմ կամաց իւրոց, կամ խօսի ինչ որ անհաճոյ է ինքեան, իսկոյն 'ի բարկութ̅ի բրդի, և ոչ ինչ փոյթ է նմա՝ թէ բարի իցէ կամ չար. բայց միայն զի ինքն ոչ հաւանի։ Ո որ եթէ ոչ կարասցէ խափանել՝ տանջի 'ի կրից իւրոց, մինչև մեռանիլ ևս. զի բարկութ̅ին է ծնունդ ժանտ,

որ սպանանէ զծնօղն իւր ։

Իսկ խոնարհն կեայ հանդիստ և երկարակեաց. զի եթէ բարի է զոր այլք խօսին՝ կամ գործեն, հաճեալ հաւանի նոյին. իսկ եթէ չար է, ո՛չ բորբոքի բարկութբ, այլ ՚ի բաց խորշի ։

ԻԷ Ամենայն բարկացօղ է փոքրոգի. զի ընդ այն բարկանայ ոք՝ որում չէ բաւական տանել. և յայնժամ կերքն ցասմնական վառեալ բորբոքէ զարիւնն զսրտի. վա՜յ բարկացեալն բոցաշնչէ և հառաչէ, և խնդրէ ջուր ցուրտ առ՚ի զովացուցանել զտապ սրտին ։ Յորմէ և ջերաջերմ գոլորշեք՝ իբրև ՚ի սաստիկ հնոցէ ընդ ջիլս և ընդ նեարդս ելեալ մինչև յուղեղն, մթագնեն զլոյս բանին, և առնեն իբր՚ւ անբան. բազում անգամ պատճառեն զպէս պէս ախտս, և երբեմն զմահ ։ Յայն սակս որոյ լայն են ունգունք՝ շուտով զեջանի նա ՚ի բարկութէ. զի ծխամած գոլորշեք արեան ընդ լայնանիստ խողովակս ունգաց դիւրաւ զեղանին արտաքս յուղղոյ ։ Իսկ որոյ փոքր և սուր են ունգունք՝ դժուարաւ ամոքի ՚ի հեզութի. զի գոլորշեքն չունելով զելս յաջողակ՝ անագան ուրեմն վտարին յուղղոյ ։

Իսկ արիւնն որ վառեալ էր զսրտիւ, ՚ի թափոյ կրից բարկութեան յուզեալ ճապաղի ընդ երակս, և ջեռուցանէ զմարմինն ողջոյն. վա՜յ երեսք բարկացելոյն ներկանի ՚ի գոյն արեան. և կայծակունք հրոյ թօթափին

յաճաց նր̃ ։ Եւ սիրոյն 'ի պակասել արեան՝ պակասի և 'ի բնական ջերմութ̃է իւրմէ, և սկսանի դողալ. վ̃յ և յաշխարհաբառ լեզուով՝ բարկանալն կոչի սրդողել, զ̃՝ է սրտդողել, յորմէ պատճառի և դողդոջումն ձեռաց և ոտից՝ և բոլորի մարմնոյն ։

Այս պատճառ բարկութեան ուրուք՝ է գոլն փոքրոգի. զի թէ լինէր մեծահոգի, չէր թողուր ցասմնական կրից ապստամբել 'ի բանէն. քանզի բարկացեալն՝ յոլովակի անցանէ ըստ կուպար բանականութ̃ե ։ Աւստի որ յաղթի 'ի բարկութ̃է, թէպէտև մեծատուն ոք իցէ, տակաւին ո՛չ է մեծահոգի, այլ մանաւանդ է տկար և փոքրոգի ։ Գեղեցիկ բարկութ̃ի է բարկանալ 'ի վր̃ բարկութ̃ե իւրոյ ։

* Այր բարկացօղ՝ գրգռէ զհակառակութիւն, երկայնամիտն և զհանդերձեալն ցածուցանէ ։ || Առակ. ԺԵ. 18 ։
* Մի՛ լինիր ընկեր առն բարկացողի, և ընդ բարեկամի ցասմնացողի մ՛ բնակիր ։ || Առակ. ԻԲ. 24 ։
* Ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լինի դատաստանի ։ || Մատ. Ե. 22 ։
* Եղիցի՝ ամ̃ մարդ արագ առ 'ի լսել, և ծանր առ 'ի խօսել, և ծանր առ 'ի բարկանալ. զի բարկութ̃ի մարդոյ զարդարութ̃ի այ̃ ո՛չ գործէ ։ || Յակ. Ա. 20 ։

## ԳԼ. Է

ա Ագահութիւնն է անկարգ բաղձանք արծաթոյ և ընչից. յայն սակս ագահք յա՟մ 'ի կեանս իւրեանց ապրին տանջանօք, զի միշտ տառապին 'ի մթերել զգանձս. և մեռանին ցաւօք, զի թողուն ակամայ՝ և երթան յանդառնալի ուղին։ Որդիք ագահաց յոլովակի լինին շռայլ. և զոր նոքա ժողովեցին ընդ ամս քառասուն կամ յիսուն, սոքա վատնեն ընդ նոյնչափ աւուրս։

բ Անկարգ բաղձանք ընչասիրութ՟ե՝ ունի ընդ իւր զգաղտնի դաւաճանութ՟ի, և երբեմն զյայտնի զրկանս. և զի բազումք հարկի կարեն լնուլ վնասուք իւրեանց՝ զտեղի վնասու միոյ զրկանաց. ո՟ւր ագահ բռնաւորն 'ի կեղեքել զմի ոք յիշխանաւորաց, կեղեքէ և նա զստորադրեալս. և նոքա զայլս՝ մինչ ցյետին չքաւորս. ապա բաղձանքն ընչասիրութ՟ե է բաղձանք վնասելոյ բազմաց։

գ Ինչք՝ 'ի պէտս կենաց է ստանալի. և առ 'ի պահել զկեանս՝ պարտ է կորուսանել զինչս. ապա քանի՞ անմիտ են ագահք՝ որք 'ի ստանալ կամ 'ի պահել զինչս, դնեն 'ի վտանգի կորստեան զկեանս իւրեանց։

դ Ժլատք խնայելով 'ի սակաւ դրամս՝ կորուսանեն զմեծ պատիւ իւրեանց, մինչ արժան էր նց՟ա զամենայնն տալ, և պահել զպատիւ՝ որ առաւել արժէ քան զա՟մ գանձս։

Ե Որ ոչ ունի զարծաթ առ'ի տալ 'ի կա-շառ, մի՛ խնդրեսցէ իրաւունս 'ի կաշառակուր դատաւորէ. զի նա ոչ հայի յիրաւունս օրի-նաց, այլ միայն 'ի տուրս կաշառաց:

Ուստի յատենի կաշառաւոր դատաւորի՝ անմեղութի̃ն աղքատաց պարտաւորի, և յան-ցաւորութիւնն փարթամաց արդարանայ. զի կաշառն փոխէ զյանցաւորութի̃ն 'ի յանմե-ղութի̃, և զանմեղութի̃ն 'ի յանցաւորութի̃:

Զ Ագահն՝ եթէ չունի զգանձսն 'ի սրտի, գանձքն կալեալ ունին յինքեանս զսիրտ ա-գահին. ապա եթէ կորնչին գանձք՝ կորնչի և սիրտ նորա, և մնայ անկենդան. զի կեանք ագահաց են գանձք նոցա:

Է Ագահք և ընչաքաղցք որ բանդարգել առնեն զդրամս, հայեսցին գո՛նէ 'ի ձև նոցուն, և ընկալցին զխրատ: Քանզի զձևն բոլորշի՝ որ բնաւորեալ է անդադար շրջան առնուլ, յինքեանս տպաւորեալ ունին դրամք. յայտ ա-րարեալ՝ թէ պա՛րտ է նց̃ անդուլ հոլովիլ 'ի միոյ առ այլ, և զամենեցուն լնուլ զկարիս:

Ը Գեղեցկութիւնն ոսկւոյ՝ թերևս պատ-ճառեալ է 'ի նմա յերկիւղէ մարդկան. որք զհետ պնդեալ են ըմբռնել, և փոխանակել ընդ անարգ հաճոյից, կամ ագահական բա-րոյիւք ամբարփակել 'ի բանտի. վն̃ այնի̃ պա-կուցեալ շրջի թաքթաքուր, և ճնարի փախ-չել: Ո՛ ի եթէ վն̃ օգտակար և համեստ վախ-ճանի խնդրէին զնա մարդիկ, անշուշտ ուրեմն

շրջէր նա յայտնի · ընտանենայր ընդ ամենե_սին , և ոչ բնաւ յօժարէր խուսել · վայ և անաշխատ գտանէին զնա 'ի դէպ ժամանակի' մինչ պիտոյանայր ինքեանց , և ոչ տառապէին անընդհատ :

Թ Ընչաքաղցն' ամ ուրեք և յամ ժամանակի սխալի և վնասի · բայց յայնժամ առաւել' յորժամ առնու յամուսնութի զկին հարուստ' այլ անզգամ , որ կարէ լինել բաւական պատիժ ագահութե իւրոյ · զի կորուսանէ ըզհանդիստ և զդիւրութի , և զգանձն զոր ստացաւ · գուցէ և զկեանս իւր , որ կապեալ է ընդ գանձուց :

Ժ Սաձաւական ագահ' արժանի է խըստագոյն պատժոց · զի առ 'ի լնուլ զանյագ բաղձանս անձին , ձկտի անդր քան զկարողութի իւր · ժողովէ յայլոց ապառնիկ դաշամբ զբազում վաճառս , և առաքէ ընդ ծով և ընդ ցամաք յ~ս հեռաւորս · և իբրև ձախողութ ինչ կորուսանէ զինչսն , ապաստան լինի 'ի անանկութի · և հատուցանէ և ոչ ինչ , զի ոչ ունի ինչ: Զայս ախտ վնասակար ախտանան և այլք ուսեալք 'ի նմանէ · զի առեալ վաճառեն զինչս օտարաց , և կործանեն զտունս բազմաց :

ԺԱ Ագահ զընկերս' ոչ ճանաչէ զիրաւունս , զի իրաւունք' անիրաւ զրկողաց են զէնք իւրեանց : Ապա ընդ անիրաւս կամ զինուք հարկաւորի վարել , կամ ինքնօրէն իրաւանց նշ ճնաղանդել · ապա թէ ոչ կարէ ոք վարել

զինուք, պարտ է հնազանդել ամ̃ ակնարկուե̃ց նց̃, և տալ զա̃մ զոր ունի. զի լաւ է զրկիլ յընչից՝ քան զրկիլ 'ի կենաց:

ԺԲ̃ Եթէ բարձցի ազատութիւն 'ի սրտից իշխանաց, աղէտք տարակուսանաց տարագրին 'ի քաղաքաց, և եղկութիւնք 'ի գիւղից. զի ընչաքաղց բաղձանք գլխաւորացն՝ որ տառապեցուցանէ զաշխատաւոր հասարակութի̃ն 'ի քաղց, 'ի մերկութի̃, 'ի կապանս, և յօտարութիւն. որոց աղաղակ ցանկ յերկինս ելանեն՝ իջուցանել զարդար ցասումն ա̃ծային:

ԺԳ̃ Ախտ ագահութե̃ն կարճէ զկեանս. զի ագահն տանջի 'ի միտս, թէ ո՞րպ̃ ստասցի զոր չունի. և ո՞րպ̃ պահպանեսցէ զոր ունի, որով միշտ հիւծեալ մաշի: Օ՛ ի արծաթոյ ստանալն է աշխատանօք, պահելն երկիւղիւ, և կորուսանելն ցաւօք:

ԺԴ̃ Օ ցանկութի̃ տոկոսեաց բազում անգամ և զմայր դրամոյն կորուսանէ:

ԺԵ̃ Ագահն՝ մի' համարեսցի զանձն ազատ, քանզի կապեալ կայ ոսկի շղթայիւք: Եւ արդարև կարի՛ անմտութիւն է կոչել յայն, որ 'ի կենդանութե̃ առբերէ զերկիւղ, և 'ի մահու զցաւ:

ԺԶ̃ Ագահն՝ ոչ ցանկայ ելանել յերկինս, զի գիտէ՝ թէ չի՛ք անդ ոսկի. սակայն ցանկայ իջանել 'ի սանդարամետս, զի 'ի կարծիս է՝ թէ գուցէ գտանի անդ ոսկի:

ԺԷ̃ Չէ պարտ զարմանալ, թէ զիա̃րդ հա‿

մարձակին գողք զինչս ագահաց գողանալ՝ մինչ տեսանեն կախեալ զգողս. զի կամին նոքա փութանակի ելանել ՚ի կախաղան, և երթալ ՚ի դժոխս. ուր ագահք բազումք են, թերևս անդ մարթասցին գողանալ զինչս նց։

ԺԸ Հարստութիւն ոչ է ՚ի բազմութե ընչից՝ այլ ՚ի բաղձանս. զի է՝ որ սակաւուք շատացեալ՝ ոչ ցանկայ բազմաց, և համարի հարուստ. և է՝ որ ունի զբազումս. բայց վասն անյագ բաղձանացն որով տառապի ըստանալ և ևս, համարի չքաւոր. զի ցանկանալն ծնանի ՚ի կարօտութէ այնր զոր ոչ ունի։

Եւ որովհետև ագահն ոչ հերիք դատի զոր ունի ըստ բաւականին, այլ միշտ ցանկայ ստանալ զայլ ևս իբրև զոչ ունող, թուի չքաւոր և կարօտ։

ԺԹ Ագահն պինդ պահէ զինչսն աշխարհիս, զոր ստացաւ յընթացս կենաց. զի անթերի հատուցանել կարասցէ աշխարհի, յաւուր յորում պահանջեսցէ ՚ի նմանէ։

Ի Ագահն ոչ ճանաչելով զտկարութիւն մարդկեղէն բնութե, թէ զամս բազումս չկարէ մնալ կենդանի, մթերէ կուտէ զգանձս ամաց բազմաց։ Ոչ թէպէտ գանձքն կարեն կալ ընդ երկար ժամանակս, զի վայելեսցին ՚ի մարդկանէ. բայց բնութին չէ դաշնադիր ընդ գանձուց, զի թոյլ տացէ ստացողին վայելել ցորչափ և հաճեսցի. զի մինչդեռ գանձք ամփոփեալ պահին յարկեղ, ստացօղն երթայ

ակամայ ամփոփել 'ի գերեզմանի ։ Ապա մի՛ խնդասցէ ագահն՝ թէ ունի զինչս բազումս, զի մնայ միայն ինքեան երկ կանգուն կտաւ 'ի պատանս ։

Ուստի որ ճանաչէ զտկարութիւն բնութեան իւրոյ , այնչափ ինչ պահեսցէ 'ի գանձու՝ որչափ պիտոյն է ինքեան ․ և զաւելորդսն ջանս բեսցէ կարօտելոց 'ի պաշար յաւիտենական ․ քանզի թողլոց է յաշխարհի զամենայն ․ և երթալոց մերկ 'ի գերեզման ։ Որ սիրով ժողովէ զոսկին 'ի կենդանութեան , առանց ցաւոց ոչ կարէ թողուլ 'ի ժամու մահուան ։

* Դժոխք և կորուստ՝ անյագ են ․ նոյնպէս և աչք՝ ագահք մարդոյ ։ Առակ ․ ԻԷ ․ 20 ։

* Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի ․ ուր ցեց և ուտիճ ապականեն , և ուր գողք ական հատանեն և գողանան ․ Մատ ․ Զ ․ 19 ։

## Անգործութիւն

### ԳԼ ․ Ը

ա Ո՜չ ինչ առաւել անզգայ թմբրութիւն քան լինել 'ի տանջանս և համարել զանձն երջանիկ ։ Եւ ահա՛ այսպիսի ոմանք են դատարկաշրջիկք , զի ձանձրացեալ յամենայնէ՝ շրջին գտանել զհանգիստ բաղձանաց իւրեանց ․ և իբրև ոչ գտանեն ուրեք , տանջին չարաչար ․

և ոչ իմանան ։ Աղքա ծնանին իբրև զմարդ՝ և վատթար քան զանբանս մեռանին, զի անբանք ոչ գիտեն զդատարկութիւն · բայց սոքա գիտեն, ոմ՟ և պարտ իսկ է նց՟ գիտել · այլ անզգայեալ մտօք՝ տակաւին ՚ի նոյն հանապազորդեն ։

Մի՛ ոք կարծիցէ՝ թէ անասունն կամ գըրաստն անգործ կապեալ կայ յախոռի · զի գործ նր՟ է միայն հնազանդել կամաց տն՟ իւրոյ, եթէ գործով, և եթէ անգործութ՟ ։ Մի՛ ոք և զերկվայրիս անգործ համարեսցի · զի գործ նց՟ է ճարակել ՚ի լնուլ զքաղց իւրեանց · և հանապազօր կեան հանդիստ, զի պատաղեն ՚ի գործս որ յատկացեալ է նց՟ ՚ի բնութ՟ ։

Իսկ մարդ դատարկաշրջիկ՝ որ ոչ ջանայ կատարել զպարտաւորութ՟ իւր, աշխատել մտօք կամ մարմնով, վատթարագոյն է քան զանբանս · տանջի ՚ի ձանձրութ՟, և ոչ բնաւ գտանէ զհանգիստ ։

Է Ո՞ ոք արդեօք անմտագոյն քան զդատարկաշրջիկն իցէ, որ ոչ գիտէ՝ թէ յո՞ ընթանայ · փոխի ՚ի տեղւոջէ ՚ի տեղի, զի օրն տարամերժեսցի · և ձանձրացեալ հառաչէ՝ թէ արեգակն ոչ ՚ի մուտս խոնարհի · տառապի նեղսրտութ՟ զցայգ և զցերեկ՝ խնդրէ հանգիստ, և ոչ գտանէ ։ Բնութիւն որ փախչի ՚ի դատարկութ՟, դրդէ զնա ՚ի ներքուստ՝ պատաղել զգործով ի՛իք · ուստի և նա սկսանի խաղալ զնարդ՝ կամ զթուղթ ։ Ո՛չ գիտէ

ողորմելին՝ թէ դեղ փարատիչ նեղութեան է զբաղումն յօգտակար գործս . և հանգիստ սրտի՝ աշխատութիւն չափաւոր . և ոչ եթէ անպէտ տան կամ վնասակար խաղնարդի կամ թղթի .

Եւ այս դեղ օգտակար՝ ոչ դժուարին ինչ է նմա գտանել, զի ամ ուրեք 'ի պատրաստի կայ նմա . բայց ոչ խնդրէ առնուլ՝ զի ոչ գիտէ թէ յոր վիճակի թշուառութեան անկեալ կայ, որ չար ևս է քան զանկանելն 'ի նոյն .

Զ Եւ մարդ՝ որում ժամանակն պակասի . և է մարդ՝ որում ժամանակն յաւելանայ : Քանզի ժրաջանք ցանկան երկարութեան ժամանակին, զի աշխատ լինիցին յօգտակար իրողութիւս և 'ի գործս բարիս . և ոչ կամին կորուսանել՝ գոնէ զնուազ ինչ վայրկեան, զի գիտեն՝ եթէ անգին է ժամանակն . և զոր միանգամ կորուսանէ ոք, ոչ կարէ անդրէն 'ի ձեռս բերել .

Իսկ դատարկակեացք ցանկան, զի կարճեսցի ժամանակն . և տրտնջան՝ եթէ երկարեցաւ օրն . և ոչ գիտեն՝ թէ զիարդ անցուսցեն . զի ժամանակն աւելորդ իմն թուի նց̃ և առիթ ձանձրութեան .

Է Չիք մեծագոյն բաղձանք 'ի մարդ՝ քան զբաղձանս երկար ապրելոյ, զի կարասցեն առնել զբազում գործս բարիս . վյ̃ և արք բարիք ջանան՝ ոչ ընդ վայր կորուսանել զժամանակն . և ոչ այլ իրաց կորուստ այնքան ցաւ է նոցա, որքան կորուստ ժամանակի . ապա քանի՞ աւաղելի են դատարկակեացք, որք

յումմէ ըստ կորուսանեն զնա․ և չարք՝ որք զբարի ժամանակն ծախեն 'ի չարիս։

Ե Եթէ զանգործութիւնն աղբիւր ամ չարեաց կոչեսցէ ոք, ոչ սխալէ․ զի չէք մոլութի ինչ՝ որ 'ի դատարկութէ ոչ գայցէ յառաջ։ Հանգչին յաշխատութէ դեւք, և ոչ ևս յորդորեն զմարդիկ 'ի մեղս, մինչ բազումեն դատարկաշրջիկք․ զի նոքա առաւել քան զդևս բազում նորանոր չարեաց լինին պատճառք։

Փախուստն յաշխատանաց՝ բազմացոյց 'ի լերինս զաւազակս, հեղուլ զարիւն անմեղ ճանապարհորդաց․ որոց և արիւն հուսկ յետոյ հեղանի 'ի կախաղանի։ Կախաղանք անպիտան լինէին վն աւազակաց, եթէ պիտանի լինէր նոցա աշխատանք արդար վաստակոց։

Զ Անհնար է մտաց մարդոյ կալ անգործ և դատարկ․ վասն որոյ դատարկաշրջիկն նեղ սիրտ է, և ջանասէրն՝ հանգիստ․ և արժանի է նեղսրտութե, զի ոչ խնդրէ զհանգիստ՝ որ միայն գտանի յաշխատութիս օգտակարաց։ Ուստի և անգործն՝ որ ոչ զբաղնու յօգտակար իրողութիս, 'ի հարկէ պատաղի 'ի վնասակարս՝ որ չար ևս է։

Է Կեղեւ կարծր՝ անվնաս պահէ զպտուղս 'ի թռչնոց․ ժրաջան աշխատութի՝ անմերձենալի առնէ զմիտս մարդոյ 'ի դիւաց․ զի դեւք ոչ կարեն ժամ պարապոյ գտանել 'ի չարիս հըրապուրել զաշխատաւորն։

Ը Մարդիկ՝ որք զուրուկս վարեն 'ի

քաղաքէ , զի մի՛ և զառողջսն վարակեսցեն . բարուք առնէին , եթէ և զդատարկաշրջիկս 'ի բաց հանէին , զի մի՛ և զաշխատասէրս յախտս ծուլութե՜ ձգեսցեն ։ Որպէս գոլորշիք ապականեն զօդն . և վատթար ծուլութիւնք՝ զբարս մարդկան ։

Թ Ա՜ծ արարչագործեաց զտիեզերս 'ի ծառայու՜ն մարդոյ , զի և մարդս ծառայեսցէ նմ՜ . իսկ ծոյլն ոչ ծառայէ նմ՜ , վ՜ն անարժանութե՜ վայելէ զտիեզերս , և զա՜մ բարիս որ 'ի նմա ։

Ժ Ծոյլն՝ թշնամի է հասարակաց , զի անաշխատ կամի վայելել զբարիս հասարակաց . բայց օրէնք են անշուշտ , եթէ ձեռն՝ որ ոչ գործիցէ , կերիցէ մի՛ ։

ԺԱ Եթէ ոք միշտ շրջի դատարկ , 'ի բա՛ց վարեսցի 'ի միջոյ մարդկան իբրև անպիտան և անարգ . զի մի՛ իբրև իշամեղու զվաստակս այլոց կերիցէ . և այլոց բազմաց օրինակ չարեաց լինիցի ։

ԺԲ Ո՛չ ոք թշնամի այնքան զօրաւոր է 'ի կործանել զազգ մի ողջոյն , ո՛րքան դատարկութ՜ի և ծուլութ՜ի ։ Ո՜ պարսպաց ամուր՝ զոր բնութի՜ք թշնամեաց չկարէին քակել , դատարկութի՜ն բնակչաց հեշտեաւ կործանէ ։

ԺԳ Չա՛ր է ումեք պակասել 'ի վախճանէ՝ առ որ կարգեալ է 'ի բնէ . իսկ մարդս ծնեալ է վ՜ս օգտակար աշխատութե՜ , ապա եթէ իցէ անաշխատ և դատարկակեաց՝ պակասի 'ի վախճանէ իւրմէ . և այս չար՝ մեծ քան զա՜մ չարիս է ։

ԺԴ Արդ՝ որ սիրէ զա̃ծ, և առնէ բարիս հասարակաց, է հրեշտակ երկնային. որ հանէ 'ի սրտէ զսէրն ա̃յ և չարիս հասուցանէ այլոց, է դև դժոխային. որ միայն զմարմին իւր պարարէ՝ և զցանկութիւն նորա կատարէ, է անբան երկրային:

Իսկ որո՞ց արդեօք նմանին անգործն և ծոյլն. թուի թէ և ո՛չ միոյ ուրուք 'ի սոցանէ. զի արտաքոյ գտանին յա̃մ կարգէ մարդկային սեռի: Քանզի այլ մարդիկ առնեն ինչ բարի կամ չար, որովք թերևս ցուցանին լինել կենդանիք. իսկ ծոյլք իբրև արձան անզգայ զօրն ողջոյն կան դատարկ և անգործ. ո՛չ գիտեն՝ թէ իցեն մարդիկ. և ո՛չ ճանաչեն՝ թէ զինչ է պարտաւորութ̃ի մարդոյ. վա̃յ և անարգ են քան զամենեսին:

ԺԵ Ոչ ինչ տարադէպ կարծել, եթէ դևք արկին 'ի միտս մարդկան կառուցանել 'ի քաղաքս զտեսարան զբօսանաց. ո̃պ զի մարդիկ 'ի պատճառս սթափութեան մարմնոյ գնացեալ անդր, ուսանիցին զանգործութ̃ի և զծուլութ̃ի, և ինքեանք անաշխատ ունիցին զն̃ս 'ի գոգս իւրեանց. քանզի և դևք ո՛չ ինչ աշխատ լինին որսալ զդատարկակեաց անձինս. որովհետև ինքնին անկեալ են նոքին 'ի ծուղակս կորստեան նոցա:

ԺԶ Հանգչիլ 'ի կարևոր աշխատութ̃եց, և սթափիլ և զուարճանալ 'ի զբօսանս 'ի դիւրութ̃ մարմնոյ՝ պա՛րտ է լինել ո̃պ գործածութ̃

դեղոյ սակաւ և ցանցառ. զի զոր օրինակ յաճախ կիրառութիւն դեղոյ վնասէ, առաւել քան թէ օգտէ. նոյնպէս հանգչիլ ընդ երկար՝ տկարացուցանէ զմարմինն, քան թէ կազդուրէ:

ԺԷ. Չէ արժան մարդոյ ուրախանալ՝ թէ ապրեցաւ զամս բազումս. այլ թէ զիա՞րդ ապրեցաւ, բարեաւ եթէ չարեաւ. զի ըստ առաւելութեան և ըստ նուազութեան աւուրց կենաց՝ որ տուեալ եղեն նմա, խնդրի հաշիւ գործոյ՝ եթէ բարի և եթէ չար:

ԺԸ. Ողոք բառնայ ժամանակն ՚ի յերկինս, և խնդրէ իրաւունս, մինչ տեսանէ զի մարդիկ զմեծամեծ չարիս դիւրաւ կարեն գործել ՚ի սուղ ժամանակի. իսկ զփոքր բարիս՝ մեծաւ դժուարութեամբ ՚ի ձիգ ժամանակս:

ԺԹ. Մարդիկ՝ ոչ եթէ զժամանակն, այլ զգործածութիւն ժամանակին ունին ՚ի ձեռին. ապա որ գիտէ զժամանակն բարւոք ՚ի կիր առնուլ, դիւրաւ գտանէ զբազում բարիս ՚ի ծոց իւր: Բարւոք ասաց որ ասացն՝ թէ չիք ագահութիւն վայելուչ, բայց միայն ժամանակին:

Ի. Եթէ բնութիւն և ժամանակն խորհրդակից իւրեանց արարեալ էին զմարդիկ, ամենայն ինչ յաջողէր ըստ կամաց մարդկան:

ԻԱ. Մարդս է ճանապարհորդ ՚ի մէջ երկուց գերեզմանաց. զի ելանէ ՚ի գերեզմանէ երթալ մտանել ՚ի գերեզման. այսինքն՝ ծնանի յարգանդէ մօր, և երթայ թաղել ՚ի յարգանդ հողոյ:

Ապա անմիտ է նա՝ եթէ զճանապարհին ընդ-

որ ձեպով անցանէ, կարծիցէ տեղի մշտնջենաւոր բնակութեան. և թողուցու ընդ վայր անցանել զդիպողութիւն ժամանակին:

Իբր Բազումք 'ի մարդկանէ այնքան անմիտք են, մինչ զի ոչ գիտեն որոշել 'ի մէջ մահու և կենաց, և ըստ պահանջման երկաքանչիւր վիճակի զգործս իւրեանց տնօրինել: Զի մինչ կենդանի են, զգործ մեռելոյ առնեն. և յորժամ 'ի մահ մօտին, զգործ կենդանւոյ ջանան ցուցանել:

Քանզի 'ի սխս երիտասարդութեան անհոգացեալ զհոգևոր և զմարմնաւոր պիտոյից՝ դատարկաշրջիկ լինին, և ոչ աշխատին 'ի ստացումն կարևորաց. մանաւանդ թէև զորս ունիցին 'ի հայրենեաց ժառանգութէ, շռայլութեամբ վատնեն յումպէտս. ապա թէ հասեալ իսկ իցէ օրհաս մահու նոցա, և հանդերձեալ իցեն թողուլ զաշխարհ՝ և զամ զոր 'ի նմա, և երթալ մերկ և կողոպուտ:

Իսկ յորժամ մերձենան 'ի մահ, և անհրաժեշտ վճռով ստիպին մեկնիլ յաշխարհէ, սկսանին հոգալ զկարևորս հոգւոյ և մարմնոյ. ապա թէ իցեն յերիտասարդական հասակի, և յանցաւ առողջութեան, և կարօղ և ձեռնհաս 'ի պատրաստել զամ:

Բայց աւա՜ղ տարապարտ տառապանաց նոցա. զի ստուեր մահու վաղվաղակի անկեալ զբբզք նոցա, ոչ թողու գործել ինչ յօգուտ անձանց իւրեանց:

Ի՞նչ հանգչիլ ասէ՛ յորժամ ոք դադարի ՚ի գործողութենէ յիմեքէ . իսկ որ ո՛չ գործով իւիք յերկս աշխատութեան վաստակի , ո՛չ գիտէ նա՝ թէ զինչ է հանգչիլն . ապա որ կամի զքաղցրութիւն հանգստեան վայելել՝ աշխատեսցի մարմնով ։

Ի՞նչ Դատարկութի և ծուլութի ապականեն զբնութի՛ն, և առնէ զնա ո՛պ երկիր փշալից . իսկ չափաւոր աշխատութի՛ն զօրացուցանէ , և առնէ զնա որպէս երկիր պտղալից ։

Ժանտամահ է հոգւոյ մանկան՝ յետ տասնամեայ հասակի մնալ առանց ուսման և առանց արհեստի , և շրջիլ դատարկ ։

Ի՞ն Ա՟ծ որ անպարտական բարերարութբ իւրով ստեղծ զմարդ , ետ նաև ձրի ողորմութբ իւրով զկարի կարևորսն կենաց մարդոյ՝ զօդն, և զլոյս արեգական , և զջուր անձրևոյ . բայց եթող մարդոյ կեալ աշխատութբ իւրով . զի՟ գործել զերկիր՝ զի բուսուսցէ զցորեան ՚ի կերակուր ։

Օ՜ ՚ի եթէ Ա՟ծ առանց աշխատութե մարդոյ ձրիաբար բուսուցեալ էր յերկրէ զցորեան բաւական, մարդն մնայր դատարկ և ծոյլ . և ունէր կրել զբազում վտանգս կենաց , որք պատճառին ՚ի ծուլութէ . զի ծուլութի՛ն է թշնամի կենաց մարդոյ ։ Իսկ զերկրագործութի՛ն այնպէս սահմանեաց Ա՟ծ , զի կարասցէ ո՛ և իցէ մարդ ՚ի գործ դնել . և չունիցի պէտս ճարտարութե մտաց և հանճարոյ ։

Ապա ծոյլք չունին պատճառս դատարկաշրջիկ լինելոյ . ահա 'ի պատրաստի կայ երկիր ընդ ոտիւք իւրեանց . գործեսցեն զայն և կերիցեն զհաց ցորենոյ . և արբցեն ձրի զջուր յուրտ : Իսկ վայելեսցեն 'ի լոյս արեգական . և տացեն զփառս արարչին . ապա թէ ոչ՝ չեն արժանի ուտել զհաց, և տեսանել զարև, և վայելել 'ի պարգևսն այ:

ԽԶ Մի կարծեր՝ թէ դատարկութիւն է հանգիստ մարմնոյ, զի այն առաւել տանջանք է նմա . զի տկար առ տկար՝ ախտացուցանէ զմարմինն՝ մինչև յանբուժելի ցաւս արկանել զնա :

ԽԷ Դատարկանձունք զժամանակին ոպ̃ ըղ բեռն կրեն 'ի վր̃ իւրեանց, կամ համարին զանձինս ծառայ ժամանակին : Սակայն ինքեանք են անտանելի բեռն ժամանակին, զոր իբրև ծառայ յանարժան գործս վարեն: Բայց եկեսցեն աւուրք՝ զի ժամանակն ազատեսցի 'ի ձեռաց նց̃, և յայնժամ ծանիցեն զվարդ նր̃:

Սոքա նմանին յագեալ որովայնի, որ զմեղր արհամարհէ . բայց յորժամ քաղցնու, աշտուձ հացի փափաքի, այլ ոչ գտանէ :

ԽԸ Բնութիւն ոչ է ժլատ՝ մատակարարել ամենեցուն զժամանակն . այլ ծոյլք շռայլաբար վատնեալ զնա՝ ոչ ինչ օգտին . սակայն երջանկութիւն մարդոյ՝ հաստատեալ է 'ի բարւոք կիրառութէ ժամանակի . և թշուառութիւն՝ 'ի կորուսանելն զնա ընդ վայր և կամ 'ի չարիս:

իթ Բազումք վ՟ս կորուսութ՟ե ժամանակին բարւոք խօսին. այլ սակաւք բարւոք ՚ի կիր առնուն։ Որք ոչ գիտեն զյարգ ժամանակին ՚ի կենդանութ՟ե իւրեանց, ՚ի զուր խոստանան գիտել ՚ի մահու իւրեանց. զի մինչդեռ կենդանի են՝ տրտնջեն թէև ո՞րպէս անցուսցեն զժամանակն. և մինչ մահն գայ՝ գանգատին թէ բառնի ժամանակն։

Արդ եթէ յարգի և պիտանի է ժամանակն, ընդէ՞ր անգործ վատնեցին իբրև զաւելորդ. իսկ եթէ անպիտան ինչ է, ընդէ՞ր աւաղեն ընդ բառնիլ նորա։ Որ ոչ յօժարի գիտել զյարգ բարւոյն, յորժամ առ իւր ունի. ՚ի զո՛ւր է գիտել, յորժամ բառնի ՚ի նմանէ։

լ Աշխարհս է դպրատուն. ուր միայն պարտին մարդիկ ուսանիլ զբարւոք գործածութ՟ին ժամանակի։ Որ զկեանս իւր անգործ անցուցանէ, կեանք նր՟ դառնայ նմա ՚ի պատիժ։

լա Ժամանակն իբր սրընթաց գետ անդուլ հոսի. ընդ իւր և զկեանս մեր առեալ տանի. և որ միանգամ գնայ, այլ ոչ ևս դառնայ. այլ մեք որ՟պ դանդաչեալս քնով՝ գնամք, և ոչ իմանամք. և կարծեմք՝ թէ տակաւին եմք ՚ի նոյն տեղի։

լբ Օ՜ մեծագոյն յարգ և զանկշռելի արժողութիւն ժամանակին՝ մեռեալք քաջ ճանաչեն. որք եթէ զվայրկեան մի կարէին վերըստին ՚ի ձեռս բերել, անգին գանձ համարէին.

և զբազում օգուտս ստանային նոքա 'ի փըր-կութե̃ հոգւոյ. բայց աւա՜ղ, զի այժմ կեն-դանիք զբազում ժամանակս տարապարտուց ծախեն 'ի վնաս հոգւոյ. և թէպէտ ծանի-ցեն զկենի մահուան զխաւարանս իւրեանց, այլ յանօգուտս. զի ժամանակն որպ̃ նետ ելեալ յաղեղանէ, ո՛չ ևս դառնայ յետս :

* Մինչև ցերբ ծուլացեալ կաս ո՜վ վատ, կամ երբ 'ի քնոյ զարթիցես : || Առակ. Զ. 19 :

* Փոքր մի ննջեսցես. փոքր մի նստիցես. փոքր մի նիր-հեսցես. . . ապա հասանիցէ 'ի վ̃ քո երբև չար ուղևոր աղքատութի̃, և կարօտութի̃ երբև զծեր սուրհանդակ : Ապա թէ անդանդաղ լինիցիս, հասանիցէ երբև աղբեւր ամառն քո, և կարօտութի̃ երբև այր մի չար ենթանահալած. || Առակ. Զ. 10 :

## Արհամարհութիւն

ԳԼ. Թ

ա̄ : Միանգամայն հաճութիւնք բաղձանաց մար-դոյ կայանան 'ի բարեխառնութե̃. և մինչ բառնի բարեխառնութի̃, բառնի և հա-ճութի̃, և փոխի 'ի պատիժ բնութե̃ : Քանզի զինչ ախորժելի քաղցելոյն՝ քան զյագուրդ-որովայնին. և զինչ վշտագնիչ յաւէտ՝ եթէ անցանիցէ ըստ չափ : Այլ զինչ փափագելի պապակելոյն՝ քան զըմպումն ցուրտ ջրոյ. և

զինչ քան զայն տանջողական՝ մինչ պարպատեցի որովայնն յառաւելութէ ջուրց:

Ապա պա՛րտ է լինել բարեխառն և ժուժկալ 'ի վայելել զբնական հաճելեան. ապա թէ ոչ՝ դառնան 'ի պատիժ բնութեան, և վաղվաղեն զմահ:

Է Բազմատեսակ հիւանդութիւնք՝ որով կարօտին մարդիկ բազմազան դեղորէից, յայն սակս յաճախին, զի մարդիկ ո՛չ գիտեն զերջանիկ կենցաղավարութեան: Վասն զի խառնակեցիկ վարք 'ի թոյն մահու փոխարկէ զկերակուրն, որ սահմանեալ է 'ի պահպանել զկեանս. և բազմախորտիկ սեղան կարճէ զկեանս, զոր դեղք ո՛չ կարեն երկարել:

Գ Աղքատք սակաւ երբէք հիւանդանան քան զփարթամս, զի ո՛չ կարեն գտանել զզանազան կերակուրս. իսկ փարթամք մոլեալք զհետ ազգի ազգի համադամ խորտկաց, թունաւորեն զանձինս՝ քան թէ բուծանեն: Նաև նոյն իսկ դեղորայք՝ ճշմարիտ թոյնք են, և խանգարեն զբնութիւն. և պիտոյանան 'ի գործ ածել միայն 'ի ստիպել հարկին, և ո՛չ անխտիր:

Իսկ մեծ և անվնաս դեղ մարդկան՝ է ժուժկալութիւն և բարեկարգութիւն 'ի հեշտութիւնս մարմնոյ, 'ի կերակուրս և յըմպելիս, և հանդարտութիւն մտաց, և չափաւոր աշխատութիւն մարմնոյ. որով քաղցրացեալ արեանն՝ վարէ զվնասակար և զաւելորդ հիւթս: Ուստի ամօթ մեծ է մարդկային սեռի՝ ունել զայսքան

հեզանդութիւս · զի եթէ բարեկարգ կենցաղավարեալ էին, լինէին առողջ և անկարօտ դեղոյ :

Դ Այն և ոմանք 'ի մարդկանէ, որք այնպիսի մեծաջան խնամով սպաս հարկանեն մարմնոյ, զօրհանապազ սնուցանելով զնա և դարմանելով · ոչ զի դարձուսցեն անդրէն յերիտասարդական առոյգ հասակ · կամ գոնէ չթողուցուն խոնարհիլ 'ի ծերութի տկարութե : Բայց մարմինն ծիծաղի զանմտութե նց, զի անդադար դիմէ 'ի ծերութի · և յամ քայլափոխս թափի 'ի զօրութէ, և մօտի 'ի մահ և յապականութիւն :

Իսկ ընդէ՞ր ո՛չ զգան, թէ մարմին ինչ բաղադրեալ 'ի ներհական տարերաց՝ հանապազօր 'ի շարժման և 'ի փոխադարձ առնելութեան ծնանի՝ և ապականի ըստ անփոփոխ և հարկաւոր օրինաց բնութե իւրոյ, և ո՛չ եթէ ըստ հաճոյից մարդկան :

Իմա՛ զմարմին մարդոյ ոչ վերիվար պիտանի անձին իւրոյ · որում եթէ չափով տացէ ոք զկեր, բառնայ զվերբեւեակն, և տանի կարովութե 'ի դէմ եդեալ տեղին · բայց եթէ աւելի քան զչափն մատուսցէ ոք զդարման, կիցս արձակէ կատաղաբար, և'ի վայր զհեծեալն արկանէ և փշրէ :

Ե Չի՛ք ինչ 'ի մարդում առաւել մեծարեալ քան զորկորն · բայց չի՛ք ապերախտ քան զնա · զի որչափ պատուեսցի, այնչափ

անշնորհակալու գտանի. և զառաւելն յան-
դըգնի խնդրել զմեծարանս. և այնքան ա-
նագորոյն է, որ զսիրողն իւր առնէ ինքեան
մշտնջենաւոր գերի։

Գ. Հօլին՝ եթէ զշուն իւր հանապազ մը
սով խաշանց կերակրէ, փոխարկէ զնա 'ի գայլ.
և որ զմարմին իւր սովորաբար պարարտ կե-
րակրով սնուցանէ, դարձուցանէ զնա 'ի գա-
զան. մինչ զի ստամբակեալ ոչ ևս հնազանդի
հոգւոյն կամաց, այլ զկամսն բռնադատէ ծա-
ռայել համոյից իւրոց։

Է. Որկորամէտք՝ ազգի ազգի քաղցրահա-
շակ կերակրովք թմբեցուցանեն զընական ա-
խորժակս իւրեանց. բայց քաղցն միայ ար-
թուն, և կարօտի կերակրոյ։ Այլ վասն զի
տաղտկացեալ է յոյժ ազգ կերակրոց, ճարէ
զնորատեսակս. և յոյնցանէ յափրացեալ, 'ի
խնդիր լինի այլում. և հանապազօր տանջի գը
տանել զնորս։ Իսկ գրեթէ որկորամէտք ե-
ղեն պատճառք բազմատեսակ լինելոյ կերակ-
րոց. յորոց յառաջ գան բազմօրինակ հիւան-
դութիւնք 'ի փութացուցանել զմահ։

Ապա թէ ոք կամի ախորժանօք ուտել, կե-
րիցէ կերակուր պարզ, և այն՝ չափաւոր կամ
սակաւ. և ոչ թէ ագահաբար կամ անասնօրէն։
Իսկ եթէ կամի կեալ առողջ, մերթ ընդ մերթ
կացցէ ծոմապահ կամ նօթի. զի մարսեսցին
մնացուածք կերակրոց 'ի ստամոքսաց. քանզի
նօթութիւն է դեղ և պահապան առողջութեան,

եթէ 'ի դէպ ժամանակի 'ի կիր արկանիցի · որպէս և յայտ է փորձիւ ։

Ը Են մարդիկ՝ որ ուրախանան ընդ տրտմականս, և տրտմին ընդ ուրախականս · և թէպէտ այս երկոքին կիրք, ուրախութիւն և տրտմութիւն բնաւորեալ են շարժիլ 'ի հոգւոջ յառարկայէ իւրեանց · իբր զի եթէ առարկայն իցէ ցաւալի, հարկաւ պատճառի տրտմութիւն · և եթէ իցէ հեշտալի, անշուշտ պատճառի ուրախութիւն ։

Բայց սոքա ոչ ուղիղ դատեալ զառարկայս՝ զհեշտալին համարին ցաւալի, և զցաւալին՝ հեշտալի · վասն որոյ և ներհական կիրս շարժին · Վասն զի զմարմնական զեղխութիւն՝ զորկորստութիւն՝ և զարբեցութիւն կարծեն լինել առարկայ հեշտալի · և 'ի գործել զայնս՝ ուրախանան, ընդ որ պարտ էր տրտմիլ · և զհոգևոր ճգնանս՝ զպահս՝ և զժուժկալութիւն մարմնականին առարկայ ցաւալի · և 'ի գործել զայնս՝ տրտմին, ընդ որ արժան էր ուրախանալ ։

Թ Ո՛չ է հնար դիւրութեամբ անձին, և յղփութեամբ որկորոյ շահիլ զհոգի · զի 'ի փափկութեան մարմնոյ ոչ գտանի հանգիստ հոգւոյ · Յղփութիւն պարարտ կերակրոց՝ ոչ այնքան վնասակար է մարմնոյ՝ որքան հոգւոյ · զի զզգայական կիրս ապստամբեցուցանէ 'ի բանէն · և առնէ զաղախինն իբրև զտիկին ։ Ո՛չ բարւոք կեայ՝ որ զգիրգանօք յածի ։

Ժ Վա՛յ այնմ որ ծառայէ՝ և անվարձ երանէ ·

բայց վա՛յ ՚ի վերայ վայի . որ ՚ի ծառայելն տուժի , որպէս է ծառայն մարմնոյ և որկորի ։ Որ ոչ սանձ ՚ի բերան արկանէ երիվարին , ոչ ինչ հոգայ թէ գահավէժ լինիցի . և որ ոչ նուաճէ ժուժկալութեամբ զմարմին , անփոյթ է զգլորմանէ իւրմէ ։

* Մարդ՝ որ վասն պորտոյն աշխատի և որկորոյն հաճութեան յօժարեցին անցին ըստ օրէնս նախնեացն , երբեք նորա չէրս արժանի արդարանալ միամտութեամբ ոչ կարէն ։
Գ . Մակ . Է . 7 ։

* Որ փափկասուն լինի ՚ի մանկութենէ , ՚ի ծառայութիւն մատնեսցի . և յետոյ մորմոքեսցի յանձն իւր ։
Առակ . ԻԹ . 21 ։

## Արբեցութիւն

### Գլ . Ա

ա Արբեցութիւն է թոյն ապականիչ բանականութեան մարդոյ . զի թէև ոչ սպանցէ , գոնէ մթագնէ զլոյս մտաց . և փոխէ զմարդն յանասուն անբան՝ կամ ՚ի գազան այլանդակ .

բ Էակք որով կացուցանին տեսականապէս ՚ի բնութեան իւրեանց , նովին տարբերին և յայլոց . և վասն զի բնութիւն մարդոյ տեսականապէս կացուցանի բանականութեամբ , ապա նովին տարբերի յայլ ամենայն էակաց ։

Ու զի՞մ արդ ասիցի մարդ արբեցողն՝ որ զուրկ է 'ի բանականութենէ. զի է՝ որ ցնորի իբրև զխելագար, և է՝ որ մոլեգնի իբրև ըղձ դիւահար. է՝ որ դժնեայանայ իբրև զգազան, և է՝ որ անզգայի իբրև զմեռեալ:

Թող՝ զի որպէս զաչացու ոչ կարէ տեսանել զբարեկամն և զթշնամին. և որպէս զխուլ ոչ կարէ լսել զբանս խրատու. վասն այնորիկ այս օրէնք առ ամենայն ազինս պահեցաւ, ոչ խրատել զարբեցողն՝ մինչև ոչ սթափեսցի 'ի գինւոյ:

Գ. Գինին՝ թէպէտ չէ ըստ ինքեան չար. բայց չարաչար գործածութիւն նորա՝ պատճառէ զմեծամեծ չարիս, զխռովութիւն, զծուլութիւն, զհիւանդութիւն, և զայլ բազում անկարգութիւնս: Յայն սակս պարտ է իշխանին հեռի պահել զժողովուրդ իւր յարբեցութենէ գինւոյ, զի մի՛ պատահեսցին չարիքս:

Դ. Մարդիկ՝ չարաչար 'ի կեր արկեալ ըղձ պարգևսն Այ, բարկացուցանեն զանբարկանալի բնութիւնն՝ ոչ ևս տալ զպարգևս բարիս, կամ զրկել զինքեանս 'ի վայելմանէ յառաջագոյն տուեցելոց:

Գինին՝ առիթ ընկերական սիրոյ, և փարատիչ տրտմութեան տուեալ եղև. իսկ արբեցողք արարին զայն՝ նիւթ կռուոյ և տրտմութեան. Բժիշկք յօժարեցան տալ զայն ուժաթափ հիւանդաց՝ իբրև դեղ զօրացուցիչ և առողջարար. արբեցողք 'ի վար արկին կորուսանել նովաւ զառողջութիւն իւրեանց, և ստանալ

ցուս անբժշկելի։ Ծերք՝ չափաւոր կերա-
կրութբ պահեն զզօրութիւ առողջութե.
երիտասարդք անկարգաբար վարելով նոքա՝
փութացուցանեն զծերութիւ տկարութե. և
բազում անգամ լինին վաղամեռիկ։ Որ ոչ
պահէ զառողջութի իւր առանց գինւոյ, գին-
եաւ կորուսցէ զնա։

Ե Բարի են ա՛մ արարածք ա՛յ. բայց որք
չարաչար վարին նոքօք՝ փոխին նց՛ ՚ի տանջանս.
ո՛վ արբեցողք ոչ բարւոք ՚ի կիր արկեալ զգի-
նին, արժանի են՝ զի տանջեսցին ՚ի նմին։

Զ Արբեցութին վնասակար է յոյժ. զի
առնէ զմարդն անխել, շուայլ, և անարգ. զի
արբեցողն կորուսեալ զխելս իւր, կորուսանէ
զինչս և զպատիւ։ Է՛ որ ՚ի խնճոյս ուրա-
խութե զոր ինչ ունի ՚ի ծոցի, շուայլաբար
պարգևէ անարժանից. և է՛ որ զգաղտնիս
սրտի իւրոյ հրատարակէ ՚ի վնաս և յանար-
գանս անձին իւրոյ։ Է՛ որ ննջէ, և է՛ որ
կաքաւէ. է՛ որ լայ, և է՛ որ ծիծաղի. է՛
որ պապանձի և անշշայի, և է՛ որ շաղփաղփէ
յաճախ, և հակառակի և կռուի. և չիք
անկարգութի ինչ՝ զոր արբեցողն ոչ հա-
մարձակեսցի առնել. որով լինի անարգ՝ և
նախատելի քան զա՛մ մարդիկ։

Է Ամենայն մոլութիք թէպէտ են չար և
վնասակար՝ բայց զմիտսն միայն թիւրեն, այլ
ոչ կորուսանեն։ Այլ գողն բազում հանճար
՚ի գործ դնէ առ՚ի գողանալ զինչս, և չանկանիլ

'ի ձեռս ։ Եւ շնացողն պէս պէս հնարիւք վարի, զի մի՛ խայտառակեսցի ։ Եւ սուտասացն յարմար պատճառս դուն գործէ գտանել, զի մի՛ ստութիւն իւր յայտնեսցի ։

Աստ սոցուն սակի և այլ չարագործք ունին զմիտս ամբողջ, այլ ո՛չ առողջ ․ գործեն բանաւորապէս, այլ ո՛չ բարեպէս ։ Իսկ արբեցութիւն կորուսանէ զմիտս մարդոյ ․ և 'ի բաց հանէ 'ի մարդկութենէ ․ զի մարդս մտօք է մարդ ։

Եւ զի՛նչ արդեօք իցէ արբեցողն ․ ո՛չ է անզգայ գոյացութիւն, զի նոքա ըստ յաւիտենական օրինացն ոյ̅ շարժին անդադար յօդուած տիեզերաց ․ ո՛չ չորեքին տարերք, և որ 'ի նոցանէ են անզգայ արարածք ․ իսկ արբեցողն չարաչար վնասէ անձին և ընկերին ։ Ո՛չ է անասուն, զի նոքա հլու հպատակութեամբ ծառայեն անխոնջ 'ի կարևոր պէտս մարդկան ․ իսկ արբեցողն և ո՛չ իմիք է պիտանացու ։ Ո՛չ է գազան, զի նոքա ո՛չ բնաւ մեղանչեն այնմ, ընդ որ իցեն ընդելացեալ ․ իսկ արբեցողն ո՛չ ճանաչէ զբարեկամս և զընտանիս՝ զհ̅ր և զեղբարս ․ զամուսինն հոյհոյէ, որդւոցն սպառնայ, ընդ ամենեսին կռուի ․ զի կորուսեալ է զմիտս իւր, և եղեալ է հրէշ իմն այլանդակ ։ Բայց երանի՛ էր, եթէ ընդ կորնչել մտացն՝ կորնչէր և ինքն ․ զի ո՛ր ունկն տոկայ լսել անկարգ խօսից նր̅ ․ ո՛ր աչք ժուժայ տեսանել զանվայել շարժմունս նր̅ ․ ո՛ր ունչ ո՛չ զզուի 'ի գարշահոտութենէ բերանոյ նորա ։

Ահա՛ արծաթն զոր ունէր 'ի քսակի՝ սպառեցաւ . և ինքն որպէս աղբ անպիտան 'ի գինետանէն արտաքս ընկեցաւ՝ գլուխն բաց , գօտին արձակ , ագանելիքն ոտից 'ի փողոցս անկեալ . և որպէս կոյր առ խարխափ դեգերեալ՝ որմ զորմոյն հարկանելով տղմաշաղախ իբրև խոզ՝ անազան ուրեմն գայ առ դուրս տան :

Անդ է տեսանել հին հարսանեաց նոր հարսնածուք . զի անդէն դեռ կաքաւեն , յորժամ այր և կին զիրեարս խածատեն : Տունն է խաւարին . զի ոչ իւղ գոյ՝ և ոչ մոմ . մանկունքն նօթի լան և արտասուեն . զի ոչ հաց կայ՝ և ոչ պանիր . կինն խռովեալ կամ զանակոծեալ, առ կսկծանաց սրտին հարկանէ զզաւակս իւր , և վայիւք և ճչով լնու զտունն : Գինեմոլն իբր զարջ վիրաւոր՝ 'ի վերայ կնոջ և զաւակաց յարձա՛կի հայհոյանօք , և գլորեալ անկանի :

Դրացիքն տեսանել զթշուառութիւն՝ ցաւակցին և եղուկ կարդան . և ոմանք ևս ձանձրացեալ յանտանելի հայհոյութեանց և յանդադար խռովութենէն՝ վաղքաջ ընդ առաւօտն դիմեն 'ի պատրիարգարանն բողոք բարձեալ : Եւ փոխանորդ պատրիարգին տայ ածել անդր զգինեմոլն . և միանգամ և երկիցս խրատէ և յանդիմանէ , և առաքէ 'ի գործ . և իբրև տեսանէ՝ թէ այնու ոչ զգաստանայ , գան հարեալ արկանէ 'ի բանտ :

Եւ զինչ այնուհետև . ոչ հացագործն տայ զհաց , և ոչ նպարավաճառն զբրինձ , իւղ , և

մամ. մանաւանդ զի եկեալ նեղէ զկեանս, և պահանջէ զպարտսն առաջին. իսկ նա ոչ ունի դրամ և ոչ ինչ: Պտուղն զոր եբեր կեանս 'ի տանէ հօր իւրոյ, կանխաւ սպառեցաւ. և անօթք պղնձի հետ զհետէ պակասեցան 'ի տանէն: Այս արբեցութիւն է ախտ չար, յորմէ իբրև յականէ հոսին ամ թշուառութիւք և եղկութիւնք:

* Անառակ է գինի՝ և թշնամանօղ արբեցութիւն. և ամ որ խառնակի ընդ նոսա՝ չէ իմաստուն: || Առակ. Ի. 1:
* Ո՞ւմ է վայ. ո՞ւմ խռովութիւն. ո՞ւմ են դատաստանք. ո՞ւմ դժնդակութիւնք և վէրք... ո՞չ ապաքէն այնոցիկ՝ որք յամենն 'ի գինւոջ, և դիտեն ուր գինարբուք լինիցին: || Առակ. ԻԳ. 30:

## Ըղձախոհութիւն

### ԳԼ. ԺԱ

ամ Ախտաւոր ցանկութիւն է հուր կիզանող ամ հասակի. զի որպ հուրն ոչ միայն բոցակիզանէ զփայտ չոր և զխոտն, այլ և ըղ փայտ դալար զոր 'ի նմ գտանէ. այսպէս և ցանկութիւն՝ ոչ միայն զանփորձ երիտասարդս գիտէ այրել, այլ զկատարեալսն հասակաւ և միօք, եթէ առ պատճառն հուպ գտանիցին: Եւ զորօրինակ հուրն մինչ մօտի առ նիւթն՝ որք չեն կիզանելոց, գոնէ ջեռուցանէ զնս. նոյնպէս

և ցանկութ͞ին՝ թէպէտ չկարիցէ կերպով զարս կատարեալս, այլ ոչ թողու զերծ ի ծխամած կրից. ապա պարտ է ա͞մ հասակի փախչել ի պատճառէն, զի կարասցեն մնալ անմեղս :

Որ͞պ բնական էակք են միշտ ի շարժման՝ զոր ունին ի յատկութ͞ե, ի բաղադրութ͞ե և ի զօրութ͞ե խութեանց, և ի զօրութ͞ե էակացն՝ զորոց ընդունին զապաւորութ͞իս. զի եթէ դադարէին վայրկեան մի ի շարժմանէ, դադարէին ապաքէն և ի լինելոյ էակ : Նոյնպէս կիրք ցանկութ͞ե ներգործէ միշտ յամենեսին, և ոչ երբէք դադարէ. այլ յերիտասարդս է զօրաւոր, իսկ ի մանկունս և ի ծերս՝ անզօր և տկար. սակայն չէ խափանեալ՝ ցորչափ կենդանի է մարդ :

Զի եթէ ի մանկունս և ի ծերս ոչ պակասի գործողութ͞ի մտաց և կամաց, ապա ոչ պակասի և գործողութ͞ի կրից. զի անբաժան լծորդք են երեքին սոքա : Ուրեմն իւրաքանչիւրոք զգուշասցի անձին, զի մի՛ յաղթեսցի ի կրից՝ մանաւանդ ի ցանկութ͞ե մարմնոյ :

Է͞ Երիտասարդք առաւել պարտին առաջադրել իւրեանց զկրթութ͞ի առաքինութ͞ե՝ քան զպատերազմական մրցանաց. որովք կարասցեն ստանալ զփառս, և յաղթել քաջութեամբ ա͞մ ձախորդութ͞եց. քաջութ͞ին՝ ոչ է միայն արհամարհել զմահ ի վտանգաւոր պատերազմի, այլև առ ոտն հարկանել զմոլեկան հեշտութիւնս մարմնոյ :

Գ Բորբոքեալքն մոլեկան սիրով լինին կոյր և խուլ. զի ոչ զգան՝ և ոչ տեսանեն զայլս, բայց զայն միայն զոր սիրեն չարաչար. հրաժարեն յամ բարեաց, զի մի՛ հրաժարեսցեն 'ի նմանէ: Գերի են ստնակապ, և համարին զանձինս ազատ. զի առաւել յօժար են մեռանիլ՝ քան 'ի նմանէ արձակիլ:

Չէ ճար յաղթել մոլեկան սիրոյ, բայց միայն փախստեամբ. ող հուրն պակասեալ 'ի նիւթոյ շիջանի, նոյնպէս և ցանկութիւն հեռացեալ 'ի պատճառէն՝ յաղթահարի: Զի սէրն ախտաւոր՝ մեծ քան զամ չարիս է. և ոչ այնքան երկնչել պարտ է յամեհի ալեաց, որքան 'ի նմանէ:

Դ Նաւաբեկուն և մահ՝ սակաւ թշուառ են քան զհեշտութի մարմնոյ: Առաւել պարտ է երկնչել 'ի հեշտութէ՝ քան 'ի կարծր ժայռից ծովու: Զգո՛յշ լեր երիտասարդ 'ի քաղցր բանից հեշտալեաց՝ որք իբրև զօձ թունաւոր սողան 'ի ներքոյ գեղեցիկ ծաղկանց, զի մի՛ հարցին 'ի մահաբեր ժանեաց նց 'ի հարուածս անբժշկելիս: Սէր գարշ հեշտութե նենգաւոր է և դաւաճան. զի ընդ պատրուակաւ քաղցրութե ծածկէ զդառնութի իւր:

Ե Երիտասարդ՝ որ սիրէ երևիլ պաճուճազարդ ող զկանայս, անարժան է պատուոյ և փառաց. զի փառքն է վարձք այնմ, որ յաղթէ հեշտալի հաճութեց:

Զ Մոլեկան ցանկութիւն երբեմն այնքան

կատաղի և տիրէ մարդոյ, մինչև չթողու ճանաչել զանձն իւր . կարծէ մոլեալն՝ թէ խնդրէ զհանգիստ և զդիւրութիւն . բայց յամի ընդ առաջ եղանէ նմա տանջանք և մահ : Մարմնական հեշտութիւն առաւել մաշէ զկեանս մարդոյ՝ քան աշխատութիւն և ջանք :

Է Բազումք՝ որք հռչակաւորք եղեն յաշխարհի յաղթութեամբ թշնամեաց, յաղթեցան ՚ի կոյր սիրոյ ցանկութեան, և նկուն եղեն . Նա է յաղթօղ ախոյեան, որ յաղթէ սիրոյ հեշտութեան : Հեշտասէրք փութով լքանին, յորժամ ՚ի վտանգ ինչ անկանին :

Ը Ցանկութիւն մարմնական միշտ մարտնչի ընդ իմաստութեան, և մի քան զմի գուն գործէ նուաճել զսիրտս մարդկան . և մարդիկ անդադար ձգին ՚ի մէջ երկուց հակառակաց . Երանելի է նա, որ իմաստութեամբ յաղթէ ցանկութեան մարմնոյ, և ոչ յաղթահարի :

Թ Հաճութիւն հեշտութեան երիտասարդական աշխոյժ հասակի՝ ոչ թողու նմա հաւատալ բանից խրատատուաց . այլ մինչ անկանի ՚ի ձախողակ վտանգս, յայնժամ փորձիւ ճանաչէ զճշմարտութիւն բանից նց, և զգաստանայ՝ բայց վնասուք անձին իւրոյ :

Ժ Երիտասարդ որ գեղեցիկ և զուարթամիտ՝ եթէ իցէ ևս աշխատասէր և բարեկարգ, գովութեան և սիրոյ է արժանի . իսկ որ ՚ի մատաղ տիս՝ դատարկութեան և հեշտութեան մարմնոյ ծառայէ, վատառողջ և վատանուն յտի լինի :

ԺԱ Յիմարական բերկրութիւն երիտասար-
դաց՝ յառաջ եկեալ ՚ի հեշտութէ, թէպէտ
առ ժամն տայ զուարճութիւն զգայական բաղձա-
նաց, այլ զկնիրոն չարաչար խայթէ խղճի՛ մ-
տաց. և թողու վէրս անբժշկելի: Իսկ բանա-
ւոր բերկրութիւն՝ որ ծնանի յուղղութէ մտաց
և ՚ի բարեգործութէ, ուրախ առնէ զհոգին.
և թողու ՚ի նմա զանտխրական իմն ցնծութիւն:

ԺԲ Ո՛չ ինչ ախտ ցաւոց այնքան անողորմա-
բար տանջէ զերիտասարդական հասակն, որքան
ախտն մոլեկան սիրոյ: Բազումք մեռանին
ցանկական սիրով, քան երկաթի սրով: Մոլե-
կան ցանկութիւն՝ ոչ միայն խանգարէ զմիտս,
այլև մաշէ՝ և նիհարացուցանէ զմարմինն:
Բա՛րձ զփայտ ՚ի հրոյ, ո՛չ ևս մնայ հուր. բա՛րձ
՚ի մտաց զառարկայն ցանկութե, ո՛չ ևս մնայ
ցանկութիւն:

ԺԳ Խոզք փախչին ՚ի քաղցր հոտոյ, և
բղջախոհք ՚ի համեստ վարուց: Որ ո՛չ ճանա-
չէ զվարդ առաքինութե, անգոսնելի է նմա
համեստութիւն:

ԺԴ Բժիշկք՝ յարտաքին կերպարանաց գու-
շակեն զներքին ախտս մարմնոյ հիւանդին.
իմաստունք՝ ՚ի զգեստուց և ՚ի գնացից նշմարեն
զմոլեկան կիրս հոգւոյ երիտասարդին: ՚Ի լը-
ռել խստաշունչ հողմոյ՝ խաղաղին ալիք ծո-
վու. ՚ի դադարել ախտաւոր կրից՝ հանդար-
տին ամբոխմունք սրտի:

ԺԵ Չէ նա գովելի, որ ունի մարմին գե-

զեցին՝ և հանդերձ մաքուր, այլ որ ունի սիրտ ազատ յախտաւոր ցանկութեց. զի անձնադեղ մլին նմանի դամբարանի, որ արտաքուստ երևի վայելուչ, և՚ի ներքոյ լի է նեխութբ:

ժզ Ամաչեսցէ յանբանից, որ վարի պղծութ̃ ընդդէմ օրինաց բնութ̃ե. զի անբանք յօժար են մեռանիլ՝ քան զկարգ բնութ̃ե եղծանել:

ժէ Ողջախոհն՝ գուցէ ոչ զգայ զտանջանս դիւաց. զի առաւել չարչարի յիւրոց ախտաւոր կրից՝ քան ՚ի դիւաց: Հուրն՝ կամ ջրով շիջանի, կամ հողով, կամ պակասութ̃ նիւթոյ. Ողջախոհութիւն՝ կամ պահեցողութ̃ խափանի, կամ ծերութ̃, կամ մահուամբ:

ժը Ուր գտանի ողջախոհ, մի՛ խնդրեսցի անդ կոյր կամ դիւահար. զի ողջախոհն և կոյր է, և դիւահար:

ժթ Դիւրաւ բժշկին խոցուածք երկսայրի սրոյ, քան զվէրս ախտաւոր սիրոյ: Չէ պարտ հայիլ առ այն, որում չէ արժան ցանկալ:

ի Ախտաւոր ցանկութիւն է իբրև վառօդ ծածկեալ յանօթս սրտի. որ երբեմն հայեցիւք կամ խօսակցութ̃՝ իբրև կայծիւ բորբոքեալ այնպէս հրդեհի, մինչ զի կործանէ զանձն երիտասարդին: Ապա որ կամի մնալ անվնաս, հեռասցի ՚ի պատճառէն:

իա Չէ արժան երիտասարդի բնակիլ անդ, ուր կասկածելի է մնալ անվնաս ՚ի խայթոցէ ցանկութ̃ե. զի թարթափիլ զերշովք՝ և ոչ վիրաւորիլ, եթէ չէ անհնարին, դէթ կարի խմն է

դժուարին ։ Ո՛չ է որ յարտաքուստ շարժի յառարկայէ , և՚ի ներքուստ մղի 'ի բնաւորական կրից , դիւրաւ կործանի՝ թէև հոգևոր ոք իցէ ։

Աստի որչափ հեռի ոք գտանի 'ի տեսանելի առարկայից՝ որք ամբոխեն զմիտս , և տան խորհել զանախորժելիս հոգւոյ , այնչափ առաւելու 'ի վայելս խաղաղութեան ։

Իէ Մարմնական հեշտութիւն գիտէ զինքն անարժան սիրոյ մարդկան · վասն զի իբրև կին լկտի բիւրազգի ճարիւք պճնի , զի ցանկալի երևեսցի յաչս յիմարաց · որպէս անպարկեշտ կանայք՝ անխելք երիտասարդաց · քանզի թէ ըստուգիւ լինէր արժանաւոր սիրոյ , սիրէին արդեօք զնա իմաստունք և առաքինիք ։ Նմին իրի եթէ զոք յիմարաց յափշտակեալ ձգէ 'ի սէր իւր , ո՛չ կամի երբէք 'ի բաց թողուլ · և յաւէտ թաքուն շրջի և գաղտագողի , զի մի՛ յանդիմանեսցի յիմաստնոց և յառաքինեաց ։

Իը Ցանկութիւն մարմնոյ ծաղր առնէ զսիրօղս իւր , ըստ օրինակի լկտի կանանց · զի հազիւ սուղ ինչ հաճէ զմիտս պատրողական սիրով , անդէն հեռացեալ գնայ առ այլս · և որպէս խաբեաց զառաջինն , հեռանի զի նոյնպէս խաբեսցէ և զերկրորդն , նմանապէս և զայլս · և ինքն գոլով խաբուսիկ և անկայուն , հանապազ 'ի միոյ առ այլս փոխի · բայց և ո՛չ զմին յագեցուցանէ , այլ զամենեսեան ծանակէ և նենգէ · մանաւանդ զի մինչդեռ սիրեցեալ

լինի, առաւել դառնացուցանէ՝ քան թէ հեշտացուցանէ. ապա յիմար է նա, որ մոլեգին սիրով զհետ պնդի ունել զնա:

* Որ շնայն՝ առ պակասութե̄ մտաց, կորուստ անձին ի-րում ստանայ: Ցաւս և անարգանս հրէ. և նախատինք նորա մ՛ ջնջեսցին յաւիտեան: || Առակ. Զ. 32:

* Որդեա՛կ զհեշտութե̄ ցանկութե̄ մ՛ երթիցես զհետ նց, և ոտնհար լիցիս թշնամեաց: || Սիրաք. ԺԸ. 31:

## Բամբասանք

### ԳԼ. ԺԲ

ա̄ Զինչ քան զմարդն ազնիւ և գերազանց յարարածս. որ ընդ հրեշտակս ունի ըզ հոգեղէն կարողութի̄, ընդ կենդանիս՝ կենդանական, ընդ տնկականս՝ տնկական, և ընդ անզգայս՝ զգայական. զի պատկեր և նմանութի̄ այ̄ է, և լրումն ամ̄ արարածոց: Նու-թէպէտ հոգին առաւելու պատուով և գերազանցութե̄ քան զմարմինն, բայց և ոչ մարմինն խոպան զուրկ միոյ 'ի պատուոյ:

Զի ունի և զգործիս ինչ 'ի ծառայել կարողութե̄՝ և ներգործութե̄ հոգւոյն, ք̄ զհինգ զգայարանսն. որք են տեսանելիք, լսելիք, հոտոտելիք, ճաշակելիք, և շօշափականք. որովք հոգին իբր թագաւոր՝ հաւատարիմ պաշտօնէիւք և գործակալօք կառավարի և կառա-

վարէ զքաղաք բնութեան մարդոյ ։

Եւ ’ի նմա լսելիք՝ որ է ունկն, և ճաշակելիք՝ որ է բերանն, առաւել կարևոր են քան զայլս ։ որոց մին, այսինքն ունկն իբր լրտես արտաքուստ ’ի ներքս ’ի հոգին է ազդարար ։ զի զոր ինչ լսէ՝ անդանդաղ հասուցանէ ’ի միտս ։ և միւսն՝ այսինքն բերանն իբր ներքին խորհրդակից առ արտաքս ծանուցանէ, զոր ինչ հոգին ’ի միտս խորհի, և տրամադրէ ։

Զի թէ չգոյր ունկն, ո՛չ ինչ իմանայր մարդ, որպէս յայտ է ’ի խլից ։ և եթէ չլինէր բերան, ո՛չ ինչ կարէր իմացուցանել այլոց ։ Ապա մարդիկ՝ իմանալով և իմացուցանելով հաղորդակցին իրերաց ։ և զբազմաձևար արուեստս և իմաստս տեսականս և գործնականս յառաջ ածեն ։ Ուստի ունկն և բերանն ’ի մարդն են իբրև երկուս թևս թռչնոց ։ որովք ո՛ր ցանկան՝ թռչին, և որում բաղձան՝ հասանին ։

Իսկ արդ՝ սոքա որքան արժանաւորք և կարևոր են ’ի մարդն՝ յուղիղ վարելն զպաշտօնս իւրեանց, այնքան անարգ և անպիտան գտանին յարտուղելն իւրեանց ։

Ուղղութիւն ունկան է, զոր ինչ լսէ յայլոց՝ զայն ազդէ մտաց ։ ուղղութիւն բերանոյ է, զոր ինչ ունի ’ի միտս՝ զայն խօսի այլոց ։ Իսկ թէ ունկն՝ զունեալ խօսսն, և բերանն՝ զբանն մտաց այլ ընդ այլոյ յեղաշրջեն, մին խաբէ զինքն, և միւսն զայլս ։ որովք և բառնի ճշմարտութիւն ։ և զինչ քան զայս չար յաշխարհի ։

Է Եթէ ուղիղն ոչ տանի 'ի ներքս զոր լսէ, բերանն ոչ կարէ հանել արտաքս 'ի խօսիլ. և այս հաւաստի է 'ի փորձոյ. զի ամ̃ խուլ՝ են և համր: Արդարև ոչ գտանէր համր, եթէ ոչ էր խուլ. որովհետև ոչ ինչ է 'ի միտս, որ չիցէ նախ 'ի զգայութ̃իս:

Ապա երանելի է ուղիղն որ լսէ. և երանագոյն, որ զիմարդ և լսէ՝ նոյն թո̃ւով և նոյն կերպարանաւ հասուցանէ 'ի միտս. և երանագոյն ևս, որ միայն զբարին լսէ, և առ չարն զդուրս իւր փակէ: Զնոյն երանութիւն ընկալցի և բերանն, եթէ զուղիղն և զբարին խօսի միշտ:

Ը Լսելիք՝ արդարև են խցանելիք, որք առ ա̃ծայինն պատո̂ւիրանն դժո̂ւարալուր և յամրաշարժ են. և առ բամբասանս՝ դիւրալուր և արագաշարժ:

Թ Բնութ̃ին՝ որ ոչ ինչ գործէ ընդունայն, ետ մարդոյ լսելիք երկու՝ և միշտ բաց. բերան մի՝ և յաճախ փակ. իբր զի ուսանիցի մարդ 'ի բնութ̃է՝ լսել բազում, և խօսիլ սակաւ: Եւ զի զայլ զգայութ̃իս արար շարժուն, իսկ զունկն անշարժ. իբր զի զոր միանգամ լսիցէ, անմոռաց և անշարժ ունիցի:

Զարտաքին դիրս և զխոռոչս և զճանապարհս՝ ընդ որ ձայնն մուտ առնէ, կազմեաց դարուփոս և շրջապտոյտ. որպ̃ զի ոչ զամ̃ ձայն զոր լսէ, 'ի ներքս թողուցու մտանել. այլ իբր ընդ մաղ անցուցեալ՝ զբարին և

զազնիւն ՚ի ներքս մտուցէ . և զանարգ թեփ բանին՝ արտաքս վարեսցէ .

Ե   Ընդ բլթակ ունկան կանանց սովորեցան մարդիկ օղ կախել, որ ՚ի հին դարսն նշան էր գերութ . բայց այժմ նշան զգաստութե̅ . ոպ̃ զի անմոռաց ունիցին կանայք փակել զականջս առ ՚ի չլսել զվնասակարս, ևս և ճանաչել զանձինս հնազանդ արանց իւրեանց .

Այս միտ և մանկունք երբեմն կրէին օղ յունկս . ոպ̃ զի և նոքա ըստ բերման մանկական տիոց չունելով զկատարելութի̅ մտաց, գոնէ յարտաքին իմն ազդարարէ խրատեսցին զգաստ լինել, և հպատակ ծնողաց իւրեանց և դաստիարակաց .

Զ   Ո՛յր յամի անարգ է բամբասողն . այլ ոչ պակաս քան զայն անարգ և արհամարհ է և լսողն բամբասանաց . իսկ առաւել քանի՛ անարգ և վատթար իցէ այն, որ ՚ի բաց թողեալ զգործ, շրջի ՚ի տեղիս տեղիս՝ ուր յաճախ բնակին դատարկապորտ քսու և անօգուտ վատշուէրք, լսել ՚ի նոցանէ զբամբասանս զումեքէ .

Ունկն և բերանն՝ գործիք բարեաց տուեան յարարչէն, սոքա առնեն զնոսա պաշտօնեայս չարեաց . զի՞նչ չար քան զայն, մին ոչ յագի ՚ի սուտ խօսելոյ և ՚ի բամբասելոյ, և միւսն չասէ հերիք յունկն դնելոյ .

Է   Մարդիկ երբեմն առ ՚ի չքմեղս առնել զանձինս յարատոյ բամբասողութե̅, ասեն՝ զստոյգն խօսեցայք . ոպ̃ թէ ոչ իցէ մեղք, յորժամ

ոք զոր ինչ լուիցէ, և այլոց զնոյն պատմեսցէ։

Ապաքէն է ինչ, զոր լսողն և ասացողն ոչ մեղանչեն. բայց է՝ զի ասողն և լսողն չարաչար մեղանչեն. և առ երկոցունց սոցա ընտրութեն ոչ են ամենեքին բաւական։ Ուրեմն լաւ ևս է ոչ ասել և ոչ լսել զայնս՝ զորոց ոչ կարես քաջ ճանաչել զօգուտն կամ զվնաս. զի մի՛ գուցէ զվնասակարն անվնաս համարեալ, խօսեսցես անզգուշ լեզուաւ ՚ի կործանումն լսողաց։

Ը. Եթէ ոչ կամիս ՚ի մեղս բամբասանաց գլորիլ, մի՛ դիւրահաւան լինիր այլոց խօսից, յորժամ զոք վատահամբաւեն. այլ կշռեա՛ մըտօք՝ թէ ո՞վ և ո՞րպիսի ոք է որ պատմէ քեզ զիրս այլոց. առաքինի՞ ոմն է, եթէ մոլի. խոհեմ է արդեօք, թէ պարզամիտ. ստասա՞ց է, թէ ճշմարտախօս. դատարկաշրջի՞կ է, թէ գործունեայ. թշնամի՞ է այնմ զորմէ խօսի, թէ բարեկամ. շահախնդի՞ր է, թէ արդարամիտ. և այսպէս բարւոք քննեալ՝ հնա՛ր է քեզ որոշել զճշմարիտն ՚ի ստոյն։

Քանզի մոլին բամբասէ, զի ինքն բարի ոմն երևեսցի. պարզամիտն բամբասէ, զի չէ՛ խելահաս. ստասացն բամբասէ, զի ա՛յն է իւր սեպհական պաշտօն. դատարկակեացն բամբասէ, զի ժամավաճառ լինիցի. թշնամին բամբասէ, զի վրէժս առնուցու. շահախնդիրն բամբասէ, զի շահեսցի ինչ։

Իսկ դու՝ եթէ չես ախտացեալ նոցին մոլութեամբ, ՚ի բա՛ց կաց յայնպիսեաց. զի մի՛

ապականեսցին ականջք քո ․ մի՛ գայթակղեսցի սիրտ քո ․ և մի՛ ընդ վայր դատելովդ՝ դատեցիս և դու յԱյ և 'ի մարդկանէ ։

Թ Բամբասօղն առաւել փոյթ է զազգս՝ զծանօթս՝ զմերձակայս՝ և զհաւասարս իւր բամբասել քան զօտարս ․ քանզի նոցին բանք և գործք յայտնագոյն են նմա ․ և կերպիւ իւիք առ նա վերաբերին ․ վասն որոյ որպէս վրէժխնդիր՝ և ո՛չ ուղղէ հանդիսանայ դատաստան առնել ։

Բայց ո՛չ գիտէ ողորմելին, թէ ո՛յլ է գործ վրէժխնդրութեան, ուղղութեան, և դատաստանի, և ո՛յլ բամբասանաց ։ Քանզի նոքա գործին կամ վ՟ն արդարութեան օրինաց, կամ վ՟ն սիրոյ ընկերին, և կամ վ՟ն փառաց Այ ․ իսկ սա, զի բամբասանքն գործի վասն անիրաւութեան, կամ ատելութեան, կամ նախատանաց ։ Նոքա գործին հեղինակութեամբ իմիք, բայց սա յանդգնութեամբ ․ զի յանդգնութիւն է դատել զոք առանց հեղինակութեան իրաւանց ։ Ազի բամբասօղք են յանդուգն և հակառակօղ ընդդէմ օրինաց արդարութեան ․ ատեցօղ ընկերութեան, և արհամարհօղ փառաց Այ ։

Ժ Իրաւացի բամբասանք այն է, յորժամ մարդ անձամբ անձին զանձն բամբասէ, զի զիւր պակասութիւն քննէ, և զանձն մեղաւոր դատի ․ եթէ զայս առնէ, ահա նա է ճշմարտախօս, արդար, և բարեմիտ ։ Իսկ եթէ զյանցանս իւր Թողեալ՝ զայլոց պակասութիւն

յաւաչածէ և դատի, ստախօսէ և անիրաւ. զի զվարս այլոց կամի ուղղել, և ոչ զիւրն:

Այն լեզուն՝ որ զայլս բամբասէ, զմեղս այլոց լիզանէ. իսկ որ զինքն բամբասէ, զիւր մեղաց խոցն սրբէ և բուժէ:

ԺԱ Բազում անգամ անկանի մարդ 'ի բամբասանս անգիտութեբ, 'ի պատմել նոր զգործս ուրուք: Այս թէպէտ միտք ասողին ոչ հայի ուղղակի 'ի դատել զայլս, այլ միայն ասել պարզաբար զոր ետես՝ կամ լուաւ. սակայն յայն երանակ շրջի բանն, մինչև լսօղն հետաքրքրութեբ ձգէ զխօսսն 'ի բամբասանս: Մ՜ զի պատահի բազմիցս, զի այլայլի բան գործողին, և բան գործոյն. ո՜ դիտումն գործողին յայլ վախճան հայի. բայց ելք գործոյն յայլ վախճան եղերի. վա՛յ կարի՝ զգուշութե պէտք են 'ի պատմել ինչ զումեքէ:

ԺԲ Բազումք են իբր խղճահար՝ 'ի պատմել իւրեանց զպակասութի ուրուք, 'ի ներքոյ պայմանի խոստովանութե արկանեն զայն. ո՜վ թէ խոստովանանք ասելով՝ չիցէ բամբասանք. սակայն մեծապէս խաբին: Քանզի ստոյգ բամբասօղ է, որ զպակասութի միայն ծանուցանէ միւսոյն. եթէ խոստովանիլ պարտ իցէ՝ ոչ անկանի ումեք զայլոց մեղս խոստովանիլ, այլ զիւր յանցանս. ուստի այսպիսեք խղճիւք սկսեալ՝ անխիղճ բամբասեն:

ԺԳ Ընդ այն խօժոռի ոք և բամբասէ և դատի, զորմէ լսէ զոյոյ ինչ կամ գործ 'ի վնաս

ինքեան ատացեալ, կամ արարեալ։ Բայց դու ո՛վ մարդ՝ մի՛ վաղվաղակի հաւատասցես և դատեսցես. այլ քննեա՛ և տես՝ թէ արդեօք բարեկամ է, թէ անծանօթ։

Եթէ բարեկամ, երթ առ նա սիրով. հա՛րց տեղեկացի՛ր՝ թէ ճշմարիտ է զոր լո՛ւար, եթէ սուտ. բայց մի՛ խռովեալ սրտի՛ւ և վրէժխնդրութեամբ հոգւով, այլ եղբայրական սիրով։

Եթէ ճշմարիտ է, խրատեա՛, կամ զերաւացի փաստս քո յայտնի՛ արա. զի նա կամ դու բժշկեսջի՛ք, և դադարեսջի՛ք 'ի գաղտնի վշտացուցանելոյ զիրեարս։ Իսկ եթէ ո՛չ է ճշմարիտ, ահա վէճն վերջացաւ։ Բայց եթէ անծանօթ է քեզ և օտար, մի՛ ընաւ ընդ այն վշտանար. և մի՛ զնա բամբասեր. զի չունիս իրաւունս զամենեսեան հնազանդեցուցանելոյ քեզ, և զամենեցուն լեզուն և զձեռս կապելոյ և արձակելոյ ըստ կամաց քոց։ Ո՜ր փոյթ է քեզ զիրաց օտարաց. օտարն՝ որքան նեղահար լինիցի, ո՛չ սաստիկ վիրաւորէ. զի նետ 'ի հեռուստ ձգեալ, տկար է 'ի հարկանել. ապա ո՞չ չէ՞ ճար քեզ զերծ մնալ 'ի դժգոհութենէ և 'ի բամբասանաց։

Ժդ. Կասկածոտք՝ որպիսի են այդ կանանց, դիւրամէտ են 'ի բամբասանս. որք և դժուարաւ դառնան յողջմտութիւն, և դադարին 'ի բամբասելոյ. վասն զի ո՛չ ումեք հաւատան, այլ 'ի չար կարծիս իւրեանց կան հաստատուն. գուցէ զոր լո՛ւան և կասկածին, իցէ անհիմն

և սուտ. բայց ո՛ կարէ զնս՟ ուղղել 'ի թիւր դատողութենէ մտաց։

Լաւ է ոչ ջանալ բանիւ 'ի հաւանութի՟ ածել զայնպիսիս, այլ արդեամբ գործոյ. վս՟ զի զոր կարծէին զումեքէ անտեղի ինչ, յոր-ժամ գործով զընդհակառակն նմին տեսանեն, յայնժամ ինքնին փոխեն զկարծիս իւրեանց և ուղղին։ Որպէս բարբարոսքն 'ի Մելիտինէ իբրև տեսին զիժն կախեալ զձեռանէ պօղոսի, ասացին՝ թէ այրս այս սպանօղ է. բայց մինչ տե-սին՝ թէ ոչ ինչ վնաս եղև նմա, շրջել զբանս ասեն, թէ ած՟ ոմն է սա։ || Գործ. իը. 3։

Իսկ թէ այլազգ ինչ վարեսցի ոք ընդ կաս-կածոտս, ոչ ինչ օգտի. այլ առաւել գրգռէ զնոսա անփոփոխ մնալ յայն, յոր միանգամ գահավէժ եղեն մտօք։

ԺԷ. Բամբասանքն քան զայլ մոլութիւս յա-ճախ գտանի 'ի մարդիկ. վս՟ զի յառաջ գայ 'ի պակասութէ՟ իրիք գործոյ կամ խօսից։ Իւ-րաքանչիւր չէք մարդ առանց պակասութե՟. է՝ որ 'ի գործս սխալի. և է՝ որ 'ի խօսս։ Արդ՝ եթէ զամ՟ սխալանս ուրուք 'ի մէջ ածեալ բամ-բասիցէ ոք, հարկ է զամ՟ մարդ բամբասել. և յայնժամ զբամբասօղն ա՛լ դատեսցէ. զի և ինքն է մարդ սխալական։

Ապաքէն ներեա մարդկան սխալանաց, զի և դու գտցես ներումն քոյդ յանցանաց։

ԺԸ. Ամաչեսցիս և անձնարին կրիցս դառ-նութե. հազարաւոր երիտասարդք և տղայք՝

կուսանք և մանկամարդք մեռան և մեռանին չարաթոյն լեզուաց քսու կանանց՝ մանաւանդ շատաշրջիկ բանսարկու պառաւանց, քան այլովք արկածիւք։

Քանզի գործի մահու կազմեալ զլեզու իւրեանց որպ̃ օձ թունաւոր, հարկանեն և սպանանեն զխուրաւորս՝ որք ոչ ինչ մեղան նոցա։ Եւ ունելով 'ի սրտի իւրեանց զդեն խռովութե, մանաւանդ թէ նոքին իսկ լենելով դև մարմնացեալ՝ ստայօդ բամբասանօք զհիմն սիրոյ որ եդեալ էր 'ի մէջ երկուց կողմանց՝ փեսայացուին և հարսնացուին՝ իբր փայտատօք և մրճօք քակեն և կործանեն. և զանհաշտելի թշնամութի 'ի մէջ արկանեն, մինչև ապախտ առնել նց զնշանախօսութին, և բաժանել. զի սերմն բամբասանաց բուսոյց 'ի մէջ խօսեցելոց և ազգականաց նց և մերձաւորաց՝ և չարաչար դառն ատելութի։

Եւ ո՞ կարիցէ թուել զչարիսն՝ որ յետ այնորիկ 'ի վեր երեւին. է՝ զի տղայն տարադնաց եղեալ օտարանայ 'ի հայրենեաց. է՝ որ 'ի կարեւէր տրտմութէն յանբուժելի ցաւս վարակի. և է՝ որ յուսահատութե մոլեգնեալ յանձնայել ախտս մոլութե անկանի։ Այս և զինչ վտանգ ոչ կրէ արդեօք աղջիկն, որոյ անունն բծաւորեցաւ յանիրաւի. ո՞վ տեսանիցէ զնա մաքուր աչօք, որ համբաւեցաւ նախատանօք. թէպէտ զուր և սուտ իցէ, այլ ո՞ր շահ յայնմանէ՝ զի ա̃մ ոք խորշի 'ի նմանէ։

Աւա՜ղ թշուառութես. աղջիկն առ ամօթոյն՝ մահ անձին խնդրէ. զարտասուս ընդ ծնօտս իւր իջուցանէ. ոչ թողու ՚ի տան խորշ և անկիւն, ուր թաղծեալ սրտիւ ոչ հառաչեսցէ. անկարանայ զստութի՟ չարախօսացն ցուցանել, և զանմեղութի՟ իւր յայտնել: Եւ զի սկար գոլով կանացի բնութի՟՝ հարկանի ՚ի սիրտն ցաւօք և հեծութե՟, մինչև պաշարիլ հիւծական ախտիւք, և տարաժամ մեռանիլ, և կամ յուսաբեկ եղեալ յանձնաբերելեան ձեռնարկել:

Եւ զինչ ապա ծնօղք նր՟. մահն բնական՝ ոչ այնքան վշտացուցանէ զնս՟, որքան մահն բարոյական: Իսկ պատճառ այսքանեաց դառնաղէտ և չարաչար վշտաց ոչ այլ ոք, քան բամբասող լեզուք: Ապա կամ դադարել և զղջալ պա՛րտ է նոցա ՚ի մինհաւրիթ բամբասանաց՝ կամ չորանալ լեզուի նոցա, զի մի՛ զանմեղս ՚ի մահ մատնեսցեն:

Ժէ Բամբասողք՝ ոչ նուաղ մեղանչեն քան զմատնիչս. զի մի՛ ասասցիս թէ առաւել ևս. զի կամ առ նախանձու արտատաւորել ցանկան զանուն ուրուք, և կամ առ շահու անձին խօսին զուր և սուտ: Եւ այս վերջին կարի յաճախ գտանի ՚ի նս՟. որք չարախօսեն զանուն աղջկան կամ տղային, զի այլոց նշանեսցին. ոչ՟ զի առնուցուն ՚ի նոցանէ կաշառ, զարծաթ՝ կամ զայլ ինչ ընդ անուանբ ընծայից. և այսպիսիքս դասակից են յուդայ մատնչի տն՟ մերոյ, որ

վասն արծաթոյ մատնեաց զտէրն ։

Այն և ոմանք 'ի չարախօսից՝ որք ունին չափահաս ուստերս, կամ դստերս, և զայս առնեն. ոչ զի զայլոց նշանն քակեալ՝ առ որդիս իւրեանց հաստատեսցեն ։ Այլ որպէս արարին ինքեանք այլոց, նոյնպէս արասցեն նոցա և այլք. ըստ որում անշուշտ վճիռ է, թէ որով չափով չափէ ոք առ այլս, նովիմբ չափեսցի և առ ինքն ։

Ապաքէն ո՛վ ոք զայսպիսի անիրաւութիւն գործէ, մատնէ զանձն և զաւակն իւր վնասու՝ և դատապարտութեան հոգւոյ և մարմնոյ ։

ԺԷ Անունս բամբասանք՝ մերթ է ստուգաբանիլ բամ ասացուած. այ̄՝ սնոտի և ունայն զրոյց. զի բառս բամ՝ զուր և ունայն լսի. և զինչ սնոտի ասացուած քան զխօսս բամբասանաց, որով զրպարտէ ոք զայլս ։ Իսկ ըստ յարմարադրութեան՝ ստուգաբանի բամբ ասացուած. այ̄՝ դղրդաձայն խօսք. զի բառս բամբ՝ նշանակէ բամբիւն և դղրդիւն. քանզի և ամ̄ բամբասող դղրդէ և խռովեցուցանէ զայլս, և արկանէ աղմուկ ։ Կարէ ևս ստուգաբանիլ բան բասրանք. այ̄՝ խօսք մեղադրութեան և նախատանաց. զի բամբասող լեզուն՝ զայլս յանցաւոր դատէ և մեղադրէ ։

Բայց քանզի ստապատիր բասրանօք ընդդէմ ճշմարտութեան զինի, անկանի 'ի մեղս անթողլիս. զի զլոյսն խաւար կոչէ վ̄ն նախանձու և ատելութեան ։ Ապա լսեսցեն

չարախօսք 'ի բամբասանաց . և ուսցին խօսիլ զբարիս . զի ըստ աններելի մեղացն՝ հանդերձեալ են կրել զաններելի տանջանս :

ԺԹ Առաւել քաղցր թուի ոմանց բամբասել զեկեղեցականս , եթէ փոքր ինչ արատ մարդկօրէն սխալանաց նշմարեսցեն 'ի նոսա . բայց ոչ գիտեն՝ թէ դիւական է այս դրդումն :

Զի որ միանգամ զկարգաւորս իւր բամբասէ , յայտ է թէ զնմանէ գայթակղի . որով անարգ և փոքր համարի զնա յաչս իւր , և ըզբան նորա արհամարհ և անսոտի . ապա յետ այնորիկ ու՟մ հնազանդիցի . ու՟մ անսայցէ . յորժամ խրատիցի . որու՟մ խոստովան լինիցի :

Այլ զինչ այնուհետև . օտարացեալ ինքն 'ի կարգաւորաց , հեռի գտանի և 'ի սրբարար խորհրդոց եկեղեցւոյ : Այլ հետ զհետէ այնքան զօրանայ այս ախտ՝ մինչև տալ նմա զօրէնս արհամարհել , զոր քարոզեն կարգաւորք . և ահա այս է , զոր դիտէր դևն չար՝ ձգել զբամբասօղսն 'ի վերջն կորստեան :

Ի Ամենայն ընդհանուր բաղկանայ 'ի մասնաւորաց . զի իւրաքանչիւր մասնաւորք համանմանք միմեանց՝ գործեն զմի ընդհանուր 'ի տեսակս իւրեանց :

Արդ՝ ազգն է ընդհանուր , որոյ մասնաւորքն են անհատք . ուստի եթէ այսօր տեսեալ զանհատ ոք 'ի սխալանս ինչ՝ բամբասես , գուցէ 'ի վաղիւն և զմիւսն՝ և յայլում աւուր զայլսն : Այլ օրքան զօր յաճախես 'ի բամբասանս,

մինչև դառնալ քեզ այն 'ի սովորոյթ, և հետզհետէ յերկրորդ բնութի. և այնուհետև լինել քեզ դատիչ, մանաւանդ թէ դահիճ ամ̃ ումեք. քանզի ո՛չ ոք է անխալ 'ի մարդկանէ:

Այդ զամ̃ մասնաւորսն դատելով բամբասես զընդհանուր ազգն քո. բայց դու ես 'ի ներքոյ նոյն ընդհանրութե̃ ազգին պարունակեալ գոլով, դու զքեզ բամբասես. ուրեմն սխալեալ դատիս և զքեզ: Այսպէսն զգուշացի՛ր 'ի բամբասելոյ զեղբարս քո. զի մի՛ արժանի բամբասանաց լինիցիս և դու:

Իա̃ 'Ի միոյ բամբասանաց երրեակ չարիք սովոր են ծնանել. մի՝ զի բամբասօղն մեղանչէ մահու չափ. երկրորդ՝ զի լսօղն լինի մեղակից. երրորդ՝ զի բամբասեալն մեղանչէ նովին մեղօք, կամ յաւելու առնել զայլ ևս:

Ո̃ զի բամբասեալն լուեալ զի բամբասի յայլմէ, կամ զբամբասօղն իւր սկսանի բամբասել, կամ 'ի ցաւոց սրտին կատաղեալ որպ̃ արջ ներտահար՝ հատուցանէ նմա զմեծամեծ չարիս, զի վրէժս առնուցու. և այսպէս հրրդեհ չարին դատելոյ զեղբարս, բորբոքի օր քան զօր. և այրեալ տոչորէ զամենեսեան:

Եւ արդարև չէ՛ք մեծագոյն 'ի չարիս՝ քան զբամբասանքն. և չէ՛ք այժմ յաճախեալ քան զնա. և թէպէտ ամենեքին դիտեն՝ թէ ծանր մեղք են բամբասել զայլս. բայց տակաւին 'ի նոյն կանխեն հանապազ:

Իբ̃ 'Ի թունալի նետից բամբասանաց՝ ոչ

այլ ոք 'ի մարդկանէ , բայց միայն մանկունք գտանին անխոյ . և երջանիկ են յայսմ մասին . իսկ ամ(ենայն) չափահասք արք և կանայք 'ի հոգի վիրաւորեալ երեքթևեան սլաքօք նորա , իբրև գեշ Թաւալին յարիւն իւրեանց . և ոչ այսչափ միայն , այլև յարիւն մեռելոց շաղախին :

Քանզի է մարդ՝ որ կենդանի է մարմնով , բայց մեռեալ հոգւով . և բամբասօղ զայն , որ մեռեալ է մարմնով , բայց կենդանի հոգւով : Ո՛վ աղետիցս՝ զի եթէ զկենդանին միայն բամբասէր , ո՛ գիտէ՝ գուցէ յաւուր միում զղջացեալ 'ի միտս , երթայր և ներումն խնդրէր 'ի նմանէ . իսկ զմեռեալն՝ զոր զրպարտութե վատահամբաւեաց , ո՞ւր կարասցէ գտանել : Գտանէ այն 'ի գերեզմանի , յորժամ ինքն ևս Թաղի առ նմա . այլ սակայն մնայ յանցանքն 'ի նմա , զի 'ի հանդերձեալ աշխարհն չէք տօնավաճառ առևտրութե մեղաց և Թողութե . զի անդ ո՛չ ոք կարէ մեղանչել ումեք . և ո՛չ կարէ ոք Թողուլ զյանցանս ուրուք :

Իէ Թերևս յօժարիցի ոք ասել , Թէ զիմարդ 'ի մեղս համարիցի բամբասանքն՝ մինչ զայն պատմեմ զոր այլք ասացին կամ արարին . մի՛ Թէ արդեւք ի՞նչ իցեն զճշմարիտն ասելոյ . ո՞չ ապաքէն 'ի բազում վէպս դարուց անցելոց արձանագրեալ գտանին գործք մարդկան . է՛ որ բարի . և է՛ որ յոռի :

Լուր ո՛վ դու որ զայս ասես՝ եթէ բարի է գործն զոր պատմես , այն ո՛չ է բամբասանք՝

այլ գովասանք. զայս արժան է հռչակել և ոչ թագուցանել. որպէս զի գործողն փառաւորեսցի, և լսողքն շահեսցին։ Իսկ եթէ չար՝ արժան է և զայս ծածկել. զի մի՛ գործողն վատահամբաւեսցի, և լսողքն գայթակղեսցին. զի քոյդ վատաբանելով՝ չարն ոչ լինի բարի, այլ առաւել ևս չար. և դու լինիս պատճառ չարեաց։

Իսկ գործք որ պատմին 'ի գիրս, այն է կամ 'ի յորդոր բարեաց, եթէ գործն է բարի. կամ 'ի զգուշութիւն լսողաց, եթէ գործն է չար։ Արդ՝ դու ևս եթէ առ 'ի զգուշութիւն լսողաց պատմես՝ զի մի՛ հետևեսցին այլք, ոչ ասի այն բամբասանք, այլ խրատ զգուշութեան՝ առ 'ի խորշել 'ի չարէ. և յայնժամ գործն միայն լինի անգոսնելի, և գործողն ցաւակցութեան արժանի, զի մարդկօրէն գթեաց։

Իէ Ո՛չ կարէ զանձն արդարացուցանել, որ առանց քաջ տեղեկութեան դատի զոք և բամբասէ։ Ապա ոչ կարես մնալ անպարտ բամբասօղ դու, որ ոչ գիտելով զմիտս գործողին, և ոչ դիտելով 'ի վախճան գործոյն՝ սկսանիս անդուռն բերանով դատել զգործն և զգործողն։ Քանզի հնար է զոր այժմ յանցաւոր դատիս անգիտութեամբ, յետոյ զչափ առեալ անմեղութեան նորա, գովեսցես զնա գիտութեամբ. և զոր յառաջագոյն կարծէիր վնասապարտ, յետոյ երևեսցի քեզ բարեացապարտ։

Բայց դու յայնժամ զիա՞րդ համարձակեսցիս

բանալ զբերան քո 'ի գովել, զոր փոքր մի յառաջ պախարակեցեր. հապա՛ կամ պարտիս փոխել զբերանդ, կամ զմիտդ. չէ՛ հնար փոխել զբերանդ, զի մի՛ լինիցիս ծաղածու և այպանելի տեսողաց. ապա ստիպիս փոխել ըզմիտդ. զի սա է անմարմին, 'ի փոփոխիլ իւրում 'ի հակառակ դատմունս, ոչ դիւրէ զդէմսդ, և ոչ առնէ զքեզ այլանդակ. սակայն դու յայն դիպուա՛ծ երևիս անխոհեմ. զի ոչ կարացեր յառաջագոյն հասու լինել էութեան գործոյն:

իե՟ Ա՛ որ բարեմտութ՟ իմն սկիզբն առնէ գործոյ իւիք հասարակութե՟ յօգուտ ազգի կամ քաղաքի. զա՟ծ օգնական կարդայ, բազում խորհրդածութ՟ քննէ զպարագայս, և ընտրէ զպատշաճաւոր միջոցս հասանել յաջողութ՟ 'ի վախճան դիտաւոր գործոյն. բայց քանզի մարդոյ է միայն իրս ինչ դնել 'ի մտի, բայց օգնութի՟ն պա՛րտ է լինել 'ի տնէ այ՟:

Իսկ եթէ ա՟ծ վ՟ս իրիք ինչ գաղտնի պատճառաց ոչ օգնեսցէ, և գործն ոչ յաջողեսցի 'ի բարի ելս, տեսցե՛ս անդէն ծափաձայն ցնծութի՟ն բամբասողաց: Ապաքէն զի՛նչ մեղաւ նա՛ որ կամեցաւ բարիս առնել հայրենւոյն, մինչ ա՟ծ ոչ կամեցաւ զյաջողութիւն այնր գործոյ:

Ահա՛ այնպիսի ոմանք են բամբասօղք, որք եթէ հնար ինչ իցէ՛ զա՟ծ ևս բամբասեն. բայց առ նա ոչ կարելով հասանել, զգործին

կամացն ույ որ է մարդ, չարաչար դատին և վատահամբաւեն ։

ԻԳ Կանայք՝ վս զի բնաւորեալ են լինել շատախօս և ունայնաբան, սովորական իմն է բամբասանք առ նս ։ յորոց ոմանք եթէ լսեա-ցեն, երբեմն իբրև զհամր ։ Այլ որովհետև զուրկ են 'ի գիտութենէ և յիմաստից, ոչ գի-տեն խօսիլ զկարևոր ինչ և զօգտակար ։ վս սկսանին զիրեարս բամբասել ։

Աւաղ ում ոք և իցէ, եթէ դրացի, եթէ խնամի, և եթէ ընտանի, ոչ զերծանի 'ի լեզուէ նց ։ զի առաւել քան զամ ասղնեգործ ար-հեստակիտուած քաջ գիտեն ծաղկեցուցա-նել զբամբասանս ։ զմին 'ի հազարս բազմա-պատկեն ։ զփոքրն մեծացուցանեն ։ զլուն փիղ երևեցուցանեն ։

Այրախօս լեզու նց զգիշերն ողջոյն, և զտիւն բուն՝ իբրև անիւ հոլովի անդադար 'ի բամբասանս, և ոչ առնէ բաւ ։ վսյ այնմ, որ անկաւ 'ի լեզուս կանանց ։

ԻԷ Մայր հետաքրքիր փութով սահի 'ի բանս բամբասանաց ։ զի հանապազ ցանկայ իմանալ զնորագոյնս, որք խօսին կամ գործին յայլոց ։ Իսկ չիք կէտ և սահման այսմ ամի ։ զի ամ մարդիկ որք են յաշխարհի՝ միշտ յառաջ գան 'ի նոցանէ նորանոր բանք և գործք ։

Այլ զի չէ բաւական հետաքրքիրն իրազգած լինել ամի այնոցիկ, ամին իրի տանջի միշտ և տառապի ։ Այլ 'ի յադուրդ անյագ բաղձանաց

խուրոց՝ ձկտի ամ ժամ և ամ ուրեք լսել և իմա-
նալ զիրս այլոց. և զոր միանգամ կարէ իմա-
նալ, անյապաղ այլոց հաղորդել ջանայ. քանզի
առ այս հայի վախճան հետաքրքրութեն, զի
զոր ինչ լսէ, պատմեսցէ այլոց:

Նա զի տագնապի յաճախ 'ի միտս իւր, թէ
որպէս մարթասցի պքանչելի իմն զարդարել
զբանսն. զի ախորժական և ըղձալի արասցէ 'ի
լսելիս ունկնդրաց. իբր զի այնու հանճարեղ
և քաջ ճարտասան երևեսցի. և այս ոչ յաջողի
այլով իւիք՝ քան սուտութբ, բազմաբանութբ,
ընդ վայր շաղակրատութբ, դերասանութբ:

Նու աչ՛ս այս իսկ են յորոց վերընձիւղին
բազմապատիկ զրաբանութիք, ժամավաճա-
ռութիք, և բամբասանք. և սոցա ամենեցուն
դայեակ և մայր լինի հետաքրքրութին:

ԻԲ. Ո ընկեալքն 'ի մխիթարութէ սբ. գրոց
և գիտութեց յաճախ անկանին 'ի բամբասանս.
քանզի ոչ գիտելով ինչ յօգտակարաց և 'ի հո-
գևոր իմաստից խօսիլ, անխտիր բամբասեն
զամ ոք, զի անցուսցեն զժամանակն:

Իսկ թէ գոյի 'ի նս իմաստուն և գրագէտ
ոք, և ասիցէ ինչ 'ի գրոց, վաղվաղակի ձանձ-
րանան. և դատին զնա իբրև զշաղակրատ և
թեթևամիտ, և ունչս առնեն. և յայլ խօսս
շրջեալ զբանն՝ տան լսել նմա: Նու են ոմանք,
զի յանդգնին ասել, թէ բաւական է՝ զոր ինչ
վարդապետեցեր. կամ փոքր մի՝ զի և այլք խօ-
սեսցին: Նու չեն ինչ զարմանք՝ զի ոչք սովոր

են հեշտանալ 'ի գարշ հոտոյ աղբևացս, տաղտկին և խորշին յանուշահոտ բուրմանէ ծաղկանց :

ԻԹ Լեզու բամբասողին պապանձեալ կարկի, մինչ համբերէ բամբասեալն. զի թէ իրաւամբ է ասացեալն, ապաքէն հարկ է համբերել առանց վշտանալոյ. զի զոր ինչ արար՝ զայն լուէ. իսկ եթէ յանիրաւի, տակաւին ոչ է պարտ զայրանալ և ընդդիմաբանել. այլ մանաւանդ ծիծաղել՝ կամ քաղցր և ողոք բանիւք զանմեղութիւն իւր ցուցանել: Լաւագոյն ևս է աղօթս առնել առ Աստուած վասն նորա. զի յայնժամ տեսեալ նորա զբարեմտութիւն բամբասելոյն՝ կամ շնորհօք իւրովք զգաստացուցանէ զբամբասողն, կամ արդարութեամբ իւրով պատժէ, եթէ յամառեալ մնայ 'ի նոյն չարիս :

Լ Չիք քան զայս իրաւացի բամբասանք, եթէ ոք ընդ միտս բամբասեսցէ զանձն իւր, որով և զերծանի 'ի չարաչար բամբասանաց ընկերին: Որ կարէ տեսանել զպակասութիւն իւր, ոչ այնքան կարէ տեսանել զպակասութիւնս այլոց :

ԼԱ Հարուած գաւազանի ոչ այնքան ցաւեցուցանէ զմարդ, որքան հարուած լեզուի. զի թէպէտ լեզուն չունի զոսկր, բայց խորտակէ զոսկր :

Որպէս հուր ծախէ զփայտ, նոյնպէս լեզու բամբասողին զոսկերս անմեղին: Յաւէտ զգուշանալի է 'ի խածանող շրթանց՝ քան 'ի ժանեաց կատաղի շանց :

Ժե Լեզուն գուցէ յայն սակս համարձակի խօսիլ զչարիս, զի չունի աչս՝ որով ամաչեսցէ. և ոչ ունկն՝ որով լուիցէ զբանս իւր. ոչ տանջի, զի երկիցէ. և ոչ արտաքոյ 'ի բերանոյն ելանէ, զի տարագրեսցի. որ եթէ չէր այսպէս, գուցէ ոչ ժպրհէր յաճախել զվնաս:

Ժզ Եթէ զա̃մ զօր խօսի լեզուն՝ կատարեսցեն ձեռք, փութով խորտակիցին մատունք նորա. զի որովհետև լեզուն ոչ ունի ոսկր, բազում ինչ կարէ խօսել, և մնալ անվնաս. բայց ձեռք՝ զի ոսկերօք է կազմեալ, եթէ արասցէ զա̃մ, խորտակի չարաչար:

Ժէ Մարդիկ իրաւամբք յանդիմանեն և պատժեն զն̃ս, որ միայն բանիւ խօսին զանտեղի՝ զԹիւր և զվնասակար զրոյցս, Թէպէտև մտօք չիցեն հաճ ընդ բանսն. քանզի մարդ զարտաքինսն միայն կարէ գիտել, և ըստ այնմ դատել. և ուղիղ է դատաստան նր̃. իսկ ըստ ներքին խորհրդոց և կամաց դատել՝ այ̃ է յատուկ, որ քննօղ է գաղտնեաց: Աստի պա̃րտ է ա̃մ ումեք զգուշ ունել զլեզու իւր 'ի խօսելոյ զանարժանս. զի մի՛ գտցի պարտաւոր դատաստանի, ըստ տ̃ն վճռոյ. * 'Ի բանից քոց՝ արդարասցիս, և 'ի բանից քոց՝ պարտաւորեսցիս: || Մատ. ԺԲ. 37:

* Ծածկեն զթշնամութիւն շրթունք արդարք · եւ որ ՚ի վեր հանեն զբամբասանս՝ անզգամք են ։
Առակ. Ժ. 18 ։

* Որ պահէ զբերան իւր եւ զլեզու՝ պահէ ՚ի նեղութենէ զանձն իւր ։ Առակ. ԻԱ. 23 ։

* Այսուհետեւ զգո՛յշ լերուք յանօգուտ քրթմնջմանէ. եւ ՚ի բամբասանաց խնայեցէ՛ք զլեզու. զի շշուկն գաղտնի՝ դատարկ ո՛չ անցցէ, եւ բերան ստախօս սպանանէ զանձն ։ Իմաս. Ա. 11 ։

* Բազումք են որ անկեալ են ՚ի սուր սուսերի, այլ ո՛չ այնպէս որպէս անկեալքն ՚ի ձեռն լեզուի ։
Սիրաք. ԻԸ. 22 ։

* Լեզու՝ փոքր ինչ անդամ է՝ եւ մեծամեծս բարբառի. ահա՛ եւ սակաւ ինչ հուր զորպիսի՛ անտառս հրդեհէ ։
Յակ. Գ. 5 ։

* Մի՛ բամբասէք զմիմեանս եղբարք · որ բամբասէ զեղբայր իւր, կամ դատի զեղբայր իւր, զօրէնսն դատի ։ Յակ. Դ. 11 ։

* Թէ զմիմեանս խածատէք՝ եւ ուտէք · զգո՛յշ լերուք՝ գուցէ ՚ի միմեանց սատակիցէք ։
Գաղա. Ե. 13 ։

## ԳԼ․ ԺԳ

ա Բազմապատիկ չարիք՝ որով վնասին մարդիկ, սովորաբար յառաջ գան 'ի թիւր կարծեաց. իսկ արդ՝ կարծիքն է երկբայական դատումն մտաց զանորոշ և զներընդունական իրաց և բանից. որք ոչ են աներկբայ ճշմարիտ, և ոչ գլխովին սուտ. ըստ որում զոր ինչ ըմբռնէ միտք՝ դատէ զայն ըստ իւր կարողութե։ Եթէ միտքն իցէ պայծառ լուսով գիտութե՟ և խոհեմութե՟, յազատ 'ի պաշարմանէ, և զերծ յամբոխմանէ կրից, ոչ սխալի 'ի դատելն զիր ինչ. զի ոչ զհետ երթայ երկբայական կարծեաց՝ որ բազում անգամ է սուտ. այլ հետևի ստոյգ և բացայայտ ճանաչման իւրում, և ըստ պահանջելոյ պարագայիցն տեղւոյն՝ ժամանակին՝ և անձին՝ ուղղութե՟ դատէ։

Իսկ եթէ իցէ միտքն զուրկ 'ի լուսոյ գիտութե՟ և խոհեմութե՟, կամ պաշարեալ 'ի նախադատութե՟, կամ վարակեալ 'ի մոլեկան ինչ կրից, յայնժամ կարծիքն ըմբռնի ոպ՟ աներկբայ ճշմարտութիւն. առ այն հակի և միտքն 'ի դատելն, որում զհետ երթայ և կամքն 'ի սիրել կամ յատել։

բ Աննենգք և պարզամիտք՝ առաւել 'ի բարի կողմն շրջեն զկարծիս իւրեանց զումեքէ 'ի դատելն. իսկ նենգաւորք և խորամանկք՝ 'ի չար կողմն հակեն. զի այս օրէն է մարդկան՝ ճանաչել և կարծել զայլս իբրև զանձինս և

ըստ այնմ դատել զբանս և զգործս նց:

Այն պարզամիտք փութով խաբին, զի ամենեցուն հաւատան, կարծելով թէ ամենեքին են պարզամիտք. իսկ խորամանկք հաւատան և ոչ ումեք. և երկոքին ծայրքն ևս են մոլեկան: Զի որպ ոչ է արժան ամենեցուն հաւատալ, նոյնպս ոչ է պարտ զամենեան նենգաւոր կարծել. այլ պարտ է ուղղութբ դատել զիրսն՝ առանց խոտորելոյ յաջ կամ յահեակ:

Է. Ամենք առ տգիտութէ սխալին 'ի դատելն, որք թերևս ներողութե են արժանի. բայց բազումք են այնք՝ որք առ ատելութե չարաչար դատին զայլս: Ոչ հային 'ի միտս գործողին, և ոչ յէութի գործոյն. այլ մոլեգնեալ 'ի կրից՝ ծնանին զչար կարծիս, յորոց յառաջ գան անխիղճ դատողութիք: Որք և զչեղեալն իբրև եղեալ տեսանեն. զսակաւն առաւելուն. զփոքրն մեծացուցանեն. զխաղաղութին 'ի խռովութի փոխարկեն. զսէրն յատելութիւն դարձուցանեն:

Քանզի զոմ բարիս զորս այլք առնեն, մարդիկ չար կարծեօք կարեն թիւրել. որով ոչ միայն զայլս խռովեն, այլև ինքեանք հանապազ խռովեալ տղմկին: Որք եթէ ուղղէին զկարծիս իւրեանց 'ի բարին, կարէին կշռել զէութի գործոյն, կամ զմիտս գործողին. և ոչ յանդգնէին տարապարտուց մոլորաբար դատել. և ոչ լինէր այնքան գժտութի և երկպառակութի 'ի մէջ սիրելեաց կամ ազգատոհմի,

և կամ ընտանեաց ։

Ք ր ուանիկ տեսանեմք հանապազօր, եթէ այր զկնոջէ խռովէ, կին զառնէ, եղբայր զեղբօրէ, բարեկամ զբարեկամէ, ունայն և մոլար կարծեօք բողոք բառնան 'ի դատաստանս․ յորոց ոմանք անցեալ ըստ կոպար մարդկուե̃ անագորուն մոգք զմիմեանս մատնեն 'ի զանազան վնաս հոգւոյ և մարմնոյ ։

դ̃ Չարաչար դատողութ̃ին ծնեալ 'ի մոլար կարծեաց, եղև պատճառ և լինելի միշտ քաղաքաց կործանման, անպարտ արեանց հեղման, անմեղ տարագրութ̃ե, անհաշտ խռովութ̃ե, և այլոց բազմաց վնասուց և եղկութեանց ։ Ք հուսկն ասացից՝ չէ՞ք մեծամեծ չարիք յաշխարհի, որ ոչ յառաջեկեսցեն յերկբայական և 'ի չար կարծեաց ։

Ո՜հ չար և մոլար կարծիք՝ խոշտանգիչ մարդկային կենաց, և թշնամի խաղաղութ̃ե․ որ գաղեալ զօղիս յա̃մ մոլութ̃իս, և չարաչար տանջես զազգ մարդկան ։

ե̃ Հպարտն՝ լռեալ կամ տեսեալ զգործս այլոց, ո՛չ խոնարհի քննել զստոյգն․ այլ այնպէս համարի, ոպ̃ և կամի․ և այսպէս անկանի 'ի չար կարծիս և 'ի դատողութ̃իս, և արհամարհէ զն̃ս ։

զ̃ Նախանձոտն՝ տեսեալ զբարիս այլոց, կրկուք մախանաց բորբոքեալ վառի ոպ̃ զինոյ․ և չարաչար կարծեօք դատաստան առնէ, թէ անարժանեն նոքա այնոցիկ բարե̃ց յորս վայելեն ։

է̃ Բարկացողն՝ կուրացեալ 'ի կրից սրտ-

մտութն, ո՛չ կարէ շրջահայեաց լինել, և տեղեկանալ այնոցիկ, զոր լսէ կամ տեսանէ. այլ վաղվաղուկի 'ի կարծիս լինի, թէ այն ամ̃ է հակառակ և վնասակար ինքեան։

Է Ծոյլն՝ ո՛չ կամելով աշխատիլ, կարծէ թէ աշխատութիւն պատճառէ զտկարութի̃ անձին, գուցէ և զմահ վաղաժամ։

Ը Ագահն՝ զոր ինչ ունի, կարծէ թէ ո՛չ է բաւական 'ի պէտս իւր. և ջանայ և ևս ժողովել, ոպ̃ թէ ունիցի կեալ 'ի մշտնջենաւորս։

Թ Որկրամոլն՝ կարծէ թէ մարդիկ կեան զի կերիցեն, և ոչ թէ ուտեն զի կեցցեն. նեղի 'ի ժուժկալել, զի համարի թէ կեանք իւր կապեալ իցէ ընդ զեղխութ̃ի որկորոյ. և թէ՝ վաղվաղէ օրհաս մահու իւրոյ, եթէ սակաւ կամ պարզ կերակուր ուտիցէ։

Ժ Ողջախոհն՝ 'ի գարշ հեշտութ̃իս մարմնոյ կարծէ գտանել զհանգիստ. և ո՛չ գիտէ թշուառն՝ թէ որքան յաճախէ 'ի ցանկութիս մարմնոյ, այնքան առաւել տառապի 'ի նմանէ։

ԺԱ Կա՛ն և ոմանք այնքան տարտամ և մտախաբ, որք ժամէ 'ի ժամ փոփոխեն զկարծիս իւրեանց, որով յաւէտ վարանեալ տանջին 'ի միտս։ Արդ՝ եթէ բազում տգէտք՝ և կրիւք պաշարեալք ժողովեալ 'ի միասին, զկարծիս իւրեանց յառաջ բերցեն, որքան թուով մարդիկ՝ այնքան տարաձայն կարծիք երևին 'ի մէջ. ոմն խուժ ասէ, և ոմն դուժ. և ո՛չ մին հաւանի կարծեաց միւսոյն։

Իսկ յայսոցիկ խառնախորթ կարծեաց՝ որպիսի ցուցանքաւոր չարիք ոչ գոյցեն յառաջ ի միտս նց, կամ հասարակութե․ փորձն ոչ է պակաս յամ ուրեք․ զորս կարեն տեսանել ամենեքին՝ որք ունին միտս։

ժէ Կասկածոտն տանջի առանց տանջողի, և փախչի առանց հալածչի․ զի զոր չէ խօսեալ ոք, կարծէ ասացեալ․ և զոր չէ գործեալ, վարկանի արարեալ․ վա̃յ միշտ հոգայ և տառապի, և ոչ ունի զհանգիստ․ զա̃մ ոք համարի ինքեան ատեցող, զամենեսին թշնամի, զամենեսին բամբասող․ որ եթէ զտարապարտ կասկած իւր հանէր՝ի սրտէ, զբազումս տեսանէր՝ թէ են սիրելի, բարեկամ, և գովիչ ինքեան։

ժը Յանդգնական չարութի է զեղբայրն դատել յայն ինչ յանցանս, յորս և ինքն դատողն ոչ է զերծ․ և զինչ արդեօք շահեսցի, բայց եթէ բեռնաւորել զինքն կրկնապատիկ և եռապատիկ յանցանօք։ Որ զի առանց իրաւանց դատեաց զեղբայր իւր, մինչ ինքն ոչ ունէր իրաւաբանութի դատելոյ։ Երկրորդ՝ զի արդարացոյց զանձն՝ ատելով ընդդէմ խըղճին իւրոյ, որ է հակառակիլ ընդդէմ ճըշմարտութե․ զի անստելի ճշմարտութի համարելի է դատաստան մտացն խղճի․ և որ ընդդէմ իւրոյ խղճին խօսի և գործէ, ընդդէմ ճշմարտութե զինի և մաքառի։ Երրորդ՝ ըղլօղն խաբէ, և լինի խարդախ՝ կեղծաւոր և գայթակղեցուցիչ․ զի այն որ լսէ՝ գուցէ

տեղեակ գոլով գործոց երկոցունց՝ բամբա-սողին և բամբասելոյն, գայթագղի 'ի միտս իւր և դատի, թէ զիա՞րդ սա ինքն նոյն գո-լով, զայլս բամբասէ ։

Ապաքէն եթէ կամէր այնպիսին անպարտ երևիլ, պարտ և արժան էր նմա, նախ՝ զյան ցուցեալն անմեղադիր առնել թէ յակամայս գլորեցաւ. և ցաւակցութի ցուցանել թէ մարդ է սխալական ։ Երկրորդ՝ խոստովանել թէև ինքն երբեմն զայնպիսի ինչ յանցեալ իցէ՝ և զղջացեալ. որով իսկ և իսկ շահէր ըզ-լսօղն, և 'ի բարի կարծիս զինքենէ հաստա-տէր. և այսու արդարև արժանի գովութե լինէր և վարձուց բարեաց ։

ԺԷ Սէր և ատելութիւն կուրացուցանեն զաչս հոգւոյն. և ոչ թողուն տեսանել նմա զարդարն և զիրաւացին, և ուղղութե դա-տաստան առնել ։ Զի սիրողն՝ ոչ տեսանէ զարատ կամ զպակասութի ինչ յանձն սիրե-ցեալ. այլ զամ որ է 'ի նմա՝ համարի լինել բարի և վայելուչ ։ Եւ ատեցողն՝ ոչ նշմարէ բարի ինչ յանձն ատելի. այլ զամ որ 'ի նմա՝ դատի լինել չար և թիւր ։

ԺԸ Ատելութին թիւրէ զուղղութի դատ-ման մարդոյ. զի գլխաւոր ոք՝ զոր ատեն մար-դիկ մոլար կարծեօք, եթէ խոհեմութե և ջանասիրութե իւրով արասցէ զբարի ինչ հա-սարակութե, ասեն՝ թէ ած արար մեզ զայն բարի, և ոչ եթէ նա ։

Իսկ եթէ յեղակարծ դիպուածով զհետ եկեսցէ բարւոյն վնաս ինչ, վաղվաղակի աղաղակ բառնան, թէ նա անզգուշութ͞բ իւրով կամ կամակորութ͞բ պատճառ եղեւ չարեացս. և ոչ բնաւ յօժարին ասել, թէ Ա͞ծ ըստ անքննին խորհրդոց իւրոց թոյլ ետ վնասուց գալ առ մեզ զի զգաստասցուք:

ժէ Եթէ զթիւր կարծիս բառնայցեն մարդիկ 'ի մտաց իւրեանց, թշնամութ͞ին իսպառ բնաջինջ լինէր, կամ յոյժ սակաւ գտանէր: Յանզն բազումք 'ի մարդկանէ տարապարտ դատողութ͞բ արկանեն զթշնամութ͞ի 'ի վ͞ր միմեանց, կամ մոլար կարծեօք աճեցուցանեն: Յանդգնութիւն է և տմարդութ͞ի առանց քաջ տեղեկութ͞ե դատել զայլս, և առնել վատահամբաւ:

ժը Չէ նա մարդ բանաւոր՝ մտաց և հանճարոյ ընդունակ, այլ գազան չար և դժնդակ՝ որ սնոտի կարծեօք չարաչար դատի զընկերն և ատէ. և ջանայ և ճնարի չարիս հասուցանել նմա, գուցէ տանջել զնա և 'ի մահ մատնել: Աւեանք ն͞ր՝ համարի տանջանք անձին իւրոյ. և տառապանք ն͞ր՝ հանգիստ և դիւրութ͞ի:

Ծիծաղի ինքն՝ մինչ տեսանէ զնա 'ի լաց. և 'ի սուգ համակի՝ յորժամ նա ուրախանայ: 'Ի մեռանիլ ն͞ր և 'ի հող դառնալ, թշնամութիւնն զոր ունի 'ի սրտի՝ ոչ մեռանի. զի ոչ երբէք դադարի 'ի չարախօսելոյ զնմանէ:

Այս գործ յատուկ է դիւաց. և որ զայս

առնէ՝ դև է մարդակերպարան, մանաւանդ թէ դժնդակագոյն քան զդևս. զի նոքա ոչ այնքան թշնամութիւն բերեն առ ընկերս իւր-եանց, որքան սա առ եղբայր իւր և համազգի։

ԺԹ. Ո՛ ինչ քան զայս անիրաւ դատաստան, մինչ մի՛ ոյր յանցանաց դատի ոք զընկերն և բամբասէ, ունի և ինքն զնոյն յանցանս, գուցէ առաւել ևս. լրումն իցէ ըստ որ ասէ. * Կեղծաւոր՛ հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղբօր քո։ || Ղուկ. Զ. 42.

* Մի՛ դատիք՝ զի մի՛ դատիջիք. զի որով դատաստանաւ դատիք՝ դատեսջիք։ || Մատ. Է. 1.

* Դու ով ես որ դատես զայլոյ ծառայ. իւրում տեառն կայ կամ անկանի։ || Հռովմ. ԺԴ. 4.

* Տաղէ 'ի խնդիրս և 'ի բանս հակառակութէ, ուստի լինին նախանձք, հեռ, հայհոյութիւնք, կարծիք չարեաց։ || Ա Տիմ. Զ. 4.

* Մի՛ բամբասէք զմիմեանս եղբարք. որ բամբասէ զեղբայր իւր, կամ դատի զեղբայր իւր, և զօրէնս դատի։ || Յակ. Դ. 11.

## ԳԼ. ԺԴ

ա Ասակածելի է նաւարկութիւն, յորժամ պարզ երևի օդն. վտանգաւոր է հիւանդութիւն, յորժամ կարծի լինել անվնաս. մահաբեր լինի թոյնն, յորժամ մատուցանի իբրև զդեղ. ապա յաւէտ վտանգաւոր և զգուշալի է թշնամին, որ կերպարանի իբրև ըղ բարեկամ, և մարդելոյզ շողոմութբ որսայ զգաղտնիս սրտի:

Զի եթէ յայտնի թշնամի էր, մարթ էր ընդդէմ կալ և մերժել, կամ խոյս տալ և զերծանիլ. բայց քանզի զթշնամութի իւր ծածկեալ ունի պատրուակաւ բարեկամութե, բազում անգամ անպատրաստ գտեալ զմեզ՝ արկանէ յորոգայթ և յապականութի:

Ապա կարևոր է ամենայնի անմոռաց ունել զայս պատուէր զգուշալի, թէ մի՛ ամ հոգւոյ հաւատայք:

բ Մեծատուն ոք՝ որչափ իմաստուն իցէ և բարեկարգ, տակաւին ունի զպակասութի ինչ. զի է մարդ սխալական՝ անկեալ 'ի մէջ անթիւ պատրանաց մարդահաճոյից, որք շուրջ պատեն զնոսա. մանաւանդ եթէ սնեալ իցէ 'ի մէջ սնափառութե և ազատականութե:

գ Մարդահաճոյ հաճոյակատարք՝ կամելով առ շնորհուկս մեծամեծաց խօսել, ստեն և աղաւաղեն զճշմարտութիւն. և այս է կրկնապատիկ չար, զի այնու ոչ միայն անձանց

վնասեն, այլև այնոցիկ որոց հաճոյանալ կամին։

Դ Դժբաղդ է իշխանն, որ չէ՛ բաւական անձամբ անձին հասու լինել հակառակութեանց հպատակաց, և որոշել զվէճս նց՟, հաւատայ ստութեանց օգտախնդիր շողոքորթաց։ Որք ծածկեալ զթոյնս իւրեանց ընդ կերպարանօք հաւատարմութե՟, 'ի վերին երեսս ցուցանեն սիրել զիշխանն, և խօսել զճշմարիտն, բայց իրօք ատեցող են նմին, և հեռի 'ի ճշմարտութե՟. զի ո՛չ եթէ զիշխանն սիրեն, այլ զօգուտն զոր ակնունին ստանալ նովաւ։

Ե Խղճելի է վիճակ իշխանին, մինչ ինքն թունաւորի 'ի պատիր բանից մարդահաճոյից ընդ որոց կենցաղավարի. և ո՛չ գտանի առ նմա այր առաքինի, որ ազդ արասցէ նմա զճշմարիտն. քանզի արք բարիք և իրաւախոհք նենգաւոր դաւաճանութե՟ շահախնդիր համոզչաց անկեալ են 'ի վիշտս, և օտարացեալ 'ի նմանէ։

Զ Մարդելոյզք՝ առաւել խաբեն զհպարտ իշխանն՝ և արկանեն զնա 'ի վտանգ. զի ո՛չ խօսին զիրսն որպ՟ ինքեանք գիտեն, այլ որպ՟ հաճոյ է կամաց իշխանին. վյ՟ փոխեն և այլայլեն միշտ զճշմարիտն, մանաւանդ զայն՝ որ վերաբերի առ նոյն ինքն իշխանն։

Է Օգտախնդիր մարդահաճոյք՝ բազում անգամ խաբեն նաև զիմաստուն իշխանն. զի ինքէնք անպակաս շուրջ պատեալ զնովաւ՝ շողոքորթեն վ՟ս շահասիրութե՟ իւրեանց. և բարեխոհք հեռի կացեալ սպասեն զի կոչեսցին։

Իսկ իշխանք տաւել հաճին կենցաղավարել ընդ մարդելուզայ՝ քան ընդ բարեմտաց . զի մարդելոյզք երագունք են ուսանել զհաճոյս ոյլոց, և շուտափոյթք համոզել 'ի գործ, թէև իցէ ընդդէմ խղճի մտաց և արդարութե ․

Այս անմիտ է որ հաւատայ շողոքորթաց . զի նոքա բազում անգամ գովեն զք առ երեսս . բայց ոչ եթէ ինքեանք հաւատան, այլ զի զգաղտնիս սրտի նր գողասցեն, և խաբեսցեն յօգուտ անձանց իւրեանց . Իսկ գովել զք յերեսս՝ է ծաղր առնել զնա . և յիրաւի արժան է ծաղու և կատականաց, որ հաճի ընդունել զգովութիւնն՝ զոր տան նմա հացկատակք ․

Ը Շողոքորթք՝ ոչ այնքան զսոսկականս՝ որչափ զիշխանաւորս որսան 'ի վարմս իւրեանց . և իշխան ոք՝ եթէ ոչ 'ի բաց վարեսցէ զնս, և ոչ սիրեսցէ զճշմարտախօսսն, ձեռօք իւրովք նիւթէ զկորուստ անձին իւրոյ ․

Թ Մարդահաճոյք անգութ են քան ըղգողս . զի նոքա զարտաքին ինչս միայն գողանան . իսկ սոքա՝ զներքին խորհուրդս սրտին ․

Ժ Կեղծաւորք արժանի են ծանր պատժոց՝ քան զչարագործս . զի որ յայտնի չարագործք են, խորշին 'ի նոցանէ մարդիկ . իսկ կեղծաւորք՝ և՛ չարք են, և՛ կերպարանին իբրև զբարիս, և այնու խաբեն զմարդիկ . վայ և ճշմարիտ առաքինիք ևս լինին երկբայելի ․

ԺԱ Որ առաւել պատուէ զքեզ՝ քան զոր

արարեալ էր յառաջագոյն , կամ խաբեալ է զնա , և կամ խաբել կամի ։

ԺԲ Մարդելոյզք սովոր են յաճախել 'ի գովեստ չարաց քան բարեաց . քանզի գիտեն' եթէ երկնչիլ արժան է առաւել 'ի չարաց' քան 'ի բարեաց ։

ԺԳ Բազում նենգաւորք շողոքորթական քաղցրաբանութ̃ լինին սիրելի իբրև բարեբարոյք . և բազում առաքինիք խիստ և անաչառ բանիւք իւրեանց լինին ատելի իբրև դաժանաբարոյք և անկենցաղավարելիք ։

ԺԴ Որ ցանկայ սիրելի լինել ամենեցուն , ո՛չ կարէ մնալ առանց մոլութ̃ց . զի որ կամի ամենեցուն հաճոյանալ' ըստ ճանապարհի նց̃ ստիպի յարմարել և զիւր գնացս . և զի բազում են մոլիք , ապա և ինքն նմանի նոցա' զի սիրեսցի 'ի նոցանէ ։

ԺԵ Առաւել վտանգաւոր է շահասիրութ̃ն. և արժան է ամենեցուն հսկել և զգուշանալ , զի մի' գուցէ դաւաճանեսցի 'ի նմանէ . վս̃ զի շահասիրութ̃ն է ընտանի թշնամի , և մտանէ 'ի ներքին խորհուրդս. և եթէ անսայցէ ոք նմա' նենգէ և արկանէ յորոգայթ ։

ԺԶ Երկնչիլ արժան է 'ի խորամանկութ̃է թշնամւոյն' քան 'ի կարողութ̃է նորա . զի կարողութ̃ի առանց խորամանկ հնարից դժուարանայ յաղթել ։

* Աստուած ցրուեաց զոսկերս մարդահաճոյից. || Սաղմոս. ԾԲ. 6.

* Նաշտեար խոցոտիչք. լեզուք նց նենգաւոր. և բանք բերանոց նոցա ընդ ընկերի իւրում խօսին խաղաղութի, և ՚ի սրտի իւրում ունին զթշնամութի. || Երեմ. Թ. 8.

* Մի՛ առ աչօք ծառայելով իբրև մարդահաճոյք. այլ իբրև ծառայք Քի առնել զկամս Այ. || Եփես. Զ. 6.

* Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, ապա Քի ծառայ ոչ էի. || Գաղա. Ա. 10.

---

## Յեղյ

### ԳԼ. ԺԵ

Ա. Որինչ ասել արժան է մի յանդգնութեան լեզուի և բերանոյ՝ որ հաստատեցաւ ՚ի բընութիւն մարդոյ թարգման մտաց առ ընկերն, զի զոր խորհի միտք՝ զնոյն խօսիցի լեզու և բերան. որք թէպէտ այլ և այլ են՝ բայց կարգեալ են ՚ի մի պաշտօն:

Ապաքէն յոյժ բարի և պիտանի են սոքա, յորժամ զարժանն խօսին. զի՝ խրատեն զընկերն. ուսուցանեն զտգէտն. մխիթարեն զտրտմեալն. կամ աղօթեն առ Ած, օրհնեն զնա, և գոհանան զնմանէ. իսկ եթէ զանարժանն և զանպատեհն բարբառին, կարի վնասակար լինին և չար:

Է. Օ արհուրելին ամ արարածք՝ յորժամ 'ի մտաւոր և յիմացական բնութէ՝ որպիսի է մարդն, յառաջ գայցէ հայհոյութի, կամ անիծաբանութի, կամ նզովք, կամ յիշոց, թէ վն անձին իւրոյ՝ և թէ վն այլոց ։ Օ է ոչ միայն է ընդդէմ այ, այլև ընդդէմ բնական բնութե . զի բնութին իսկ խորշէ՝ մինչ խօսի բերանն անկարգաբար, և կորուսանէ զօրէնս բնութե ։

Իսկ արդ՝ որպիսի սարսափ և դողումն ոչ պաշարէ զհայհոյիչն բարկասիրտ . դողդոջան ձեռք նր . է հարկանեն ծունկք . կայթէ սիրան . շրջի աչքն . գունաթափի երեսն . փրփրի բերանն . կապկապի լեզուն . և ինքն գլխովին 'ի մարդկային սահմանէ օտարացեալ, 'ի կերպարանս գիշախանձ գազանաց փոխարկի . և զինչ քան զայս թշուառագոյն կիրք՝ որով վարակին հայհոյիչքն բարկասիրտք ։

Ընդ է տեսանել հրէշ իմն այլանդակ՝ կամ անզգայ ոք և անբան . զի իսպառ կորուսանէ զխտրողութի բարւոյ և չարի ։ Ոչ զծնօղսն ճանաչէ, ոչ որդւոյ խնայէ, ոչ զսիրելիս և զբարեկամս որոշէ . այլ զամենեսն առ հասարակ անարգէ և հայհոյէ . մինչև յառաւել բորբոքմանէն յերկրի ունելով զբերան՝ լեզուայերկինս ածի . առ հոգևորս՝ զի մի՛ ասացից և առ այծ, խելագարեալ յանդգնի ։

Ով աղէտից . լեզուք նա իբրև զսուր երկսայրի՝ մտանեն 'ի սիրտս իւրեանց, և 'ի վէրս

մահու հարկանեն զհոգիս նց․ բայց կարծեն յիմարքն մտօք թէ զայլս վիրաւորեն․ ապա կարի՛ զգուշալի է այս ախտ չար, զի ատելի առնէ այ և մարդկան։

Գ Հայհոյութիւն է բան անարգական և անիծից ասացեալ ընդդէմ այ և ածայնոց։ Իսկ այս մեծ չար յառաջ գայ երբեմն յանհաւատութէ․ զի անհաւատք ոչ հնազանդեալ օրինաց և կարգադրութեն այ՝ և կանոնաց սբ եկեղեցւոյ և հարցն մեր՝ հակառակ զինին նց և մաքառին ՚ի միտս, և կամ յայտնի յանդգնին ՚ի հայհոյել։

Դ Իսկ երբեմն յառաջ գայ ՚ի հպարտութենէ․ զի հպարտն անհաւան գոլով այլոց՝ խելագարեալ մոլեգնի և ածայնոց լինել անհաւան․ և սկսանի զածայնոց հետաքրքիր լինել՝ թէ որպ մի է ած՝ և երեք անձինք․ և թէ զիարդ ստեղծ զաշխարհս և զորս ՚ի նմա․ կամ զինչ յառաջ քան զստեղծագործութիս, և զինչ յետոյ, և այլն։

Ե Երբեմն յառաջ գայ ՚ի յանդգնութէ․ զի հունաւոր խմացումն մարդոյ զանհասանելին մտաց քննելով՝ տարակուսեալ սահի ՚ի թերահաւատութի։ Եւ քանզի զայս առ ամենին յայտնի առնել խիթայ՝ զի մի՛ յանդիմանեսցի կամ պատժեսցի, և խոնարհութբ հնազանդիլ օրինացն այ չառնու յանձն, վարանի ՚ի խորհուրդս․ ահա՛ սուր երկսայրի՝ որ տանջէ զնա հանապազ առաւել քան զդահիճ անողորմ․

և ապա սկսանի մոլորաբար խօսել զա՟յ և զա՟ծայնոց : Որ թէև այսու դրականապէս ոչ լինիցի հայհոյիչ, զի ոչ ասիցէ բան ինչ նախատանաց զա՟յ և զա՟ծայնոց, սակայն լինի բացասաբար, յորժամ առ այնս՝ զոր ա՟ծ յայտնեաց և եկեղեցի ս՟բ կանոնադրեաց՝ անհաւան լինելով՝ այլայլէ կամ եղծանէ զն՟ս : Զայս ախտ բազումք ախտացան, և ախտամեան պատճառաւ հպարտութե՟ան և հետաքրքրութե՟ան :

Գ Սրբեմն յառաջ գայ ՚ի տգիտութէ. զի գոլով անտեղեակ ա՟ծային օրինաց և սահմանադրութե՟ց, յանդգնի տգիտաբար զիւր կարծիս պնդել՝ թէ իցէ ճշմարիտ. և զընդդէմն խօսելով կամ հաւատալով՝ լինի հայհոյիչ :

Դ Սրբեմն ևս յառաջանայ ՚ի հեշտասիրութէ. որովհետև արգելուն ա՟ծային օրէնք զանասնաբար թաւալիլն ՚ի մարմնական հեշտութիւս. և սա կամի անխտիր մոլիլ ՚ի նոյն :

Այ՟ բառնայ զօրէնս բարիս, և հաստատէ ՚ի միտս իւր զընդդէմն օրինաց. և յանդգնի հայհոյել, թէ չէք ոք գիտակ և քննիչ գործոց մարդկան, ոչ դատաստան և ոչ հատուցումն. որպ՟ զի անխիղճ մտօք յարատևեսցէ ՚ի գարշ և ՚ի մոլեկան հեշտութիւնս :

Ե Սրբեմն յառաջ գայ ՚ի տրտմութէ. զի պաշարեալ ոք ՚ի տրտմական կրից, և ոչ կարելով գտանել մխիթարութի՝ վարանի ՚ի միտս :

Սա վ՟ն զի ախտ տրտմութե՟ թուլացուցիչ է և դանդաղ, պատճառէ զթանձրութի մտաց.

մանաւանդ եթէ իցէ ախտակիրն անճաշակ յիմաստից ա՛յ դրոց. զի եթէ իմաստուն ոք լինէր, յորպիսի վիշտս և անկանէր՝ ոչ մնայր անմխիթար. վա՜յ իբր յանել շաւիղ արգելեալ, սկսանի յուսահատիլ. յորմէ ճանապարհորդէ առ հայհոյութի՜ւն՝ ասելով, թէ ընդէ՞ր էած ա՛ծ զչարիքս զայսոսիկ ՚ի վերայ իմ։

Թ Երբեմն ես յառաջագոյ ՚ի սաստիկ կըս-կծանաց՝ վասն մահուա՛ն սիրելեաց, թէ զաւակ իցէ, թէ ամուսին, կամ եղբայր, կամ ծնող. զի խօսի զհայհոյութի՜ս, թէ ընդէ՞ր ա՛ծ ոչ պահեաց զայն ՚ի մահուանէ. արդեօք ոչ եսես զայլ ոք արժանի մեռանելոյ, և այլն։ Այս մոլորութի յաճախ գահավիժին անմիտ կանայք. մանաւանդ եթէ իցէ մեռեալն որդի միամօր յառոյգ հասակի։

Այլ սակայն պա՛րտ է զսպել զայս անբան կիրս. զի ուր չէ՛ ՚ի ձեռս ճար ազատութե, անդ հնազանդիլն ՚ի կամս հրամայողին՝ է ելք փրկութե. և արդարև չիք այլ դեղ ՚ի բժըշ-կել զցաւս սրտի՝ բայց ՚ի համբերութե, և յա՛ծային կամացն հնազանդութե։

Քանզի զի՞նչ շահի յայնժամ հայհոյիչ լեզուն, բայց եթէ յաւելուլ զցաւս ՚ի վե՛ր ցաւոց։ Տէր կենաց և մահու ա՛ծ է, յորժամ կամեցաւ ետ, և երբ կամեցաւ էառ. դու ով սգացող՝ և ընդդէմ կամացն ա՛յ բարբառօղ, զի՞նչ կորուսեր. զի որ բարձաւ ՚ի քէն, ոչ էր քո՝ այլ ա՛ծն. եթէ տէրն էառ զիւրն,

ընդէ՞ր տրտնջես և հայհոյես. ո՞չ արդեօք կարէ նա յորժամ կամի՝ և զքեզ 'ի կենաց բառնալ:

Ապաքէն ո՛չ է բնաւ պարտ 'ի վերայ մեռելոց անյուսաբար սգալ և կոծել իբրև ըզ հեթանոսս. և զա՟ծ բարկացուցանել անարժան բանիւք հայհոյութ՟:

Ժ Մերթ ևս յառաջ գայ 'ի կամակորութենէ, և այս չար ևս է. զի կամակորութի՟ն ծնանի 'ի հպարտութե՟ և 'ի ագահութե՟. յերկուց չար ծնողաց դուստր չարագոյն: Զի կամակորա՛ց է յատուկ, զոր միանգամ ուսուցանեն բանի՛ւ կամ գրով՝ ո՛չ յետս նահանջել, այլ անոտի փաստիւք 'ի նոյն յամառել:

Այ՟ բազումք անկան 'ի բանս աղտեղիս և 'ի մոլորութի՟ս, մանաւանդ թէ 'ի հայհոյութի՟ս ընդդէմ այ՟, և կանոնաց ս՟բ եկեղեցւոյ. որք եթէ բառնային զախտ կամակորուե՟, փութով ճանաչէին զուղիղ և զողջամիտ ճշմարտութի՟ն:

ԺԱ Եւ է ուրեք զի յառաջ գայ 'ի բարկութե՟. զի բարկացեալն երբեմն այնքան խելացնոր մոլեգնութե՟ կատաղի՝ մինչև անկանիլ 'ի հայհոյութի՟ս. և զանվայելս և զանհաւանս իւրում խակ մտաց բարբառել:

Եւ թէպէտ այսպիսիք զկնի անցանելոյ բարկուե՟ բոցոյ՝ ճանաչեն զվրիպակն զոր արարին՝ և զղջան, սակայն անուանին հայհոյիչք, զի մեղան մեծապէս առ մարդիկ և առ ա՟ծ:

ԺԲ Որպիսի՛ և ո՛րքան անմխիթար ողբոց արժանի են նոքա, որք դարձեցուցանեն զբերանս

յիշոց անուանեալ անյիշելի հոյհոյութեամբ։ Զարմանք է, զի 'ի տեսանելն զայնպիսի անտեղութիս զորս խօսին՝ 'ի բաց խորշին, բայց բանիւ 'ի նոյն բերին. աւաղ ախտութե մըտաց այնոցիկ՝ որոց բերանք նց լի են յիշոցօք։

Ժդ. Մարդիկ՝ զոր ուտեն և զոր ըմպեն՝ քաջ ընտրեն զնս. իսկ զայն զոր խօսին՝ ո՛րչ ոչ կամին ընտրել. զի այս է մարդավայելուչ, թէ զոր խօսի ոք՝ լսէ բարի՝ ընտիր՝ օգտակար՝ և մարդկութես արժանի։ Իսկ կերակրոց ընտրութիք՝ ոչ այնչափ է գործ բանականի՝ որքան զգայականի. զի անասունք՝ թռչունք՝ և գազանք անգամ ունին խտրութիւն կերակրոց առաւել քան զմարդիկ։ Վն զի մարդիկ երբեմն յակամայս առ ամ ինչ խոնարհին ուտել. իսկ անբանք ոչ բնաւ բերին յայն ուսեալ՝ առ որ բնութին ոչ առաջնորդեաց նոցա։

Ուրեմն որ զանվայելս բարբառի՝ որպիսի է յիշոցն՝ եղծանէ զօրէնս մարդկութե, և անարգ քան զանբանս գտանի, մանաւանդ զի կամաւ 'ի նոյն բերի. վն յամենայնի վատ և անարգ են յիշոցատուք. յորոց ոպ 'ի թունաւոր քարբից պարտ է 'ի բաց կալ։

Ժե. Հայհոյիչք և յիշոցատուք՝ զինչ արդեօք շահին 'ի խօսելոյ զանարժանս. զայս ոչ է պարտ յայլոց ուսանել, քան թէ 'ի նոցին իսկ հայհոյչաց։ Վն զի այլ մոլութիք թէպէտ են չար՝ և գարշ՝ և ատելի, բայց է 'ի նս

որ հեշտացուցանէ . է՛ որ զեր ինչ յաւելու յինքն . և է՛ որ զիմն բառնայ յայլմէ . և այնու վրէժս առնու . իսկ յիշոցն և ոչ մի ինչ 'ի սոցանէ ունի : Զի յիշոց տալով ոչ հեշտանայ մարդ . ոչ զեր ինչ ստանայ . և ոչ յայլմէ զեր ինչ բառնայ . այլ մանաւանդ ինքն ըստ ինքեան տանջի . որքան զայրանայ կիրքն , այնքան սաստկանայ յիշոցն . և որքան սաստկանայ յիշոցն՝ այնքան բորբոքի կիրքն :

Ուր ապա զկայ առնուն տեղս , կամ երբ դադարին . Թերևս յերեկոյանալ տունջեան՝ կամ յառաւօտանալ գիշերոյն , և կամ 'ի թալկանալ և 'ի նուաղել սրտից իւրեանց :

ԺԵ Որ ոք սկսանէր յիշոց տալ , երանի՜ թէ զունկն նորա իսկոյն հատեալ 'ի բերանն կարէին՝ զի լսէր թէ զինչ խօսի : Արդարև եթէ ինքն յիշոցատուն լսէր զիւր հայհոյութիւնն՝ վաղվաղակի առ ամօթոյն հարկանէր զբերան իւր : Ո՞ւ է բերան համի և մաքուր՝ քան բանախօս և անմաքուր :

ԺԶ Որ միանգամ յաճախէ 'ի գործ ինչ կամ 'ի բանս , նոյնն դառնայ յունակութիւն . և ունակութիւն փոխի յերկրորդ բնութիւն : Ուստի որ սովոր է յիշոց տալ՝ ոչ կարէ յայնմանէ յետս կալ . այլ զոր ինչ խօսի՝ խառնէ ընդ նմին ըզբանս աղտեղիս , կամ զանպարկեշտ և անվայել [illegible] , որ այն ինքն է յիշոց :

Ապա պարտ է մարդոյ բանաւորի զայնպիսի չար սովորութիւն տակաւ առ տակաւ մոռա-

նալ, և զգաստ մտօք կշռել զբանս և զխօսս, զի մի՛ վերստին 'ի նոյն չարիս անկանիցի։

ԺԵ Ի սակս յիշոցաց է և այն՝ որ 'ի քաղաքական կենցաղավարութեան զանպարկեշտ խօսին. և թէպէտ միտք սոցա ոչ է յիշոց ինչ ասել, այլ իբր թէ զուարճախօսութիւն ինչ առնել. բայց անխոհեմութեամբ լինին յիշոցատու։ Եւ այս ոչ փոքր չար է. զի զաղտեղիս յիշելով՝ արատաւորի և միտքն, եթէ խօսողին, և եթէ լսողին։

Ապա պարտ է հեռի կալ յայսպիսի անհամեստ խօսակցութենէ, զի մի՛ անզգուշաբար սահեսցին 'ի յիշոցատուութիւն։

ԺԶ Ծնողք՝ վարժապետք՝ և ուսուցիչք ինչ և իցէ արհեստից, պարտին զնորահաս մանկունս խրատել և զսպել, զի մի՛ ընտելասցին ասել կամ լսել յիշոցս. զի թարմն հասակ նոցա դիւրադրոշմ է յայս ախտ. և 'ի մանկական տիս 'ի նոյն սովորեալ՝ կամ ոչ երբէք կամ դժուարաւ մոռանան։

Ապա ոչ միայն է գործ արժանի վարձուց զայսպիսիս խրատել և յանդիմանել, այլև մեծ պարտաւորութիւն. և եթէ ոք կարող գոլով զանց առնէ, ընդ նոսին լինի մեղսակից։

ԺԷ Ո՜վ ապշութեան մտաց ոմանց ծնողաց, որք զաւակաց իւրեանց նորոգ սկսելոց 'ի խօսել, մինչ հազիւ կարեն զբառս ինչ թոթովախօս լեզուաւ կակազել, ուսուցանեն նոցա յիշոց տալ։ Անմեղ տղայն չունի կարողութիւն

ընտրել զբարին և զչար․ զոր ինչ լսէ՝ զայն ու-
սանի․ ուստի մինչ զբանս ինչ աղտեղիս բար-
բառի, անմիտ ծնողն բերանաբաց եղեալ ծի-
ծաղի․ և յորդորէ անդրէն երկրորդել զնոյն։

Ով աղետիցս, դեռ մանուկն է կաթնա-
կեր, ծնողքն առնեն զնա գազան գիշակեր․
զինչ ապա լինիցի այնպիսի ողորմելի մանուկն
՚ի վախճանի, բայց եթէ հայհոյիչ։

Ապա խնայեցէք ո՛վ ծնողք՝ անձանց և զա-
ւակաց ձերոց․ և ուսուցէք նց՟ ՚ի մանկութենէ
զբարիս խօսիլ, զի եղիցին բարեմարդիկ։

Է Փորձ է ամ՟ մարդոյ՝ մանաւանդ որ զա-
ւակաց է հայր, զուսպ ունել զլեզուն, և չա-
սել ինչ անպատեհ զրոյցս, կամ յիշոցս առաջի
նորափթիթ մանկանց և երիտասարդաց․ զի
բերմունք հասակի նց՟ ըստ նմանութե՟ կաղկի՝
զոր ինչ ՚ի մեծագունից լսեն և տեսանեն՝ զայն
ուսանին, և այնմ յարմարել ջանան։

Եւ այս օրէնք են մարդոյ․ զի յետինք ցան-
կան նմանել առաջնոց, մանաւանդ թէ անցա-
նել զնոքօք․ ապա յորժամ փոքունք զանպար-
կեշտս ՚ի մեծաց լսեն՝ կամ տեսանեն՝ ՚ի հարկէ
ուսանին զնս՟, և յաւելուն և ինքեանք ՚ի վր՟։

Եւ եթէ հայրն առանց առաջնորդի մատ-
բերեաց առ չարն, ապա որդին առաջնորդեալ
՚ի հօրէն ՚ի նոյն չար՝ յոր անկարգութե՟ աս-
տիճան ո՛չ վերանայցէ․ արդ ո՛րև չէք այնուհե-
տև յոյս բարեկարգութե՟ նր՟։ Քանզի զիա՞րդ
կարասցէ նա գործել զբարիս՝ որ ուսեալ է ՚ի

մանկութե՛ զչարիս, ըստ այնմ. * Եթէ փո-խիցէ Հնդիկ զմորթ իւր, և ինձ զխայտուցս իւր. և դուք կարող լինիջիք գործել զբարիս ուսեալքդ զչարիս: ‖ Երեմ. ԺԳ. 23:

Ուստի պատճառ չարեաց է մոլեկան վարք և անխոհեմ գնացք մեծագունից:

Իմ Նորահաս մանկունք ՚ի հասակակցաց եւս ուսանին զչարիս և զպիղծս, յորժամ ՚ի մի ժո-ղովեալ ՚ի տան կամ ՚ի փողոցս՝ դեգերին խա-ղալ մանկաբար: Արդ որ կամի զաւակին իւ-րում ունել զբարիս՝ մի՛ թողցէ զնա խօսել կամ խաղալ ընդ չարս. և մի՛ առանձին առա-քեսցէ զնա յամ տեղիս, զի մի՛ մաքրութիւն մտաց նորա բծաւորեսցի. զի հասակին ման-կութե՛ է իբրև թուղթ սպիտակ՝ յոր միան-գամ դրոշմի ինչ, մնայ անել:

Սակայն պարտ է և յոյժ վայելուչ Թերա-հաս մանկանց լինել հլու և հպատակ ծնո-ղաց՝ վարժապետաց՝ և ուսուցչաց իւրեանց. և մի՛ բնաւ անզգամութե՛ լրբանալ ընդդէմ խրատուց նց. ապա թէ ոչ՝ ինքեանք լինին պարտական արեան իւրեանց:

Իբ՛ ԱՂ ողբասցէ զգլուխս այնպիսի ծնո-ղաց՝ որք բանիւ՛ բերանոյ զանէծս թափեն ՚ի գլուխս որդւոց իւրեանց: Ո՛ր չարիս ոչ մաղթեն յոյ գալ ՚ի վր զաւակաց՝ մինչ բար-կութե՛ բորբոքելին. զի են՝ որք խնդրեն հա-ռաչմամբ սրտի զրկիլ նց ՚ի լուսոյ աչաց. են՝ որք մաղթեն դօսանալ ձեռաց՝ ոտից՝ կամ

բերանոյն. գտանեին և ոմանք՝ որք զայլ ևս մե-
ծամեծ չարիս հայցեն. մինչև ըղձանալ ևս
մահուան որդւոց իւրեանց. և զի՞նչ չար ա-
ռաւել քան զայս. ո՞չ ապաքէն այս է ան-
ձամբ զանձն անիծանել:

Պագանք և անաստուածք և Թուչունք նկատ-
մամբ առ սոսա, դժթածագոյնք ևս են 'ի ծը-
նունդս իւրեանց. որք և բազում անգամ
առ գործոյ ձագուց 'ի մահ մատնեին. իսկ
մարդիկ անագորոնք՝ զորս երկամբք ծնան,
և աշխատանօք սնուցին, կամին 'ի վայրկեան
ժամանակի կորուսանել:

Այս՞ որդիք անհնազանդք բարկացուցանեն
զծնողս, սակայն անիծիւք և չարամաղթութ͞ե
ո՛չ ուղղին անհնազանդք. այլ օրհնութ͞բ և բա-
րեմաղթութ͞բ՝ խրատուք և յորդորանօք:
Քանզի որդի անհնազանդ և կամակոր՝ է չար.
և դու որ ծնող ես՝ մաղթես զչար 'ի վ͞ր չա-
րի. ապա կամիս առնել զնա ամենաչար. արդ՝
խնդրեա՛ որդւոյդ զշնորհս և զողորմութի՛ յոյ-
րով չարն փոխարկեսցի 'ի բարի:

Իս͞կ Եթէ ա͞ծ զա͞մ խնդիրս բարկացօղ մարդց
կատարէր, բազումք 'ի նոյանէ առ օրին ան-
զաւականոյին. որք 'ի զայրանալ իւրեանց վ͞ս
ո՛ և իցէ պակասութ͞ե զաւակաց, վաղվաղակի
աղաղակ բառնան, և դառն անիծիւք զմահ
խնդրեն վ͞ս նց: Են և ոմանք՝ որք զժանտախ-
տէն բողոքեն՝ թէ անտես առնէ զնոքօք. և
են՝ որք զմահաբեր հրեշտակէն գանգատին՝

թէ ոչ առնու զհոգիս նոցա .

Եւ թէպէտ ա՟ծ վ՟ս անբաւ գթութե՟ն իւրոյ՝ ո՛չ լսէ ձայնի նց՟ , և ո՛չ կատարէ զայնպիսի անկարգ և անարժան խնդրուածս, բայց յորժամ յաճախեն ՚ի նոյն , բազմիցս բառնայ զն՟ս յաշխարհէ ՚ի պատիժ ծնողաց նց՟ :

Եւ թէպէտ զղջան յայնժամ և լան և կոծեն . և ՚ի թուխս համակին , այլ ո՞ր շահ յողբոց անտի , զի որդի իւրեանց գնաց անդարձ ՚ի տուն իւր յաւիտենից :

Գտանին և ոմանք յանմիտ ծնողաց , որք յանդգնին ևս տրտնջել զա՟յ , զի եբարձ զորդիս իւրեանց ՚ի կենաց : Ո՜վ հայհոյական բանիցս , և անհնարին անզգամութե՟ս . մարդիկ՝ ՚ի փոփոխել զկամս իւրեանց՝ կամին փոփոխել և զկամս ա՟յ . զի է՝ զա՟ծ ՚ի կամս իւրեանց խոնարհեցուցանել :

Ծնողք՝ միայն ՚ի պահպանութե՟ն զաւակաց են կարգեալ՝ առնել զն՟ս բարեմարդիկս , և ո՛չ եթէ սպանանել կամ կեցուցանել ըստ կամս իւրեանց . զի մահ և կեանք ՚ի ձեռին ա՟յ են . ապա մեծապէս մեղանչեն մարդիկ , որք խնդրեն զմահ վ՟ս նց՟՝ որոց ո՛չ են տեարք :

Իսկ դու ո՛վ ծնող՝ եթէ անառակ իցէ զաւակդ , արտասուալից աչօք յաղօթս կաց առ ա՟ծ՝ տալ նմա շնորհ և զգաստութի՟ . և որ ինչ վայել է քեզ մարդկօրէն առնել՝ եթէ սաստ և եթէ խրատ , արա անձանձիր զի շահեսցես զնա : Ապա եթէ ո՛չ շահի և զգաստանայ ,

սրտառուչ պաղատանօք յանձնեա՛ մի՛ առնել զոր կամի. գուցէ տուեալ է քեզ 'ի պատիժ, որում պարտիս համբերել. ո՞չ զի գթացեալ մի 'ի տառապանս քո, յաւուր միում կատարեսցէ զխնդրուածս սրտի քո, և գործունեայ շնորհօք իւրովք տացէ նմա զգաստութիւն:

* 'Ի բա՛ց արա 'ի քէն զբերան խոտոր. և զշրթունս անիրաւս մերժեա՛ 'ի քէն: || Առակ. Դ. 24:

* Որ խնայէ 'ի բերան իւր՝ պահէ զանձն իւր ուրէք. իսկ որ յանդուգն է շրթամբք՝ խռովէ զանձն:
|| 'Ի նոյն. ԺԳ. 3:

* Փառք են առն խորշել 'ի հայհոյութենէ. իսկ ամ անզգամ ընդ այնպիսիսն շաղախի: || Առակ. Ի. 3:

---

## Մտածութիւն

### Գլ. ԺԶ

Ա Օ՛ արհուրելեաց զարհուրելի չար՝ անուանել զմատնութիւն՝ ո՛չ է անդէպ. զի է հաւաքումն ամ սարսռելի չարեաց. քանզի գտանի 'ի նմա ստախօսութիւն, սուտ վկայութիւն, նախանձ, բարկութիւն, ոխակալութիւն, թշնամութիւն, ատելութիւն, քինախնդրութիւն, և սև ագահութիւն:

Եւ ահա այսքան դստերք չարեաց 'ի թխնալի մօրէ հպարտութենէ ծնանին. զի եթէ չէր հպարտ՝ թէև վշտացեալ ինչ էր յեղբօրէ իւրմէ՝ տակաւին խոնարհ հոգւով ներէր

նմա , և ո՛չ ձեռնարկէր յայսպիսի չարիս : Արդ՝ զի՞նչ շահի մատնիչն՝ քան թէ խռովէ տուժել զանձն ՚ի հոգի և ՚ի մարմին . և թէ ո՛րպէս՝ լո՛ւր յորոց զկնի :

Է Վարակեալն սևամաղձութե՝ ՚ի զայրանալ ախտին կարծելով զայլս սպանանել՝ զինքն մեռուցանէ . զայսօրինակ և ախտացեալն դառն նախանձու՝ կարծէ թէ զայլս մատնէ ՚ի տուգանս կամ ՚ի տանջանս կամ ՚ի մահ . բայց մատնեալն համբերելով տառապանաց՝ զհոգի իւր կեցուցանէ . իսկ մատնիչն անդէն մատնի ՚ի կորուստ : Մանաւանդ զի որ մատնէ զոք ՚ի չար ինչ՝ ՚ի նոյն չար անկանի և ինքն . ըստ այնմ , գուբն զոր փորեաց , ՚ի նոյն անկցի զոր գործեաց :

Ը Որ վս ոխակալութե մատնէ՝ զի վրէժս առնուցու ՚ի նմանէ՝ յորմէ կրեալ իցէ զվնաս ինչ կամ զնաս , զդատաստանն այ առ ինքն յափշտակէ . և կամ զտեսչութին նր բառնայ յաշխարհէ . քանզի գրեալ է , թէ իմ է վրէժխնդրութիւն : || Հռոմ . ԺԲ . 19 :

* Եւ թէ՝ զամ դատաստան ետ որդւոյ իւրում : || Յօհան . Ե . 22 :

Ապա ո՛վ մարդ՝ եթէ տեսանես զդատաստան քո ձեռամբ բռնաւորաց , ո՛չ մնայ ինչ այ դատել զայն՝ որ մեղաւն քեզ . բայց եթէ զքեզ , զի անհամբեր եղեր , և ո՛չ յանձնեցեր այ դատողութե , կամ ո՛չ հաւատայեր տեսչութեն այ : Զի եթէ հաւատայիր՝ թէ ած

գիտէ, և դատէ զգործս մարդկան, և հատուցանէ իւրաքանչիւրոց ըստ խորհրդոց ըստ բանից և ըստ գործոց՝ սա և ՚ի հանդերձեալն, ո՛չ խնդրէիր զվրէժս. և ո՛չ մատնէիր զընկերն ՚ի ձեռս անյագ բռնաւորաց, և արկանէիր ՚ի տուգանս. այլ յանձն առնէիր այ՝ առնել դատաստան որպ̃ և կամի:

Դ Որ վճ̃ արդար իրաւանց ինչ տանի զդք ՚ի դատաստան, զիրաւունս պահանջելով յերկրաւոր դատաւորէ կամ յիշխանէ՝ որոց յանձնեալ է կշիռ արդարուե ըստ կարգադրուեն այ ՚ի վր երկրի. և անդ եթէ զոպարտեսցէ զդատելին՝ զչեղեալն իբրև զեղեալ բարուրելով, յայնժամ առնէ զմատնութի: Զի արդարութին պահանջէ՝ միայն ըստ իրին եղելոյ ճշմարտութբ խօսել, և հնազանդիլ վճռոյ դատաստանին:

Ապա թէ ոք ընդ իրաւացի փաստս իւր խառնէ զստութի՝ զի իսպառ յաղթեսցէ հակառակորդին, բազում անգամ կորուսանէ զիրաւունս իւր, և պարտաւորի:

Ե Որ դատարկաշրջիկ է և ծոյլ՝ չէ ինչ տարադէպ լինել նմա և մատնիչ. որովհետև ո՛չ աշխատի ՚ի վաստակս ինչ, մատնէ զոմնեք՝ զի առնուցու զարծաթ:

Սա չէ մարդ բանական, այլ արեանարբու գազան. որ սպանանէ լեզուաւ զեղբայր իւր՝ զի արբցէ զարիւն նր: Ատնեալն ելանէ ՚ի բազում դրամոց, մատնիչն հազիւ շահի զտա-

սանորդն · և բազում անգամ ձեռնունայն արձակի անարգանօք · բայց լինի ամենայն տուգանացն պարտաւոր ։ Եւ զոր էառն՝ ոչ ՚ի հարկաւոր պէտս իւր կարէ ՚ի գործ դնել , այլ վատնէ յանառակութիս · որով կրկնի չարութեն տոյժ · մի՝ զի վ՟ն արծաթոյ զեղբայր իւր մատնեաց · երկրորդ՝ զի առեալ դրամովք զչարիս գործեաց ։

Գ Մատնիչք յաճախակի մատնեն զդրացիս և զծանօթս քան զօտարս · զի բանք նց՟ և գործք ծանօթ են սոցա ։ Ո՛վ աղետալիս · վայրենի գազանք ոչ գիտեն վնասել ընդ որս ընդելանան · ըստ առածին՝ թէ գայլ ոչ ուտէ զիւր դրացին ։

Ապա ընդ որո՞ց դասի նա՝ որ զհաւատակից և զազգակից եղբայրն իւր՝ կամ զքը՟ եկեղեցին մատնէ բռնաւորաց · յայտ է թէ զյուդային ունի զբաժին · զի որպ՟ նա զգլուխն եկեղեցւոյ զտէրն մատնեաց , սոյն օրինակ և սա՝ զեկեղեցին և զքրիստոնեայս · որով և զՔ՟ս մատնէ ։

Եւ զինչ շահեցաւ յուդայ , բայց եթէ ըզ կորուստ յաւիտենից · զի յարծաթոյն ոչ օգտեցաւ , և ՚ի կենաց զրկեցաւ ։ Այսպէս լինի և կաշառակուր մատնիչն · զի ընդ կորըստական արծաթոյն՝ կորուսանէ և զհոգի իւր ։

Է Ունայնաբան շաղակրատն՝ անգխտութ՟ե լինի և մատնիչ · զի յաջ և յահեակ ոչ նկատելով ՚ի խօսս՝ յայտնէ զգաղտնիս ինչ ուրուք ·

որև անկեալ 'ի լսելիս բանաւորաց՝ 'ի բանտ արկանեն և տուժեն. և ահա յիմար շատախօսն անզգուշութբ իւրով եղև պարտաւոր վնասուն՝ զոր կրեաց մատնեալն: Ապա արժան է առն բանաւորի զգուշանալ 'ի խօսս, զի մի՛ չար ինչ լիցի ումեք:

Ը Մատնութի է և անուն չար տարապարտուց համբաւել զումեքէ. ոպ զի նա զոր ինքն ատէ՝ նախատեսցի, կամ յիշխանութենէն անկցի, կամ վնաս ինչ կրեսցէ: Եւ այս գործ՝ է սպանութի իմն բարոյական. քանզի նախ սպանանէ 'ի սրտի իւրում զանձն ուրուք զոր ատէ, և ապա զանուն նր վատահամբաւէ. և սակայն այս սպանութի ոչ է փոքր չար առաջի Այ և մարդկան՝ քան զսպանութին իրական:

Թ Են եւ՝ որք վն իշխանութե մատնեն զանպարտն, զի յինքեանս կորզեսցեն զիշխանութի նր. սակայն մեծապէս խաբին. զի կամ ինքեանք ոչ հասանեն իշխանութեն՝ ուրում ցանկային, և կամ ոչ վայելեն յանդորրու յիշխանութեն՝ զոր յափշտակեցին:

Ժ Եւ եւս չարաչար մատնութի է՝ զգաղտնի խորհուրդս որ հաւատացաւ ումեք իբրև հաւատարիմ խորհրդապահի՝ յայտնել այլոց. որով ոչ սակաւ վնաս և կործանումն բազմաց յառաջ եկին, և յառաջ գան միշտ:

ԺԱ Մատնիչք՝ ոչ միայն յաչս մատնելոց են վատ և անարգ, այլ և այնոցիկ՝ որոց մատնեն:

Եւ թէպէտ բանաւորք առ երեսս շողո-

քորթեն և գովեն զմատնիչսն , բայց 'ի միտս դատին անարգ և վատ՝ ո̃պ և են իսկ . զի որ այլոց չար կամի , ինքն ո՛չ է մարդ բարի . ուստի և ինքեանք բռնաւորք զգուշանան յաւնէ մատնողէ , զի մի՛ և զինքեանս այլոց մատնեսցեն :

ժբ Մատնիչ համարի և այն՝ որ մինչ տեսանէ զեղբայր իւր 'ի յանցանս ինչ՝ անխոհեմաբար հրատարակէ , և արկանէ զնա 'ի լեզուս հասարակաց : Այլ եթէ կամի զերծուցանել զնա յորոգայթէ մեղաց՝ զոր ինքն չէ բաւական հանել՝ ծանուսցէ 'ի ծածուկ հոգևոր առաջնորդին կամ խոստովանահօր , և կամ միում 'ի խոհեմ և խորհրդապահ բարեկամաց . ո̃պ զի խրատեալ կամ յանդիմանեալ 'ի նցնէ , զգաստասցի յանցաւորն . և ինքն վարձուց արժանաւորեսցի . զի որ դարձուսցէ զմի ոք 'ի չար ճանապարհէ , փրկեսցէ զհոգի իւր 'ի մահուանէ : || Յակոբ . թուղթ . Ե . 20 :

* Վկայ սուտ՝ առանց պատժի ոչ լինիցի . և որ մեղադրէ տարապարտուց՝ ոչ ապրեսցի : || Առակ . ԺԹ . 5 :
* Աղաչարանք նախանձողաց , և ծուխ հրոյ . և այր բամբասող սա 'ի յուղէլ շնութէ : || Առակ . ԻԳ . 21 :
* 'Ի բաց ընկեցէք զսուտն . խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում . զի եմք միմեանց անդամք : || Եփեսաց . Դ . 25 :

ԳԼ. ԺԵ

ա. Բազում վնասակար չարիք գործին ՚ի չարաբարոյից, որոց լինին վրէժխնդիր ոչ միայն դատաւորք և բռնաւորք՝ այլև լսօղք. որպիսի են շնութիւն, գողութիւն, սպանութիւն, և այլն։ Եւ է չար ինչ վնասակար յոյժ ազգի, քաղաքի, և ժողովրդեան՝ մեծաց և փոքունց, արանց և կանանց, յաճախեալ ՚ի մարդիկ. և ոչ ոք լինի վրէժխնդիր։ Արդարև նմանի այս ախտ մաշարայական ախտի, որ ՚ի ներքուստ հիւծեալ մաշէ, և ոչ ոք իմանայ ՚ի մօտոյ զչափ վնասու նորա։

Եւ ո՞ր այն իցէ արդեօք. ահա՛ նա է զուր խռովութիւն մարդկան առ միմեանս. որ վասն կարի յաճախեալ գոլոյ արդէն առ բազումս՝ իբր հասարակ ինչ սովորութիւն, ոչ փոյթ ինչ է ումեք բառնալ զնա ՚ի միջոյ։

Քանզի հազիւ գտանի մարդ՝ գուցէ ոչ բնաւ, որ ոչ իցէ ընդ ումեք խռովեալ. ո՛վ թշուառութեանս. մինչև ցե՞րբ խռովիք, և խռովեցուցանէք զայլս. վասն ո՞ր սիրէք զնանրութիւն, և խնդրէք զստութիւն ՚ի վնաս անձանց ձերոց։

բ. Խռովութիւն սովորաբար լինի ՚ի մէջ սիրելեաց և ծանօթից՝ քան ՚ի մէջ ատելեաց և անծանօթից. զի ատելի և անծանօթ ոք ՚ի գործել զչար ինչ, թէպէտև լսօղք ատեն զնա, և զգործս նորա, այլ ոչ ոխս խռովութեան

պահեն ընդ նմա, զի ոչ առ ինքեանս վերաբերի այն. այլ միայն ճանաչեն զայնպիսին, և զգուշանան 'ի նմանէ:

Իսկ 'ի մէջ սիրելեաց և ծանօթից վ՟ս այնր լինի խռովութի, զի խօսք կամ գործք նց՟ հակառակի կամաց նց՟, ըստ այնմ. * Եթէ թըշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի արդեօք, կամ ատելւոյն մեծաբանեալ էր 'ի վերայ իմ՝ թաքչէի արդեօք 'ի նմանէ. իսկ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ: || Սաղ. ծդ. 13. 14:

Եւ ահա յայտ աղբերէ բղխի խռովութին:

Ապաքէն արժան է քննել զպատճառն խռովութե, եթէ իրաւամբ իցէ արդեօք, թէ յանիրաւի. արդ՝ եթէ իրաւունս ունի մին 'ի վ՟ր միւսոյն, ոչ է արժան խռովիլ, այլ դատաստան արդարութե խնդրել. և յայնժամ ոչ ասի խռովութի՝ այլ արդարութի. իսկ եթէ չունի իրաւունս, ահա ընդ վայր խռովի, և 'ի զուր տանջի:

Գ Եթէ մարդիկ ճանաչէին զբնութիս մարդոյ հաստատեալ 'ի սխալական և 'ի դիւրասահ վիճակի, ոչ երբէք խռովէին ընդ միմեանս՝ այլ ներէին միմեանց. զի և ինքեանք գոլով 'ի նոյն բնութե՝ 'ի հարկէ սխալին երբեմն՝ չասացից թէ բազում անգամ:

Բայց զարմանք այս է, զի ամենեքեան կամին՝ թէ այլք լինիցին կատարեալք, և ինքեանք ոչ ինչ հոգան զանձանց կատարելութէ:

Որդ՝ եթէ բարի է լինել այր կատարեալ և անսխալ, ընդէ՞ր դու ոչ ջանաս լինել. ապա յայտ է, թէ ոչ նա՝ այլ դու ինքն դատար անկատար։

Մանզի եթէ նա արար զպակասութիւն ինչ և դու ծանեար զայն, մի՛ խռովիր. այլ քոյդ կատարելութեամբ ուղղեա՛ զպակասութիւն նորա. կամ յաղթեա՛ նմա՝ մնալով անխռով. զոր եթէ ախորժես՝ կարես առնել. ապա 'ի նմանէ խռովիս դու՝ և խռովեցուցանես զընկերդ։

Գ Լինի և ս՝ զի առ 'ի զերծանիլ 'ի մեծագոյն վնասուց՝ բռնադատի առնել ոք զիր ինչ վնասակար ըստ իմիք, ընդ որ խռովի բարեկամն. բայց որ արարն զայն՝ ոչ կարէր չառնել, հայեցեալ 'ի մեծագոյն վնասն՝ որ հարկաւ ունէր յառաջ գալ անտի։ Ապա պարտ էր խոհական բարեկամին ցաւակցիլ նմին՝ քան տարապարտ խռովիլ։

Ե Հպարտք արագաշարժ են 'ի խռովիլ. զի որ եղեն՝ ոչ հաւանին, և 'ի համբերել՝ յանձն ոչ առնուն. վ՟յ զաղմուկ խռովութեան յուզեալ՝ վրդովին և վրդովեն զբազումս։

Զ Կան և ոմանք՝ որք իբրև զմտախոյզ ընդ անձանց խռովին, յորժամ զվնասն որ եղև այլակարծութ՝ երկնչին յայտնել ումեք, կամ ոչ կարեն յետս նահանջել։

Է Խռովութիւն լինի 'ի հաւասարէ առ հաւասարս. իսկ 'ի մեծէ առ փոքրն և 'ի փոքուէ առ մեծն՝ ոչ լինի ուղղապէս. զի նիւթ խռո-

վութեանն գտանի 'ի հակառակութէ կամաց՝ որք կարեն փոփոխակի ընդդէմ կալ միմեանց:

Արդ՝ եթէ մեծն հակառակի և անարդար գտանի առ փոքրն՝ ասի բռնաւորութի՟ կամ զրկողութի՟. և եթէ փոքրն առնէ զնոյն, ասի յանդգնութի՟ կամ խարդախութի՟. ապա միայն առ հաւասարս լինի խռովութի՟:

Ը. Խռովին պատճառի 'ի տկարութէ՟, և 'ի փոքրոգութէ՟. զի զօրեղն յայտնապէս վեճէ՝ և զկամս իւր յառաջ տանի, և յաղթէ հակառակին՝ թէ իրաւամբ և թէ անիրաւութբ՟: Իսկ տկարն ոչ կարացեալ երբեք ընդդէմ զինել՝ խռովի մտօք. յամ՟ուրեք տրտնջէ. առ ամենեսին գանգատէ. և այս յառաջանայ 'ի լինելոյ փոքրոգի:

Թ. Այլ խորախորհուրդ պարտ վարկանի երբեմն անխռով մտօք 'ի բաց կալ 'ի սիրոյ ուրուք, յորժամ զգայ թէ 'ի սիրելութէ՟ անդ գոյանալ ունի չար ինչ, կամ արատ պատուոյ. և այս ոչ է տկարապէս ատելութի՟ կամ խռովութիւն՝ այլ զգուշութի՟:

Սովին մտօք հրաժարին բարեսէր անձինք 'ի հաղորդակցութէ՟ չարաց, և ոչ ախորժեն ընդ նմ՟ խօսակից լինել և սեղանակից. ոչ զի զանձինս նց՟ ատեն, այլ զգործս նց՟: Նոյն յայսպիսի առիթս ոչ ասի ունել խռովութի՟ ընդ մարդոյ՝ այլ ընդ գործս մարդոյ. քանզի պատճառս չար ներգործութե՟ արհամարհի ներգործօղն, որ ըստ ինքեան էր բարի: Զի մարդն

ըստ բնութեն իւրում է բարի և արժանի սի-
րոյ · սակայն Թիւր կամօք 'ի գործել իւրում
զչար՝ լինի և ինքն չար · յորմէ արժանի է խոր-
շել և հեռի կալ իբրև 'ի պատճառէ չարեաց ·

Ժ Մեծամեծ խռովութիւք բազում ան-
գամ պատճառին 'ի չնչին իրաց , ուր մեծամեծ
հրդեհք 'ի փոքրագոյն ինչ կայծէ : Այս որ
կամի մնալ ընդ ամենեսին հաշտ և անխռով,
նրբանկատ լիցի մինչև ցերս փոքունս՝ զի մի
ծագեսցի խռովութի ինչ 'ի մէջի :

ԺԱ Իցէ արդեօք այնքան անագորուն և
խստասիրտ ոք՝ որ միանգամ խռովեալ ընդ
ումեք՝ ոչ երբէք կամեսցի ներել և հաշտիլ ·
մանաւանդ ընդ այնմ՝ որ խոնարհեալ աղա-
չէ , միջնորդս 'ի մէջ արկանէ՝ և խնդրէ ըղ
խաղաղութիւն :

Արդարև ո՛վ ոք և իցէ այն՝ որ ոչ հաճեսցի
հաշտիլ , կորուսանէ զյարգ և զպատիւ իւր՝
առաւել ևս զհոգի իւր · զի զԱծ բարկացու-
ցանէ , որ կամի զխաղաղութի ամենեցուն :

Այս եթէ պնդիցէ այնպիսին , եթէ իցէ
տէր անձին և յօժարութե իւրոյ , յայնժամ
առաւել ևս պարտ էր արագ ողջունել ըղ
հաշտութի · զի իբրև այր քաջ զյաղթանակն
վարձուց կապեսցէ 'ի գլուխ : Բայց ոչ կա-
մելովն հաշտիլ՝ ցուցանէ թէ չէ տէր անձին,
այլ տկար և անզօր 'ի նուաճել զկիրս իւր :

ԺԲ Են ոմանք դժնեայ ոխակալք , որ 'ի խը-
ռովել ընդ ումեք այնքան յամառին , մինչև

ժամ պարապոյ խնդրել վրէժս առնուլ։ Նու-
այս է ախտ դիւական. և ախտացեալքն սո-
վիմք կարի՛ անողորմ են, և անարժան ա̃ծային
ողորմութե̃. որովհետև անողորմից անողորմ
դատաստան լինելոց է, * ‖ Յակո. թղթ. բ. 13։
Ո̃ զի ո՛րքան և յանիրաւի վշտացեալ իցէ ոք
յումեքէ, պա՛րտ է նմա ողորմել և ներել՝ իւ-
րև մարդկային տկար բնութե̃ վիճակելոյ. և
ո՛չ յերկարատև պահել ՚ի մտի։

Սաստիկ ոխակալն նման է խանձատելոյ ՚ի
հուր. զի ո̃պ խանձատեալն զնշան այրեցածին
ո՛չ կորուսանէ, այսպէս և ոխակալն զն̃խութ
ատելութե̃ն ո՛չ հանէ ՚ի սրտէ. որով իբր
անշիջանելի հրով տոչորի ինքն՝ և տոչորէ
զայն՝ ընդ որ ոխայ. վա̃յ ոխակալն միշտ է ան-
հանգիստ և խռովեալ։

Ժե. Ներել ընկալեալ անիրաւութեանց՝ է
նշան արիական ոգւոյ. զի որ խռովի ընդ ու-
մեք, հարկաւ հեռեւի՝ թէ յայնմանէ ունի
ընկալեալ յանիրաւի զվնաս ինչ։ Ապա որ ան-
փոյթ լինի և ներէ, ցուցանէ զինքն կարող
և արի. զի կարաց յաղթել վնասուն, և մնաց
անդորրամիտ և անխռով։

Ժէ. Քրիստոնեայ խռովասէր՝ որ զոխս
քինու ծրարեալ ՚ի սրտի՝ ատէ զեղբայր իւր,
զանձն իւր դատապարտէ, յորժամ զտ̃րունա-
կան աղօթսն ասէ։ Հա՛րկ է մեզ՝ կամ սիրել
զեղբարս մեր, կամ ատել զանձինս մեր։ Ո՛չ է
արժան ատել զոք, բայց միայն զչարս։ Պատա-

պարտելոց միայն է ատել զինքեանս ։

ԺԵ. Ներէ մեզ Աստուած, եթէ ներեմք այլոց ։ Չիք այնպէս յայտնի նշան դատապարտութեան, որպէս ոչ ներելն. ըստ այնմ, * Եթէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր ։ || Մատթ. Զ. 15 ։

* Որ կազմէ կարթս յերեսս բարեկամի իւրոյ, պատահեսցէ հաղթեա զոտիւք իւրովք ։ || Առակ. ԻԹ. 5 ։
* Եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն . . . և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջի՛ր զպատարագն քո ։ || Մատ. Ե. 24 ։
* Մի՛ զոք հայհոյել, անխռովս լինել, հեզս, զամ̃ հեզութիւն առ ամ̃ մարդիկ ցուցանել ։ || Տիտ. Գ. 2.

## Ստութիւն

### ԳԼ. ԺԲ

ա Աղբիւր ամ̃ չարեաց կոչել զստութիւն ոչ է անդէպ. որովհետև բառնայ զՃշմարտութիւնն՝ որ է աղբիւր ամ̃ բարեաց ։ Եւ թէպէտ ստութիւն չունի էութիւն, զի է պակասութիւն Ճշմարտութեան. բայց զմարդն՝ որ ունի էութիւն բնականապէս՝ փոխարկէ յոչ էութիւն բարոյապէս. քանզի ամ̃ ոք ոչինչ համարի զստասացն ։

Ապա որ զայլ ինչ խօսի քան զոր 'ի միտս ունի՝ է խաբեբայ, դաւաճան, և կեղծաւոր.

զի զսուտն իւրն զճշմարիտ կեղծէ , զի խաբեսցէ և դաւաճանեսցէ . վայ կորուսանէ ըղյորդ և զպատիւ իւր . և լինի անարգ և արհամարհ յաչս ամենեցուն :

Բ Ընդդէմ մարդկութեան է սուտ խօսել . որովհետև հակառակի ճանաչման մտաց խօսողին . ապա որ գիտէ զուղիղն՝ և այլայլէ մըտութիւն , կեղծէ զիւր ըմբռնումն , և զանձն իւր խաբէ . ուստի ընդ ինքեան մաքառի , և ընդդէմ լինի մտացն ճշմարտութեան : Այս արդարև չիք չար առաւել քան զայս . բայց չիք յաւէտ յաճախեալ քան զայն առ մարդիկ :

Գ Թէպէտ յոյժ արժանի անարգանաց են ստասացք , բայց յորժամ դատաւորք՝ գիտունք՝ մեծատունք՝ և իշխանք ստեն , այնչափ առաւելու անարգանք նոցա , մինչև լինել նոցա հրէշ իմն այլանդակ և զարհուրելի , և տագնապ վտանգի 'ի մէջ աշխարհի . որպէս թէ արեգակն խաւարաւ պատիցի :

Դ Քանզի մինչ հասարակութիւն տառապի 'ի ստասաց խարդաւանողաց՝ դիմէ առ դատաւորս , առ գիտունս , առ իշխանս , և առ մեծատունս , գտանել 'ի նոսա զարդարութիւն ճշմարտութեան . իսկ եթէ նոքին ստուե պաշտօնեայ լինիցին , առ ո՞րս արդեօք զրկեալքն բողոքեսցեն պահանջել զիրաւունս և զդատաստան :

Ապա կարի իրաւամբ բարեմիտ իմաստնոց առելի թու՛եցաւ մեծատուն ստասաց . վասն զի աղքատն գուցէ ակամայ , և ոգէան յանդիմանէ

մտաբերիցի ստել. իսկ որ փարթամն է և գիտուն՝ յորոց ստիպի ձեռնարկել յանախորժելիսն մարդկային սեռի:

Այս պիղծին ամենեքեան հեռի կալ ՚ի ստութէ. մանաւանդ իշխանք և դատաւորք և գիտունք. զի մի՛ յառակս նախատանաց լինիցի յարգ և պատիւ իւրեանց:

Ը Որ ոչ կամի անկանիլ ՚ի ստութի, սակաւախօս լիցի. զի ճշմարտութիւն մի է, և ստութիւն բազում. այլ շատախօս ոք և բազմաբան ոչ կարէ զերծ մնալ ՚ի ստութէ:

Է Ա. մարդ՝ որ իմաստութի և պարծանս վարկանի ստութէ ճոռոմաբանել ՚ի հանդիսի բազմութե. բայց ոչ գիտէ՝ թէ այնու առաւել եղերի քան գոլի՞ ՚ի խոհեմագունից և յիմաստնոց:

Այս բարի է սակաւ և պարզ բանիւք առաջի առնել զճշմարիտն, քան ունայնաբանութեամբ յաճախել ՚ի խօսս. և ստասաց երևիլ, և պարսաւիլ:

Զ Ստեղծապատիր ստութե խաբել զպարզամիտն ՚ի տուրևառիկ վաճառս, առաւել չար է քան զայտնի աւազակութիւն: Ո՛ է ամ ոք զգուշանայ յաւազակաց. իսկ ստաբանն՝ զչարութիւնն գողեալ ճշմարտութե կերպարանաւ՝ երևի անկասկածելի. և անդր քան զաւազակն կողոպտէ և մերկացուցանէ զո՛ ոք ՚ի ձեռս բերցէ:

Նա զի պատիժ գողոց և աւազակաց ամե-

նեցուն յայտնի գոլով, բազումք յետս կասին յայնպիսի չարէ . բայց վն՟ զի ստախօսն՝ պատիր բանիւք արդարացուցեալ զանձն՝ բազում անգամ մնայ անպատիժ առ ժամն . վյ՟ և բազումք ՚ի մարդկանէ յաճախեն առ այն . և համարձակ յանդգնին ստել :

Բայց ամ՟ ստախօս ըստ ածային՟ արդար իրաւանց ՚ի վախճանի կրէ զպատիժ վնասուն . Թէպէտ ոչ ամենեցուն բացայայտ երևի . որոյ աղագաւ ոչ զգան բազումք թէ իցէ այն ՚ի պատճառս ստութե՟ :

Այս քա՛ջ ծանիցեն այնպիսիք, զի չէ՛ք չար՝ որ ոչ ընդ իւր կրեսցէ զկշիռ վրէժխնդրութե՟ և պատժոյ, թէ ՚ի մարդկանէ՝ և թէ յայ՟ . զի պատիժն է ծանրութի՟ յանցանաց . և ոպ՟ ոչ գոյ առանց ծանրութե՟ մարմին, նոյնպէս ոչ գոյ չար ինչ՝ որ մնասցէ անպատիժ :

Է Պարտին ծնօղք զաւակունս իւրեանց՝ և վարժապետք զաշակերտս հաստատել ՚ի մանկութէ ՚ի ճշմարտութե՟ . և ատելի երևեցուցանել նոցա զստութի՟ն . զի որ միանգամ ՚ի թարմ հասակի տղայութե՟ ուսանիցի ստել, անկարծիք ՚ի մեծութեանն լինի ծայրագոյն ստասաց, և ծայրագոյն չար : Զի ունակացեալ սովորութի՟ն դառնայ յերկրորդ բնութի՟ . և ընդ աճել հասակին, աճին և ունակութի՟քն . եթէ բարի և եթէ չար : Ուրեմն որով իւ՟իք զարդանայ մատաղ մանուկ, ընտելաւ պատշաճի և ՚ի մեծանալ իւրում :

Է Լ. մարդ որ ստէ , ոչ վասն ստանալոյ զինչս , այլ վն̃ որսալոյ զպատիւ և զհամբաւ յունկնդրաց . սա է շողոտ ժժմանկ՝ որ 'ի գիշերի ուրեք սողայ՝ որոյ հեղանիւթ արծաթի զհետս գնացիցն փայլեցուցանէ :

Արդ՝ ո՞ 'ի մարդկանէ այնքան յետսամիտ իցէ, որ զայն փայլուն գիծ՝ հեղուկ արծաթի կարծիցէ : Ապաքէն դու ո՛վ ստաբան և անապարծ՝ մի՛ կարծեր թէ մարդիկ ոչ իմանան զստութիւն քո . կարի քաջ գիտեն որոշել զուղղախօսն 'ի ստաբանէն :

Վա՜յ փոխանակ պատուոյ և համբաւոյ զոր կամէիր , ստանաս զանարգանս և զանպատուութի̃ զոր ոչն կամիս . գուցէ և զպատիւ ինչ եթէ ունիս՝ զայն ևս կորուսանես :

Ապա որ ցանկաս ճշմարիտ պատուոյ և բարի համբաւոյ՝ յամի լինիցի ուղղախօս . քանզի ճշմարտախօսից՝ նոյն իսկ ճշմարտութիւնն է փառք և պատիւ և զարդ անկողոպտելի :

Թ Միշտ և յամի խօսի սնապարծն . բայց առաւել յայնժամ՝ յորժամ լսօղք առ շնորհուկս նր̃ լսեն . և ոչ հակառակին զրախօսութեանց նր̃ , մինչ մեծամեծս բարբառի զանձնէ իւրմէ 'ի մէջ բազմու̃թե :

Սակայն լռութիւն նոցա և ևս տեղի տայ ստաբանին՝ առ անձնէ հեր արշաւել յասպարէզ անպայման պարծանաց ստու̃թե . մինչև ինքնին գլորել 'ի վիհս խայտառակու̃թե . որովհետև 'ի բազում բանս իւր յայտնի լինին

ստութիւք նր · զի որ 'ի սկիզբն կարի խորոտ ճամարտակէ, 'ի մէջն թուլանայ, և 'ի վախճանի խայտառ լքանի ։

Սպա պարտ է ճշմարտախօս լինել միշտ, առաւել ևս 'ի հանդիսի բազմութեան · և այն կարճ և հակիրճ բանիւք, զի մի' տաղտկացուցեն լսօղք ։

ՃԷ Ստութին առաւել թագաւորէ 'ի տգէտս և 'ի մանկունս · քանզի տգէտն սուտ է, զի զտգեղութի իւրոյ տգիտութե ծածկեսցէ · և ոչ զի այնու իմաստուն համբաւեսցի · իսկ այս է' զհողն տղմով գեղեցրեսել · և մանկն սուտ է և ճոխաբանէ, զի բարի ուն թուեսցի · Բայց պարտ էր նոցա 'ի միտ առնուլ զիմաստուն զայն առած, թէ պերճքն բանիւք' զուրկ են յառաքինութենէ ։

Նա սոքա' և նմանիք սոցա' կամելով զտգեղութիւնս իւրեանց ծածկել ստութբ' և ևս գարշելի առնեն զանձինս · ապա յամի ամ իրօք խորշելի է 'ի ստութէ ։

ՃԸ Որ միանգամ սուտ 'ի բանս իւր' սովորէ միշտ սուտել · որով խայտառ օտարանայ 'ի ճշմարտութէ, և լինի սուտն շտեմարան ։ Քանզի սա 'ի ծածկել զնախկին ստութին, ջանայ հնարել զայլ սուտ, զի մի' խայտառակեսցի · և 'ի պատրուակել զերկրորդն' երրորդէ զսուտն · նոյնպէս աշխատի այլովք ստովք և զայն քօղարկել · և հանապազօր դիմէ 'ի միոյ ստոյ առ միւս սուտ, մինչև լինել նմա խայտառ ստաստոց · ապա ջանալի է' 'ի սկզբան անդ հատել երբէք սուտ ։

ժէ ՚Ի յետին անարգութի՟ անկանի ստա-սացն . եբրև ասէ զայնմանէ՝ որոյ խոկութի՟ն յայլուստ լուեալ է ունկնդիրն . սակայն ո՛չ ինչ զգացուցեալ՝ սպասէ և ես լսել ՚ի նմանէ, զի քաջ հասու լիցի ստութե՟ նորա ։ Ուստի եբրև պարզամիտ ձևացեալ՝ սկսանի զայլ ինչ առարկայ յառաջարկել, զի որսասցէ զամենայն տարաղ սրտի նորա ։

Իսկ և ստողն յիմարեալ՝ խնդայ ՚ի միտս թէ խաբեաց. վա՟յ դուն գործէ յաւելուլ զսուտ ՚ի վ՟ր ստոյն՝ առ ՚ի հաւաստի առնել զբան իւր ։

Բա՜բէ խայտառակութե՟ թշուա՛ռ ստասա-ցին, և պատուհասեալ ճնարից նրբամիտ ուն-կնդրին . մին գողացոյց զգողունին յանդգնաս, և կարծէ թէ առ ինքն ունի դեռ . և միւսն գողացաւ զգաղտնիս նորա , բայց ո՛չ է յայտ թէ իցէ գող ։

Ստոտ է տեսանել երկոցունց սոցա զարմա-նալի հայեցուածս առ միմեանս , և խնդամտու-թիւնս կեղծուպատիրս . զի ումն յաղթահար-եալ խորտակեցաւ , այլ ո՛չ զգայ զիւր ան-կումն և զպարտութի՟ . և ումն յաղթեաց և էառ զյաղթանակն , բայց տակաւին ցուցանէ զինքն յաղթեալ և ընկճեալ ։

Իսկ զի՞նչ յաւէտաքան զայս անձին թշնամու-թի՟՝ զոր նիւթե՟ց ստաբանն . զի ահա՛ բարձաւ ՚ի նմանէ հաւատարմութի՟ն, ո՛ այլ ես հաւատասցէ բանից նր՟ . ապա բարւոք ասաց որ ասացն՝ թէ ստասացն զայն միայն շահի , զի յորժամ

զճշմարիտն ասէ, ոչ ոք հաւատայ նմա :

ԺԴ. Բարւոք է մարդոյ 'ի սկզբան անդ խոնարհ խոստովանութե̃ առաջի առնել զկարօտութի̃ իւր այնմ՝ յորմէ խնդրէ առնուլ ինչ, քան պատրուակել զկարօտութի̃ իւր և ստել և յետոյ զամօթի հարկանել և նախատել : Ապաքէն չար է ստութի̃ն, և անճնար է 'ի չարէ բարւոյ ինչ յառաջ գալ :

Արդ՝ համարեսցուք թէ ստութե̃ գտեր յումեքէ զօգնութի̃, կամ շահեցար ինչ . բայց այն ոչ է շահ՝ այլ վնաս մեծ . վ̃ զի 'ի հարկէ յաւուր միում յայտնի լինի ստութի̃ն, և դու ընդ նմին լինիս ատելի . և այնուհետև ոչ կարես գտանել զօգնութի̃ 'ի մարդկանէ :

Ուրեմն բարի՛ է զուղիղն խօսել, և զմարդիկ 'ի կարեկցութի̃ քեզ ածել . քան ստելով ատելի ամենուն լինել . զի այս օրէնն է մարդկան, օգնական լինել ուղղախօսին, և ձեռնունայն արձակել զստախօսն :

ԺԵ. Ո՛չ է արժան յաւետուրս խառնել ստութի̃ . զի ստելովն արդար շահն փոխի յանիրաւ խաբէութի̃ . և որ անիրաւութե̃ հաւաքէ զինչս, ոչ այլ ինչ շահի յայնմանէ՝ բայց եթէ լինել անիրաւ . իսկ անիրաւութե̃ ժողովեալ ինչքն՝ հողմով փորձութե̃ ոչնչանան. որպէս առ բազումս է տեսանել :

Ապա եթէ ասիցէ ոք, անճնար է առանց ստութե̃ առևտրութի̃ս առնել, յոյժ սխալի . զի այնու կամի զամենեան ծառայ ստութե̃

գրել , և զճշմարտութիւն յաշխարհէ տարա-գրել . սակայն առևտրութիւն ուղղախօսութեան առաւել արդիւնաւոր է և յաջող՝ քան ստութե և խաբէութե : Զի որ միանգամ ճշմարտա-խօս համբաւի՝ ամենեքեան ցանկան ընդ նմա առևտրութիս առնել . որով առաւել շահի և փարթամանայ . և մնան ինչք նր առ յետ-նորդս իւր 'ի ժառանգութի անկորուստ . զորս փորձն քա՛ջ ճանաչեն արդարաբան վա-ճառականք և արհեստաւորք :

Նա՛ զի նոքին իսկ ստաբանք յանկանիլ իւրեանց 'ի վտանգ՝ հարեալք 'ի խղճէ մտաց՝ վկայեն անշուշտ, թէ վս այնորիկ հասաք յայս յետին չքաւորութիս, և կամ տագնապ դառ-նութե զմեօք պաշարեաց , զի ստութե ժո-ղովեցաք զինչս . և ահա ինչքն կորեան , և մեք մնացաք պարտապան հատուցման առաջի այ և մարդկան :

Ապաքէն եթէ կամի ոք յորատևել 'ի բարօ-րութե , և տեսանել զվաստակոց յաջողութի , մի՛ երբէք խօսեսցի սուտ 'ի գնելն և 'ի վա-ճառելն . այլ եղիցի բան նր այոն այո՛ , և ոչն ո՛չ , ըստ տեառն պատուիրանի : Արդարև դիւրաւ կատարէր այս , եթէ ամենեքեան յայս միտս հաստատէին :

ԺԵ Մինչ ստախօսն մնայ անպատիժ 'ի մարդկանէ , յայնժամ առաւել երկիցէ՝ զի ունի պատժիլ յայ . ըստ որում ստութիւն է ընդդէմ ճշմարտութե . և որ ընդդէմ է ճշմար-

տուէ, է ընդդէմ այ. զի նա է ճշմարտութի։

Արդ ծանիցեն ստաբանք թէ քանի՛ չար է ստութիւնն, և զգաստատայինն։

* Պիղծ են առաջի տն շրթունք ստայօդք. իսկ որ առնէ հաւատս ընդունելի է նմա։ ‖ Առակ. ԺԲ. 22։
* Չար բիծ 'ի մարդ ստութի։ Ա՛յլ է գողութի, և ա՛յլ է ստութի, և երկոքեան կորուստ ժառանգեսցեն։ ‖ Սիրաք. Ի. 26. 27։
* Ո՛չ գոյ ճշմարտութի 'ի նմա. յորժամ խօսիցի սուտ՝ յի-րոց անտի խօսի. զի սուտ է և հայր նորա։ ‖ Յովհ. Ը. 44։

## Սուտ վկայութիւն

### Գլ. ԺԹ.

ա Կա՛ չար ինչ՝ որ միայն գործողին է չար. որպ՟ որկրամոլութի, տրտունջ, յուսահատութի. ձանձրոյթ, ծուլութի, դատարկութի, և այլն։ Զի սոքա իբրև ցեց գոյանան յանձն մարդոյ. և ապականեն զնա ազգի ազգի փտառուք. և թէ անցցեն 'ի փոխս այլոց՝ այն է պատահաբար և անուղղակի. որպ՟ 'ի մեռանիլ ուրուք 'ի որկրամոլութէ, փոխանին ըստ իմիք ընտանիք նորա մնալով անխնամ։

Կա՛ և չար՝ որ ո՛չ միայն գործողին է չար, այլ նաև այլոց. զի ուղղակի առ այլս հասանի չարութե նր ներգործութի. որպ՟ սպանութի.

գողութ̃ի · շնութ̃ի · խաբէութ̃ի · և այլն :
Որոց սակի է և սուտ վկայութ̃իւն · զի ոչ միայն սուտ վկայն վնասի, այլև նա՝ վ̃ն որ է վկայութ̃իւն:

Ուստի յայսպիսիս կրկնապատկին ոճրագործութ̃ե եղեռունք · զի սուտ վկայն կամաւ զանձն մատնէ 'ի չարիս · և զայլս բռնի քարշէ 'ի վնաս · ապա կրկին պատժոյ արժանի՛ է նա · մի՝ վ̃ն իւր անձին , երկրորդ՝ վ̃ն այլոց որոց վնասեաց : Նա՝ զի ոչ է անդէպ՝ Թէև ընկալցի զբազմապատիկ պատիժս · զի օրինակաւ իւրով եղև առաջնորդ այլոց՝ յանդգնիլ 'ի նոյն մեծեղեռն չար սուտ վկայութ̃ե :

Բ Սուտ վկայն՝ Թէև ոչ վնասեացէ այլոց, շատ է նմա վնասն, զոր ընդունի յանձն իւր · զի լինի անարգ և ատելի : Իսկ եԹէ սուտ վկայութ̃ե վնասեացէ այլոց · մատնելով զընկերն 'ի տուգանս , կամ 'ի տանջանս , կամ 'ի մահ · և կամ համբաւ չար զումեքէ յանիրաւի հռչակեսցէ , ո՛վ կարէ զմեծութ̃ի չարեացն չափել · բայց միայն նա ինքն սուտ վկայն , յորժամ կրեսցէ զպատիժ պատուհասի աստ և 'ի հանդերձեալն՝ ըստ արդար դատողութ̃են ա̃յ :

Գ Վկայութ̃իւն սահմանեցաւ վ̃ն արդարութ̃ե · զի յորժամ դատաւորն լուեալ երկուց կողմանց՝ դատախազին և դատեցելոյն , որք միապէս պնդեն հաստատել զփաստս իւրեանց , պաշարի տարակուսանօք որոշել զարդարն և զիրաւացին , յանձն առնէ վկայից հաւատարմութ̃ե · ահա կշիռն արդարութ̃ե

եանց 'ի ձեռս վկայից ։

Արդ՝ եթէ վկայքն թիւրեսցեն զմիտ կըշ-ռոյն, և սուտ վկայեսցեն 'ի դատաստանի- յանցանեն օրինաց արդարութեան, և լինին պար-տաւոր ։ Այս 'ի հրապարակս խայտառակ շրջե-ցուցանեն զսուտ վկայն, զերեսն 'ի թիկունս դարձուցեալ 'ի վերայ իշոյ ․ և կարի իրաւամբ, զի որ զերեսն դարձոյց յուղղութենէ, արժանի է զի դարձցին և երեսք նորա 'ի թիկունս կոյս ։

Է Որ վասն կաշառաց վկայէ ստութիւն, ոչ միայն փոխանակէ զիրաւունս ընդ արծա-թոյ, այլև մատնէ զարդարութիւնն 'ի ծա-ռայութիւն մարդկան ։

Եւ քանզի դատաւորք ըստ վկայելոյ վկայից դատեն ․ եթէ վկայն է սուտ, վճիռ դատա-ւորութեանն լինի անիրաւ և զրկող ․ և որ զրկի յիւրոց իրաւանց 'ի դատաստանի, ելեալ արտաքս գանգատի զդատաստանէն որ եղև ․ թէ որպիսի արդարութիւն է այս, որ զրկեաց զիս յիրաւանց իմոց ։ Ո՛չ տրտնջէ զդատաւո-րէն, զի նա ուղիղ վճռեաց ․ որովհետև ըստ օրինաց՝ պա՛րտ էր նմա լսել վկային ․ իսկ արդ՝ որպէս վկայեաց վկայն՝ նոյնպէս դատեաց և նա ։

Արդարութիւնն՝ որ անմեղ է, և քաջ դիտէ իւրաքանչիւրոց զիւրն բաշխել՝ մատնեցաւ 'ի ձեռն սուտ վկայի, և անկաւ 'ի ծառայու-թիւն ․ որ յորժամ ուրեք պարզերես փայլէր, աստէն զամօթի հարաւ ․ զի դատի յայնմանէ՝ որում ոչ մեղանչեաց ։

Տեսէ՞ք արդեօք որո՞վ մասանիչ արդարութե՟ են սուտ վկայք . բայց մի՛ ակնկալցին մնալ անպատիժ, և խաբել զա՟մ դատաւորս . վ՟ն զի արդարութի՟ն միջաբեկ եղեալ 'ի ստեղծեալ դատաւորաց՝ դիմէ առ անստեղծ դատաւորն ա՟ծ՝ խնդրել զիրաւունս : Այնժամ ա՟ծ որ ոչ է կարօտ վկայից, ուղղապէս դատէ . և զսուտ վկայն չարաչար պատժէ . և որ զըրկեցաւն՝ տէր լինի իւրոց իրաւանց : Ապաքէն երկիւցեն սուտ վկայք յո՟յ, և դարձցի՟ն յանիրաւութենէ :

Է Որ վ՟ն սիրոյ բարեկամութե՟ վկայ լինի ստութե՟, եղծանէ զօրէնս բնութե՟, և ընդդէմ գործէ ա՟ծային օրինաց . զի օրէնք բընութե՟ն ուսուցանէ, նախ զանձն պահպանել 'ի չարէ, ապա ըստ ձեռնհաս գոլոյ ջանալ և զընկերն պահել . և օրէնք ա՟ծային պատուիրեն, սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո : Իսկ որ վ՟ն սիրոյ ընկերին գայ վկայել սուտ 'ի դատաստանի, զինքն մատնէ 'ի մեծ չարիս . որով ցուցանէ առաւել սիրել զընկերն՝ քան զանձն իւր . և այս է ընդդէմ օրինաց բնութե՟ և ա՟յ :

Արդարև պարտ է սիրել զընկերն, և կամիլ նմա բարիս, և արդեամբ կատարել . բայց այնու պայմանաւ՝ զի մի՛ զանձն իւր տուժեսցէ, կամ ընդդէմ ա՟յ գործեսցէ ինչ : Ահա թշնամի անձանց և հակառակ ա՟յ են, որք 'ի սէր մարդոյ չարաչար մեղանչեն սուտ

վկայ լինելով։

Դ. Որ վն թշնամութեան երբեք սուտ վկայէ զումեքէ՝ առ՚ի վնասել և յաղթել նմա, փոխանակ նր ինքն վնասի, և յաղթի։ Քանզի համարեա՛ թէ զթշնամին զրկեաց յիրաւանց, կամ արկ ՚ի նեղութիւն և ՚ի տուգանս. սակայն այս ամ կերպ և վնասք մարմնաւորք և առօրեայք՝ սակաւ վշտացուցանեն զվնասեալն. զի կամ մոռացեալ լինին անցմամբ ժամանակի, և կամ վերջանան մահուամբ։ Իսկ սուտ վկային վնասն դառն է և դժնդակ. զի հոգևոր է, և յաւերժական։

Ապաքէն դու ո՛վ սուտ վկայ՝ որովհետև առաւել քեզ վնասագործ գտար քան թէ թըշնամւոյդ, ուրեմն յաղթեցար՝ քան թէ յաղթեցեր. հապա՛ դադարեա՛ց ՚ի չարեացդ, զի մի՛ առաջի այ և մարդկան պատժապարտ լիցիս յաւիտեան։

Ե. Ո՛չ փոքր հանճարոյ և նրբամտութեան պէտս ունի գնալն ՚ի սուտ վկայութի. զի ոչ է գործ տգիտաց և յիմարաց՝ ըստ ամ հարցմանց դատաւորին՝ պատշաճաւոր պատասխանի գտանել։ Բայց յաղթեալ ՚ի ճշմարտութե բազում հանապազօր պատժին ՚ի թի՝ կամ յաքսոր՝ կամ ՚ի գան, և կամ յայլ հարուածըս, և տակաւին ոչ զգաստանան։

Ո՜հ կամակորութե նց, և անզգամ լրբութեն. զի եթէ ապուշ ոմանք էին՝ ոչ յանդգնէին յայս ոճիր. իսկ սոքա արք ճարպիկ և գործունեայք՝

զիա՞րդ զնոյն պանծալի ձիրս բնութեան 'ի բարին ո՛չ 'ի գործ դնեն . և ո՛չ վաստակին ձեռօք, զի զարդար վաստակս իւրեանց կերիցեն զուարթերես և առանց մեղաց :

Ո՛վ թշուառականք՝ մինչև յե՞րբ դեգերիք 'ի դրունս դատաւորաց վասն տնաւերութեան . իր նայեցէք անձանց ձերոց , և դարձարո՛ւք 'ի չարեացդ . զի ո՛չ ոք չարակամ մնայ անպատիժ :

* Համբաւ սուտ՝ մի՛ ընդունիցիս : Մի՛ հաւանիցիս ընդ անիրաւին՝ լինել վկայ անիրաւ : || Ելից . ԻԳ . 1 :
* Բորբոքէ ստութիւն վկայ անիրաւ , և արկանէ խռովութիւն 'ի մէջ եղբարց : || Առակ . Զ . 19 :
* Վկայ սուտ՝ առանց պատժի ո՛չ լիցի . և որ բորբոքէ զչարութիւն՝ ընկերաց , և որ յօդէ չարութիւն՝ կորիցէ : || Առակ . ԺԹ . 9 :

## Մասն Երրորդն

### ԳԼ . Ի

Միայն ստախօս է անիրաւ . բայց որ երդնու սուտ՝ է անիրաւ և ամբարիշտ . զի յորժամ տեսանէ թէ ստախօսութիւն ո՛չ ինչ վճարէ՝ յաւելու 'ի վերայ և զերդումն . որպէս զի մարդիկ լուեալ զերդումն յանուն Աստուծոյ , հաւատասցեն բանիցն ստեցելոց :

Ո՛վ անտանելի աղետից . ստախօսութիւն ըստ ինքեան է չար . և յորժամ կրէ 'ի վերայ իւր

զամենամբք անուանս Այ , ծանրանայ չարութի նորա , և լինի ամենաչար ։ Եւ այս ոչ եթէ յանուանէ Այ՝ այլ յիւրմէ անարժանութէ , ՚ի կրել զսքանչելի անուանն անխաբ ճշմարտութեան ՚ի վր իւր ․ որպ բժշկեալ աչք վտանգեալ տանջի ՚ի պայծառութէ լուսոյ ։

Նոյնպէս ՚ի վր սոյն զանուանն Այ ՚ի վկայ կոչել , է մեծ ամբարշտութի ․ Նմին իրի որ երդնու սուտ՝ բաց ՚ի գոլոյն անիրաւ , լինի և ամբարիշտ ։

է Մարդիկ՝ մինչ ոչ կարեն զճշմարիտ ինչ հաւատալ առնել լսողաց՝ դիմեն առ Ած , որ է նախկին ճշմարտութի՝ և աղբիւր ճշմարտուէ , զի նովաւ հաւատարմագոյն արասցեն ։ Այ որ երդնու յանուն Այ՝ զԱծ վկայ կոչէ ճշմարտութեն իւրին ․ իսկ որ սուտ երդնու՝ զհեղինակն ճշմարտուէ զԱծ՝ սոյն վկայ կացուցանէ ․ և զինչ մեծ ամբարշտուի քան զայս ։

ը Պարտին ծնօղք՝ վարժապետք՝ և ամ արհեստից ուսուցիչք զմատաղ մանկունս և զերիտասարդս խորշեցուցանել ՚ի սուտխօսութենէ , մանաւանդ ՚ի սուտ երդմանէ ։

Զի որ միանգամ ՚ի չար ախտ ինչ սովորի ՚ի մանկութե անդ՝ բազում աշխատութբ հազիւ զերծանի յայնմանէ ՚ի մեծութեն ։ Եւ յոյժ դժուարաւ կարէ ազատիլ ՚ի ստութէ և ՚ի յերդմանէ ․ զի ունի գործի զլեզուն , որ է դիւրաշարժ , և ամ ուրեք պատրաստական ։ Որոյ աղագաւ բազում արթնութբ պարտին

զգուշանալ ծնողք և դաստիարակք նորաւոր թէեթ մանկանց , զի մի՛ սովորեսցին նոքա 'ի ստութիւն և յերդումն :

Զ Է եթէ ոք զերկրաւոր թագաւորս կոչէ 'ի վկայութի՟ւն վ՟ չնչին ինչ իրաց՝ արժանի լինի դատաստանաց , ապա ո՛րքան առաւել՝ որ զերկնաւոր թագաւորն կոչէ տարապարտուց 'ի վկայութի՟ւն բանից իւրոց : զի ա՟մ որ երդնու՝ կոչէ զա՟ծ 'ի վկայութի՟ւն :

Է Աւա՛ղ թշուառութե՟ա՛ս , են ոմանք որք զերդումն այնքան սիրեն , մինչև 'ի խօսիլ ընդ միմեանս՝ զանունն ա՟յ յիշեն անխտիր : Եւ զայս առնեն ո՛չ 'ի պահանջմանէ հարկին՝ այլ 'ի չար սովորութե՟է : զի որ ուսեալ է երդնուլ , ընդ ո՛ւմ խօսիցի՝ զի՛նչ և խօսիցի՝ առանց երդման ո՛չ խօսի :

Արի յանձնեալ է այս վնասակար սովորութի՟ւն 'ի մէջ ռամկաց և ադխաց : վա՛յ անարգ և արհամարհ են յաչս իմաստնոց և բարեմտաց : զի ո՛չ ոք հաւատայ նց՟ :

Ը Են ոմանք՝ որք 'ի խաղս և 'ի ծաղրաբանութի՟ս և 'ի գինեբրուս վայրապար երդնուն , անխիղճ մտօք յիշելով զահարկու անունն ա՟յ :

Արդ ո՛րև չարաչար 'ի հոգի խոցոտին՝ և ո՛չ իմանան : մերկանան 'ի շնորհաց՝ և ո՛չ տրտմին : ընդ դիւաց ընկերանան՝ և ո՛չ զարհուրին : վա՛յ անզգայ յիմարութե՟ե երդմնահարաց՝ զի կորնչին , և ո՛չ զգան :

Թ Են մարդիկ՝ որք սովոր են երդնուլ

առ հաւատալեան. որպ՞ 'ի սրբութի՛ 'ի խաչ՝ յեկեղեցի, և յանուն սբց. և կամ չարիս մաղթելով՝ նզովս կարդան անձանց. և կամ վկայ կոչեն զաստեղծուածս ինչ, զորս ած պարգևեաց 'ի վայելս մարդկան, և ահա՛ սոքին՝ և որ սոցին են սակի երդմնահարութիք՝ են մեղք և անօրէնութիք: Բայց այս է զարմանք, թէ զիա՞րդ մարդիկ ոչ յանդիմանեն զնս:

Մի՞ գուցէ վն առ ամնին հասարակ գոլոյ այսոցիկ անկարգութեց, ոչ համարձակին սաստել միմեանց. զի մի՛ և ինքեանք արժանի յանդիմանութե դատեսցին, կամ անձամբ զանձինս դատապարտեսցեն: Նա կարի քաջ յիրաւի. զի հազիւ արդէն գտանի մարդ՝ որ ազատ լիցի յայսցանէ: Նա զինչ դարման առ այս՝ քան խրատել զիրեարս՝ և զգուշանալ անձանց, զի մի՛ սայթաքեսցին յայսպիսի վտանգս:

Է Գտանիցի՞ ոք անմիտ առաւել քան զայն՝ որ 'ի բարկանալ իւրում, կամ ընդ խաղս ինչ, անխոհեմ խոստմամբ երդնու յած կամ յածայինս. և անձին չար մաղթէ, եթէ ոչ կատարեսցէ:

Ո՛վ յիմարութես. անձամբ անձին դահիճ լինի, և ոչ ճանաչէ: Ապա եթէ ոք խրատէ զնա՝ նանրացուցանել զխոստումն իւր, յայտ արարեալ զառ 'ի նմանէ վնասն, անդէն վաղվաղ զակն զերդումն առաջարկէ:

Զինչ քան զայս առաւել խելագարութի. ամ ոք մինչդեռ 'ի նեղութե է, խոստանայ և

երդնու՝ զի ազատեսցի . իսկ սա խոստանայ և երդնու՝ զի վտանգեսցի . և առ ՚ի կատարել զերդմունս իւր՝ բուռն հարկանէ զայնպիսի գործոց, որոց կատարումն ոչ է ՚ի ձեռս իւր, և անգիտելի ելք նոցա ։

Ապա պարտ է զգուշանալ յերդմանէ . զի մի՛ սովորեալ ՚ի նոյն՝ անխոհեմութեամբ երդնուցու կատարել զայն, յորմէ ունի կրել զվնաս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ։

* Մի՛ երդնուցուք սուտ յանուն իմ . և մի՛ պղծիցէք զանուն Տեառն Աստուծոյ ձերոյ ։ || Ղևտ. ԺԹ. 12 ։
* Եւ զերդումն սուտ մի՛ սիրէք . զի զայն ամենայն ատեցի՝ ասէ Տէր ամենակալ ։ || Զաքա. Ը. 17 ։
* Զբերան քո մի՛ ընտելացուսցես յերդումն՝ զի կործանումն բազում է ՚ի նմանէ ։ || Սիրաք. ԻԳ. 9.

## Կախարդք

### ԳԼ. ԻԱ

ա Աստուածպաշտութիւն է հաւատարմութեամբ ծառայել Աստուծոյ ՚ի յօժար կամս . և այս ծառայութիւն կատարի հնազանդութեամբ աստուածային պատուիրանացն, որք ՚ի սուրբ գիրս դրոշմեալ աւանդեցան հոգւով սրբով ։

Ապա որ զընդդէմն սուրբ գրոց առնէ, հակառակի աստուածային պատուիրանաց . և որ հակառակի աստուածային պատուիրանաց, կորուսանէ

զաստուածպաշտութիւն . և որ կորուսանէ զաստուածպաշտութիւն, հարկաւ հեռանի նմա լինել անաստուած : Իսկ սուրբ գիրք ամենայն իրօք արգելուն զկախարդութիւն . ուրեմն կախարդք ընդդէմ սուրբ գրոց գործելով՝ առ ոտս արկանեն զաստուածային պատուիրանն, որով լինին անաստուած :

է Սուտապաշտք թէպէտ են անաստուած՝ զի ոչ ճանաչեն զճշմարիտն Աստուած, սակայն և ոչ զդևս պաշտեն՝ ըստ որում դև . ապա կախարդք վատթար են քան զսուտապաշտս . զի գիտեն զԱստուած, և ոչ նմա՝ այլ դիւաց խունկս արկանեն, և պաշտօն մատուցանեն . զդևս կարդան, և առ նոսա ապաւինին :

ը Որ բարեկամանայ ընդ ատելիս ումեք՝ է ատելի նմին . իսկ կախարդք բարեկամանան ընդ ատելիսն Աստուծոյ՝ որ են դևք . ուրեմն կախարդք են ատելի Աստուծոյ :

Սոյին հետևութեամբ լինին Աստուծոյ ատելի, որ գնան առ կախարդս . որովհետև ակն ունին բարեկամութիւն ինչ գտանել 'ի կախարդական դիւագործութենէ . ապա թէ ոչ՝ ոչ երբէք երթային առ նոսա :

թ Դևք առաւել փոյթ են ձգել զմարդիկ 'ի կախարդական գործս՝ քան յայլ չարիս . զի թէպէտ յայլ ամենայն գործս չարութեան կամք դիւին կատարի՝ այլ ոչ պաշտի . իսկ 'ի կախարդութեան՝ պաշտի դևն որպէս հեղինակ գործոյն . վասնզի այլ մեղք առնեն զմարդն չարագործ . իսկ սա՝ դիւապաշտ :

Ապաքէն ա՟մ իրք արժանի դատապարտու-
թեան է կախարդն՝ և հետևօղն նմա ։

Է Սովոր են դևք խաբել զյիմարս ՚ի ձե-
ռըն կախարդաց, ո՟պ թէ զգաղտնիս յայտնե-
լով․ բայց ոչ եթէ զանցեալս կարեն ճշմարտու-
ցուցանել, այլ խաբէութբ՟ ՚ի վարանս տա-
րակուսանաց արկանեն զմարդիկ, զի առա-
ւել մտատանջ արասցեն և չարչարեսցեն ։

Ը Քանզի որ ՚ի բնէ չար է և թշնամի մարդ-
կան, զիա՞րդ բարւոյ իմիք մարթ է յուսալ ՚ի
նմանէ․ և որ ստասաց է ՚ի սկզբանէ, զիա՞րդ
հնար է նմա ճշմարիտ խօսել ։ Ապա կախարդք
զոր ինչ գուշակեն ուսեալ ՚ի դիւաց՝ է կեղ-
ծիք և սուտ, և խարդախութ՟ լի ։

Թ Ոմանք յիմարաբար կարծեն՝ թէ դևք
պատճառեն զոմանս հիւանդութիւնս ՚ի մար-
դիկ, զորս կոչեն դրսեվէ ։

Աւա՜ղ կուրութե՟ սրտից ն՟ց․ դևք առանց
թոյլտուութեն ա՟յ ոչ կարեն զոք տանջել ցա-
ւօք․ ախտք և հիւանդութիւնք ՚ի բազում պատ-
ճառաց գան յառաջ, և կարօտին դեղոյ և
սատարութե՟ բժշկաց․ բայց եթէ ախտ ինչ
իցէ դիւական՝ պարտ է յայնժամ զա՟ծ աղաչել
և զս՟բս բարեխօս առնել, ո՟պ զի բժշկեսցի ։

Եւ որովհետև ք՟ս փրկիչն մեր կապեաց ըզ
զօրութի դիւաց․ վ՟յ ոչ կարէ դևն՝ որքան
ցանկայ՝ այնքան վնասել մարդկան, այլ որքան
ներէ ա՟ծ․ և այս վ՟ն յանցանաց իրիք մարդոյ,
և կամ վ՟ն պատճառաց ինչ՝ որ ծածկեալ է ՚ի

մէնջ և անդիմադրելի. ապա թէ ոչ՝ դևք զամ մարդիկ չարաչար տանջէին։ Իսկ քրիստոնեայն որ 'ի շնորհս իցէ, ոչ երբէք զօրէ դևն մերձենալ 'ի նա. ըստ այնմ, * Ահա՝ ետու ձեզ իշխանութի կոխել զօձս և զկարիճս, և զամ զօրութի թշնամւոյն։ || Ղուկ. ժ. 19։

Է. Բազում անգամ պատահի հիւանդութի յապականութէ արեան, կամ 'ի մաղասից, կամ 'ի մաղձից, կամ 'ի մելամաղձէ, և ևս և յայլ բազմադիմի պատահարաց. ուստի և գտանին հիւանդք՝ զի երբեմն զդիւալլուկս փրփրին. սարսափին, ճչեն, յերկիր թաւալին, ծամծուին, պապանձին, և այլն։

Այլ և որ սոցին նման են ախտք և տկարութիւնք բնութե և խառնուածոց, կարօտին բժշկական դեղորէից. երաժշտութե, օդափոխութե, և պահեցողութե։ Բայց անգէտք և թերահաւատք 'ի պատահիլն այսպիսեաց ախտից՝ դիմեն առ կախարդական ճնարս. 'ի զուր տանջեն զհիւանդս իւրեանց, 'ի զուր մսխեն զբազում դրամս. և ոչ շահին ինչ, բայց եթէ զդատապարտութի։

Ը. Հիւանդութիւն պատահի կամ յայ 'ի պատիժ մեղաց, կամ յինքենէ մարդոյ վն տկարութե բնութե իւրոյ՝ կամ վն անզգուշութե. երկոքին ևս կարօտին նախ ածային օգնականութե, երկրորդ՝ բժշկական դեղորէից։ Ապա նախ դիմելի է առ ած ջերմեռանդն աղօթիւք և ողորմութե, և յետոյ

առ բժիշկս. է և հիւանդութի̃ իբր բնական՝
որ առ բնական մահն առաջնորդէ. դեղք ան֊
հաղորդ են յայսպիսեաց, ո՛չ կարեն զօգուտ
ինչ ընձեռել կամ զվնաս.

Սակայն տկարամիտք ոմանք զայս ա̃մ դիւրաց
զօրութե̃ տալով՝ թողեալ զբնական դեղո֊
րայս՝ որոց ետ ա̃ծ զզօրութիւն փարատել
զախտս, և զս̃բ աւետարանն և զկարգաւորս,
դնեն առ հօճայս այլ և այլ ազգաց զօգնու֊
թիւն հայցել ՚ի նոցանէ.

Արդարև այս է մահացու մեղք, և ան֊
ա̃ծութիւն. զի մոռացեալ զաղբիւրն կենաց
զա̃ծ՝ և զորս յա̃յ են կարգեալ, դիմեն առ
ատելիսն ա̃յ առ դևս, և առ դիւապաշտ պաշ
տօնեայս նոցա.

Թ Գտանին և ոմանք զի ասեն, թէ ա֊
ւանիկ ո՛չ բժշկական դեղորէիւք՝ և ո՛չ ս̃բ ա֊
ւետարանաւն բժշկեցաւ հիւանդն մեր. զի՞նչ
արասցուք, թողուցո՞ւք զնա անխնամ. ան֊
կեալն ՚ի ծով՝ բուռն հարկանէ զօձից.

Ով յիմար, քեզ հա՛րկ էր միայն աղաչել
զա̃ծ տալ նմա զառողջութի̃. Իսկ եթէ նա
կամեցեալ է՝ զի և նա մեռայցէ ՚ի նոյն հիւան
դութե̃, ընդ վայր է տառապելդ քո, և ընդ
վայր մեղանչելն՝ գնալով առ կախարդս. գուցէ
բարկացուցեալ զա̃ծ՝ կամ յերկարաւ դառ֊
նայ հիւանդութիւն՝ և կամ մահաբեր.

Ժ Ընդ կախարդս դատապարտին նոքա,
որք այլ և այլ դիւթական գործողու̃ք խաբեն

զպարզամիտս, բանկլայով կամ գարխով և կամ այլ իրօք, ոչ թէ զծածուկ ինչ գիտելոց իցեն: Այս ամ դիւթական հմայութիւք՝ են դիւաց պատրողական ուսումն, որովք զմարդիկ մոլորեցուցանեն:

Այսպիսի ոմանք են բազումք 'ի չար պառաւանց, որք դիւաց բնակարան եղեալ՝ զդիւական աղանդս ուսուցանեն այլոց. և բազում չարեաց լինին պատճառ: Ոչ թէ զչար ինչ կարեն առնել ումեք կամ զչարի. այլ զի առիթ խռովութե լինին 'ի մէջ մարդկան. և զանմեղս 'ի դատապարտութի ածեն ընդ ինքեանս. ապա որ հաւատոյ բանից նոցա՝ և ընդունի զդիւթական խաբէութիւն, մասնի ընդ նոա 'ի կորուստն յաւիտենից:

Ժն Դիւթական ինչ է և Նուախայն, զոր և կոչեն համայիլ. ուստի որ կրէ զայն 'ի վզի իւր ո՛ և իցէ գրովք գրեալ, ընդ կախարդական փաթաթս համարի. և մեղանչէ գրողն և պահօղն. զի այնպիսի դիւթական յուռութք ընդ դէմ է սբ հաւատոյս մերոյ:

* Զհետ վհհկաց՝ մի՛ երթայցէք, և 'ի գէտս մի՛ յարեցէք պղծել նոքօք: || Ղևտ. ԺԹ. 31:

* Զի զհին բնակիչսն սրբոյ երկրի քոյ ատեցեր, վս զգարշելի գործոց գործելոյ. զկախարդութեանց՝ և զանսուրբ նուիրացն: || Իմաս. ԺԲ. 3:

ԳԼ. ԻԲ

ա Որ՟պ խարիսխն յալէկոծութ՟ե պահուզերծուցանէ զնաւն 'ի խորտակմանէ, նոյնպէս և յոյսն 'ի ժամանակս նեղութ՟ե փրկէ զմարդն 'ի վտանգէ։ Իսկ եթէ խզեսցի առասան յուսոյն՝ անդէն անկանի մարդն 'ի յորձանս յուսահատութ՟ե. զի նոյն է խարիսխն 'ի նաւին, և յոյսն 'ի մարդն։

Ապա ջանալի՛ է յա՟մ նեղութ՟իս՝ որք կարեն պատահիլ յընթացս կենաց, ունել զյոյս աներկմիտ. զի նովաւ միայն է հնար դիմակալել ա՟մ դժուարութ՟եց 'ի վ՟ր եկելոց։

բ Ա՟ծ ոչ տայ զփորձութ՟ի ինչ առաւել քան զկար մարդոյ. իսկ յուսահատն մեղադիր լինի այ՟յ, թէ անդր քան զկար իւր թոյլ ետ գալ փորձութ՟են. վ՟յ չարաչար մեղանչէ։

գ Յուսահատութ՟ին յառաջ գայ յանգիտութ՟է զթութ՟են այ՟. զի յուսահատեալն ոչ ճանաչէ զա՟ծ ներող և ողորմած. և կամ պակաս համարի զողորմութ՟ին այ՟ քան զյանցանս իւր՝ ը՟ն կայենի. ը՟ն այնմ, * Մեծ է պատիժ իմ քան զթողուլ զիս։ || Ծնն. դ. 14։ Որոյ աղագաւ անարժան լինի թողութ՟ե։

դ Տգէտք՝ շուտափոյթ են 'ի յուսահատիլ. զի ոչ կարեն 'ի նեղութ՟իս գտանել զելս ազատութ՟ե, կամ մխիթարութիւն ինչ յուսադրութեան։

ե Կարճամիտք՝ առ ժամայն յուսահատին

մինչ և իցէ դժուարութիւն, որով առաւել ևս ծանրացուցանեն զկշիռ վտանգին զոր կրեն. որք եթէ յուսալով յԱծ՝ համբերէին, կամ թեթև թուէր նց վիշտն. կամ փութով ազատէին 'ի վշտաց:

Զ Մարմնապաշտք և հեշտասէրք՝ իսկոյն անկանին 'ի յուսահատութի՝ եթէ հանդիպին վշտաց դառնութե. զի ուսեալ գոլով նց յամէ հանդիստ և հեշտութիւն ողջունել, դոյզն վշտօք բեկանեն զաղեղ յուսոյն. և կամ իբր երիվար անընդել ճանապարհի՝ առ փոքր մի դժուարութե իսկոյն կասին յընթացից:

Է Հպարտք՝ յուսահատին չարաչար, մինչ պատահի նց վտանգ ինչ ընդդէմ պատուոյ և կարծեաց իւրեանց. քանզի չկամին նոքա խոնարհիլ ածային կարգադրութեն, որ ըստ արժանւոյն չափով արդարութե պատրաստէ և հատուցանէ իւրաքանչիւրոց զհատուցումն գործոց:

Ը Բարկացօղք՝ դիւրամէտ են 'ի յուսահատութի. զի յափշտակեալ 'ի կրից ո՛չ նկատեն զվախճան գործոյն. ապա 'ի պատահիլ տառապանաց ինչ, անդէն գլորին 'ի խորս յուսահատութեան:

Թ Պատրաստական դեղ ընդդէմ յուսահատութե է հաստատիլ 'ի միտս, թէ օրէնք աշխարհի այս է, ո՛չ ումեք մնալ անվիշտ: Կամ թէ՝ բազումք յառաւել դժնդակ վիշտս անկան, բայց արիաբար համբերեցին: Կամ թէ՝

արդար իրաւամբ պատահեցաւ այս ինքեան ըստ գործոց իւրոց։ Կամ թէ՝ սակաւ են այս պատիժք 'ի հատուցմանէ չարեաց, զոր արարեալ է 'ի կեանս իւրում։ Կամ թէ՝ բազում վարձուց լինի արժանի, եթէ սիրով տանի և համբերէ նեղութեան։ Կամ թէ՝ յա̃ծուստ եկեալ է այս փորձութիւն կամ ցաւ, որում պարտ է համբերել։ Կամ թէ՝ համբերելովն բազումք՝ բարի օրինակ առնուն, և յաւելուն վարձք իւր. և յուսահատելովն՝ չարաչար գայթակղին, և յաւելուն պատիժք իւր։ Կամ թէ՝ հնար է և ևս ծանրագոյնն վշտաց լինել։ Մանաւանդ թէ մինչ և իցէ վիշտն՝ պարտ է աղօթիւք դիմել առ Ա̃ծ՝ զի ազատեսցի յայնմանէ, կամ համբերել կարասցէ։ Եւ ահա այսպիսի բարեմիտ մտածութ̃բ յուսադրեալ վտանգեցելոյն՝ ոչ անկանի 'ի յուսահատու̃ի։

Ժ Եթէ ոչ կամիս յուսահատել՝ մի յայտներ զցաւ սրտի քո այնմ, որ իցէ անհամբեր 'ի կրել զվիշտս. կամ անարի վատասիրտ. կամ անտեղեակ վիճակի դիւրափոփոխ կենցաղոյս. կամ չէ՛ բնաւ անկեալ 'ի տառապանս։

Քանզի այսպիսիք անգէտ և անփորձ գոլով թէութ̃բ և որպխսութ̃բ փորձանաւորաց և ցաւագնելոց՝ այլ ընդ այլոյ խօսին. և առաւել զայրացուցանեն զվէրս յուսահատական բանիւք՝ քան թէ բժշկեն։ Զի ոչ գիտեն համոզել զոք 'ի համբերել. կամ յուսադրական քաջալերութ̃բ թեթևացուցանել զծանրու̃ն

կրիցն կամ ցաւոյ ․ վ՟ս զի որք ոչ են զփորձ առեալ նեղութե՟ և վշտաց՝ զմարդ կարասցեն փորձանաւորաց լինել օգնական ։

ժա՟ Լուեա՝ ոչ է յուսալի լսել զմխիթարութիւն յայնմանէ՝ որ իցէ կարծամիտ, կամ զայրացկոտ, կամ ՚ի բազում իրս զբաղեալ, կամ անձնասէր, կամ կրիւք ախտից ինչ պաշարեալ, կամ մարդատեաց ։

Վ՟ս զի կարծամիտն՝ ինքնին գլորի ՚ի յուսահատութի ․ զայրացկոտն՝ ոչ կարէ շրջահայեաց լինիլ ․ զբաղեալն միտք՝ ոչ կարէ պարզ և մեկին տեսանել զա՟մ պարագայս իրին ․ անձնասէրն՝ միայն զիւր օգուտն մտածէ ․ պաշարեալն կրիւք՝ գոլով մթագնեալ միտք՝ անկարանայ զօգտակարն ընտրել ․ մարդատեացն՝ անփոյթ է զերաց այլոց, և առաւել կամի զչարս նոցա քան զօգուտ ։

Այսպիսիք և նմանիք նոցա՝ յաւէտ կարեն զոք յուսահատ առնել քան մխիթարել ․ վ՟յ չէ արժան նեղելոց՝ յայտնել նոցա զցաւս իւրեանց ։

ժբ՟ Յուսահատից հեղինակն է սադայէլն, որ ջանայ զմարդիկ ձգել ՚ի յուսահատութի, զի արկցէ զնո՟ յանդունդ կորուստն յաւիտենից ։

Քանզի եթէ ոք յայլ մեղս անկանի, հնար է զղջմամբ յետս դառնալ՝ և գտանել թողութի, յուսալով յողորմութին այ ․ իսկ որ յուսահատի՝ ընդդէմ զինի ա՟ծային ողորմութե ․ վ՟յ յանզղջութե մնայ միշտ իբրև զդեւս ։ Նմին իրի

մինչ տեսանէ դեռ զոք 'ի նեղութիւս ինչ, անդէն արկանէ 'ի միտս նոր ազգի ազգի յուսահատական մտածմունս՝ որք չեղեն իրօք, և ոչ եւս կարեն լինել . զի զերս հնարաւոր և կարելի՛ կարծեցուցանէ ծանունս և անհնարինս՝ առ 'ի բեռնաւորել և ընկճել զմիտս փորձանաւորաց, զի յուսաբեկ արասցէ :

Ուրեմն պարտ է մեզ՝ որք կենցաղավարիմ յաշխարհի, արթուն և զգաստ մնալ, և չանսալ թուլութեան դիւին . յապաւինել յԱծ՝ և արիաբար տոկալ նեղութեանց :

Ժդ. Ոմն և ոմանք՝ որք փոխանակ մխիթարելոյ զվշտացեալն՝ 'ի վարանս տարակուսանաց արկանեն անհեթեթ բանիւք դժուարութեանց, մինչև յուսահատել առնել զնա . այսպիսի վայքաբոթ մարդիկ՝ կամ տգէտ են, կամ թշնամի, կամ չարախնդաց, և կամ 'ի դիւաց շարժեալ :

Զի տգէտն ոչ կարելով զմխիթարական բանս ասել՝ զներհակն խօսի . թշնամին ջանայ ծանրացուցանել զպարագայս վշտաց՝ զի առաւել վտանգեսցէ . չարախնդացն կամի՝ զի այլք յուսահատեալք կորիցեն, և ինքն ուրախասցի . շարժեալն 'ի դիւաց՝ բիւրաղզի դժուարութեան պաշարէ զմիտս տագնապելոյն, զի ընքեալ թուլացուսցէ 'ի յուսոյն պնդութենէ :

Ապա ոչ է արժան մեզ ումեք ասել զցաւս, զի բազումք են բժիշկ մեղանչական . այլ այնպիսում պարտ է յայտնել զտարակուսութիւնս կամ զվիշտս, որ իցէ խոհեմ, բարեկամ, բարեմիտ,

և երկիւղած յոյ . որպէս զի մարթասցի գտանել ՚ի նոցանէ քաջալերութիւն և սփոփանս ։

ԺԴ. Եթէ դէպ լիցի քեզ հարցանել ինչ ումեք, խորհեսցիս նախ՝ մի՛ լինիցի բանն առ նա վերաբերելի. զի ոչ կարես յայնմանէ ուղիղ պատասխանի առնուլ ՚ի լուծումն տարակուսանաց քոց. քանզի իւրաքանչիւր ոք զիւր շահ առաւել դիտէ՝ քան զայլոց ։ Ապա ՚ի թիւր կողմն շրջեալ զբանսդ՝ անհնարին դժուարութեամբ յուսաբեկ առնէ զքեզ. այլ հարց այնմ՝ առ որ ոչ իւիք կերպիւ վերաբերի այն՝ զորմէ հարցանես, զի ընկալցիս զուղիղ պատասխանի ։

ԺԵ. Որ զինքն ոչ կարէ կառավարել յորում վիճակի և յորպիսի պարագայս և իցէ՝ է ծառուկ խելագարի . քանզի նա է խոհեմ և կատարեալ, որ յամենայն դարձուածս և փոփոխութիւնս այսր կենցաղոյս՝ հնարս գտանէ ՚ի կառավարութիւն անձին իւրոյ, և ոչ երբէք յուսահատեալ, լքանի և վհատի ։

* Երկիւղածք Տեառն ակն կալէք ողորմութեան նորա, և մի՛ խոտորիք զի մի՛ կործանիցիք ։ || Սիրաք. Բ. 7 ։

* Օրհնեալ լիցի մարդն որ յուսայցէ ՚ի Տէր, և եղիցի Տէր յոյս նորա ։ || Երեմ. ԺԷ. 7 ։

* Յոյս ո՛չ երբէք ամաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է ՚ի սիրտս մեր, ՚ի ձեռն հոգւոյն սրբոյ՝ որ տուաւ մեզ ։ || Հռովմ. Ե. 5 ։

## Հարկաւոր Միջնորդք Փրկութեան Ճշմարիտ Քրիստոնէի:

## Ապաշխարութիւն

### ԳԼ. Ա

ա̅ Ապաքէն մարդս կարգեալ է ոչ միայն առ վախճան բնական, այլեւ առ վախճան գերբնական: ՚Ի բնական վախճանէն պարտաւորի ուղղել զմիտս եւ զկամս, եւ բարեկարգել ըղներքին բաղձանս զգայական կրից, եւ զարտաքին գործողութիւնս՝ որք յառաջգան ՚ի կրից, նկատմամբ երջանկաբար կենցաղավարելոյ ըստ մարմնոյ. եւ այս լինի չորիւք բարոյական առաքինութբ̅ք, յ̅ի արիութբ̅ք, արդարութբ̅ք, խոհեմութբ̅ք, եւ բարեխառնութբ̅ք:

՚Ի գերբնական վախճանէն պարտաւորի ուղղել զմիտս եւ զկամս եւ զներգործութիւնս նոցա՝ նկատմամբ յաւիտենական երջանկութ̅ե իւրոյ ըստ հոգւոյ. եւ այս լինի երիւք ա̅ծաբանական առաքինութբ̅ք, յ̅ի հաւատով, յուսով, եւ սիրով:

Բայց քանզի մարդս ՚ի վիճակի անկեալ բընութ̅ե, գլորեալ է ՚ի մոլորութիւնս եւ յանկարգութիւնս. որով խոտորի նախ ՚ի բնական վախճանէ իւրմէ, եւ ապա ՚ի գերբնականէն, որ է ծայրագոյնն ՚ի չարիս. ա̅յն իրի սահմանեաց տ̅րն մեր զս̅բ խորհուրդն ապաշխարութ̅ե. զի անկեալքն ՚ի մեղս կանգնեսցին սովաւ. եւ օգնականութբ̅ք շնորհացն ք̅ի, ժամանեսցին

յերջանկութե և 'ի փառս յաւիտենից կենաց ։

Ուստի պատշաճ դատեցաւ խօսիլ աստանօր դուն ինչ 'ի վր̃ ապաշխարութե ։ գ̃ զղջման, խոստովանութե, և վճարման ։ զի մի՛ ոք 'ի հաւատացելոց մեղուցելոց վհատեալ 'ի հնարից փրկութե հոգւոյ՝ անյոյս կորիցէ ։ այլ առցէ զան վրէպ և զուղղորդ սպեղանիս՝ և բժշկեսցի ։

Է Որդ՝ մեղանչելն է դարձուցանել զմիտս և զկամս 'ի ծայրագոյն բարւոյն առ ստեղծուածս ։ որ է ատել կամ արհամարհել զա̃ծ, և սիրել զստեղծուածս ։ զի եթէ ոք նախ ոչ հանցէ զսէրն այ̃ 'ի մտաց, և յարեսցի կամօք 'ի սէր արարածոց, ոչ կարէ մահու չափ մեղանչել ։

Իսկ ապաշխարելն է լալ ողբալ և աշխարել վն̃ մեղացն, զորս արար մոլորութբ̃ մտաց և թիւրութբ̃ կամաց ։ վս̃յ նախ պարտ է ապաշխարողին՝ մտօք վերստին դառնալ առ ա̃ծ, և կամօք յարիլ 'ի սէր այ̃ ։ այս է՝ զկորուսեալ սէրն կրկին գտանել ։ և այս լինի նախ զղջմամբ ։

Քանզի զղջումն է ատել, և յետս նահանջել յայնմանէ ։ ընդ որում յառաջ միացեալ էր յօժարութբ̃ և սիրով միտք և կամք մարդոյն ։ Այս զղջումն՝ որ պարտի լինել 'ի վեր քան զամ̃ մարմնական ցաւս, է նախկին աստիճան ապաշխարութե ։ որով ատէ ոք զմեղս հաստատ յառաջադրութբ̃, զի մի՛ այլ ևս մեղիցէ ։ այլև յօժար կամօք յանձն առնու կրել զպատիժս 'ի հատուցումն անարգանացն, որով անարգեաց և վշտացոյց զա̃ծ, միայն թէ հաշտեսցի ա̃ծ ը̃ նմա ։

Դ. Նաւ քանզի մեղանչօղն որ արհամարհեաց զած՝ և սիրեաց զստեղծուածս՝ լինի պարտաւոր այ, և ած տր իրաւանց. վյ կարի վայելչաբար սահմանեցաւ խոստովանահայրն դատաւոր ՚ի մէջն. որպ զի հեղինակութե եկեղեցւոյ՝ զվէճն որ ՚ի մէջ այ և մեղաւորին, բացորոշեսցէ. ըստ այնմ, * Արք յուդայ՝ (խոստովանահարք,) դատ արարէք ընդ իս՝ և ընդ այգի իմ։ ‖ Եսայ. Ե. 3.

Ե. Նմին իրի զղջացօղն հարեալ ՚ի խղճէ՝ իբրև յոստիկանէ կամ յորքանեկէ արդարութեան, ածի յատեան խոստովանութե. ուր ՚ի կողմանէ այ իբրև դատախազ օրէնքն ածային ամբաստանէ զմեղաւորէն, և խնդրէ զիրաւունս ՚ի դատաւորէն։

Իսկ դատաւորն, յ̃ խոստովանահայրն՝ որ տեղեակ է օրինաց արդարութե՝ ըստ չափու յանցանացն դնէ վճարումն ՚ի վր պարտաւորին, որ զղջացեալ խոստովանի զմեղս իւր. և ճանաչելով զպարտս իւր՝ յանձն առնու յօժար կամօք զոր պատուիրէ խոստովանահայրն, զի ազատեսցի ՚ի պարտականութենէ մեղաց, և հաշտեսցի ընդ այ։

Նաւ որովհետև ած զդատն յանձն արար խոստովանահօրն, յարձակել նր ՚ի յերկրի ըզպարտաւորն ՚ի կապանաց մեղաց՝ ըստ կանոնաց սբ եկեղեցւոյ, արձակէ և թողու նմա և ինքն ած ՚ի յերկինս. ըստ այնմ, * Եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նց. և եթէ

զուրուք ունիցիք, կալեալ լիցի: || Յօհ. Ի. 23.

Է. Վն զի որ յատենի խորհրդական խոստովանութե կատարեալ զղջմամբ գանգատէ և ամբաստանէ զանձնէ իւրմէ, և յառաջադրէ այլ ևս ոչ մեղանչել, և յանձն առնու զվճարումն, և արձակի ի կապանաց մեղաց, զերծանի ի պարտաւորութե յաւիտենական պատժոց. և մնայ միայն պարտական ժամանակաւոր պատժոց վճարման. իբրև զհիւանդ ոք՝ որ ի վտանգէ մահուն զերծեալ՝ կարօտիցի միայն զգուշութե, պահեցողութե, և զօրացուցիչ դեղոց, զի ժամանեսցէ ի վիճակ կատարեալ առողջութեան:

Ուրեմն պիտոյ են յոյժ սպեղանիք բաւարարութեան՝ առ ի վճարել զժամանակաւոր պարտս պատժոց մեղաց. զի կարասցէ յարատևել յարդարացուցիչ շնորհն այն՝ զոր կորուսեալ էր, և եգիտ:

Վն զի ած բառնայ ի մեղաւորէն զշնորհս իւր իբրև յանարժանէ. ըստ այնմ, * Ոչ մընասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ յաւիտեան, վն լինելոյ դոցա մարմին: || Ծնն. Զ. 3.
Եւ դարձեալ շնորհէ՝ յորժամ ապաշխարէ. ըստ այնմ, * Փչեաց ի նս և ասէ. առէք հոգի սբ. եթէ ումեք թողուցուք, թողեալ լիցի նոցա: || Յօհան. Ի. 22.

Զ. Այս ինչ խտիր է ի մէջ ատենի դատաւութե քաղաքական օրինաց, և եկեղեցական օրինաց. զի ի քաղաքական օրէնս՝ մինչ յան-

ցաւորն խոստովանի զյանցանս իւր, ոչ ազատի գոնէ 'ի մարմնաւոր պատժոց։ Իսկ յեկեղեցական օրէնս՝ յորժամ խորհրդաբար խոստովանի առաջի խոստովանահօրն, զերծանի 'ի յաւիտենական պատժոց։

Է Դարձեալ՝ 'ի քաղաքական օրէնս յանցաւորն եթէ ոչ խոստովանի զոր արար, և վկայիւք ոչ ստուգի յանցանքն, ազատի 'ի դատապարտութէ։ Իսկ յեկեղեցական օրէնս՝ որ է ատեան ածային, եթէ յանցաւորն ոչ խոստովանի զոր արար, ահա՛ յայտնի է այ, զի է ամենատես. և ոչ է պէտս վկայ, զի բաւական է խայթ խղճի մտաց։ Աւստի այնպիսին մեռանի հոգւով 'ի յաւիտեան, բազում անգամ մեռանի և մարմնով. քանզի անպակաս են յաշխարհի աստ առ 'ի յայ պատիժք մահու, որով պատժին յանցաւորքն 'ի չարիս։

Ը Ապաքէն առանց խորհրդոյ ապաշխարութե ոչ ոք չափահաս հաւատացեալ՝ կարէ գտանել զթողութի մեղաց, զոր գործեալ է զկնի մկրտութե. այսպէս վկայեն հաւատք ճշմարիտք. այսպէս ընդունի և ընդհանուր եկեղեցին քի։

Բայց ոմանք՝ խաբեալք 'ի դիւաց, կամ 'ի դիւաբնակ աղանդաւորաց, կամ առ մարդկային ամօթոյ՝ անփոյթ առնեն զխոստովանութէ ընդ ձիգ ժամանակս. կամ ամբողջ ոչ խոստովանին. և կամ զերևելի և զտեսակացուցիչ պարագայս մեղաց թագուցանեն։

Գուցէ գտանիցին ոմանք՝ որք զղջումն սրտի բաւական համարին ՚ի փրկութի. այլ սակայն արհամարհութբ խոստովանութե՛ լոկ զղջումն ոչ ինչ փրկութի գործէ մահու չափ մեղուցելոց. զի ասէ մրգրէն. * Ասա՛ դու նախ զանօրէնութիս քո՛ զի արդարասցիս ։ || Եսայ. խգ. 26 ։

Արդ՝ զղջումն որով միայն դատի ոք զանձն պարտաւոր, է տեսական ճանաչումն. սակայն լոկ ճանաչմամբ ո՛չ գործի ապաշխարութի. այլ պիտոյ է և գործնական ինչ. այն է՝ խոստովանիլ բերանով այնմ, որ ունիցի զիրաւաբանութի յեկեղեցւոյ. և կրել զվճարումն զոր դնէ ՚ի վերայ՝ ՚ի հատուցումն մեղաց ։

Թ Քանզի պահանջէ խորհուրդն ապաշխարութե, զի վճարումն օրինադրեսցի ՚ի խոստովանահօրէն։ Այս մեծամեծ գործք առաքինութե առանց կանոնադրութե խոստովանահօրն արարեալ, ո՛չ համարին վճարումն կամ բաւարարութի, և ո՛չ վերաբերին ՚ի խորհուրդ ապաշխարութե. զի ո՛չ երևի ՚ի նս հեղինակութի և իշխանութի եկեղեցւոյ, և ո՛չ նշան հնազանդութե հպատակելոց ։

Այս զի իշխանութին կայանայ ՚ի հրամանս իրաւաբանին ՚ի վր հնազանդելոցն. որև հնազանդեալքն ենթարկելով զանձինս ընդ կանոնօք եկեղեցւոյ՝ որ ՚ի քսէ օրինադրեցաւ, առնեն զնմ զոր հրամայէ եկեղեցին ՚ի ձեռն պաշտօնէին իւրոյ. որով կատարի ՚ի նոսա

խորհուրդն ապաշխարութե՟. յորում է թո-ղութի՟ մեղաց և փրկութի՟ հոգւոց ։

ժ Արդ եթէ բարձցի խոստովանութի՟ն, բառնի և իշխանութի՟ն իրաւաբանութե՟ ե-կեղեցւոյ. բառնի ևս գործ ճնապանդութե՟, վ՟ա՟յ ոչ ևս մնայ խորհուրդ ապաշխարութե՟. ապա և ոչ թողութի՟ մեղաց ։ Այսպէս 'ի բառ-նիլ էական մասին 'ի բոլորէ իմեքէ՝ եղծանի բոլորն. իսկ խոստովանութի՟ն է էական մասն խորհրդոյ ապաշխարութե՟. ապա 'ի բառնիլ խոստովանութե՟, եղծանի էութի՟ խորհրդոյ ապաշխարութե՟ ։ Արդ՝ զխորհուրդն ապաշ-խարութե՟ սահմանեաց ք՟ս. ապա որ եղծանէ զայն, է հակառակ ք՟ի, և ժառանգ դժոխոց ։

ժա Վճարումն՝ թէպէտև կամաւորաբար կրեսցի, բայց պարտ է լինել ընդդէմ ախոր-ժակի կրողին, զի է պատիժ մեղաց. ուստի հետևի զի յայլմէ օրինադրեսցի ։ Քանզի զոր ինչ ախորժէ առնել և կրել ոք ըստ ինքեան, և ըստ հաճոյից կամաց իւրոց, հեշտալի թուի նմա. նմին իրի ոչ է 'ի համարի վճարման. ապա այն է վճարումն ապաշխարութե՟, զոր պատուիրէ խոստովանահայրն 'ի խորհրդա-կան խոստովանութեան ։

ժբ Պարզեալ՝ ոչ ոք կարէ լինել իւրոյ ին-քեան բժիշկ և դատաւոր. իսկ եթէ մեղա-ւորն անձամբ անձին տայցէ զկանոն վճարման, ինքն լինի բժիշկ և դատաւոր ինքեան, որ է ընդդէմ ։

ԺԳ. Պարզեալ՝ վճարումն է գործ արդարութեան . ուստի պարտ է զի որքան վշտացոյց ոք մեղօք զԱստուած , այնքան զգործ սիրոյ ցուցանիցէ զի հաշտեսցի Աստուած :

Իսկ եթէ ըստ ինքեան արասցէ ոք զգործ սիրոյ , տակաւին մնայ յերկբայութեան . զի ոչ կարէ որոշել , թէ արդեօք ըստ բաւականին հատոյց զպարտս իւր՝ թէ ոչ . որով անկանի կամ 'ի յուսահատութիւն , և կամ յանհոգութիւն : Այս պարտ է խոստովանիլ , զի զչափ պարտուցն իմացեալ՝ ջանասցէ հատուցանել :

ԺԴ. Պարզեալ՝ մեծութիւն կամ ծանրութիւն իրի իմիք չէ հնար չափել կամ կշռել ինքեամբ , բայց եթէ բաղդատութեամբ այլոյ իրի :

Զի որպէս ոչ կարէ ասել մի և նոյն իր նկատմամբ ինքեան նման կամ աննման , այլ վերաբերութեամբ առ այլս . այսպէս և ոչ նոյն իր առանց բաղդատութեան ընդ այլոյ՝ չափի կամ կշռի լինել մեծ կամ ծանր :

Իսկ որ անձամբ անձին դնէ կանոն բաւարարութեան կամ վճարման , ինքն զինքն չափէ և դատի պարտաւոր կամ անպարտ , որ է ընդդէմ :

Ապա պարտ է զմեղսն խոստովան լինել քահանային՝ ըստ կանոնաց եկեղեցւոյ . որ իբրև դատաւոր խոհեմ՝ որոշեսցէ զպատիժն , ոչ թուաբանական՝ այլ երկրաչափական արդարութեամբ , ըստ թէութեան անձին , տեղւոյն , և ժամանակին տնօրինելով :

ԺԵ. Այն մեղք՝ որ ընդդէմ են քաղաքական

օրինաց. և են մեղք՝ որ ընդդէմ են ա՟ծային օրինաց: Թագաւորք և իշխանք պատժեն ըզ մեղուցեալն ընդդէմ քաղաքական օրինաց, եթէ մեղք նր՟ եկեսցէ 'ի յայտ և ստուգեսցի. որպիսի է սպանութի՟, գողութի՟, շնութիւն, սուտ վկայութի՟, և այլն:

Նաև թէպէտ այսպիսի մեղք ընդդէմ են և ա՟ծայնոյն. բայց քանզի առ ձեռս հասարակուե՟ վերաբերին, իշխանք աշխարհի դատին զնս՟:

Իսկ այնպիսի մեղք՝ որ ընդդէմ են ա՟ծային օրինաց, և ձեռնահեն միայն անձին մեղուցելոյ, և ոչ ի՛ւիք հասարակաց բարւոյ, թէև իցեն յայտնի և հրապարակեալ, տակաւին թագաւորք և իշխանք անփոյթ եղեալ զնոցանէ՝ թողուն անպատիժ և անդատապարտ զմեղուցեալն. որպիսի է հակառակիլն ընդդէմ սրբարարութե՟ խորհրդոց եկեղեցւոյ, ՟ ապաշխարութե՟, հաղորդութե՟, եւս և քաւութե՟ մեղաց, և գործունէութե՟ շնորհաց, և այլն. զի այսպիսի մեղք առ կրօնն վերաբերին, և յիշխանութե՟ եկեղեցւոյ ունին դատիլ կամ պատժիլ:

Բայց եթէ եկեղեցին թողուցու զնս՟ մնալ անպատիժ, ա՟ծ ինքնին լինի վրէժխնդիր. որովհետև ա՟մ չար է պատժելի՝ վաղ կամ անագան. ամին զն՟ ոչ պակասին ազգի ազգի պատիժք 'ի վրէժխնդրութե՟ մեղաց:

Զի եթէ իւրաքանչիւր ոք խոստովան լինէր զմեղս իւր, և յանձն առնոյր զպատիժն,

զոր քահանայն իբրև դատաւոր 'ի վերայ դնէր՝ վճարել ընդդէմ անիրաւութեան որով անիրաւեցաւ յԱստուծոյ , ոչ յաճախէին պատիժք 'ի վերայ երկրի · ըստ այնմ, * Խրատեսցէ զքեզ ապստամբութիւնդ քո , և չարիք քո կշտամբեսցեն զքեզ · և ծանիցես և տեսցես , թէ չար և դառն է քեզ թողուլ զիս ։ || Երեմ · Բ · 19 ։ Եւ դարձեալ , * Թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ ։ || Եսայ · Ա · 20 ։

Ուրեմն հարկ է զղջալ, խոստովանիլ, և վճարել · որով ոչ միայն ազատ լիցուք 'ի պատժոյ , այլև զերանական փառսն ժառանգեսցուք ։

ԺԶ Եթէ ոք ասիցէ , թէ Աստուած ոչ է պատճառ չարեաց , իսկ ընդէ՞ր տայ զպատիժ , որ է չար ։ Ապաքէն չարն է կրկին · չար մեղաց , և չար պատժոյ ։ Արդ՝ Աստուած ոչ է պատճառ չարին մեղաց , որ ըստ ինքեան է չար · զի է ընդդէմ օրինացն Աստուծոյ՝ և վնասակար մարդկան · բայց է պատճառ չարին պատժոյ , որ է բարի · զի է գործ արդարութեան՝ և օգուտ մարդկան ։ Զչարէն պատժոյ ասէ Աստուած , * Ես եմ, որ առնեմ զխաղաղութիւն և հաստատեմ զչար ։ || Եսայ · ԽԵ · 7 ։ Եւ Ամովս ասէ , * Եթէ իցեն չարիք 'ի քաղաքի՝ և Տէրն չիցէ արարեալ ։ || Գ · 6 ։ Որովհետև մարդիկ ընդդէմ Աստուծոյ մեղանչելով՝ 'ի գոյ ածեն զչարն մեղաց, վասնորոյ Աստուած արդար իրաւամբ տայ զչարն պատժոյ՝ իբրև բժիշկ որ մատուցանիցէ հիւանդին զդառն դեղ՝ վասն նորին առողջութեան ։

Ապա եթէ մարդիկ բնաւ ոչ մեղանչէին, և կամ 'ի մեղանչելն խոկոյն զղջացեալ խոստովանէին զյանցանս իւրեանց և ապաշխարէին, զչարն պատժոյ ոչ կրէին:

Զի ած ոչ առ ատելութե պատժէ զմարդիկ յաստի կեանս՝ այլ վն սիրոյ և ողորմութե, զի զգաստասցին դարձցին 'ի մեղաց, և կեցցեն: Ապա եթէ աստ ոչ լինիցի վրէժխնդիր մեղաւորաց ժամանակաւոր պատժովք, անշուշտ ուրեմն վրէժխնդիր լինի 'ի հանդերձեալն յաւիտենական պատժովք՝ ըստ պահանջման ածային արդար դատողութե: Քանզի եթէ ոք յաստի կեանս զողորմութին այ արհամարհէ, յայտ է թէ զարդարութիւն այ ոչ երկնչի, այնպիսին 'ի հանդերձեալն զրկի յողորմութենէ նորա, և պատժի յարդարութենէ:

Բայց ած վասն զի է ողորմած՝ համապազ հրաւիրէ զմարդիկ 'ի գիտութի ճշմարտութե. և եթէ մարդկօրէն տկարութե սղալեալ անկանիցին 'ի մեղս, կարգեալ է զխորհուրդն ապաշխարութեան՝ յառնել նոքա 'ի գլորմանէ մեղաց. ըստ այնմ, * Անօրէնն եթէ դարձցի յամ անօրէնութեց իւրոց զոր արար, և պահեսցէ զամ պատուիրանս իմ, և արասցէ արդարութի և զողորմութի, կենօք կեցցէ, և մի՛ մեռցի: || Եզեկ. ԺԸ. 21:

ԺԷ Ապա ընդէ՞ր խոյս տան ոմանք 'ի խորհրդոյ խոստովանութե. յայտ ուրեմն է՝ զի կամ ոչ կամին արդարանալ 'ի մեղաց, և կամ ոչ

հաւատան գործունէութեան խորհրդոյն։ Արդ՝ եթէ ոչ կամին արդարանալ՝ են խելագար. զի ոչ ճանաչեն զշահ եւ զվնաս անձանց, որպէս յատուկ է խելագարաց։ Իսկ եթէ ոչ հաւատան՝ են անհաւատ. զի անհաւատից է ոչ հաւատալ սրբարարութեան խորհրդոց, որք կարգեալ են յԱյ անմիջաբար կամ միջնաբար։

* Այր կամ կին, որ ոք արասցէ զամ մարդկեղէն մեղաց... եւ զանցանիցէ անցն այն, խոստովանեսցի զմեղսն զոր արար. եւ հատուսցէ ըստ յանցանացն զգլուխն։
|| Թուոց. Ե. 6։
* Ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս իմ, եւ դու թողցես զամ ամպարշտութիւնս մեղաց իմոց։ || Սաղմոս. ԼԱ. 5։
* Խոստովա՛ն եղերուք միմեանց զմեղս, եւ աղօ՛թս արարէք ՚ի վերայ միմեանց, որպէս զի բժշկեսջիք.
|| Յակ. Ե. 16։

---

## Աղօթք

### ԳԼ. Բ

ա Եւ քանզի խորհուրդն ապաշխարութեան ունի երիս մասունս, զզղջումն եւ զխոստովանութիւն՝ իբրեւ կացուցիչս խորհրդոյ, եւ ըզվճարումն՝ իբրեւ ամբողջացուցիչ։ Այլ մեք պարտ վարկանիմք ասել աստանօր կարճ ՚ի կարճոյ զամբողջացուցիչ մասանէ նորա, որ է

աղօթք, պահք, և ողորմութի՟ւն, ընդ որով գրեթէ այլ ա՟մ բարեգործութիւնք կարեն պարունակիլ. որովք ապաշխարօղն սրբեալ յարատոյ մեղաց՝ արժանաւորի շնորհացն ա՟յ յաւատիս. և որ արդէն էջէ 'ի շնորհս՝ ընդունի զաճումն շնորհաց, և ժամանէ 'ի հանդերձեալն երանական փառաց։

Է. Ապաքէն մարդն մինչ վրիպեալ յուղղուէ լուսոյ բանին՝ թողու զճշմարիտ բարին իւր որ է ա՟ծ, և դառնայ առ ստեղծուածս, առ ի մեղանչել. որ է վտանգել զանձն. կորուսանել զա՟ծ. ոչ ճանաչել զյարգ և զպատիւր. մեծ չարի պատահիլ։ Իսկ զայս ա՟մ չարիս գործէ մարդն կամ զրութե՟ հոգւոյն, կամ յորդորմամբ մարմնոյն, և կամ պատճառաւ ընչից։

Ը. Արդ՝ հոգին է իբր ներքին բարի, մարմինն իբր միջին, և ինչք իբր արտաքին. զի հոգի առաւել է քան զմարմին, և մարմին քան զինչս։ Ապա որ այսոքիւք բարեօքս չարաչար վարի և մեղանչէ ընդդէմ ա՟յ, պարտ է և նոքօք ապաշխարել և հաշտիլ ընդ ա՟յ. և ա՟մ առաքինութիւնք զորս կարեն գործել մարդիկ՝ են արդիւնք բարեացս այսոցիկ, այ՟ս հոգւոյ, մարմնոյ, և ընչից։ Զի կամ վերաբերին առ հոգին, որպիսի է աղօթքն. կամ առ մարմինն, որպիսի է պահքն. և կամ առ ինչս, որպիսի է ողորմութիւն. յորս կայանայ վճարումն ապաշխարութե՟, կամ որ նոյն է՝ բաւարարութիւն.

Քանզի մարդ աղօթիւք ընծայէ Աստուծոյ զհոգւոյ բարիսն, պահօք՝ զմարմնոյ բարիսն, և ողորմութեամբ զարտաքին բարիսն։ Առաջնովն յաղթէ զսատանայ, երկրորդիւն զմարմին, երրորդիւն զաշխարհ. զի ըստ յովհան, * Ամենայն ինչ որ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ, և ցանկութիւն է աչաց, և ամբարտաւանութիւն աստի կենացս։ || Յովհան առաջին. Բ. 16.

Նոյս երեքին չարիքս են, որք զմարդն օտարացուցանեն յԱստուծոյ. այն՝ ամբարտաւան բաղձանք, կամ կամապաշտութիւն. անկարգ ցանկութիւն զգայական հեշտութեան. և անյագ սէր ընչից։

Դեղ առաջնոյն՝ է աղօթքն, որով մարդն զմիտս և զկամս իւր ուղղեալ՝ հպատակէ աստուածային օրինաց, որով խորտակի եղջիւրն ամբարտաւանութեան և կամապաշտութեան։

Դեղ երկրորդին՝ է պահքն, որով ճնշէ զմարմին, և նուաճէ զկատաղութիւն զգայական կրից և ցանկութեան։

Դեղ երրորդին՝ է ողորմութիւն, որով յաղթէ սիրոյ մեծութեան և ընչից, և ամենայն իրաց աշխարհիս։

Դ. Ուրեմն ասելի է նախ վասն աղօթից, որ է պտուղ և նուէր հոգւոյ առ Աստուած. զոր խոնարհամիտ երկիւղածութեամբ մատուցանելով առ Աստուած, յայտ առնեմք զգերագոյն տէրութիւն նորա՝ զոր ունի ՚ի վերայ մեր։ Զի որով է ոք գերաղանց, նովիմբ նախ պարտ է ծառայել Աստուծոյ, իբրև արարչապետի բնութեան. իսկ մարդն հոգւով է գերաղանց. զի հոգին ունի զիմացական

մեսս, և զանձնիշխան կամս, որովք տարբերի ՚ի ղազանաց, և նմանի այ. ապա նախ պարտ է հոգալ ծառայել այ աղօթանօք և մաղթանօք.

Եւ քանզի էութիւն մարդոյ պահանջէ ունել զշարժումն ինչ կամ զներգործութիւն, որ սեպհական է մարդոյ. ապա յայն ամ ներգործութիւն՝ ուր ոչ ընթացակից լինիցին միտք և կամք, ոչ ասի գործ մարդոյ բանականի՝ այլ լոկ կենդանւոյ. վն և ոչ արժանի վարձուց կամ պատժոց:

Ուստի որ փափագի ընդունել զվարձս յայ, պարտի մտօք և կամօք գուն գործել առ ՚ի հաճոյանալ նմա, և լինել արժանի վարձուց.

Նա գործս մտաց պատկանի՝ խոկալ զայ. խօսակից լինել ընդ նմա. փառաւորել, գովել, և օրհնել զնա. խնդրել ՚ի նմանէ զբարիս՝ և յուսալ ՚ի նա: Նա գործս կամաց պատկանի՝ սիրել զած. և ՚ի նշան սիրելութեան ցուցանել զարդիւնս սիրոյ:

•Քանզի միտքն իմացեալ զճշմարիտ սիրելին զած, յառաջադրէ կամաց զի սիրեսցէ զնա. և երկոքեին ՚ի միասին ըստ յատկութեց իւրեանց նուիրեն այ զներգործութիւս սիրոյ. նախ՝ զաղօթս փառաբանութեն իբր պտուղ ներքին բարեաց. զի նովաւ միայն կարեն ըզջերմեռանդ բաղձանս առ ած յայտնի առնել. և ապա համարձակին մատուցանել զայլ գործըս բարեպաշտութեան:

Գ Ապա աղօթքն է առաջին պտուղ՝ և

անդրանիկ ծնունդ ա՟ծսիրութե՟ · և որքան սէր ուրուք է զօրաւոր և բարձրաթռիչ, այն-քան արդիւնք աղօթից նր՟ ՚ի բարձունս սլա-նան, և մատչին առ ա՟ծ ։

Եւ թէպէտ ա՟մ առաքինական գործոց աղ-բիւր և արմատն է սէրն · այլ աղօթքն՝ է ՚ի նս՟ որպ՟ նախկին ծորումն անապակ, և որպ՟ պտուղ երախայրի ։

Եւ արդարև ո՛չ ոք կարէ անբասիր կացու-ցանել զանձն, եթէ զանց արասցէ զաղօթիւք․ զի յա՟մ ժամու՝ և յա՟մ տեղիս՝ յորում լինիցի և իցէ ոք, թէ առողջ, և թէ հի՛ւանդ, կարէ ՚ի միտս ունել զա՟ծ, փառաւորել զնա, գովել, և օրհնել · և այս իսկ է աղօթելն ։

Է Աղօթքն իբրև բոլոր ինչ կարէ ՚ի մա-սունս իւր բաժանիլ, ե՟՝ ՚ի փառաւորութի, ՚ի գովութի, յօրհնութի, ՚ի գոհութի, և ՚ի խնդրուածս ։

Փառաւորութիւն կամ փառաբանութի՝ է փառս տալ ա՟յ · զի նա միայն է տր՟ զօրութեց, թագաւոր փառաց, և արժանի ա՟մ փառաբա-նութե՟ · զի է անհուն կարողութի, անհաս իմաստութի, անչափ մեծութի, ամենաբարի, և բովանդակութի ա՟մ կատարելութեց ։

Գովութի՝ է հռչակել զմեծութի և զբա-րերարութիւն ա՟յ, զի է արժանի ա՟մ գովութե՟ · և արդարև ո՛չ ոք ստեղծուած ըստ արժանւոյն կարէ գովել զա՟ծ, այլ միայն զեռանդն ըղձից իւրոց յայտ առնէ ՚ի ջանալն գովել զնա ։

Օրհնութիւն է հրատարակել յայլոց զանչափ սէրն, զանհուն ողորմութիւն, զանբաւ բարերարութիւն նորա, զոր ձրի արար և առնէ հանապազ առ մեզ. զի օրհնելն՝ յայտնել և հռչակել իմանի. ուստի օրհնութիւնն մեր առ Աստուած՝ է գովութիւն նորա։

Գոհութիւն է շնորհակալ և գոհացող լինել զբարերարութեանց՝ զոր ընկալեալ ունիմք յԱստուծոյ՝ և զպարգևսն նորա մեծացուցանել. և երախտագէտ մտօք ճանաչել զմեծութիւն ողորմութեան և մարդասիրութեան նորա, որ զկարօտութիւնս մեր լնու միշտ յառատութենէ իւրմէ։

Իսկ խնդրուածք, պաղատանք, աղաչանք, և հայցուածք լինին առ Աստուած, կամ վասն թողութեան մեղաց, և կամ վասն խնդրոյ իրիք՝ որ իցէ օգտակար մեզ, և նորա վայելուչ՝ի տալ։

Ուստի աղօթքդ անուն ՝ի վերայ գիրս լայնաբար առեալ՝ զբազում իմաստս պարունակէ, և չի՛ք կապար ոճոյ աղօթից. զի իւրաքանչիւր ոք կարէ զաղօթական բանս յարմարել, եթէ մտօք, և եթէ բանիւ. միայն թէ մի՛ լինիցի անկանոն և շաղփաղփ։

Ը. Ապաքէն ՝ի կալ յաղօթս, նախ՝ պա՛րտ է ՝ի միտ բերել զմեծութիւն և զփառս նորա. փառաւորել գովել և օրհնել զԱստուած. գոհանալ և շնորհակալ լինել զանբաւ երախտեացն, և զբարերարութիւն նորա որ առ մեզ։

Երկրորդ՝ ճանաչել զնուաստութիւն և ըղ պարտականութիւն մեր. թէ պա՛րտիմք միշտ

խոնարհ հոգւով զգաստութ՟բ և երկիւղիւ ծառայել ա՟յ՝ զի է արարիչ մեր և բարերար։

Երրորդ՝ մտածել զապերախտութին և զմեղս մեր, որով մեղաք ընդդէմ մեծութե՟ն նո՟ր։

Չորրորդ՝ խորհել զերկայնմտութին և զգթութին նո՟ր. զի ոչ ըստ յանցանաց մերոց պատժէ՝ այլ խրատէ, որպէս զի դարձցուք առ ինքն. և թէ՝ ՚ի պատժելն զմեզ՝ արդար է դատաստան նորա։

Հինգերորդ՝ զղջալ ՚ի սրտէ, յառաջադրել ոչ ևս մեղանչել. զուժ ապաշխարանաց կրել. զքաւութի մեղաց և զշնորհս խնդրել. ցուցանել զմեզ մի՛շտ կարօտ ողորմութե և օգնութե նո՟ր. որում թէպէտ եմք անարժան, բայց հաճեսցի շնորհել մեզ՝ ըստ բազում ողորմութե և մարդասիրութե իւրոյ. և թէ՝ յոյս մեր աներկմիտ է առ նա, և բաց ՚ի նմանէ ոչ գոյ մեզ յոյս և ապաւէն։

Թ ՚Ի սկզբան աղօթից պա՛րտ է զմիտսն ամփոփել առ ինքն, և զդրունս զգայարանաց փակել ընդդէմ արտաքին առարկայից, և ունել ՚ի մտի զնպատակ ինչ հայցման. զի առանց դիտման խնդրոյ իրէք՝ տարտամ յածի միտք յաղօթելն։

Ժ Եւ նախ քան զամ՟ պա՛րտ է խնդրել յա՟յ զողորմութի. զի ընկալցուք զթողութի մեղաց, և զժառանգութի երկնային փառաց. այս է խնդրել նախ զարքայութին ա՟յ ըստ բանի տ՟ն, զի ուր է ողորմութին ա՟յ, անդ է

թողութ՟ի մեղաց՝ և արքայութ՟ին երկնից։

ԺԱ՟ Յաղօթական բանս չի՛ք գերազանցք քան զտէրունական աղօթսն, զ՟ի քան զՀ՟այր մերն, զոր նոյն ինքն ք՟ս տէրն մեր ուսոյց. յետ որոյ սաղմոսն, զոր մարգարէն դաւիթ ազդմամբ ս՟բյ հոգւոյն գրեաց. ապա եկեղեցական աղօթք և երգք, զորս ս՟բ հարք շնորհօք հոգւոյն ս՟բյ խորհրդաբար կարգեցին։

Իսկ թէպէտ բանք աղօթից բազում են յոյժ, այլ 'ի ն՟ս իբրև արեգակն փայլէ յազգս մեր աղօթական մատեան ս՟բյն գրիգորի նարեկացւոյն։ Ազդու է և պարզ՝ Հաւատով խոստովանիմն, ասացեալ 'ի ս՟բյ շնորհալւոյն. զոր թէ այր և թէ կին պարտին ուսանիլ. և նովաւ յա՟մ աւուր աղօթել առ ա՟ծ՝ ուր և գտանիցին։

Իսկ եթէ ոք ոչ կարասցէ հասու լինել իմաստից աղօթական բանիցն և բառից, մի՛ ինչ լքանիցի. այլ աղօթեսցէ հաւատով յուսով և սիրով. զի ա՟ծ՝ որ խորհրդոց է գիտող՝ իմանոյ և ընդունի զաղօթսն. և ըստ չափոյ ջերմեռանդութե՟ և բաղձանաց իւրաքանչիւրոց տայ զշնորհս, և կատարէ զխնդրուածսն։

ԺԲ՟ Սահմանական աղօթքն՝ յորում ժամանակի և իցէ՝ ընդունելի ա՟ծ. սակայն առաւել ընտրելի է ժամանակն գիշերոյին. կամ առաւօտեան։ Զի վաղ քան զընդ առաւօտն՝ մինչ զարթնու ոք 'ի քնոյ՝ պարտ է կալ յաղօթս առ ա՟ծ, և գոհացօղ լինել զբարերարութե՟ նր՟, զի խաղաղութե՟ հասոյց 'ի ժամ առաւօտու.

և հայցել յառատ մարդասիրութենէ նորա, զի շը-
նորհեսցէ զառաջիկայ օրս առանց մեղաց ան-
փորձ և խաղաղ անցուցանել:

Նոյնպէս և յերեկոյին պարտ է աղօթել առ Աստուած, և նշանաւ սուրբ խաչին վերստին անադրել. զսուրբ Աստուածածինն և զպահապան հրեշտակս և զսուրբս բարեխօս ունել, և յետոյ ննջել:

Արդ ուրեմն ծնողք՝ խոստովանահայրք՝ և ուսուցիչք պարտաւորին կրթել զմանկունս. զի ուսանիցին նոքա անդստին ՚ի տղայական հասակի, ոչ միայն զաղօթս՝ այլև զկարգ և զժամ և զբարեձևութիւն աղօթելոյ:

ԺԳ Աղօթքն՝ ըստ որում է վերացումն մտաց առ Աստուած, ապա՛ պարտ է յաղօթելն, զի միտքն լինիցի զերծ յամենայն աշխարհային անարժան մտածմանց, և կամքն ՚ի բարի կամեցողութիւն:

ԺԴ Դիտաւորութիւն մտաց եթէ ոչ ընկերասցի աղօթից՝ վայրապար շարժի լեզուն և շրթունք. զի անպտուղ աշխատութիւն է առանց մտադրութեան կալ յաղօթս:

ԺԵ Աշխարհական տրտմութիւն և հոգք կենցաղոյս խափանեն զօրութիւն աղօթից, և անպտուղ առնեն. իսկ տրտմութիւն՝ որ իցէ վասն մեղաց ՚ի զղջացեալ սրտէ՝ ընդ կանոնաւ ապաշխարութեան, օգնէ զօրութեան աղօթից, և արդիւնաւորէ զպարգևս շնորհաց:

ԺԶ Աղօթքն է իբրև դեսպան կամ աղաչաւոր հրեշտակ և միջնորդ ՚ի մարդկանէ առ Աստուած. որ յոյժ ընդունելի է և զօրաւոր, յոր-

ժամ առաքի 'ի համօրէն եկեղեցւոյն ։

Այս աղօթքն որ յեկեղեցին լինի բազմութե՛ ժողովրդոց՝ առաւել նախապատուե՛ է քան զառանձնականն, և յոյժ օգտակար. ըստ որում յատուկ տեղի աղօթից՝ է եկեղեցին. ուր սիրտ և կամք ամենեցուն 'ի փառաբանութիւն այ՟ միացեալ, երկնային փառաբանչացն բերեն զնմանութի՟ ։

Ուստի պա՛րտին հաւատացեալքն անխափան դիմել յեկեղեցին 'ի ժամերգութի՟ն հասարակաց. ո՛չ միայն յաւուրս տէրունականս և 'ի հանդիսաւորս, այլ եթէ ձեռն ինչ իցէ՝ յամ՟ աւուր. նմին իրի առանց բանաւոր պատճառի յետս մնալ յեկեղեցւոյ 'ի կանոնադրեալ ժամանակի՝ ո՛չ է առանց մեղաց. մանաւանդ յորժամ մատչի ահեղ խորհուրդ սուրբ պատարագին ։

ԺԷ Առանձնական աղօթքն է յո՛յժ օգտակար. բայց հա՛րկ է նախ զհրապարակականն կատարել յեկեղեցին, և ապա զառանձնականն ։ Իսկ եթէ ոք սակս ծուլութե՟ ո՛չ դընացէ յեկեղեցին, և առանձնական աղօթիւք համարեսցէ ազատիլ 'ի պարտուց, մեծապէս խաբի. քանզի եթէ գոյ եկեղեցի, և ինքն կարէ գնալ անդ՝ զանց առնելովն մեղանչէ ։

ԺԸ Կերակուրն է սնունդ մարմնոյ, և աղօթքն սնունդ հոգւոյ. ապա որ՟պ զմարմինն, նոյնպէս պա՛րտ է յամենում աւուր և զհոգին սնուցանել. ապա թէ ո՛չ նուաղի, կամ հի֊

ճանգամանոյ, և կամ մեռանի․ զի առանց աղօթից ոչ կարէ հոգին կեալ 'ի շնորհան այ․ և շնորհք այ առանց աղօթից ոչ մնան 'ի հոգին ։

Ո̃յ որչափ յաղօթէս ստարանան մարդիկ, այնչափ շնորհքն այ հեռանայ 'ի նոցանէ․ մինչև անկանիլ 'ի մեծամեծ մեղս, որ է մահ հոգւոյ։

ԺԹ Որպէս մարդոյ հարկաւ խնդրէ զմիտն խոկալ 'ի նմա՝ եթէ ածային իցէ և բարի, և եթէ աշխարհային և չար․ ապա պիտոյ է ըզ միտս և զխորհուրդս ուղղել առ ած, զի զնոյն որոճասցէ, և 'ի բարւոյն յամեսցի․ այսպէս մտածական աղօթք երկնաքաղաքացի առնէ զմարդն, և հրեշտակային նմանակից․ և ած առաւել լսէ մտաց՝ քան ձայնի։

Ի Աղօթսն պիտոյ է զինքն ճանաչել առաջի այ, և զգուշանալ 'ի զանարժանս խորհելոյ և խօսելոյ։

Օ ի աղտեղութի ասի, խորհիլն զչար ինչ յաղօթելն․ խանգարումն ասի, 'ի յուշածել զաշխարհային հոգս և զզբաղմունս․ գողութի ասի, ցնդել զմիտսն, և լինել իբրև անզգայ․ բծաւորութի ասի, մտածելն զանօգուտ և զընդունայն ինչ։

ԻԱ Աղօթքն արարեալ ջերմեռանդն սրտիւ՝ խոնարհ հոգւով՝ և մաքուր մտօք, ոչ միայն 'ի զանազան փորձանաց կենցաղոյս ազատէ, այլև զշնորհս այ աճեցուցանէ 'ի հոգին․ որով կարողանայ մարդն օր ըստ օրէ յառաջինական երկս արժանալ, և հասանիլ 'ի ծայրն

կատարելութեան ։

ԺԷ Աղօթքն այնքան հարկաւոր է 'ի փրկութիւն, մինչ զի առանց աղօթից ոչ ոք համահաս կարէ փրկիլ ։ Որովհետեւ ամ բարեգործութիւնք մեր 'ի շնորհացն այ արդիւնաւորեն մեզ զփրկութիւն եւ զկեանս յաւիտենից ։ Իսկ շնորհք այ ոչ տուեալ լինին՝ բայց եթէ աղօթիւք եւ խնդրուածովք ։ ըստ այնմ, * Խնդրեցէ՛ք՝ եւ տացի՛ ձեզ, հայցեցէ՛ք՝ եւ գտջի՛ք ։ || Մտթ. Է. 7 ։ Ուստի եւ տրն մեր աղօթիւք ընկալաւ զհոգին սբ այ ։ ըստ այնմ՝ * Եւ կալ յաղօթս, բանալ երկնից, եւ իջանել հոգւոյն սբյ . . . 'ի վր նր ։ || Ղուկ. Գ. 21 ։ Ոչ 'ի պէտս իւր, զի անդստին 'ի յղութենէ իւրում լի էր հոգւովն սբվ, այլ 'ի մեր սակս, եւ յօրինակ մեզ ։ այլ զի աղօթից տեղ կացցուք, որով շնորհաց հոգւոյն այ լցցուք առանձնականն՝ եւ յաւիտենից կենացն ժառանգորդ ։

ԺԸ Աղօթս նախ խնդրելի է զարքայութիւնն այ միայն վասն իւր, իսկ զայլ ինչ վասն արքայութեն ։ զի զայն՝ որ ոչ իցէ կարգեալ 'ի ստացումն երկնից արքայութեն, կամ ոչ վերաբերի առ այն, չէ արժան հայցել յայ ։

Այլ եթէ ոք խնդրէ զկեանս, կամ զիմաստութիւն, կամ զաւակ, կամ զինչս ։ պարտ է դնել 'ի մտի՝ նոքօք ծառայել այ ։ Իբր զի՝ խնդրէ զկեանս՝ զի ապաշխարեսցէ ։ զիմաստութիւն՝ զի մի՛ սխալեալ 'ի մեղս անկցի ։ զաւակ՝ զի զնա ծառայ այ արասցէ ։ զինչս՝ զի աղքատաց եւ

կարօտելոց բաշխեսցէ ։

Այսպէս մեք պարտիմք խնդրել զարքայութին ա՟յ և զարդարութի նր ․ և զայլն ա՟մ՝ որոց կարօտիմք որքան եմք ՚ի մարմնի՝ ա՟ծ ինքնին տայ զն՟ս ․ զի նա գիտէ զպէտս և զկարիս մեր՝ առաւել քան զոր խնդրեմք և իմանամք ։

Ի՟դ Խնդրելի է յաղօթս, զի կամքն ա՟յ կատարեսցի ՚ի մեզ, և ոչ եթէ կամքն մեր ․ ըստ այնմ, * Ոչ որպէս ես կամիմ՝ այլ որպէս դու կամիս ։ ‖ Մ՟տթ․ ծզ․ 36 ։ Եւ յայսմ է հաստատեալ կատարելութի աղօթից՝ և երջանկութի մարդոյ ․ զի մ՟ն այնր աղօթեմք՝ զի հաճոյ լիցուք ա՟յ ․ և յայնժամ հաճոյանամք՝ յորժամ կամքն ա՟յ կատարի ՚ի մեզ ․ իսկ ուր կատարի կամքն ա՟յ, անդ է ա՟մ բարեաց լրումն և երջանկութի ։

Ի՟ե Խնդրելի է յաղօթս, զի տացէ մեզ ա՟ծ զշնորհս ջերմեռանդութե ․ զի որպէս խունկ առանց հրոյ ոչ բուրէ զհոտ իւր, նոյնպէս և աղօթք առանց ջերմեռանդութե ոչ ունին զարդիւնս ։

Ոչ երկարութիւն բանից առնէ զաղօթսն ընդունելի, այլ ջերմեռանդութին սրտի ․ զի ա՟ծ ոչ ՚ի քանակութի աղօթից հայի՝ այլ յորակութիւն նորա ։

Ծնօղք տեսեալ զտղայս փոյթ ՚ի հնազանդութի հրամանին՝ այլ անզօր ՚ի կատարումն, օգնեն զի զօրասցին ․ նմանապէս ա՟ծ տեսեալ զջերմեռանդութի սրտի մերոյ՝ օգնէ տկարութե մերում իւրովք շնորհօք ։

Ի՟զ Աղօթքն ենթադրէ նախ զհաւատ և

զյոյս · զի եթէ ոչ հաւատայր ոք խոստմանն Այ լինել ճշմարիտ՝ զոր խոստացաւ տալ խնդրողաց զարքայութիւն երկնից , ոչ ևս յուսալ ակն ունէր առնուլ 'ի նմանէ աղօթիւքն հայցմամբ :

Ընծայէ և զսէր · զի թէ ոչ սիրէր զԱծ իբրև ծայրագոյն բարի՝ և լցուցիչ բաղձանաց իւրոց , ոչ ցանկայր միանալ ընդ Այ · քանզի վախճանական դիտաւումն աղօթից՝ է ժառանգել զԱծ · և այն լինի սերտ սիրով · զի սէրն է յօդ միաւորութեան : Եւ վս զի մեղքն մահուչափ բառնան զսէրն՝ և բաժանեն զմեզ յԱյ · ըստ այնմ , * Մեղք ձեր որոշեն 'ի մէջ ձեր՝ և 'ի մէջ Այ · և վս անօրէնութեանց ձերոց դարձոյց զերեսս իւր 'ի ձէնջ՝ զի մի' ողորմեսցի : || Եսայ · ԾԹ · 2 : Այ յաղօթս խնդրի մեղաց թողութիւն , զի սէրն Այ նորոգեսցի 'ի մեզ :

Դարձեալ՝ աղօթքն պահանջէ զխոնարհութիւն · զի որ աղօթէ՝ պա՛րտ է ճանաչել զանբաւականութիւն իւր 'ի գործել զբարիս առանց օգնականութեան Ածային շնորհաց :

Իէ Աղօթքն՝ այնու զի է բան մտաց՝ 'ի նըմանութիւն հրեշտակաց վերացուցանէ զմարդն · զի որպէս հրեշտակք բանիւ մտաց խօսին ընդ Այ , այսպէս և աղօթողքն :

Պահելն 'ի պարտս կերակրոց , և տալն ողորմութիւն կարօտելոց՝ այո՛ են Ածահաճոյ բարեգործութիւնք , բայց պատշաճին մարդոյ ըստ որում ունի մարմին նիւթական · իսկ աղօթքն

պատուհասի մարդոյ , ըստ որում ունի հոգի անհիւթ ըստ նմանութ՟ե հրեշտակաց ։

ԺԸ. Աղօթքն որ առ ա՟ծ՝ կարեւոր է ա՟մի և իւրաքանչիւր մարդոյ ․ որովհետեւ ա՟մ մարդիկ ընդ կարեօք անկեալ , ոչ կարեն յա՟մ միշտ օգնել միմեանց , վ՟զի կարօտին օգնականութ՟ե ամենաբաւական աջոյն , զոր միջնորդութ՟բ աղօթից կարեն ունիլ ձեռնտու ։

Առ անզգայս աղօթել է անօգուտ ․ զի չու-նին ակն 'ի տեսանել զթշուառութ՟ի մեր , և ոչ ունկն 'ի լսել զաղաչանս մեր , և ոչ զօրութ՟ի ինչ առ 'ի լինել մեզ օգնական ։

Առ դեւս կարդալ է խելագարութ՟ի , մա-նաւանդ թէ մեծ ամբարշտութ՟ի ․ զի դեւք են թշնամի մարդկան և ա՟յ ։

Իսկ առ հրեշտակս կամ առ ս՟բս աղաղակել թէեւ իցէ կարեւոր՝ բայց ոչ հարկաւոր ․ զի և նոքա առանց հրամանին ա՟յ ոչ կարեն օգնել ։

Ապաքէն պարտ է յա՟մի առ ա՟ծ աղօթել , ըն-ցաւս և զկարօտութ՟իս մեր առաջի նո՟ր սփռել ․ զի նա է մեզ բարերար և խնամածու առա-ւել քան զհայր քան զմայր ։

Ուրեմն որ ոչ աղօթէ՝ մնայ զուրկ յօգնա-կանութէ և 'ի խնամոցն ա՟յ ․ զի եթէ արդար ոք իցէ՝ կորուսանէ զարդարութ՟ի իւր ․ զի աղօթքն է՝ որ պահէ զմարդ 'ի շնորհս ա՟յ ․ և եթէ մեղաւոր ոք իցէ , ոչ կարէ յառնել 'ի մեղաց վհէ և արդարանալ ․ զի աղօթիւք պար-գեւի շնորհ զղջման ։

Պարգևքն այ՟՝ են իբրև զլոյս արեգական ծագեալ յաշխարհ․ այլ որք պիտոյ են առ՚ի վայելել զլոյս, այսպէս պիտոյ են աղօթք ընդունել և վայելել զպարգևսն այ՟․ զի աղօթքն է աչք մտաց, և ակն հոգւոյ։

ԻԹ Մանկունք՝ մինչ 'ի տառապանս իւրեանց հեծեծեն և գոռան, հաւանելի է՝ թէ առ հաստիչն բնութեան աղաղակեն, և զօգնականութիւն նորա խնդրեն․ զի բնութիւն հարկաւ դիմէ առ արարիչն իւր յապաւէն իւր․ ապա թէ ոչ ընդ վայր էր նոցա աղաղակն՝ զոր բնաւորեալ են ունել․ սակայն բնութիւն յընդունայն ինչ ոչ ձգտի։ Նոյն սաղմոսերգուն ասէ, լսէ ած՟ աղաղակի անբանից, և խնամէ զնոսա քաղցրութեամբ․ ըստ այնմ, * Որ տայ անասնոց զկերակուր իւրեանց․ ձագաց ագռաւուց որ կարդան առ նա։ ‖ Սաղմոս․ ճխզ․ 9։

Ապա որ ոչ աղօթէ առ ած՟, անբանագոյն քան զանբանսն է․ անարժան խնամոցն այ՟․ ապերախտ և ապաշնորհ առ բարերարն իւր․ զի զբարիսն առնու և վայելէ․ և զտուիչն բարեաց ոչ ճանաչէ և ոչ փառաւորէ։

Լ Կոյր է միտքն՝ եթէ ոչ խոկայ զած․ համր է՝ եթէ ոչ աղօթէ․ խուլ է՝ եթէ ոչ լսէ պատուիրանացն այ՟․ մեռեալ է՝ եթէ ոչ սիրէ զած․ թշնամի է այ՟, եթէ սիրէ զայն՝ զոր ատէ ած․ ամբարշտութիւն է խնդրել յայ՟ զայն ինչ՝ զոր ոչ կամի ած։

ԼԱ Մեծ հարք զաղօթս նմանեցուցանեն ստ-

կի շղթայի յերկնից յերկիր կախելոյ . զոր ա֊
ղօթաւորք ձեռամբքացի յինքեանս կորզել ջա֊
նալով յերկինս ելանեն հոգւով :

ԼԵ Ա՜ծ թէպէտև շնորհէ զա՜մ պէտս մեր՝
որոց կարօտիմք , սակայն կամի՝ զի և մեք
աղօթիւք խնդրեսցուք զնա . զի ծանիցի մե֊
ծութ՜ի և բարերարութ՜ին ա՜յ առ մեզ , և
մեր կարօտութ՜ին առ նա :

ԼԶ Յաղօթս՝ պա՛րտ է մտադրութ՜ե արտա
բերել զբառս , և ՚ի միտ առնուլ զիմացուածս
բանից , և ուղղել զմիտս առ Ա՜ծ՝ հայցելով
զկատարումն խնդրոյն . ըստ այնմ, * Աղօթս
ասացից հոգւով, աղօթս ասացից և մտօք .
Ա՜ Կորն . ԺԴ . 15 :

ԼԷ Աղօթքն է զէն անպարտելի ՚ի պատե֊
րազմունս դիւաց . և զի գիտեն դեւք՝ թէ ա֊
ղօթիւք յաղթին ՚ի մարդկանէ , նմին իրի ա֊
ռաւել ջանան խափանել զմարդիկ յաղօթից՝
քան յայլ բարեգործութ՜եց : Ա՜յ տաղտ֊
կութ՜ի , նեղութ՜ի և ծանրութ՜ի պատճա֊
ռեն ՚ի սրտի . և ազգի ազգի չար խորհուրդս
արկանեն ՚ի միտս , զի արգելցեն յաղօթից ,
կամ անպտուղ արասցեն :

Աւատի որ յաղօթելն զգայ զձանձրութ՜ի և
զնեղութ՜ի ինչ , ծանիցէ թէ այն է որոգայթ
դիւաց . և մի երբէք թուլասցի յաղօթիցն .
այլ զօրասցի առաւել ՚ի ջանս՝ հայցելով զօգ֊
նութ՜ի ՚ի Տ՜նէ . և Ա՜ծ՝ որ մերձ է առ այնո֊
սիկ որ բեկեալ սրտի՜ խնդրեն զնա՝ իսկոյն

հասանի յօգնութիւն. և դևք անդէն հա-
լածին և չքանան։

լԵ Յաղօթս պարտ է երևեցուցանել կրօ-
նաւորութե զարտաքին նշան յարգանաց և
պատկառանաց, առ՚ի յայտնել զխոնարհութի
հոգւոյն, և զերկիւղն սրտի. որպիսի է ու-
նել զդէմս յարևելս, կալ բազկատարած, յո-
տին կանգնիլ, ՚ի ծունր իջանել, զարտասուս
հեղուլ, երեսս ՚ի գետնի դնել. քանզի աղօ-
թելն՝ է միանգամայն և երկրպագանել։

լԶ Բազում անգամ ած ոչ կատարելով ըզ
խնդիրս մեր առաւել ողորմի՝ քան կատարե-
լովն. քանզի ՚ի խնդրել մերում անգիտութե
զվնասակար ինչ կարծելով թէ իցէ բարի, մինչ
ոչ տայ ած՝ մեծ ողորմութի առնէ մեզ։

Ապա ոչ է արժան տրտմիլ և տրտնջել զայ,
թէ ոչ կատարեաց զխնդրուածս մեր, այլ ու-
րախ սրտիւ պատրաստ լինել ՚ի կամս այ՝ առ-
նել որպ և կամի. քանզի միշտ զօգուտն մեր
կամի, և տայ բարերարութե իւրով։

լԷ Ած երբեմն յամեցուցանէ տալ՝ զոր
խնդրեն մարդիկ. զի վայրագ պարգևացն քաջ
ծանիցեն, և զոր առնուն՝ անկորուստ պահես-
ցեն. քանզի սովոր են մարդիկ՝ զդիւրին զոր
ստացան անաշխատ՝ անհոգութե կորուսանել։

Իսկ երբեմն յամեցուցանէ. զի առաւել ևս
արիացուսցէ զխնդրակսն ՚ի ջանս աղօթից, և
գերագոյն պարգևաց արժանացուսցէ։ Իսկ
երբեմն վաղվաղակի շնորհէ. զի մի կարճմտութե

վհատեալ լքանիցին ՚ի յուսոյն պնդութենէ ։

ԺԸ Աղօթք իմաստնոց և կատարելոց՝ է իբրև աղաչանք չափահաս մանկանց. իսկ ռամկաց և տկարաց՝ իբրև լալիւն փոքր տղայոց ։ Որպէս ծնօղք երբեմն զխնդրուածովք չափահաս որդւոց զանց առնեն, կամ անագան կատարեն զնոյն. զի փորձիւ գիտեն զչափ արիական հոգւոյ նոցա և զքաջութիւն ՚ի համբերել ։

Իսկ զխնդիր փոքր զաւակաց փութով կատարեն. զի գիտեն զանձուկ բարս նոցա. որք եթէ ոչ վաղվաղակի ընկալցին զոր խնդրեն՝ աղաղակ բառնան՝ լան և ողբան, և յուսահատեալ լքանին ։

Այսպէս և Աստուած երբեմն վաղ՝ և երբեմն անագան կատարէ զխնդրուածս ծառայից իւրոց. զի նա քաջ գիտէ տալ զարժանն և զվայելուչն և զժամանակն տալոյ՝ զոր խնդրեն մարդիկ ՚ի Նմանէ ։

ԺԹ Պարտ է աղօթս առնել յամենայն ժամ. ՚ի ձախողութեան՝ զի ազատեսցուք ՚ի նեղութենէ. ՚ի յաջողութեան՝ զի մի՛ անկցուք ՚ի վտանգս փորձութեան ։ Աղօթքն ՚ի յաջողութեան է իբրև դեղ նախապահօղ. և ՚ի ձախողութեան՝ իբրև առողջացուցիչ ։ Ապա պա՛րտ է յարատևել յաղօթս, զի խաղաղութեամբ վարեսցուք զկեանս մեր ։

Ի ՚Ի մաղթանս աղօթից արժա՛ն է աղաչել զԱստուած, զի մի՛ թողցէ զմեզ ՚ի կամս անձանց մերոց գնալ, այլ շնորհօք իւրովք պահեսցէ զմեզ ՚ի մեղաց. տացէ մեզ մահու մեռանել՝ քան

մահու չափ մեղանչել ։

․Բանզի լաւագոյն համարելի է մեռանիլ՝ քան մեղօք զա՟ծ բարկացուցանել, և՚ի յաւիտեան դատապարտիլ ՚ի դժոխս. այս ոչ է ըղձման անձին խնդրել, այլ զեռանդն սրտին յայտ առնել՝ թէ առաւել յօժար է մահու մեռանիլ՝ քան ՚ի մեղս անկանիլ ։

Այսպիսի խնդիր յառաջ գայ ՚ի սաստիկ ջերմեռանդութենէ սիրոյն ա՟յ, որ յաղթէ մահու. ըստ այնմ, * Բուռն է իբրև զմահ սէր. ‖ Երգ երգոց. ը. 6 ։ Եւ այսպիսի մաղթանօք ա՟ծ առաւել ՚ի գութ շարժի յողորմիլ և յօգնել տկարութե՟ն մերում ։

Խա՟ Յա՟մի պէտս ունի աղօթից՝ կատարումն խնդրոց, եթէ հոգևոր իցեն բարիքն, և եթէ մարմնաւոր՝ զորս խնդրէ ոք յա՟յ. սակայն որ ինչ և մարդկութե՟ն է վայելուչ ջանք և աշխատութի՟ւ առ կատարումն բարույն այնորիկ՝ ոչ է պարտ զանց առնել զնոքօք ։ Ապա որ աղօթէ և խնդրէ զինչ յա՟յ, հարկ է և յիւր կողմանէ ջանալ որքան և կարէ, զի ընկալցի զկատարումն խնդրուածոց իւրոց ։

Խէ՟ Աղօթքն կարևոր են յոյժ առ ընդունելութի՟ւ ա՟ծային շնորհաց՝ և առ կատարումն խնդրուածոց ։ Բայց է՛ որ աղօթիւք առնու միանգամայն զշնորհս և զխնդիրն՝ յորժամ աղօթքն է ըստ օրինի, և խնդիրն է համաձայն ա՟ծային կամաց ։

Եւ է՛ որ առնու զշնորհս, այլ ոչ զխնդիրն՝

յորժամ աղօթքն է ըստ օրինի , այլ խնդիրն անվայելուչ : Այլ է որ ոչ զշնորհս առնու , և ոչ զխնդիրն՝ յորժամ աղօթողն է 'ի մահացու մեղս , թէև խնդիրն իցէ վայելուչ · վ՟ս զի անարժանութիւն խնդրողին արգելու զկատարումն խնդրոյն :

Այլ է՝ որ առնու զխնդիրն՝ բայց ոչ զշնորհըս · քանզի զհակառակն ա՟ծայինն կամաց խնդրէ թախանձանօք , և ոչ յանձնէ 'ի կամս ա՟յ զօգուտն իւր · վ՟յ ա՟ծ բարկացեալ կատարէ զխնդիրն՝ զի 'ի նմա պատժեսցի և զգաստասցի : Ո՟պ իսրայէլացիք խնդրեցին յանապատին զմիս , և ա՟ծ ետ լորամարգի · բայց մինչդեռ կերակուրք 'ի բերանս ն՟ց էին , բարկութիւն ա՟յ ել 'ի վ՟ր ն՟ց : || Թուոց. ԺԱ. 13 : Խնդրեցին և թագաւոր , և ետ ն՟ց զսաւուղ · բայց այն եղև ն՟ց 'ի պատիժ : || Ա Թագ. Ը. 7 : Ուրեմն պարտ է մեզ աղօթիւք խնդրել յա՟յ, որ ինչ օգուտ մեզ թուի · իսկ զկատարումն խնդրոյն յանձնել բարեյօժարութե՟ն ա՟յ :

Խ՟ր Ո. յապէս է և յաղօթս ս՟բյ պատարագին · զի է՝ որ առնու զխորհուրդն և զշնորհըս խորհրդոյն միանգամայն՝ մինչ արժանապէս հաղորդի :

Այլ է՝ որ զխորհուրդն միայն առնու , և ոչ զշնորհս՝ մինչ անարժանութե՟բ հաղորդի · որ և այն լինի նմա 'ի պատիժ :

Այլ է՝ որ զխորհուրդն ոչ առնու , այլ զշնորհսն առնու՝ մինչ արժանապէս տեսանէ

զսուրբ պատարագն ։

Այլ է որ ոչ զխորհուրդն առնու և ոչ ըզշնորհս , մինչ անարժանութե՟ տեսանէ զսբ պատարագն ։

Խն՟ Պարտ է յաւանձնական աղօթս աղաչել զԱծ վասն պայծառութե՟ սբ հաւատոյս քրիստոնէութե՟, հաստատութե՟ եկեղեցւոյ, խաղաղութե՟ ազգին և համայն աշխարհի․ վս՟ դարձի և զղջման մեղաւորաց, զի մի՛ կորիցեն հոգիք նց՟ ՚ի կորուստն յաւիտենից․ և ևս վս՟ փրկութե՟ հոգւոց նց՟, որք ննջեցին ՚ի շնորհս ։ Զայս օրէն ունի տիեզերական սբ եկեղեցին․ որում պարտիմք հետևօղ լինել՝ իբրև անդամ բոլորին ։

Իւրաքանչիւր հաւատացեալ պարտական է աղաչել զԱծ վս՟ ընկերին և ամ՟ հասարակութե՟․ է՝ զի մին աղօթէ վս՟ ամենեցուն․ և է՝ զի ամենեքեան աղօթեն վս՟ միոյն․ և այսպէս ամենեքին օգտին յաղօթից միմեանց ։

Յաղօթս կարևոր է և օգտակար զսբս նյ ունիլ բարեխօս առ Ած , մանաւանդ զսբ Ածածինն․ ուստի և եկեղեցի սբ յամ պաշտամունս իւր կարգեաց զործանաւոր մաղթանս առ սբ Ածածինն՝ ապաւինելով յանդամալի բարեխօսութե՟ նորա ։

Խն՟ Գործք բարեաց առ Ած ուղղեալք՝ համարին իբրև զաղօթս․ այլ չէ՝ պարտ յուսալով ՚ինն՝ յետս մնալ ՚ի հրապարակական և կամ յաւանձնական աղօթից․ զի աղօթիւք ար-

դիւնաւորին բարեգործութիւք ։

ԽԶ Եթէ ոք 'ի ժամ յաջողութե լսէ պատուիրանացն այ, լսէ և նմա ած 'ի ժամանակի նեղութե նր ։ Իսկ որ 'ի յաջող վիճակի ունկնախից և լսելափակ եղեւ՝ առունկնդրանէ պատուիրանին այ, կարի իրաւամբ և ած ոչ լսէ նմա՝ յորժամ աղաղակէ առ նա 'ի վտանգի նեղութեան և տառապանաց ։

ԽԷ 'Ի սկզբան իւրաքանչիւր դժուարին և օգտակար գործառնութեց, պարտ է աղօթիւք հայցել յայ՝ յաջողութե ժամանել 'ի լրումն գործոյն ։ Եւ ոչ է պարտ անփոյթ առնել զաղօթիւք յետ կատարման. այլ առաւել ևս արժան է յարատևել յաղօթս՝ և գոհանալ զայ. քանզի ոչ փոքր աշխատանաց պէտս ունի պահել զոր ունի ոք, քան ստանալ զոր ոչն ունի ։

ԽԸ Բազում պատճառք են՝ որք խափանեն զզօրութիւն աղօթից, և ընդդիմանան կատարման խնդրուածոց. զի՝ մեղքն, չար խորհուրդն, երկբայութիւն, անվայել խնդիրն, խստասրտութիւն 'ի ներել յանցանաց այլոց, անգթութիւն, անհամբերութիւն խնդրողին. զորոց ասէ տր առաքեալն յակոբոս. * Խնդրէք՝ և ոչ առնուք, վն զի չարաչար խնդրէք ։ || Յակ. դ. 3 ։ Այս որ խնդրէ առնուլ յայ զբարիս, բարձցէ զարգելիչս պատճառսն. իսկ եթէ ինքն ոչ բառնայ, և խնդիրն ոչ կատարի, մի՛ բամբասեսցէ զած՝ զի ոչ լըւաւ զաղօթս իւր. այլ անձին մեղադիր լինի_

ցի , զի չարաչար խնդրեաց ։

ԽԹ Ամենայն աղօթք յերկուս մասունս մե-րածին . ի՝ խնդրել զբարիսն՝ որոց կարօտիմք , և զերծանել ՚ի չարեացն՝ յորոց վշտանամք ։

Արդ՝ նախկին բարին է ած , ապա որ գտանէ զած՝ գտանէ զամ բարի . և նախկին չարն է մեղքն , ուստի որ հեռանայ ՚ի մեղաց՝ ազատի յամենայն չարեաց ։

Ծ Ած երբեմն յառաջադրէ մեզ զբարին ընդհանրապէս , բայց թողու խնդրել աղօթիւք յայ ՚ի մասնաւորի զոր պարտիմք առնել . և կամ ուսանել ՚ի մարդկանէ զեղանակ և զկերպ գործադրութե նր , թէ ո՞ր և երբ՝ և որպէս արժան է ՚ի գործ դնել ։

Ամն իրի նախ պա՛րտ է աղաչել զած՝ զի ինքն առաջնորդեսցէ մեզ ոչ և կամի . որպէս՝ * Ուսո՛ ինձ առնել զկամս քո , զի դու ես ած իմ ։ || Սաղ. ճխբ . 9 ։ և թէ՝ * Ցո՛յց ինձ ճանապարհ յոր գնացից ։ || Սաղ. ճխբ . 8 ։

Եւ երկրորդ՝ դիմել առ իմաստուն քահանայս և խոստովանահայրս , որք համարին իբր թարգմանք ածային կամաց , խորհուրդ հարցանել ՚ի նոցանէ , և ուսանել զեղանակ կիրառութե բարւոյն . ոպ ասացաւ պօղոսի . * Մո՛ւտ ՚ի քաղաք , և պատմեսցի քեզ՝ զինչ քեզ պա՛րտ իցէ առնել ։ || Գործ . Թ . 7 ։

Զի թէպէտ ած եցոյց պօղոսի զբարին ընդհանրապէս , այլ եթող ՚ի մասնաւորի ուսանել յանանիայ առաքելոյ զգործադրութե նր ։

Ուրեմն ո՛վ ոք և իցէ՝ կարօտի օգնականութե արժանահայց աղօթից, և սատարութե խորհրդոց և խրատուց առաջինի արանց. որպ՟ զի կարասցէ գտանել անսայթաք զճանապարհն բարեաց, զոր յառաջադրեալ է Ա՟ծ 'ի յաւիտենից. զի ըստ Ա՟ծաբանից՝ նախասահմանութիւնն կատարի աղօթիւք ըստ յառաջադրութե այ՟լ:

Քանզի զբազում իրս Ա՟ծ այնպէս կամի և սահմանէ, զի աղօթիւք և միջնորդութբ՟ ուրուք տացէ մեզ. որպ՟ յայտնութբ՟ հրեշտակի այ՟լ զառաջինն ասէր պօղոս՝ չլինել վնաս անձին ումեք: || Գործ. ԻԷ. 22: Իսկ մինչ նաւավարքն փախչել կամէին, ասէ ցհարիւրապետն և ցզօրականսն. * Եթէ ոչ դոքա մնան 'ի նաւին՝ դուք ապրել ոչ կարէք: || Գործ. ԻԷ. 31: Այս բան ս՟բ առաքելոյն ոչ երկմտեաց ընդդէմ իւրն, այլ հաստատեաց զնոյն՝ գործադրութ՟ կարգի իրացն. զի թէպէտ Ա՟ծ շնորհեաց պօղոսի զանձինսն որ էին 'ի նաւի անդ, այլ ոչ առանց սատարութե նաւաստեաց:

Ծն՟ Ամենայն արարածական բնութիւք քարոզեն մարդկան զերիս պայմանիկ բանս. ընկալ, հատո, և երկիր. այս է՝ ընկալ յայ՟լ զբարիս. հատո զպարտս գոհութեան. և երկիր յապերախտութենէ:

Ապա որ խցեալ զականջս հոգւոյն առ ձայնս բնութե, աղօթիւք ոչ խնդրէ յայ՟լ զբարիս, կամ ոչ գոհացող լինի վ՟ս ընկալեալ բարեացն, կամ ոչ երկնչի յապերախտութենէ այ՟լ՝ որ դատի

զանձնահաճոյս, արժանապէս պատժի յայն իբրև ծառայ չար և վատթար:

* Ի նեղութեան իմում եւ առ տէր կարդացի, և առ Աստուած իմ աղաղակեցի: Լուաւ ի տաճարէ սրբոյ իւրմէ ձայնի աղօթից իմոց, և աղաղակ իմ առաջի նորա մտցէ յականջս նորա:
|| Սաղմոս. ԺԷ. 7:

* Երիս ժամս յաւուր դնէր ծունր և կայր յաղօթս:
|| Դանիէլ. Զ. 10:

* Զամ ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատացեալ՝ առնուցուք: || Մատթ. ԻԱ. 22:

* Իբրև եհաս ի տեղին՝ ասէ ցնոսա. յաղօթս կացէք չմտանել ի փորձութիւն: || Ղուկ. ԻԲ. 40:

* Մեք՝ աղօթից և պաշտաման բանին հաստատուն լիցուք:
|| Գործ. Զ. 4:

* Յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից տևող կացէք: || Հռոմ. ԺԲ. 12:

* Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պաղատանս առ այն որ կարողն էր ապրեցուցանել զնա, ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր. և լսելի լինէր առ լսողէն:
|| Եբրայ. Ե. 7:

* Զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ:
|| Ա Յոհան. Ե. 14:

Գլ. Գ

Ա Յետ խօսելոյ մեր զաղօթից՝ ոճ բանիս բերէ ասել ինչ և զպահոց, առ որ պիտին մի֊ջին բարիք . բ՝ առողջութի մարմնոյ և զօ֊րութի անձին, որովք լինի ծոմապահութի, և պահեցողութի : Զի որ առողջ է և զօրա֊ւոր, կարէ նա պահել կամ ժուժկալել 'ի պա֊րարտ և 'ի հեշտալի կերակրոց և ըմպելեաց, առ 'ի ճնշել զմարմինն՝ և մահացուցանել զխա֊տաւոր կիրս և զանկարգ ցանկութիս զգայա֊կան բաղձանաց, ոչ զի կարասցէ մաշուցա֊նել զանդամս մարմնոյ իւրոյ 'ի ծառայութի այ . որպիսի է սպասաւորել հիւանդաց . յայց ելանել բանտարգելոց . թաղել զանտերունչ մեռեալս . գնալ յուխտ 'ի սրբազան տեղիս . և ևս՝ համբերել վշտաց և ձգանց, մինչև տալ զմարմինն 'ի գան՝ 'ի բանդ՝ և 'ի մահ վս սիրոյն այ . որք և նմանեօք սոյին նուաճեալ հնա֊զանդի մարմինն կամաց հոգւոյն :

Զի որպէս 'ի զօրանալ մարմնոյ կերակրովք՝ տկարանայ հոգին . նոյնպէս և 'ի տկարանալ մարմնոյ պահեցողութեամբ՝ զօրանայ հոգին . ըստ այնմ, * Յորժամ տկարանամ, յայնժամ զօրանամ : || Բ Կորն . ԺԲ . 10 : Ուրեմն պարտ է ճնշել զմարմին ծոմով՝ պահեցողութբ՝ և ժուժկալութբ, զի հլու հպատակութբ ծառայեսցէ այ մինչև իսպառ :

Բ Հարկ 'ի վր կայ ամենուն ամբողջ պա֊

հեղ զկանոնական պահեցողութիւնս, զոր կարգեաց մեր եկեղեցին ։ Իսկ եթէ ոք զպահս իբրև աւելորդ և անօգուտ ձգունս վարկուցեալ գայթակղեսցի, և զայլս գայթակղեցուսցէ, մեծապէս մեղանչէ ։ զի դատի զմեր հարսն՝ որք հոգւով սրբով կարգադրեցին ըզ կանոնս եկեղեցւոյ ։

Գ Մարդս պահեցողութեամբ հատուցանէ զպարտս իւր՝ զոր ունի Աստուծոյ վասն մարմնոյ իւրոյ, և կատարէ զգործ արդարութեան ։ Քանզի Աստուած իբրև գերագոյն տէր՝ զոր ինչ ետ մեզ զբարիս՝ խնդրէ ՚ի նոցանէ զտասանորդս, որ է նշան տէրութեան նորա ։ զի տեարք երկրին իրաւամբ պահանջեն զհաս կամ զհարկ ՚ի հպատակաց իւրեանց ։ և որք զլանայցեն հատուցանել՝ ապըստամբ համարին ։

Այս տուրք է զհաս կամ զհարկ մարմնոյն որ է պահեցողութիւն՝ մատուցանել Աստուծոյ, որ է Տէր մեր և բարերար ։ ըստ այնմ, * Ո՞ ինչ ունիս զոր ոչ լիցէ առեալ ։ և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև զչառեալ ։ || Ա Կորն. Դ. 7 ։

Դ Պահեցողութիւն կատարի և գործ սիրոյ ։ զի մինչ կամակար յօժարութեամբ ճնշէ ոք զմարմինն՝ ցուցանէ յանձին իւրում զկատարեալ սէրն Աստուծոյ ։ և այս լինի նախ պահօք, ապա այլովք ծառայութեամբ մարմնոյ ։

Ե Պահքն ոչ միայն անկ է ճաշակելեաց, վասն բերանոյն, հեռի լինել ՚ի պարարտ կերակրոց, այլև ամենայն զգայութեանց ։

՚Քանզի վախճան պահոցն՝ է մաքրութիւն մտաց, և սրբութիւն սրտի. զորս և կարէն բծաւորել տեսութիւն աչաց, լսողութիւն ականջաց, հոտառութիւն ռնգաց, և զգայութիւն շօշափելեաց. Նմին իրի հարկ է և՛ ՚ի վերայ նոցա զօրէնս պահոց կարգել՝ ըստ իւրաքանչիւր աստիճանի: Ո՞չ զի անօգուտ իցէ միայն բերանով պահել, և այլովք զգայութեամբ անզգոյշ լինել ՚ի պատճառս մեղաց: Ուրեմն պահելի է ոչ միայն ՚ի պարարտ կերակրոց. այլ և յամենայն առթէ մեղաց:

Զ Գտանին և ոմանք՝ որք պահեն պահս, բայց անվարձ ելանեն. ագահ ժլատն պահէ՝ զի մի՛ ծախեսցի դրամն. կեղծաւորն պահէ՝ զի գովեսցի ՚ի մարդկանէ. տկարն պահէ՝ զի մի՛ մարմինն վտանգեսցի. աղքատն պահէ՝ զի ոչ ունի կերակուր: Այսպիսիք պահեն վասն անձանց իւրեանց և ոչ վասն Աստուծոյ. այլ սակայն պահքն պարտ է լինել տիրապէս միայն ՚ի փառս Աստուծոյ:

Է Պահեցողութիւն՝ ոչ միայն հարկաւոր է հոգւոյ, այլ և մարմնոյն է օգտակար և պիտանի. զոր և բժիշկք պատուիրեն պահել պահս վասն առողջութեան անձին: Այն որ տրտունջ բառնայ զկանոնական պահոց մեծ եկեղեցւոյ՝ և անձնատուր լինի զեղխութեան ՚ի կերակուրս և յըմպելիս, ոչ միայն վնասէ հոգւոյն՝ նկուն առնելով բանաւոր կրից, այլ և մարմնոյն՝ ենթարկելով զանազան ախտից և հիւանդութեանց: Տես զասացեալսն և ՚ի վերոյ որկրամոլութեան (յերես 73):

* Իսկ ՚ի նեղել նոցա քուրձ զգենուի, խոնարհ առնէի պահօք զանձն իմ, և աղօթք իմ՝ ՚ի ծոց իմ դարձցին: || Սաղմոս. ԼԴ. 13:

* Դարձարուք առ իս յամենայն սրտէ ձերմէ, պահօք և լալով, և կոծելով: || Յովէլ. Բ. 12:

* Յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրև կեղծաւորքն տրտմերեսք. որ այլայլեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն: || Մատթ. Զ. 16:

## Ողորմութիւն

### ԳԼ. Դ

Ա Զկնի աղօթից և պահոց խօսելի է և զմիւս գործոյ ողորմութեան, որ լինի արտաքին և ստացական բարեօք, որպէս ընծայիւք. այս է՝ կերակրել զքաղցեալս. զգեցուցանել զմերկս. վանատուր լինել օտարաց. ազատել զգերեալս. լնուլ զկարիս կարօտելոց. որովք հատուցանէ մարդն զպարտս, զոր պարտի Աստուծոյ ընչից իւրոց:

Բ Իսկ թէպէտ գործ ողորմութեան հայի առ մարդ կարօտեալ, սակայն վախճանական դիտումն տուողին առ Աստուած գոլով ուղղեալ, իբրև իւրոյ ինքեան համարի Աստուած. ըստ որում դիտումն վախճանին՝ առաջին է ՚ի պատճառս գործոց. ըստ այնմ, * Որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք: || Մատթ. ԻԵ. 40:

Է  Դիւրաւ բերեն մարդիկ 'ի գործ ողորմութեան՝ քան աղօթից և պահոց. քանզի ճիգն և աշխատութիւն պիտի 'ի վանել զձանձրոյթ և զտաղտկութիւն անձին 'ի յաղօթելն, և զպահել զբաղձանս համադամ կերակրոց 'ի պահելն. իսկ ողորմութիւն ոչ խնդրէ աշխատութիւն, այլ միայն կամեցողութիւն առ 'ի բանալ զկարօտութիւն ընկերին։

Նա՛ զի աղօթք և պահք են նուէր հոգւոյն և մարմնոյն, որք են բուն և էական մասունք մարդոյ, իսկ ողորմութիւն է նուէր ընչից՝ որք արտաքոյ են մարդոյ։ Սակայն այր ողորմած ընդ արտաքին ինչս՝ պարտ է և զսիրտ և զկամս իւր մատուցանել. զի յայնժամ է ողորմութիւն ընդունելի՝ յորժամ ձեռամբ սրտին բաշխի։

Քանզի ոչ հաճի Աստուած ընդ ողորմութիւն, եթէ ձեռն տայ՝ և սիրտն զլանայ. զի Աստուած ոչ 'ի ձեռս հայի՝ այլ 'ի սիրտ տուողին։

Ուստի ողորմութիւն յայնժամ բարձրագլուխ պարծի առ դատաստանաւ, յորժամ յարակից է նմին միտք զուարթ և կամք յօժար. ըստ այնմ, * Զ տուրս զուարթատուաս սիրէ Աստուած։ || Բ Կոր. Թ. 7։

Ը  'Ի գործ ողորմութեան շարժի մարդ, ոչ միայն 'ի սիրոյն Աստուծոյ՝ այլև 'ի բնութենէ իւրմէ. զի մարդ՝ որոյ խառնուած է բարեկարգ՝ բնականաբար բերի 'ի գութ ընկերին. իսկ 'ի գործ աղօթից և պահեցողութեան ամենեքին շարժին միայն 'ի սիրոյն Աստուծոյ, և ոչ երբեք 'ի բնութենէ։

Քանզի ամ՟ ոք 'ի բնութենէ իւրմէ սիրէ և խնդրէ զհանգիստ և զդիւրութի՟ անձին. իսկ առ 'ի կալ յաղօթս, և 'ի հեշտալի կերակրոց հրաժարիլ՝ ոչ բերի բնութէ՟.

Այս միայն 'ի սիրոյն այ՟ շարժի մարդ աշխատ առնել զանձն իւր աղօթիւք և պահօք.

Է. Զայն տուրս արժան է կոչել ողորմութիւն, որ 'ի սէրն այ՟ ջամբի կարօտելոց՝ յարդար վաստակոց՝ ըստ չափու կարողութե՟, զուարթագին՝ անտրտունջ՝ անյապաղ՝ և 'ի ծածուկ.

Ը. Գործ գթութե՟ չափի ըստ ընչից և ըստ կարեաց. զի եթէ ոք ոչ ունիցի զկարողութի՟ ընչից՝ լիաձեռն կարկառել զտուրս կարօտելոց, այնչափ ինչ տացէ, որչափ միանգամ կարող գտանի: Աւասիկ ասէ տ՟րն մեր.
* Որ արբուսցէ միում 'ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր: || Մատ. Ժ. 42.

Է. 'Ի քաղաքական տանելի պատժեն դատաւորք զգողս և զյափշտակօղս, այլ ոչ զագահս և զանգութս. իսկ այ՟ ոչ միայն զգողս և ըզյափշտակօղս պատուհասէ, այլև զագահս և զանգութս:

Քանզի ագահն զբարիս հասարակաց անկարգ բաղձանօք ժողովեալ՝ ընդ սրտի իւրում ամբարապահեստ առնէ. և անգութն՝ զողորմութիւն տարագրեալ յաշխարհէ՝ զմարդիկ 'ի կարօտութե՟ սպանանէ. ապա իրաւամբ պա-

առհասարակ լինին վաղ կամ անագան՝ յա̃ծային արդարութենէ։

Ը Չ՚է զերծանին ՚ի դատաստանաց և նոքա, որք թէպէտ ողորմած են առ աղքատս, սակայն բռնալեր մատուցանեն երգեցողաց և խաղարկուաց զարծաթ և զոսկի ՚ի գիներբուս և ՚ի խնճոյս։ Քանզի զմարմնաւոր բարիս՝ որ պարգեւեալ է նց̃ յա̃ծուստ ՚ի ստացումն հոգեւորաց բարեկարգ մատակարարութ̃, յանպէտ և ՚ի վնասակար իրս չարաչար ՚ի գործ դնեն. ը̃ այնմ, * Չ՚է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։ ‖ Մտ̃. ժե. 26։

Ապա առաւել ևս պատժոց արժանի դատին նոքա՝ որք անողորմ են առ աղքատս, և առատաձեռն ՚ի սատանայական խաղս և ՚ի զեղխութ̃ իս։

Թ Անզեղջքն ՚ի չարիս՝ մի՛ յուսասցին լոկ ողորմութ̃ և տրովք հասանել փրկութեան։ Քանզի յանդգնութ̃ի է յուսալով յարդիւնս ողորմութ̃ե՝ անխիղճ մեղանչել, կամ ո՛չ դառնալ ՚ի մեղաց. զի ողորմութ̃ին ո՛չ է կաշառ թիւրէ իրաւանց, կամ խափանիչ արդարութ̃են ա̃յ։

Այո՛ ողորմութ̃ին քաւէ զմեղս, և զերծուցանէ զցասումն ա̃յ. սակայն ենթադրէ ունել զկատարեալ զղջումն և զխոստովանութ̃ի. պահանջէ ևս զաղօթս և զպահեցողութ̃ի։

Ա̃րդ զի Ա̃ծ ոչ միայն է ողորմած՝ այլև արդար. զի որ ասացն՝ թէ տո՛ւք զողորմութ̃ի, և ա̃մ ինչ ս̃բ է ձեր. և թէ՝ զողորմութ̃ի կամիմ և ո՛չ զպատարագ. նոյնն ասաց, * Եթէ ո՛չ

ապաշխարիցէք՝ ամենեքեան նոյնպէս կորըն-չիցիք ։ || Ղուկ. ԺԳ. 3 ։

Ուրեմն պարտ է տալ ողորմութի կարօ-տելոց, այլ ոչ երբէք զանց առնել զկատար-եալ զղջմամբ և զխոստովանութե՛, զաղօ-թիւք և զպահեցողութեամբ ։

Զի թէպէտ մի միայն չար է բաւական կո-րուսանել զհոգի մարդոյ յաւիտեան, բայց չէ բաւական մի միայն բարեգործութի հաստատա-նել զնա 'ի փրկութի. զի ըստ առածին իմաս-տասիրաց, բարին առեալ լինի յամբողջ պատ-ճառէ. իսկ չարն՝ յինչ և իցէ պակասութէ ։

Ո՛չ ծնանի կենդանին զուգընթացութե՛ բազում պատճառաց, բայց կարէ մեռանել 'ի միոյ պատճառէ ։

Ժ Զներգործութե՛ ողորմութե, աւե-լորդ թո՛ղ ճոխագոյնս ճառել. որովհետև կարէ իւրաքանչիւրոք յանձին իւրում փոր-ձել զօգուտն նորին ։

Քանզի և բազում մեղաւորք պատճառաւ ողորմութե զորս ետուն աղքատաց՝ և տանն այ սպասաւորաց, աղօթիւք և խնդրուա-ծովք նոցա արժանացան ամենայն ողորմու-թեան և շնորհաց, դարձան 'ի մեղաց իւ-րեանց՝ և արդարացան ։

Բազումք են՝ 'ի տառապանաց և 'ի վշտաց որովք և ողորմութե զերծան. հիւանդք գը-տին զառողջութի, փորձանաւորք զելս, ան-կեալքն 'ի ձախողակի՝ զյաջողուածս բարեաց ։

Այլ ոչ միայն այսչափ, այլև մեռեալք ընկալան զկենդանութի․ ոպ բարեպաշտուհին տաբիթա՝ վս աղաչանաց այրեաց որոց առնէր ողորմութի, կենդանացաւ ՚ի մեռելութենէ ՚ի ձեռն սբյն պետրոսի ։ ‖ Գործ․ Թ․ 41 ։

* Զմեղս քո ողորմութբ քաւեսջիր, և զանօրէնութիւնս քո գթովք տնանկաց ։ ‖ Դան․ Դ․ 24 ։
* Եղերուք գթածք՝ որպէս և Հայրն ձեր գթած է ։ ‖ Ղուկ․ Զ․ 36 ։
* Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել․ ծարաւեցայ՝ և արբուցէք ինձ․ օտար էի՝ և ժողովեցէք զիս ։ ‖ Մատ․ ԻԵ․ 35 ։

---

## Աղօթք, Պահք, և Ողորմութիւն ։

### ԳԼ․ Ե

ա Երրեակ ազգ են բարեգործութեանց, որք կարեւորք են քրիստոնէից՝ առ ՚ի սրբել ՚ի մեղաց, և հասանել յաւիտենից կենաց․ այս է՝ աղօթք, պահք, և ողորմութի ։

Երրեակ ազգ են և թշնամիք, որք ջանան արգելուլ ՚ի բարեգործութենէ, և զրկել ՚ի յաւերժ կենդանութենէ․ դր է՝ սատանայ, մարմին, և աշխարհ ։

Սատանայ՝ ներքին թշնամի, որ դրդէ ըզ մարդիկ ազգի ազգի խաբուսիկ հնարիւք յեսա

կամիլ յաղթիցէ։ Քանզի արկանէ 'ի միտս աղօթողին զաղտեղի խորհուրդս, սնափառութիւնս, զաշխարհային հոգս. և կամ ցրուէ և պղտորէ զմիտս սնոտի մտածութեամբ, կամ արտմութեամբ, կամ թերահաւատութեամբ, այլովքն հանդերձ։

Մարմին՝ կցորդակից թշնամի, որ անդադար ստիպէ զհոգին կատարել զհաճոյս իւր՝ քան զկամս Այ. խորշեցուցանէ 'ի պահոց պատճառելով զտկարութիւն իւր. կամակից ինքեան առնէ զհոգին՝ խնդրել զորովայնն հանապազօր փափուկ կերակրովք։

Աշխարհ՝ արտաքին թշնամի, որ հրապուրէ սնոտի վայելչութեամբն զերկրաւորս և եթ խորհիլ. առաջի առնէ զմեծութիւն, ըզփառս, զբօսանս փափկութեան. ջանայ անփափել զձեռս ողորմածաց՝ յաղքատաց և 'ի կարօտելոց, ոչ զի ճոխ ընչիւք վայելեսցեն 'ի կեանս կենցաղոյս, և մի՛ իւիք պակաս գտանիցին։

Եւ յայսոսիկ միաբանորդ թշնամեաց առաւել քան զայս վնասին նոքա՝ որք նորաբայլ են և յողդողդուն 'ի բարեգործութեան ճանապարհին։ Իսկ մինչ յառաջանան 'ի գործս բարիս՝ լինին ազատաքայլ և անայթաք. և իբրև քաջ զօրական առ ոտն հարեալ զզօրութիւն թշնամւոյն՝ զյաղթանակն տանին քաջութեամբ։

Եւ որովհետև ոմն ինչ յանկատարութենէ 'ի կատարելութիւն դիմէ. և ոմն գործ 'ի սկզբան թուի դժուարին, բայց հետ զհետէ գործի

վայելչաբար և դիւրութ՟բ · այլ մի՛ վհատեսցին նոքա՝ որք չեն ունակացեալ ՚ի բարեգործութ՟ե՝ յորժամ ընդ առաջ ելանէ դժուարութի՟ ինչ կամ թերութի՟ ՚ի գործել իւրեանց զբարիս · այլ ջանասցեն յարատևել ՚ի նմին, մինչև լինել նց՟ այն ՚ի սովորութ ·

Զայն և յարհեստաւորս է տեսանել · զի զառաջինն բազում դժուարութիս կրեն, և բազում վրիպմունս գործեն համբակքն · իսկ յորժամ անձանձիր աշխատասիրութ՟բ հմտանան արհեստին, այնուհետև գործեն դիւրութ՟բ և անվրէպ ·

Է Ո՛չ երբեմն զյօժարութի՟ կամաց մարդոյ, որ հաստատեալ է ՚ի գործել զբարի ինչ, ընդունի ՚ի տեղի գործոյ · որպ՟ զյօժարութիւն աբրահամու ՚ի պատրաստել զիսահակ զորդի իւր՝ ընկալաւ ած՟ իբրև զգործ կատարեալ ·
Ղուկ. ԻԴ. Որպէս և զյօժարութի՟ իւղաբեր կանանց՝ որք երթային օծանել զմարմինն տն՟ յի՟, ընկալաւ իբրև զգործ լցեալ ·

Այնպէս ՚ի տեղի գործոյ ընդունի ած՟ ըզյօժարութի՟ հիւանդաց՝ որք փափագին աղօթել յեկեղեցւոջ · և չքաւորաց՝ որք կամին տալ ողորմութի՟ կարօտելոց · և տկարաց՝ որք բաղձան պահել զպահս ·

Բայց և երբեմն ընդ յօժարութեն կամաց խնդրէ և զգործն · որպ՟ զհաստատուն կամս որդւոցն զեբեդեայ առ ՚ի ըմպել զբաժակն մահու, ո՛չ բաւական համարեցաւ տէրն · այլ

կամեցաւ՝ զի իրք ևս սրբեսցեն. այլ և աբբեինն խել, մինն վկայական արեամբ, և միւսն մշտնջենաւոր ճգնութեամբ:

Ապա որ կարէ գործով կատարել զաղօթս՝ զերկրպագութիւն՝ զպահս՝ և զողորմութիւն, մի՛ զանց առնիցէ, յուսալով թէ իցէ բաւական միայն յօժարութիւն կամաց: Իսկ նա՝ որ ոչ կարէ գործով կատարել, մի՛ վհատիցի թէ զրկեցաւ ՚ի վարձուց. զի ած իբրև զգործ արժանի վարձուց ընդունի երբեմն զպատրաստութիւն և զյօժարութիւն բարեմիտ կամաց՝ յորժամ է հաստատուն:

Է Կատարելութիւն մարդոյ կայանայ ՚ի սիրելն զած. և նշան սիրոյն այն են գործք բարիք. որք վերաբերին կամ առ ած, կամ առ ինքն, կամ առ ընկերն: Առ ած վերաբերին աղօթք, զի ունին առարկայ զած. առ ինքն վերաբերի պահքն, զի ունի առարկայ զմարմին. առ ընկերն վերաբերի ողորմութիւն, զի ունի առարկայ զողորմելութիւն մարդոյ:

Բայց որովհետև աղօթք, պահք, և ողորմութիւնք, իբրև մասունք խորհրդոյ ապաշխարութեան են առաքինութիւնք կրօնի, երբեմն ևս փոխանակաբար վերաբերին առ ած. և ունին զզօրութիւն իւրեանց՝ ՚ի գործունէութենէ ածային շնորհաց:

Ամէն այր արդար զգուշանայ յարատոյ մեղաց, զի մի՛ աղտեղասցի և զրկեսցի ՚ի շնորհաց. և բծաւորեալն մեղօք՝ ապաշխարէ,

զի սրբեալ արդարասցի, և շնորհաց ընդունակ լիցի։ Մին վարի իբրև պաշտպանողական զէնուք, և միւսն՝ իբրև վանողականաւ։

Զէնքս այսոքիկ են գործողութիւնք աղօթից՝ պահոց՝ և ողորմութե՟. որովք շնորհքն այ՟ եթէ իցէ յումեք, անկորուստ պահի, և թէ կորուսեալ իցէ՝ վերստին գտանի։

Նաև թէպէտ երեքին սոքա 'ի միոյ յականէ սիրոյն այ՟ յառաջ գան, ոպ՟ ջերմութի՟ և լոյս՝ և անդրադարձ շառաւիղ՝ 'ի միոյ արեգականէ. այլ զանազանին յինքեանս, զի ունին զայլ և այլ առարկայս. բայց երեքեանն 'ի միասին զմի պսակ երանութեան հիւսեն 'ի գլուխ գործողին իւրեանց։

Իսկ արդ՝ որ աղօթէ առ ա՟ծ՝ ճանաչէ զինքըն առաջի այ՟, և զա՟ծ ներկայ ինքեան. վ՟յ ոչ կարէ խորհիլ 'ի գործել զչար ինչ, այլ մանաւանդ ցանկայ հաճոյ լինիլ նմա. և յանձնէ զանձն իւր և զիւրսն ա՟մ 'ի կամս այ՟. և յա՟մի ա՟մ ուրեք խնդրէ զփառս այ՟. և խոնարհ մտօք հնազանդի հրամանաց նր՟։ Այս ա՟մ և որ սոցին սակի են՝ համարին գործ աղօթից. որք սկզբնաբար ներգործին 'ի մտաց, այլ կատարին սպասահարկութե՟ մարմնոյ։

Նաև յայսցանէ հարկաւ հեռանի ճնշել ըզմարմինն պահօք, զսպել զզգայարանս, մեռուցանել զանկարգ կիրս ախտաւոր բաղձանաց հեշտութե՟, համբերել ա՟մ վշտաց և ձախողակի պատահարաց, մինչև կորուսանել զմարմին,

յորում գտանի ճշմարիտ կեանք հոգւոյն. ըստ այնմ, * Որ կամիցի զանձն իւր կեցուցա-նել՝ կորուսցէ զնա: || Մատ. ժզ. 25:

Իսկ պահք և նմանք սոցին գործք առաքի-նութեան վերաբերին առ պահեցողութիւն. զի 'ի մարմնի և մարմնով գործին, այլ ո՛չ առանց սատարութեան հոգւոյ և մտաց:

Յետ որոյ հետևին և գործք ողորմութեան, որ է՝ ջամբել զինչ՝ առ 'ի բառնալ կամ թե-թևացուցանել զկարօտութիւս կարօտելոյն: Սա որ պիտոյն ջանք և աշխատութիւն մարմնոյ 'ի տուացումն գոյից, և խոհական խորհրդա-ծութիւն հոգւոյ 'ի կշռել զկարօտութիւն անձին և զպէտս կարօտելոյն, որպ զի արժանապէս և վայելչաբար լինիցի տուրն: Սա գործս ողոր-մութեան վերաբերին ներքուստ, խրատ, ու-սուցանողութիւն, կարեկցութիւն, մխիթարու-թիւն, և նմանք սոցին:

Իսկ այսոքիւք կատարին ամ գործք վճար-ման մեղաց՝ ըստ զղջման և խորհրդական խոս-տովանութեան. զորս կանոնադրէ խոստովանա-հայրն ըստ թեւութեան անձին և ժամանակին, իբրև դեղ և սպեղանի ամ հիւանդութեան և վիրաց հոգւոյ. որք ունելով զներգործութիւս իւրեանց 'ի զօրութենէ չարչարանացն քի, ար-դիւնաւորեն զշնորհս աստ, և զփառս 'ի հանդերձեալն:

Է. Յայսմիկ պարունակեալ կան աւետա-րանական ինն երանութիւնքն. վն զի հոգւով

աղքատ, հեզ, և մ͞ք սրտիւք՝ են աղօթասէրք։ Սգաւոր, քաղցեալ, ծարաւի, հալածեալ և նախատեալ վ͞ս արդարութ͞ե՝ են պահեցողք։ Ողորմած և խաղաղարար՝ են նպաստամատոյցքն ընչիւք կամ բանիւ։

Որդ՝ որ զայսոսիկ ունենն սրտիւ ա͞յ, ն͞ց է երկնից արքայութիւն. Նոքա մխիթարին, ժառանգեն զերկիր, յագենան, զողորմութի գտանեն. Նոքա զա͞ծ տեսանեն, որդիք ա͞յ կոչին, ցնծան և ուրախանան յերկինս. զի վարձք նոցա բազում են աստ և 'ի հանդերձեալն, ըստ անսուտ խոստմանն ք͞ի ա͞յ մերոյ։

Մաս. Է։

Է. Զգերազանցութ͞ե և զհարկաւորութ͞ե աղօթից պահոց և ողորմութ͞ե, ոչ միայն նախնի իմաստասէրք՝ և հարք և վարդապետք գրեն, և զմարդիկ 'ի նոյն յորդորեն. այլ և ա͞ծաշունչ գիրք հնոյ և նորոյ կտակարանաց՝ ամենայն ուրեք իբրև փողով բարբառոյ հրաւէր հարկանեն։

Սուրբ հերքեացին սակաւուք ասացեալքս աստանօր, ընդ այլոց բազմաց հոգեշահ խրատաբանութեց. որք են իբրև կարևոր զարդ հոգւոյ և մարմնոյ՝ առ 'ի մտանել համարձակ յառագաստն լուսոյ երկնաւոր փեսային՝ իբրև կոյս մի մ͞ք և հարսն անարատ գեղափայլ պճնութ͞ե, 'ի վայելել զփառս անվախճան։

* Բարի են աղօթք՝ պահօք և ողորմութեամբ և արդարութեամբ ։ || Տոբ. ԺԲ. 8 ։

* Այս ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահովք ։ || Մատ. ԺԷ. 20 ։

* Ոչ մեկնէր 'ի տաճարէն, այլ պահօք և աղօթիւք պաշտէր զցայգ և զցերեկ ։ || Ղուկ. Բ. 37 ։

* Աղօթք քո՝ և ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի Այ ։ || Գործոց. Ժ. 4 ։

---

Հաւանական նշանք ինչ կամ յատկութիւնք ընտրելոցն Այ, որք ժառանգելոց են զերկնութիւնն ։

ԳԼ. Ձ

Ոչ ոք կարէ յաստի կեանս հաւաստել ըզ փրկութիւն իւր՝ առանց մասնաւոր յայտնութեան Այ · բայց և ոչ ոք պարտի յուսահատիլ զփրկութենէ իւրմէ, այլ մեծաւ յուսով և երկիւղիւ ջանալ առ'ի հասանել փրկութեան · ըստ այնմ,

* Ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն գործեցէք ։ || Փիլիպ. Բ. 12 ։

Այսպէս նշանակեն Աստուածաշունչ մատեանք՝ սր. հարք՝ և աստուածաբանք · սակայն սր. գիրք 'ի մէջ մատուցանեն զնշանս ինչ անօթոյն ողորմութեան, կամ ընտրելոցն Այ · որով որոշին յանօթոյն բարկութեան, կամ յանարգելոց ։

Արդ յայտ է, թէ նա փրկի՛ որ գնայ ընդ

ճանապարհ փրկութե՟. և նա կորնչի՝ որ գնայ ընդ ճանապարհ կորստեան։ Աւա ո՞ կարէ ա՟մ ոք՝ որ միտս ունի, հաւանականագոյնս դատել զանձնէ, թէ իցէ յընտրելոց սակի, ուշ եղեալ ճանապարհին յորում գնանի։

Եւ այս դատումն ոչ այնքան մարդկեղէն զգացմամբ, որքան ազդեցութե՟ հոգւոյն քի՟ մարթի լինել։ Ասաւ նա առաքեալն. * Նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք ա՟յ։ || Հռոմ. ը. 16.

Նշանք ընտրելոց զորս ի մէջ բերեն ա՟ծաբանք ի ս՟բ գրոց՝ գլխաւորքն են տասն. և են սոքա.

Ա՟ Որ ունի զհաւատ ուղիղ, և զյոյս աներկբայ, և սիրէ զա՟ծ և զընկերն. երկնչի յա՟յ, և պահէ զա՟մ հրամանս նր՟. Նախանձաւոր լինի փառացն ա՟յ, և ջանացող փրկութեան ընկերին։

Բ՟ Որ յա՟մ գործս ունի իւր վերջին վախճան զարքայութիւն ա՟յ. ոչ ցանկայ անկարգ բաղձանօք մեծութե՟, փառաց, և պատուոյ, և ամենայն իրաց աշխարհի։

Գ՟ Որ անտրտունջ համբերէ ա՟մ վշտաց և փորձութեան վս՟ քի՟. և յանձնէ զանձն և զիւրսն ա՟մ ա՟ծային տեսչութե՟. և համաձայնի կամացն ա՟յ յամենայն իրս.

Դ՟ Որ հեզ է և խոնարհամիտ. ա՟մեցուն կամի զբարիս, և ոչ ումեք խորհի չար առնել. Ներէ թշնամեաց, և աղօթէ վս՟ փրկութե՟ նց՟.

Ե̅ Որ յամենայն ժամանակս ըստ կարեաց իւրոց տայ զողորմութիւն կարօտելոց. խնամ տանի հիւանդաց, օգնէ փորձանաւորաց, ուսուցանէ զտգէտս, և խրատէ զանխրատս.

Զ̅ Որ համարի զինքն մեղաւոր քան զամենայն մարդիկ. բեկմամբ ոգւոյ զղջայ 'ի մեղաց, յաճախ խոստովանի և ապաշխարէ. և արժանապէս մատչի 'ի հաղորդութիւն կենարար խորհրդոյ մարմնոյ և արեան Տեառն:

Է̅ Որ յամենայնի զգուշանայ 'ի մահացու մեղաց, և որքան հնար իցէ 'ի ներելի յանցանաց. հեռանայ 'ի պատճառէ մեղաց, և պահէ զզգայարանս իւր յամենայն անպատշաճից. փախչի 'ի հեշտութենէ և 'ի փափկութենէ, և ճնշէ զմարմինն պահօք և ժուժկալութեամբ:

Ը̅ Որ յօժարամիտ է յունկնդրութիւն հոգեշահ խրատուց. և ուրախութեամբ սրտի լսէ զպատգամս Աստուծոյ, և ջանայ կատարել:

Թ̅ Որ ջերմեռանդութեամբ տեսանէ զսուրբ պատարագն. անձանձիր կատարէ զհանապազորդական աղօթս իւր. ապաւինի 'ի սուրբ Աստուածածինն, և զնա բարեխօս ունի առ Աստուած:

Ժ̅ Որ խոկայ միշտ զմահն իւր՝ և զդատաստանն Աստուծոյ, զփառս արքայութեան՝ և զտանջանս դժոխոց:

# ՎԵՐՋԱԲԱՆ

Միհնդամնեայ համայն՝ դիտեն անխօս փան,
Ի յանկյնէր վախճան՝ առ որ հայթէ ցան.
Ով է ըստ յառաջութեան՝ ի-րեանց հաշմա թեան,
Գործեւն անվրէպ՝ ապրմամբ բնու թեան.
Ամենայն հասանել՝ մարդոյ առ վախ ճան,
ընթացութե՝ ի-րում եղե ապա տան.
Ով է ոչ հասանեյա՝ առակ շփոթ կան,
Հարկաւ բնութեան՝ առնել շաւ նայն.
Մ՚շ ամծէ երկիր՝ յաշխարհայն հա մայն,
ոսկոր և թշնամի՝ զան շարժեր մարդ կան.
Նոյս հարցոյն՝ վարձից նրա թեան,
Ճանապէն ընթերն՝ զոր ինչ է պաս կան.
Աստե պարտ վարկող՝ ըստ իմ պաշտօ ման,
Հաշտել յօրինել՝ զայն Խնկա րան.
Ար աշխի աշխէ՝ վաճառք պատաշա կան,
Հայեւոր խրատ՝ վաճառեն ար ժան.
Հապա գանցէյէ՝ ի մայոյ ա ման,
զոր չեղ նորէրեմ՝ ոխրով հայրա կան.
Արով ընկերէ՝ նախ մարդ բնա կան,
առնող ճանաչմամբ՝ մայոյ տեառ թեան.
Նոյն ընկերէ՝ մարդ բարոյա կան,
առնող ոչ շբամբ՝ օրինաց բնու թեան.
Զէտ որոյ եղէալ՝ մարդ քաղաքա կան,
Գոլէ չեղ օգուտ՝ ի հէնակցու թեան.
Հաւանի ապա հրթէալ՝ յածպաշտօ թեան,
Ի ծայրն հասնէ՝ կատարելու թեան.
Լու աշխարհ եղէալ՝ վասն երկնակցու թեան,
վայելէ ոլէ յայն՝ ապծմ և յապա գայն.

ՍՍՀՄ ԳԱ ... ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
... 1951 Թ.

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Բովանդակելոց ի ներքոյ հատորիս։


| | | Երես. |
|---|---|---|
| ա | Չարութիւն | 1 |
| բ | Հպարտութիւն | 14 |
| գ | Ծուլութիւն | 32 |
| դ | Նախանձ | 38 |
| ե | Ապերախտութիւն | 43 |
| զ | Բարկութիւն | 45 |
| է | Ագահութիւն | 57 |
| ը | Անգործութիւն | 62 |
| թ | Որկրամոլութիւն | 73 |
| ժ | Արբեցութիւն | 78 |
| ժա | Անողջախոհութիւն | 83 |
| ժբ | Բամբասանք | 90 |
| ժգ | Դատողութիւն | 112 |
| ժդ | Մարդահաճոյ | 120 |
| ժե | Հիշոց | 124 |
| ժզ | Մատնութիւն | 137 |
| ժէ | Խռովութիւն | 143 |
| ժը | Ստութիւն | 149 |
| ժթ | Սուտ վկայութիւն | 158 |
| ի | Սուտ երդումն | 163 |
| իա | Կախարդք | 167 |
| իբ | Յուսահատութիւն | 173 |
| ա | Ապաշխարութիւն | 179 |
| բ | Աղօթք | 190 |
| գ | Պահք | 216 |
| դ | Ողորմութիւն | 219 |
| ե | Աղօթք. Պահք. և Ողորմութիւն | 224 |
| զ | Հաւանական նշանք ընտրելոցն այ | 231 |